






ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԱՁՆԵՐԸ

(Բանահյուսական ժողովածու)

Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց
ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Նկարիչ՝ ՆԻԿՕ
(Նիկոլայ Մանուկյան)

Սերգեյ Գագիկի Վարդանյանը ծնվել է 1952-ին Երևանում: Հայաստանի գրողների և ժուռնալիստների միությունների անդամ է: Աշխատել է «Պիոներկան» թերթում, «Պիոներ», «Սովետական արվեստ», «Մշակույթ» ամսագրերում, Հայ ճարտարապետության բանգարան-ինստիտուտում, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում և այլն, իսկ 1991-2002 թթ. փոխնախագահ՝ ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդում: Գրել է մոտ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ, որոնց համար 1980-ին արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության մրցանակին: Նախաձեռնել է պատանեկան բանահավաքական շարժում, որին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտները: Մրանց հավաքած բանահյուսական նյութերով 1981-ին լույս է ընծայել «Հրեղեն ձին» ժողովածուն: Հայաստանի տասներկու մայրաքաղաքների՝ Վանի, Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի, Տիգրանակերտի, Վաղարշապատի, Դվինի, Բագարանի, Շիրակավանի, Կարսի, Անիի և Երևանի պատմությանը նվիրված մրա «Հայոց մայրաքաղաքները» ուսումնասիրությունը (1985) մոտ նյութերով հարստացված վերահրատարակվել է 1995-ին՝ արժանանալով Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին (գիրքը հատվածաբար լույս է տեսել մաս ֆրանսերեն՝ Գրեմորլում): Սերգեյ Վարդանյանի մանկական պատմվածքների «Արևածաղիկը» ժողովածուն 1989-ին տպագրվել է Երևանում, իսկ 1994-ին արևմտահայերենով՝ Ստամբուլում: Հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ազգագրության, բանահյուսության հարցեր արծարծող մրա հոդվածները թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն, սլովակերեն և այլ լեզուներով: Խորհրդային (ներքին) սփյուռքի և հատկապես համշենահայության (այդ թվում 1984-ին Միջին



Ասիայում իր իսկ հայտնաբերած կրոնափոխ համշենցիների) մասին մրա ուսումնասիրությունները հրատարակվել են հայրենի և արտերկրի մամուլում, 1989-ին իր կազմած «Ձայն Համշենական» ժողովածուի երրորդ, ինչպես մաս չորրորդ հատորներում: Նրա հրապարակումներից հետո ներքին սփյուռքի կրթօջախների մի շարք խնդիրներ պետականորեն լուծում են ստացել և մեծապես նպաստել հայապահպանությանը:

ՀՏԴ 398 = 919. 81
ԳՄԴ 82. 3Հ

ISBN 99930-966-4-4

ԳԱՍՊԻՐՆՏ

ԵՐԵՎԱՆ - 2003

Թ 130 Թագավորի երազները: Բանահյուսական ժող.
/ Կազմ., ծանոթագր. և հրատ. պատրաստ. Սերգեյ Վարդանյանը, - Երևան: Գասպիրիստ, 2003. - 144 էջ:

«Թագավորի երազները» բանահյուսական ժողովածուի նյութերը 1978-1982 թթ. հավաքել են Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի, Վրաստանի և Աբխազիայի հայկական դպրոցների աշակերտները:

© Ս. Վարդանյան, կազմելու, առաջաբանի, քառաբանի, ծանոթագրությունների և հրատարակության պատրաստելու համար © Ձևավորման համար, 2003թ.:

Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Դեռևս 1894 թ. Հովհաննես Թումանյանը գրում էր, որ գրեթե ամեն գյուղում կան ծերեր, որոնցից «ամեն մեկը ավանդությունների, առասպելների, հին զրույցների, ժողովրդական հավատալիքների մի շտեմարան, մի թանգարան է: Այս պատմություններից, զրույցներից, սովորություններից շատերն եկած են հին դարերից, մեր հին նախնիքների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի և հոգու ծնունդներն են:

Ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը, ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ գորանա: Բայց մեռնում են այս ծերունիները՝ իրանց հետ տանելով իրանց գիտցածը...»¹:

Հետագայում ևս անդրադառնալով «ժողովրդի հանճարի ծնունդների»՝ բանահյուսական ստեղծագործությունների, գրառման անհրաժեշտությանը, Թումանյանը գրում է. «Դրանց մեջն է, որ կգտնեք ամեն մի ժողովրդի ճշմարիտ կյանքն ու պատմությունը, բնավորությունն ու աշխարհայացքը, շնորհքն ու հոգին»²:

Թեև անցած հարյուրամյակում գիտական արշավախմբերն ու անհատները Հայաստանում ու սփյուռքում՝ հավաքել և հրատարակել են բանարվեստի բազում գոհարներ, գիտականորեն արժևորել հսկայածավալ նյութ, բայց անթիվ գանձեր էլ առհավետ կորել են: Հապաղել չէր կարելի, պետք էր գրառել ավագ սերնդի հիշողության շտեմարանում դեռևս պահպանված ժողովրդական բառ ու բանը: Իսկ ովքե՞ր կարող էին օգնել հայրենամուկներ այս գործում: Իհարկե, նրանք, ում համար հիմնականում նախատեսված էին այդ հեքիաթներն ու զրույցները՝ երեխաներն ու պատանիները: Եվ իմ նախածեռնությամբ «Պիոներ կանչ» թերթի 1978թ. մայիսյան համարներից մեկում³ հրապարակվեց դպրոցականներին ուղղված կոչ՝ բարբառով գրառել և խմբագրություն ուղարկել բանահյուսության մուշկեր: Այն լայն արձագանք գտավ Հայաստանի, Վրաստանի, Աբխազիայի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտության շրջանում: Մրցույթի վերջին ժամկետը սեպտեմբերի 30-ն էր, բայց դպրոցականների մամակների հեղեղից ոգևորված՝ որոշեցի այն շարունակել: Հարկ է նշել, որ մամակագիրներից ոմանք մրցույթը շահելու նպատակով, բանահյուսական ժողովածուներից արտագրություններ էին ուղարկում, ինչը ճշտելու համար ամեն անգամ ստիպված էի լինում բազմաթիվ գրքեր ընթերցել և համեմատել:

Անշուշտ, պատանի բանահավաքները դժվարին գործ էին ստանձնել, քանզի մույնիսկ դանդաղ և հստակ արտաբերվող դպրոցական թելադրությունները հաճախ անսխալ չեն զրվում, իսկ արագ պատմվող բարբառային նյութեր գրառելիս սխալներն ուղղակի անխուսափելի էին, ձեռագրերն էլ, երբեմն, անընթեռնելի: Եվ զգալի աշխատանք էր պահանջվում բարբառային յուրահատկությունները ճշտելու և սխալները շտկելու համար: Ինչևէ, նրանց օգնելու նպատակով

երկու տարի մամակագրական կապի մեջ էի շուրջ հազար հինգ հարյուր պատանի բանահավաքների հետ, որոնք անհրաժեշտ խորհուրդներ ստանալով՝ կորստից փրկում էին բանարվեստի արձակ և չափածո բազմապիսի օրինակներ, որոնցից արժեքավորները պարբերաբար տպագրվում էին թերթի «Պատանի բանահավաք» էջում¹։ Բայց հազարավոր մամակներում ծրարված բանահյուսական նյութը անհնար էր ամփոփել մանկապատանեկան թերթի սուղ էջերում, ուստի որոշեցի լավագույնները հրատարակել առանձին գրքով։ Խիստ ընտրությամբ հրատարակության պատրաստվեց շուրջ հազար հեքիաթ, գրույց, ավանդություն, երգ ու խաղիկ, հանելուկ, առած ու ասացվածք, որոնք ընդգրկվեցին 1981թ. լույս տեսած «Հրեղեն ձին» ժողովածուի մեջ²։ Իսկ ողջ հավաքածուն ի պահ հանձնվեց Հայաստանի ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին, որտեղ ստեղծվեց մանկապատանեկան ֆոնդ։

Գրքի տասնհինգ հազար տպաքանակը մեծ արագությամբ սպառվեց։ Նրա ծնունդը ջերմորեն ողջունեցին ակադեմիկոս Արամ Ղանալանյանը³, արձակագիր Սերո Խանգաղյանը⁴, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանը⁵, հայրենի բառ ու բանի լավագույն գիտականներից մեկը՝ Հայրիկ Մուրադյանը⁶ և շատ ուրիշներ⁷։

Այն տարիների միութենական մամուլը ևս՝ «Կոմսոմոլսկայա պրավդա»⁸ թերթը և «Սովետսկի Սոյուզ»⁹ ամսագիրը, անդրադարձան բանահավաքչական այս շարժմանը։ Հրատարակումից անմիջապես հետո գրքից երեք գրույց («Որսորդը», «Հարևանը», «Թագավորը») թարգմանաբար ռուս ընթերցողին ներկայացրեց Լենինգրադի «Ավորա» ամսագիրը¹⁰։ Կենտրոնական հեռուստատեսությունը Հայաստանում հատուկ հաղորդում նկարահանեց, Հայաստանի հեռուստատեսությունն ու ռադիոն մույնպես բազմիցս անդրադարձան գրքին։ Հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ համաշխարհային գրականությանը նվիրված «Ռեյտ սվետովնյ լիտերատուրի» հանդեսը (Չեխոյովսկի) գրքի ստեղծման և ընդհանրապես հայ բանահյուսության մասին ինձ ընդարձակ հոդված պատվիրեց և թարգմանաբար սլովակ ընթերցողին ներկայացրեց հայ չափածո բանարվեստի և «Հրեղեն ձին» ժողովածուից առած-ասացվածքների մի ընդարձակ ընտրանի¹¹։ Գրքի նյութերից մի քանիսը նույնությամբ, մշակումով կամ արդի հայերենով տարբեր թերթերում, ամսագրերում և դասագրքերում հրապարակվեցին մաս հետագայում¹²։ Այս հաջողությամբ ոգեշնչված՝ պատանի բանահավաքները շարունակում էին բանարվեստի նորանոր գրառումներ ուղարկել, որոնցից մի քանիսը լույս տեսան «Ծիծեռնակ» ամսագրում և «Լույս Համշենի» թերթում¹³։ Որոշեցի նոր գրառումներից լավագույնները և ծավալի ու այլևայլ պատճառներով «Հրեղեն ձին» գրքից դուրս մնացած արձակ մնուշները հրատարակել առանձին հատորով։

«Թագավորի երազները» կազմելիս, ինչպես նախորդ անգամ, ելակետը եղել է նյութերի գաղափարական, խրատական և դաստիարակչական բովանդակությունը։ Դրանց մեծ մասը տարբեր ժամանակներում բանագետների գրառած հեքիաթների, գրույցների, ավանդությունների և առակների տարբերակներ են՝ գեղարվեստական ու գիտական որոշակի արժեքով։

Քանի որ սա գիտական ժողովածու չէ, այլ պատանեկան ընթերցանության գիրք, որի նպատակն է իրենց իսկ տարեկիցների հավաքած բանահյուսական նյութերի միջոցով ծանոթացնել հայրենի բարբառներին և բանարվեստին, ընթերցանությունը դյուրացնելու համար, ջանալով չկորցնել բարբառների և խոսվածքների բնորոշ առանձնահատկությունները, խուսափել ենք խիստ գիտական տառադարձությունից, քնագրերի վերջում տվել հազարից ավելի դժվար հասկանալի

բառերի ու արտահայտությունների բացատրությունը, երբեմն էլ օտարամուտ բառերը փոխարինել հայերեն հոմանիշներով:

1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ և հաջորդած տարիներին իրենց կրողների հետ մի շարք բարբառներ ու խոսվածքներ մահացան: «Թագավորի երազները» դպրոցականներին ծանոթացնում է դեռևս կենդանի բարբառների մի զգալի մասին, իսկ ժողովրդի հոգևոր հարստության այդ դրսևորման հանդեպ սեր ու հարգանք դաստիարակելը առաջնահերթ խնդիր է, քանզի բարբառն է այն կենսատու ակունքը, որից սնվել ու պիտի սնվի մեր գրական լեզուն: Հենց բարբառներով են ստեղծվել հայ գրականության գանձերից շատերը՝ «Սասունցի Դավիթ» էպոսից մինչև Սայաթ-Նովա, Արուսյան, Սունդուկյան և այլն: Իրենց ստեղծագործություններում բարբառներին մեծ տեղ են հատկացրել Ռ. Պատկանյանը, Պ. Պռոշյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ա. Բակունցը և այլք: Իսկ մեր արևմտահայ և արևելահայ գրողներից նրանք, ովքեր էլ չեն ստեղծագործել բարբառով, ապա հիմնալի գիտեին իրենց հայրենի բարբառը: Ժամանակակից հայ գրողները նույնպես հաճախ են դիմում բարբառային լեզվամտածողությանն ու արտահայտչամիջոցներին:

Նախկինում նույնիսկ փորձեր են արվել բարբառներով պարբերականներ հրատարակել («Ձուկի ճրօյզը» հանդեսը Թիֆլիսում՝ 1919 թ., «Խարիպակի» շաբաթաթերթը Նոր-Նախիջևանում՝ 1920 թ. և այլն): Մինչ այդ էլ որոշ թերթեր ու ամսագրեր («Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1858-86 թթ., «Բյուրակն», Կ. Պոլիս, 1882-1908 թթ. և այլն) տարբեր բարբառների մանրաներ էին տպագրում: Այսօր էլ աշխարհի մի շարք երկրներում տարբեր լեզուների բարբառներով հրատարակվում են թերթեր ու գրքեր, արվում բեմադրություններ:

Կրկին դիմենք Թումանյանին. «Ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, որ հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր գանձարաններից ու պահել, զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր ու տրամադրություն, շունչ է ու զգացմունք»¹⁷:

Եվ այսպես, երեխաներն ու պատանիները ստեղծել են մի գիրք, որը, հավատում ենք, սրտամոտ ու սիրելի կլինի, որովհետև ունենալով ընտրության լայն հնարավորություն՝ նրանք գրառել են միայն իրենց սրտամոտ ու սիրելի հեքիաթները, գրույցներն ու ավանդությունները: (Ի դեպ, ծանոթագրությունների բաժնում հակիրճ տեղեկություններ են տրված բոլոր ասացողների և գրառողների մասին):

Պատանեկան բանահավաքչությունը կրկին ցույց տվեց, որ նույնիսկ 20-րդ դարի վերջերին որքան կենսունակ են հայոց բարբառներն ու բանահյուսությունը, և դեռ շատ բան կարելի է փրկել ժամանակի ավերիչ շնչից: Այն նաև ժողովրդի հոգևոր մշակույթի փոխանցման և սերունդների կապի ամրապնդման յուրահատուկ դպրոց դարձավ հազարավոր աշակերտների համար:

«Թագավորի երազները» պատրաստ էր տպագրության դեռևս 1983-ին, բայց «Սովետական գրող» և «Արևիկ» հրատարակչություններում տարիներ տևած դեգերումների ընթացքում գրքի մեքենագիր օրինակներն անհետացան: Ստիպված էի ամբողջ աշխատանքը կատարել երկրորդ անգամ: 1988-ին սկսված Արցախյան շարժումը հույսեր ներշնչեց, թե հայրենասիրական ալիքը կնպաստի, որ ժողովածուն վերջապես հրատարակվի, քանզի նրանում նյութեր կային նաև Դարաբաղից և Նախիջևանից: Բայց, ավա՜ղ...

1988-ի ահավոր երկրաշարժը հազարավոր կյանքեր խլեց: Նախիջևանը հայաթափվեց, Ղարաբաղի գյուղերը ձեռքից ձեռք անցան, նորանոր զոհերի ու ավերածությունների, բռնագաղթի մասին սարսափելի լուրերը ցնցում էին բոլորիս, այնուհետև սկսեցին գույժեր հասնել Արխագիայից: Շատ-շատերի էլ արտագաղթի ալիքները հեռավոր ավեր նետեցին: Եվ ո՞վ գիտի, ի՞նչ ճակատագիր վիճակվեց այս գրքի ասացողներին ու գրառողներին *...

Եվ այսպես, պատերազմի, ցրտի ու խավարի, շուկայական հարաբերությունների հորձանուտում գրքի հրատարակությունը ձգձգվեց:

Տարիներ շարունակ դիմում էինք հայրենի և օտար տարբեր կազմակերպությունների ու բարերարների և շատերից մերժվում: Բայց այս աշխարհն առանց բարի մարդկանց չէ. ցանկանում ենք խորին երախտագիտություն հայտնել Արսլանյան ընտանիքին, Հ. Ներսես արք. Տեր-Ներսիսյանին, Հայ Ավետարանչական ընկերակցությանը, տիկ. Նարգիզ Գալինյանին, Ֆիլադելֆիայի Հայ Քույրերի վարժարանի աշակերտներին և անանուն բարերարին, որոնց աջակցությամբ ի վերջո հնարավոր դարձավ հրատարակել պատանեկան բանահավաքչության արդյունքը՝ «Թագավորի երազները»:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

* Քանի որ մախատեսվում է հրատարակել «Հրեղեն ձին» և «Թագավորի երազները» գրքերի արձակ նյութերի ընտրանի, ուստի, խնդրում ենք, ծանոթագրությունների քաժմում ներկայացնելու համար ավելի մանրամասն տեղեկություններ հաղորդել ասացողների և գրառողների, նրանց հետագա ճակատագրի մասին:

Հասցեն՝ Երևան-23, Արշակունյաց 2, 11-րդ հարկ, «Կանչ» թերթի խմբագրություն, հեռ. 52 94 83

կամ E-mail: sergeyvardanyan@yahoo.com

1. Թումանյան Հովհ. Բորչավույն: (Ճանապարհորդական նկատողություններ): Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով: Ե., 1994, հ. 6, էջ 42:
2. Թումանյան Հովհ. Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին: Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով: Ե., 1994, հ. 6, էջ 182:
3. «Պիոներ կանչ», 1978, N 40:
4. «Պիոներ կանչ», 1978, N N 48, 51, 65, 73, 88, 98, 1979, N N 4, 20, 29, 41, 50, 61, 69, 93, 103-104, 1980, N N 21, 41:
5. Հրեղեն ձին: Մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, գիտական խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Սարգիս Հարությունյան, խմբագիր՝ Դավիթ Հովհաննես: Ե., 1981: 240 էջ:
6. Ղանալանյան Արամ. Նվեր պատանի դպրոցականներին: - Գրքերի աշխարհ, 1982, 18 հունվարի (N 1):
7. Խանգաղյան Սերո. Փրկված մասունքներ: - Գրական թերթ, 1982, 19 փետրվարի (N 8):
8. Իշխանյան Ռաֆայել. Բանահյուսություն, բարբառ, արդիականություն: - Գարուն, 1983, N 1, էջ 86-92:
9. Муралян Айрик. Предания наших предков. - Коммунист, 1982, 26 марта (N 70):
10. Հովհաննիսյան Ա.. Հրեղեն ձին: - Սովետական Հայաստան, 1982, 13 հունվարի (N 10): Айдинян В., Праздник для души и глаз. - Комсомолец, 1982, 4 февраля (N 15). Համբարձումյան Ռ.. Կարևոր իրագործում: - Ավանգարդ, 1982, 7 մարտի (N 29): Իսկանդարյան Ս.. Մանկության հեքիաթի հրեղեն ձին: - Հայրենիքի ձայն, 1982, 3 մարտի (N 10): Նույնը՝ Պայքար (Բոստոն), 1982, 18 մայիսի (N 74): Վիրապյան Է.. Հրեղեն ձիու վերադարձը: - Սովետական զրականություն, 1982, N 6, էջ 127-128: Գարակեօզեան Վ.. Հրեղեն ձին: - Լրաբեր (Լոս Անջելես), 1983 յուլիսի 2 (N 39), և այլն:
11. Юзбашьян М., За живую водой. - Комсомольская правда (Москва), 1982, 27 июля (N 171):
12. Советский союз (Москва), 1982, N 5, с. 5:
13. Будашевская Людмила. Юные летописцы.- Аврора (Ленинград), 1981, N 5, с. 126-128:
14. VARDANJAN SERGEJ. Arménska slovesnost. - REVUE SVETOVEJ LITERATÚRY (Bratislava), 1984, N 1, էջ 129-143:
15. Քնկոտ պահակը: - Լրաբեր (Լոս Անջելես), 1983, յուլիսի 2 (N 39): Հիմար մարդը: Մշակեց Ա. Վարդապարյանը: - Ծիծեռնակ, 1989, N 1: Խմած մկան պայմանը, Շաշ հյուրը: Ա. Պետրոսյանի «Մատենիկ» երրորդ դաս. մայրենիի գիրք-տետրում: Ե., 1995, էջ 6, 9: Հիմար հյուրը: Թարգմ. Հ. Հունանյանի: - Ծիծեռնակ, 1998, N 5-6: Գայլն ու ձին, Մանգաղ շինելը, Արջն ու մարդը: Արդի հայերենի վերածեց Հ. Հունանյանը: - Ծիծեռնակ, 2000, N 1-2: Մուկը մկան հետ խնամի կլինի: Ե., 2001: 9 էջ: Խմած մկան պայմանը: Ե., 2002: 16 էջ:
16. Խոսքի տեր կինը: Մշակեց Ս. Վարդանյանը: - Ծիծեռնակ, 1988, N 1: Հայրն ու տղան: - Մշակեց Ս. Վարդանյանը: - Ծիծեռնակ, 1988, N 10: Աշխարհի ամենավատ բանը: Մշակեց Ս. Վարդանյանը: - Ծիծեռնակ, 1989, N 2: Էրգու ընգեր, Տան տերը: - Լույս Համշենի, 1992, N 1:
17. Թումանյան Հովհ. Դիտողություններ լեզվի մասին: Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով: Ե., 1999, հ. 8, էջ 444:





ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԱԶՆԵՐԸ

Ըլում ա, ըլում չի մի թաքավեր: Էս թաքավերը քնում ա, ըրազընը տենում, վեր երկնքիցը մի սուր ա կախ ըլած: Ասում ա.

– Ով վեր ասի, թե իմ արազը ինչ ա նշանակում, նրա հիտծուն փուտ վեսկի դեմ տալ:

Շատ մրթկեք են քյնում, բայց միմն էլա կարում չեն բացատրեն: Մի մարթ քյնալիս տենում ա քնակիցը միմը կանչեց: Ետ ա տառնում, տենում՝ մի օց ա հաքվի վրա կաղնած: Օցը ասում ա.

– Ե մի ստի:

Էս մարթը քյնում ա օցի կուշտը: Օցը ասում ա.

– Վեր ես ասեմ սրի կախ ըլելը երկնքիցը ինչ ա, վեսկու կեսը ինձ կտա՞ս:

Էտ մարթը ասում ա՝ հա՛: Օցը ասում ա.

– Քյնա թաքավերին ասա, վեր սուրը երկնքիցը կախ ա ըլել, ուրեմն պատերազմ դի ըլիլ, շատ թաքավերնի դեն ընգնիլ, նրանց տեղը ուրուշը դի կաղնիլ, մենակ տու քե կպահես, զգուշ կկենաս:

Էտ մարթը քյնում ա թաքավերին արազը պատմում, հիտծուն փուտ վեսկին վերունը, կյալի: Էտ մարթը կյալիս ա, տալի օցի հաքին կտրում ու վեսկու կեսը իրան չի տալի: Երկրորդ անքամ, վեր թաքավերը քնում ա, տենում ա աղվեսը հաքվի վրա երկնքիցը կախ ըլած: Ասում ա.

– Ով վեր ասի թե ինչ ա նշանակում, նրա հիտծուն փուտ վեսկի դեմ տալ:

Շատ մրթկեք են քյնում, բայց միմն էլա գիղում չի, թե ինչ ա նշանակում: Էտ մարթը նորից քյնալիս օցը կանչում ա ու ասում.

– Վեր ասեմ, վեսկու կեսը ինձ կտա՞ս:

Էտ մարթը ասում ա՝ հա՛:

– Աղվեսը, վեր երկնքիցը կախ ա ըլել, էտ նշանակում ա, վեր աշխարհնա խափեփայություն դի ըլիլ, անհավասարություն դի ըլիլ:

Էտ մարթը քյնում ա թաքավերին արազը պատմում ու հիտծուն փուտ վեսկին վերունը ու էն ձկի տեղով ա քյնում, վեր օցը տենա վեչ, երկրորդ անքամ օցին խափում ա, վեսկու կեսը իրան չի տալի:

Երրորդ անքամ, վեր թաքավերը քնում ա, ըրազընը տենում ա, վեր գելն ու գառը իրար հետ ըրածըն են: Ասում ա.

– Ով վեր ասի, թե ինչ ա նշանակում, նրա հիտծուն փուտ վեսկի դեմ տալ:

Նորից շատ մրթկեք են քյնում, վերջը միմն էլա գիղում չի: Նորից էտ մարթը քյնալիս օցը կանչում ա ասում, վեր քեզ արազի իմաստը պատմեմ, վեսկու կեսը ինձ կտա՞ս: Էտ մարթը ասում ա՝ հա՛: Օցը ասում ա.

– Վեր գառն ու գելը իրար հետ ըրածըն են, էտ նշանակում ա, վեր իրեք հարիր տարի խաղաղություն դի ըլիլ, մրթկեքը հավասար դեն ապրիլ:

Երրորդ անքամ թաքավերին արազը պատմում ա, վեսկին վերունը, կյալի օցի պնի ըղաքին վեր քցում: Օցը ասում ա.

– Վեր առաջին տրետը տվիր հաքիս կտրեցիր, տու ըտի մեղավեր չես, էտ տարին արյունահեղություն էր, տու էլ տվիր հաքիս կտրեցիր: Երկրորդ տրետը վեր խափեցիր, վեսկին տարար, ըտի էլ չես տու մեղավեր, աշխարը խափեփայություն էր, տու էլ ինձ խափեցիր՝ վեսկու կեսը ինձ չտվիր: Միի, վեր պիրել ես վեսկին ըղաքիս վեր դրել, միի աշխարս խաղաղություն ա ու հավասարություն: Ես վեսկին ի՞նչ դեմ անիլ: Չմեռը շեկ հող եմ ուտում, ամառը ըրածըն եմ, էս վեսկին վերկալ ու քյնա քեզ հմար ապրի:

Ե մի ստի – եկ այստեղ

Օցի կուշտը – օձի մոտ

Ըրազընը – երազում

Քյնում ա – գնում է

ԴԵՂԸ ՀԱՍՅՆՈՂԻ ՀԵՔԻԱԹԸ



Օխտը սարիցը դենը կենալիս ա ըլըմ մի թաքավեր: Էս թաքավերին ունենալիս ա ըլըմ մի ախչիկ: Օրերից մի օր թաքավերը հրաման ա տալի, վեր աշխարքի ջահել տղեքը կյան, վերին վեր իրան ախչիկը ուզի, նրա էլ տալ բղի: Անքա վերջըմը էս լըմ են ճղացպանի իրեք տղեքը ու որոշըմ են իրանց բախտը փորձեն: Ըռավետը, դրա լիսին դեն, վեր են կենըմ իրեք ախպերով ու թուշ քյնըմ են թաքավերի ախչկա կուշտը: Թաքավերի ախչիկը վեր սրանց տենըմ ա, ասըմ ա.

– Ծգանի վերը ի՞նչ արհեստ ունի:

Տրանք միմը մըմի իրեսի եշըմ են ու զոմացած կլխները տմտմբացնելով ասըմ են.

– Արևիցը սիրուն ախչիկ, միմս էլա գիղըմ չենք:

Թաքավերի ախչիկը ասըմ ա.

– Դե մի տենը՞մ եք, առանց արհեստ գիղալու եկել եք թաքավերի ախչկան եք ուզում, քյնացե՛ք արհեստ սվերեցեք, վերիտ վեր արհեստը հվանեն, սրտովս ըլի, նրա էլ քյնալ բղեն:

Էքսի ըռավետը իրեք ախպերն էլ պատրաստութեն են տենըմ ու ճամփա ընգըմ՝ ուր վեր աչքները կտրի: Քյնըմ են, քյնըմ, շատ են քյնըմ, թե քիչ, Աստոծ գիղա, միմ էլ՝ ըիը՝ իրեք ճամփա են տենըմ, կողքին էլ մի մեծ, սև քար, վրին մեծ-մեծ տառերով կրված. «Միջի ճմփով քյնացողը աստղագետ կդառնա, ծախու ճմփով քյնացողը՝ բժիշկ, իսկ աջու ճմփով քյնացողը՝ սուրհանդակ»:

Էրզան վախտ կռիվ անիլիցը եղը մեծը քյնըմ ա մեջտեղի ճմփովը, միջնեկը՝ ծախու, ամենակուճուրը՝ աջու ճմփովը: Մի տարին, եփ վեր լրանըմ ա, իրեք ախպերն էլ կյալիս են ու մույմ տեղը պտահըմ: Նստըմ են, վեր համ հաց ուտեն, համ էլ հանգստանան: Մին էլ էտ վախտը կուճուր ախպերը ետ ա տառնըմ մեծ ախպորը ու ասըմ.

– Մի մտիկ տու տե՛ս՝ ախչիկը սա՞ղ ա, թե՞ հլե մեռել ա:

Տա մտիկ ա անըմ ու ասըմ ա.

– Ափսու՛ս ախչիկ, հազա՛ր ափսուս, մեռնըմ ա...

Էտ վեր լըմ ա միջնեկ ախպերը, պիրըմ ա դեղ սարքըմ, իսկ կուճուր ախպերը ծի ա նստըմ ու հսցըմ ախչկան: Ախչիկը դեղը խըմըմ ա ու սղանըմ: Եփ վեր էն էրկու ախպերտինքն էլ են կյալիս, ախչիկը վեր ա կենըմ ու պսակվըմ ա կուճուրի հետ, ու եփ վեր մյուս էրկու ախպերտինքը հրցըմ են, թե՛ «Խի՞ տրա հետ պսակվեցիր», էտ վախտը ախչիկը ասըմ ա.

– Հրե՛ն, Բաղդատ էլ խուրմա կա, վեր պիրող չկա ի՞նձ ինչ: Ով դեղը հսցրեց, նրան էլ առնըմ են:

Նրա էլ քյնալ բղեն – նրա հետ էլ
կամուսնանա
Էրզան վախտ – երկար ժամանակ
Ամենակուճուրը – ամենափոքրը
Կենալիս ա ըլըմ – ապրելիս է լինում
Անքա վերջըմը – ամենավերջում
Դրա լիսին դեն – լուսադեմին
Թուշ քյնըմ են – ուղիղ գնում են

Ըռավետը – առավոտյան
Սղանըմ – առողջանում
Վերին վեր – որին որ
Տալ բղի – պիտի տա
Եշըմ են – նայում են
Գիղըմ չենք – չգիտենք
Միմս էլա – ոչ մեկս էլ
Աստոծ – Աստված

Մտիկ տու – նայիր
Ծգանի – ձեզանից
Էքսի – հաջորդ
Միի – հիմա
Ծախ – ձախ
Կյան – զան
Օխտ – յոթ
Ծի – ձի





ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ըլում են, ըլում չեն երկու մուկիկ: Մեծ մուկիկը խմոր հունցիլիս ճուրղ հատում ա, կուճուր մուկիկին ասում ա՝ քյնա ճուր պի՝ քյնում չի: Ինքը խմորը բրախում ա, քյնում ճուրղ: Կյալիս ա տեսնում կուճուր մուկիկը խմորը հունցիլիս ըստակել ա: Մեծ մուկիկը նստում ա լաց ըլում: Ծիտը կյալիս ա տեսնում մեծ մուկիկը լաց ա ըլում, ասում ա.

- Մուկիկ քույրիկ, խի՞ ես լաց ըլում:

- Բա կուճուր մուկիկն ըստակել ա՝:

Ծիտիկը էնքան ա լաց ըլում, վեր աչկի մինը փուչիկ ա անում: Ակռավը կյալիս ա, ասում.

- Ծիտիկ քույրիկ, խի՞ ես լաց ըլում:

Ծիտիկն ասում ա.

- Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակել ա՝:

Ակռավը քյնում ա ծառին կաղնում, թեփառիս ըլում: Ծառն ասում ա.

- Ակռավ քույրիկ, խի՞ ես թեփառիս ըլում:

Ակռավն ասում ա.

- Աչկը փուչ ծիտիկն ասեց,

Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակել ա՝:

Ծառը ճղնրիս ա ըլում, մի քար թու ըլիով կյալիս ա տեսնում ծառը ճղնրիս ա ըլում, ասում ա.

- Խի՞ ես ճղնրիս ըլում:

Ծառն ասում ա.

- Թեփառիս ակռավն ասեց,

Աչկը փուչ ծիտիկն ասեց,

Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակել ա՝:

Քարը թու ըլիով ընգնում ա կետը պրտողում, կետն ասում ա.

- Խի՞ ես ճուրղ պրտողում:

Քարն ասում ա.

- Ճղնրիս ծառն ասեց,

Թեփառիս ակռավն ասեց,

Աչկը փուչ ծիտիկն ասեց,

Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակել ա՝:

Չոբանը վխճրընին պիրում ա, վեր ճուր տա, ճուր չեն խմում, չոբանը վխճրընեթին փետով տալիս ա, ասում.

- Խի՞ չեք ճուր խմում:

Վխճրընին ասում են.

- Պրտող կետն ասեց,

Գլան քարն ասեց,

Ճղնրիս ծառն ասեց,

Թեփառիս ակռավն ասեց,

Աչկը փուչ ծիտիկն ասեց,

Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակել ա՝:





Չորանի փափախը կաշըմ ա կլխեն: Մի կնիկ կյալիս ա, թե ճուր տանի, տենըմ ա՝ չորանը սառել ա, ասըմ ա.

– Չորա՛ն, էս ի՞նչ ա պտահել:

Չորանը ասըմ ա.

– Չի ճուր խմած վխճարն ասեց,
Պրտող կետն ասեց,
Գլլան քարն ասեց,
Ճղնըհան ծառն ասեց,
Թեփոըհան ակռավն ասեց,
Աչկը փուչ ծիտիկն ասեց,
Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակե՛լ ա՛:

Մարթը ճամփա յա պահըմ, տեսնըմ՝ կնիկը կյալիս չի, վեր ա կենըմ եննեն քյնըմ, տեսնըմ կնիկը չորանի կոխկին սառած, ասըմ ա.

– Ա՛ կնիկ, էս ի՞նչ ա պտահել:

Կնիկն ասըմ ա.

– Փափախը կլխեն կպած չորանն ասեց,
Չի ճուր խմած վխճարն ասեց,
Պրտող կետն ասեց,
Գլլան քարն ասեց,
Ճղնըհան ծառն ասեց,
Թեփոըհան ակռավն ասեց,
Աչկը փուչ ծիտիկն ասեց,
Մեծ մուկիկն ասեց՝

Կուճուր մուկիկն ըստակե՛լ ա՛:

Մարթը կնգա եննա յա ըլըմ, կնիկը կուժը առնըմ ա տուն փախչըմ, չորանի եննա յա ըլըմ, չորանը վխճըրներին առնըմ ա քյնըմ, քարը ճրիցը հանըմ ա, վեր ճուրը պարզի, ծառը տակեն կտրըմ ա, ակռավն ու ծիտը վըխըլներեն թոչըմ են, մեծ մկանն էլ սպանըմ ա, ասըմ.

– Էս ժողովուրդի թշնամին սա յա, տյուք էլ ծեզ կտորըմ ե՞ք:



Եննա ա ըլըմ – հետևից է ընկնում
Ճամփա ա պահել – սպասել է
Թեփոըհան – փետրաքափ
Վխճըրնին – ոչխարներին
Ճղնըհան – ճյուղակոտոր

Հունցիլիս – հունցելիս
Վըխըլներեն – վախից
Ըստակել ա – սատկել է
Հտել ա – վերջացել է
Թուլ ըլիլով – գլորվելով

Սառել ա – անշարժացել է
Բրախել ա – թողել է
Պիրըմ ա – բերում է
Կուճուր – փոքր
Ճուրը – ջուրը





ՄԻ ԲՈՒՌ ԱՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի մարթ մի պղինձ ա առնում, պիրըմ տուն: Կնիկն ասում ա.

– Ա՛յ մարթ, բա հրցրել չե՞ս, թե ճաշ էփիլիս ինչքան աղ դենք քցիլ:

Մարթն ասում ա՝ չէ՛: Կնիկն ասում ա.

– Դե՛ քյնա էս պղինձ ծախողին քթի, հրցրու, տես ճաշ էփիլիս ինչքան աղ դենք քցիլ մեջը:

Վերջը էս մարթը քյնում ա պղինձ ծախողին քթնում ա, ասում.

– Քե մատաղ, կնիկս տանեն տուս ա քցել, ասել. «Քյնա պղինձ ծախողին հրցրու, տես ճաշ էփիլիս ինչքան աղ դենք քցիլ մեջը»:

Պղինձ ծախողը տենում ա, վեր էս մարթը մի քիչ խելքից քիթն ա, ասում ա.

– Շատ էլ էփես՝ մի հափուռ կքցես, քիչ էլ էփես՝ մի հափուռ կքցես:

Էս պղինձ առնողը, վեր չմոռանա, կրկնելով քյնում ա, տենում մի մարթ ցորեն ա սերմում, ասում ա.

– Շատ անես էլ՝ էսքան, քիչ անես էլ՝ էսքան, – ու հափուռը նշանց ա տալի: Էս ցորեն սերմողը փռնում ա մի լավ ճարթըմ ու ասում.

– Փոխանակ ասես՝ «Մինը հազար տառնա», տհե ես ասը՞մ:

Էս մարթը միել ասում ա. «Մինը հազար տառնա, մինը հազար տառնա»: Տհենց ասիլով քյնում ա: Քյնում ա, տենում մի մեռել են տանում, էս մարթն ասում ա.

– Մինը հազար տառնա:

Էս մեռել տանողնին փռնում են, թակում ու ասում.

– Սհե տեղը կասեն՝ «Ըլել ա, էլ վեչ ըլի»:

Միել էս մարթը ասում ա. «Ըլել ա, էլ վեչ ըլի», սհե քյնում ա, տենում մի հրսանիք կա, ասում ա.

– Ըլել ա, էլ վեչ ըլի:

Սրա ըստի թակում են ու ասում.

– Սհե տեղը կասեն՝ «Տա՛շ-տու՛շ», պար կկյան, ծուլ-ծուլ կլեն:

Տա միել տհե ասիլով քյնում ա մի որսորդի կողկ, էս որսորդն էնհա, որսին սպանիլիս ա ըլում, տա ասում ա.

– Տա՛շ-տու՛շ, տա՛շ-տու՛շ...

Էս որսը փախչում ա, որսորդը փռնում ա մի լավ տալի ու ասում.

– Սհե տեղը կուչի-կուչի անիլով կքյնան:

Տա միել ըսկսում ա կուչի-կուչի անիլով քյնալ: Սհե քյնում ա ու մտնում վխճարի սուրվի մեջը, չոքանը գիղում ա, թե կյող ա, մի լավ թակում ա ու ասում.

– Սհե տեղը զուլ դուզ կքյնան:

Էս մարթը միել զուլ դուզ քյնում ա տուն հասնում, բոյն էնքան էրզան ա ըլում, վեր կարում չի տոնովը տուն մտնի, կնճանը ասում ա.

– Կացնիմը պի չարսուն կտրի, վեր տուն մտնեմ:

Կացնովը չարսուն կտրում ա, վեր տուն մտնի, չարսվի փետը վեր կլխին տալիս ա, էս մարթը մեռնում ա, տհե էլ գիղում չեն, թե ճաշ էփիլիս ինչքան աղ քցեն:

Վխճարի սուրվի մեջ – ոչխարի հոտի մեջ
Կուչի-կուչի անիլով – կուզեկուզ, կուչ եկած
Նշանց ա տալի – ցույց է տալիս
Չարսու – դռան վերևի փայտը
Ջուլ դուզ կքյնան – ոտիդ կզնան

Ճարթըմ – ջարդում, ծեծում
Ծուլ-ծուլ կլեն – կթռչկոտեն
Պղինձ – պղնձե կաթսա
Պար կկյան – կպարեն
Թակել – ծեծել

Տհե – այդպես
Հափուռ – բուռ
Սհե – այսպես
Էնհա – այն է



ՀԵՐՆ ՈՒ ՏՂԵՆ

Ըլել ա, ըլել չի, մի մարթ ա ըլել, մի տղա ա ունեցել: Էս մարթը իրա հողը վար անիլիս ա ըլել: Տղին ասել ա.

– Իմ եննա հաց կպիրես:

Տղեն հոր մհար հաց ա պիրել, հերը մի ծառի տակի նստըցրել ա, ասել.

– Տու շվաքըմը նստի, ես վարենմ:

Հերը վեր եկել ա, տղեն ասել ա.

– Հայրիկ, էս ծառն ընչի՞ ա:

Հերը հանգիստ պատասխանել ա.

– Կաղնի ա:

Վեր ըլետ շուտ ա եկել, եկել ըստի, տղեն ասել ա.

– Հայրիկ, էս ծառն ի՞նչ ա փոմըմ:

Ասել ա.

– Կաղին:

Վեր ըլետ շուտ ա եկել, եկել ըստի, տղեն ասել ա.

– Հայրիկ, էս ծառի վրնինը ի՞նչ ա:

Ասել ա.

– Դուշ ա:

Վեր մհել տղեն մըծանըմ ա, էտ նույն տափըմը վար անիլիս ա ըլըմ, հերը եննեն հաց ա պիրըմ ու նույն ծառի տակին նստըմ: Հիշըմ ա, վեր տղեն փոքր վախտը էս ծառի տակին ինչ հարցեր տեր: Հերն ասըմ ա՝ մի հարց էլ ես տամ, էլի, մի տենամ ի՞նչ ա պատասխանըմ: Վեր կյալիս ա իրան հասնըմ, ասըմ ա.

– Տղա ջան, էս ծառը ընչի՞ ա:

– Ի՞նչ ա, քոռ ե՞ս, տենըմ չե՞ս, վեր կաղնի ա, – ասըմ ա տղեն:

Վեր մհետ էլ ա պտտըմ կյալի, հերն ասըմ ա.

– Տղա ջան, ծառի վրնինը էն ի՞նչ ա:


– Քոռ ե՞ս, տենըմ չե՞ս, վեր ժեռ ա:

– Է՛, բալա ջան, – ասըմ ա հերը, – ես քանի՞ հարցի եմ պատասխանել առանց նեղվիլի, բայց տու ուզըմ չես, թե մի հարցի էլա պատասխանես:

Հարցեր տեր – հարցեր էր տալիս
Տափըմը – վարելահողում, արտում
Շվաքըմը – ստվերում

Իմ եննա – իմ ետևից
Ըլետ – կրկին
Վրնինը – վրայինը

Մհար – համար
Դուշ – թռչուն
Ժեռ – սարյակ







ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆՆ ՈՒ ՀՆՁՎՈՐԸ

Մի անքամ Սողոմոն իմաստունը ասել ա.

– Մի քյնամ տենամ էս երկրիս մարթիկ վե՞նց են ապրում:

Քյնացել ա մի կեղ, տեհել մի մարթ հունձ ա անում:

Սողոմոնը քյնացել ա հնձվորին ասել.

– Ախպեր, քեզ իրեք հարց դեմ տալ, տենամ կարո՞ւմ ես

պատասխանես:

Հնձվորն ասել ա.

– Խնդրեմ, կկարամ՝ կպատասխանեմ, կարալ չեմ՝ դե էտ ա, պատասխանիլ չեմ, էլի:

Սողոմոն իմաստունն ասել ա.

– Քանի՞ հետի ես թլանել, քանի՞ հետի ես թլանվել:

Հնձվորն ասել ա.

– Իրեք հետի թլանվել եմ, մեետի թլանել (այսինքն՝ իրեք հետի ախչիկ եմ մարթի տվել, մեետի հարսն եմ պիրել):

– Բա արտը կերել ե՞ս, թե՞ նոր դես ուտիլ:

Ասել ա.

– Կեսը կերել եմ (այսինքն՝ արտը կես եմ արել, արտը հնձելով կեսն եմ հասցրել):

– Բա արդեն դըլերում ե՞ս, թե՞ դվերում ես:

Ասել ա.

– Դվերում եմ (այսինքն՝ տարիքդ հիտծունից քաշ ա՞, թե՞ պարցըրը, ուրեմն տարիքը հիտծունից պարցըրն ա, տրա մհար դվերում ա, որովհետև մարթու ջահելությունը մինչև հիտծուն տարեկանն ա, իսկ հետո սկսում ա պռավել):

Սողոմոնը ասում ա.

– Ապրե՛ս, հնձվոր, քու կերածը հալալ ըլի, իրեք հարցիս էլ ճիշտ պատասխանեցիր:

Դըլերում ես – բարձրանում ես
Քանի հետի – քանի անգամ
Դվերում ես – իջնում ես

Քաշ ա – ներքև է, ցածր է
Մեետի – մի անգամ
Վենց – ոնց, ինչպես

Կեղ – գյուղ
Քյնամ – գնամ



ՈՍԿԻՆ

Ըլում ա, ըլում չի, մի մարթ ու կնիկ ա ըլում: Էդ մարթը գեղի չոբանն ա ըլում: Տրանց ունենում են հինգ վիճար: Ամեն օր չոբանը վիճըրնին տանում ա արոտ, պիրում: Մի օր էլ, վեր վիճըրնին տանում ա արոտ, էդ թուգյունը մի վիճար ա կորած ըլում: Իրան վիճըրներիցը մինը տալիս ա էդ կորած վիճարի տուրունչը: Տե՛ չորս օր էլ վեր տանում ա, ամեն օր մի վիճար ա կորչում: Իրան քանի վիճար ունենում ա, կորածների տեղը տալիս ա վիճըրների տուրունչը: Մի օր էլ, վեր էդ չոբանը վիճըրնին տանում ա, որոշում ա հետեվի, տենա ի՞նչն ա վիճըրնին տանում: Մի վախտ տենում ա մի վիճար քուլի վրա դվերում ա:

Չորքանը էդ վիճարին հետեւում ա, տենում ա էդ վիճարը քյնում ա քամակը մի փչակի ծակով դեմ անում: Էդ փչակը մի քոռ գել ա ըլում: Գելը սկսում ա վիճարին ուտիլը: Չորքանը բրախում ա, կյալի ու վիճարնին պիրում ա գեղը: Էդ մարթը տանը պրամվում ա ու էլ չորքան չի քյնում: Կնիկն ասում ա.

– Ա՛ մարթ, վիճարնիքը բաժանեցիր, դե մի էլ ըշխատի էլի, բախեքը մնացել են սոված:

Մարթն ասում ա.

– Ա՛ կնիկ, տու տղամարթու գործերին խառնվիլ մի: Մերը պետք ա կտրովը դվեր տառնա՝ մենք հվաքենք:

Կնիկը սաղ օրը ըշխատում ա, վեր բախանցը պահի: Մի օր կնիկը գործիցը կյալիս տենում ա մի ծառի տակի հող ա թումբ ըլած: Քիչ քանդում ա, տենում մի կարաս: Կյալիս ա տուն ու մարթին ասում ա.

– Քյնանք հանենք:

Մարթը ասում ա.

– Ա՛ կնիկ, ես քեզ ասել չե՞մ, վեր իմը պետք ա կտրովը դվեր տառնա: Էդ վե՞նց ա քոռ գելին բախտ կունենա, ինձ՝ չէ՛:

Կնիկը քյնում ա տերտերին պատմում ու ասում.

– Ե քյնանք հանենք ու էրկուսով կես անենք:

Տերտերն ասում ա.

– Հա՛, ե քյնանք:

Հիւ կնիկը բրախում ա տուն կյալի, տերտերը թաքուն քյնում ա, վեր հանի ինքը վերունի: Տերտերը, վեր կարասի ռեխը պաց ա անում, տենում ա մեշը լիքը հող ու մորմոնջ: Կարասը վեր ա ունում, պիրում թաքուն կտրովը դվեր քցում, վեր չորքանի կնգանը սպանի: Դվեր ա քցում ու բրախում, փախչում: Կարասի միջի վեսկին տանովը մին ա ըլում: Տու մի ասիլ, էդ կարասի միջի վեսկին վաղեց ա ըլում, տրա մհար էլ հողը նի տառած ա ըլում ու մորմոնջին միջին պուն են շինած ըլում:

Տերտերն էլ գիդացած ա ըլում, թե լրիվ մեջը հող ու մորմոնջ ա: Մարթը կնգանը ասում ա.

– Ա՛ կնիկ, տեսա՞ր, վեր վեսկին իրան-իրան կտրովը վեր տառավ:



Ռեխը պաց ա անում – բերանը
բացում է
Վաղեց ա ըլում – վաղուց է լինում
Պրամվում ա – պառկում է
Էդ վենց ա – այդ ինչպես է
Դվեր տառնա – թափվի
Կես անենք – կիսենք
Բախեքը – երեխաները
Դվերում ա – իջնում է
Բրախում ա – թողնում է

Կտրովը – կտուրից
Բուգյուն – իրիկուն
Տուրունչը – տիրոջը
Նի տառած – լցված
Վերունի – վերցնի
Մորմոնջ – մրջյուն
Ըլում ա – լինում է
Վիճար – ոչխար
Տեն – այդպիսի
Պիրում – բերում

Վեսկի – ոսկի
Մհար – համար
Քոլ – անտառ
Տրանց – դրանց
Պուն – բույն
Ե – եկ, արի
Հիւ – հենց
Տու – դու





ՔԱՉԱԼԸ

Մի քաչալ ա ըլլմը: Կեղըմը ման կյալիս ա ըլլմ: Մի մարթ մուտանըմ
ա, ասըմ.

– Էդ ընչի՞ ես ման կյալի:

Քաչալն ասըմ ա.

– Գործի եմ ման կյալի:

Էդ մարթն ասըմ ա.

– Բյնանք մեզ մհար ըշխատի:

Քաչալը համաձայնվըմ ա: Էդ մարթն ասըմ ա.

– Պետք ա իմ մհար իրեք տարի ըշխատես, վեր նոր փող տամ:

Քաչալն ասըմ ա.

– Իրեք տարի ծրի կըշխատես, մենակ թե վերջըմը քու ախչիկը ինձ տաս:

Էդ մարթը ուրխանըմ ա, վեր էդ ա, քաչալը իրեք տարի ծրի կըշխատի, կտա տուս կքցի:

Քաչալը սկըսըմ ա սրանց մհար խոզեր պահել: Օրերից մի օր կյալիս են էդ մարթի ըխչկանը
ուզիլ: Էդ մարթը տալիս ա: Հրանիքի օրը քաչալը խոզերը պահելիս ա ըլլմ, շորերը հանըմ ա, տնըմ
կլխին ու ճուրն անց ա կենըմ: Ճուրն անց ա կենըմ ու շորերը նորից հաքըմ: Էսքանը մի ստանա
տենըմ ա ու հրցըմըմ.

– Տու էդ վե՞նց անցկըցար ճուրը, վեր թաց չըլար:

Քաչալը ասըմ ա, թե վենց անցկըցավ: Ստանեն ասըմ ա.

– Տու քու քաչալ տեղովդ ինձանի ուժեղ ե՞ս:

Ստանեն ասըմ ա, թե.

– Ես իմ գիղացածն ասեմ, տու՝ քու...

Էդ տղեն ասըմ ա.

– Դե, էտ ա ես մենակ ճրովն անց կենալն եմ գիղըմ:

Ստանեն ասըմ ա.

– Ծեռդ տրու մի խոզի վրա:

Հլե քաչալը ծեռը տնըմ ա խոզի վրա, ստանեն ասըմ ա.

– Այճիկ, այաճիկ, գնդաշո՛ր:

Քաչալի ծեռը մնըմ ա խոզիցը կպած: Ստանեն ասըմ ա.

– Այճիկ, այաճիկ, հո՛ւպ:

Քաչալի ծեռը պուկ ա կյալի: Քաչալը խոզերը բրախըմ ա ու կյալի հրսանիք: Հլե հարս ու փեսեն
իրար պաչըմ են, քաչալը ասըմ ա.

– Այճիկ, այաճիկ, գնդաշո՛ր:

Հարսն ու փեսեն մնըմ են իրարից կպած: Ախչկա մերը կյալիս ա, ասըմ.

– Դե բո՛լ ա, էլի, լրիվ ծեզ են ճամփա պահըմ, պրծեք, լողով եկեք:

Ախչկա մերը կոնըրներիցը փոնըմ ա, թե չէ, քաչալն ասըմ ա.

– Այճիկ, այաճիկ, գնդաշո՛ր:

Տա էլ ա կաչըմ նրանց: Տե՛ս ախչկա հերն էլ ա կաչըմ: Քաչալին դարզըմ են, վեր բժիշկ պիրի:

Քաչալը քյնըմ ա բժշկին կանչըմ: Ճրովն անցկենալիս, վեր բժիշկը շորերը կլխին ա տնըմ, նորից
քաչալը ասըմ ա.

– Այճիկ, այաճիկ, գնդաշո՛ր:

Տրա կոներն էլ են կաչըմ կլխիցը: Տե՛ս կյալիս են տուն հըսըմ: Տրանք ասըմ են՝ կա-չկա, սա
քաչալն ա անըմ: Քաչալին ասըմ են, թե պաց տու տրանց: Քաչալն ասըմ ա.

– Եթե պաց տամ, էդ ըխչկանը ինձ հետ հրսանիք կանե՞ք:



Ասըմ են.

– Հա՛, քեզ հետ հրսանիք կանենք:

Քաչալն ասըմ ա.

– Այճի՛կ, պյաճի՛կ, հո՛ւպ:

Լրիվն էլ իրարից պաց են ընգնում:


Օխտն օր, օխտը քշեր քաչալին ու էդ ըխչկանը հրսանիք են անում:



Քաչալ – ճաղատ, հեքիաթներում՝
հնարամիտ մարդ
Լողով եկեք – շուտ-շուտ եկեք, շուտ
արեք
Կոնքրներիցը փռնում ա – թևերից
բռնում է
Մուտանըմ ա – մոտենում է
Պուկ ա կյալի – պոկվում է
Ճամփա պահում – սպասում
Ղարգըմ են – ուղարկում են

Թաց չըլար – չթրջվեցիր
Բրախըմ ա – թողնում է
Ըխչկանը – աղջկան
Ստանա – սատանա
Պաց տու – բաց թող
Քյնանք – գնանք
Միար – համար
Ծեռըդ – ձեռքդ
Կեղըմը – գյուղում
Տրանց – դրանց

Տուս – դուրս
Կլխին – գլխին
Ըլըմ – լինում
Տեն – այդպես
Տնըմ – դնում
Ճուր – ջուր
Ծրի – ձրի
Տրու – դիր
Օխտ – յոթ



ՄՈՐԻՆ

Միհետ մի մարդ գնում ա հանդը իրանց հերվա կորած մոզին գոնելու:
Մին էլ տենում ա մի խորը ծմակում մի բան ա կարմրին տալիս: Սա
վեր ա կենում ու առաջ ա գնում: Քանի գնում ա, ընթան էտ կարմրին
տվող բանը մենձ ա դառնում: Սա էտ ա, ուրխանում ա, թե էս ա կա՝
մեր Ալվանն ա, չկա՝ մեր Ալվանն ա: Գնում ա հասնում էտ կարմրին:
Ալվան, ի՞նչ Ալվան, մի եքա մորի: Դես ա քաշում, դեն ա քաշում,
կարում չի գեղնիցը կտրի: Դանակը հանում ա, մի կտոր կտրում ու

ուտում: Էլ մոզի-մուզի չի գալի միտը, թողում ա գալի տուն: Տուն ա հասնում, հորը պատմում, հերն էլ մի
իրեք լուծը սել ա լծում, գնում են աժդահա մորին բերելու: Առաջ են գնում, հըմա թե հերը հվատում չի:
Ասըմ ա.

– Ա՛ լակոտ, ով ա գիղըմ խափում ես:

– Չէ՛, ապի, մի կտոր էլ կերել եմ, ո՞նց եմ խափում, – ասըմ ա տղեն:

Մի քիչ, որ ման են գալի, մորին գոնում են, կացիննին հանում են, կտրատում մորին, սելերը բարձր
ու հա՛յդե, դքա տուն: Էտ ա, մորին բերում են, էտ ձմեռն էլ անխնա բնացնում են, հըրևաննին էլ դե
գուրգ չեն մնում, դեռ մի բան էլ ավել, շատ ու շատ գոհ:

Մի խոսքով, էտ մորին գոնողն ըտքան էլ աչքածակ չի ըլում:

Հերվա – անցյալ տարվա
Ալվան – մոզու անունն է

Միհետ – մի անգամ
Եքա – ահագին

Զուրգ – գուրկ
Դքա – դեպի



ԲԱԽՏՆ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԸ

Մի անբամ թաքավորը աղքատի գրչուլ-մրչուլ շորեր ա հաքնում, ասում.

– Հլա գնամ դես-դեն ման գամ, տենամ ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Վեր ա կենում, գնում: Մի գեղամիջումը անցկենալիս խոսխոսոց ա լսում: Ասում ա.

– Հլա ոտս կախ գծեմ, տենամ էս օքմերը ի՞նչ են գրից անում:

Իրեք հոգի ծառի շվաքումը թինգը տված գրից անելիս են ըլում: Մինն ասում ա.

– Էն ա էս մեր օխնած թաքավորը, որ լավն ըլի, ինձ մի կոտ ոսկի կտա, կգնամ ինձ հմար լիզուս մունջ, կատարս դինջ կապրիմ:

Էն մինն ասում ա.

– Ուզելն ա, ուզելը, էն ա խոշոր-խոշոր բաներից բռնացնեմ, էլի: Թաքավորը իրա ախչկանը որ ինձ տա, գլխիս ծերին կպիեմ, մնի հավին էլա քարով տալ չեմ, մի բանի էլա աչք չեմ գծի:

Էն մի հնգերը սկի լիզուն պոնգովը չի տալի: Ասում են.

– Ա՛ տնաքանդ, խո՞ւ թաքավորը ամեքիս ուզածը բերուց ոչ մեր շլնքիցը կախ տվուց, հնգերական գրից ենք անում, մի շաշ բան էլ դու ասա, էլի:

Էդ մարթը տանում ա, բերում, ասում ա.

– Դուք էլ, ձեր ոչ քարով թաքավորն էլ: Որ բախտը կա, թաքավորն ո՞վ ա:

Էս թաքավորը դրանց գրիցնին չիմ կենդ-կենդ անջակ ա դնում: Ըտիան վիր ա կենում, գնում պալատը, գրչերը վրիցը պլոկում ա, ճրքոճքան շորեր ա հաքնում, թախտին մստում: Մարթ ա դրգում, թե գնացեք, էս փլան մարթկերանցը բերեք: Էն ա գնում են, էդ իրեքին էլ ձեռաց բերում: Թաքավորն էն ծերքին խոսողին ասում ա.

– Էն քուչումը ի՞նչ գրից ես արել, ասա՛:

Էս խեղճի ճոները թիլանում են: Ասում ա.

– Թաքավորն ապրած կենա, ուշունց չեմ տվել, մի գեշ բան չեմ ասել, մենակ ասել եմ՝ թաքավորը թինգութներու սարի պես կանգնած ա, համա որ մի կոտ ոսկի տա, հո լավ կլի:

Էս մարթին մի կոտ ոսկի են տալիս: Էն մնին ասում ա.

– Դու՞ ինչ ուզեցիր:

Ըտի դրա լիզուն կապ ա ընգնում: Ասում ա. «Պահո՛, իմ փայն էլ ըստի հատավ, խու իրա ախչկանն ինձ չտի՞ տալ»: Թաքավորն ասում ա.

– Լիզուդ բռնում չի՞, որ ասես: Ախչիկս քեզ հալալ:

Էն մնին էլ ասում ա.

– Դե որ հույսդ բախտի վրա ա, գնա ըչքել կյանքիդ վերջը քու բախտին սպասի: Գնացե՛ք, ազատ եք:

Էն էրկուսը քեֆներուն տոգոգ գնում են, էն մինն էլ մտքումն իրան ասում ա, հա ասում. «Ա՛ խելքի տոպրակ, խո կիսանըդ ուտեի՞ն ոչ, մի շաշ բան էլ դու կուզեիր, էլի»:

Հասնում են մի գետի: Էն էրկուսը ասում են.

– Դու պարապ իսան ես, ախչկան ու ոսկուն մտիկ արա, մենք քիչ լեղանանք:

Էն ա, հենց դրանք գետն են մտնում, մի կորած-մոլորած ստանաբլուլիճ ա վի կենում, մի անձրև, սելավ, էս էրկու մարթը ջրատար են ըլում, վենձ թիքենին անջակնին ա մնում: Էն սաղ մնացած մարթն էլ էդ ախչկանն ու ոսկին վիր ա ունում ու՛ հայդա, քոռին ի՞նչ ա պետք՝ ջուխտ աչք:

Մի տարի ա անց կենում, թե էրկու, էդ էլ Աստոծ գիդե, էս թաքավորը մարթ ա դրգում, ասում ա.

– Գնացե՛ք էս փլան գեղը, տեհեք էն փլան մարթը դեռ սա՞ղ ա, թե՞ սովիցը մեռել ա:

Գնում են, գալիս, թե.



– Պա՛, թաքավորն ապրած կենա, աչքդ էն բարին տենու, հենց պալատնի ա սարքել, որ պատկերդ միջին կըրնա: Պալատի ճակատին էլ ոսկի տառերով գրել ա. «Թե բախտը կա, թաքավորն ո՞վ ա»:

Թաքավորը տեղիցը ցոփ կանգնում ա, ձի նստում, գնում ուղիդ էդ մարթի կուշտը: Բարև-աստծու բարին, ո՞նց ես, ի՞նչ ես, մխելի լոբի-ծավար են անում, թաքավորն ասում ա.

– Ա՛յտա, բա էս ո՞նց էլավ:

Էս մարթը պատմում ա ու ասում.

– Բա՛, թաքավորն ապրած կենա, սին՝-սին՝ բան, հմի տեհա՞ր, որ ճիշտ էի ասում:

Իմ փայն էլ ըստի հատավ – իմ վերջն
էլ այստեղ եկավ
Լոբի-ծավար են անում – դեսից-
դենից են խոսում
Քեֆներուն տնգոզ – շատ բարձր
տրամադրությամբ
Յոփ կանգնում ա – միանգամից
կանգնում է, ցցվում է
Լիզուն պոնգովը չի տալի – բոլորովին
չի խոսում
Ճաները թիլանում են – ծնկները
թուլանում են
Ջրատար են ըլում – ջուրը քշում է,
խեղդվում են
Կատարս դինջ – գլուխս հանգիստ

Պարապ խսան – անգործ մարդ
Ձեռաց բերում – խկույն բերում
Խոսխոսոց – խոսակցություն, վեճ
Ծրքճրքան շորեր – նոփ-նոր շորեր
Ստանաբլուլիճ – ուժեղ քամի
Մարթկերանցը – մարդկանց
Վի կենում – բարձրանում
Սին-սին – այսպես-այսպես
Վենձ թիքեն – մեծ կտորը
Ծերքին – առաջին հերթին
Կիսանդ – մարմնիդ կեսը
Լեղանանք – լողանանք
Ուշունց – հայհոյանք
Քուշումը – փողոցում
Գրշուլ-մրշուլ – ցնցոտի

Շվաքումը – ստվերում
Դրգում – ուղարկում
Օխնած – օրհնած
Շլնքիցը – վզից
Սելավ – հեղեղ
Անջակ – ականջ
Տեհեք – տեսեք
Կըրևա – կերևա
Մխելի – շատ
Ըստի – այստեղ
Շաշ – հիմար
Ըչքել – մինչև որ
Փլան – այսինչ
Օքներ – մարդիկ



ԽԵԼԱՑԻ ՀԱՐՄՆԱՅՈՒՆ

Էրկու տղա են ըլում: Էրկուսն էլ մի ըխչկա սիրելիս են ըլում: Էդ ախչիկը տղերանց տրեխների մեջը ավազ ա ածըմ ու ասըմ.

– Ով վեր էդ ավազը տրեխների միջին հրեվան կեղը քյնա ու կյա, ես նրա հետ դեմ հրսանիք ըլիլ:

Էդ տղերքը ճամփա են ընգնում: Ճամփին մի տղեն ասըմ ա.

– Ո՛ւզըմ ա ինձ հետ ամուսնանա, ուզըմ ա՛ չէ՛, ես տրեխներիս ավազը վեր եմ ածըմ: Վետներս արդեն ցավըմ են:

Էն մի տղեն ավազը վետներըմը հասնըմ ա հրեվան կեղը: Ախչիկը տենըմ ա, վեր մենակ մի տղեն ա ավազը վետներըմը ետ տառել, ասըմ ա.

– Վեր տու քեզ խնայըմ չես, ինձ էլ չդես խնայիլ:

Ու ախչիկը ամուսնանըմ ա էն տղի հետ, վերը ավազը տրեխներիցը թափել էր:

Հրսանիք ըլիլ – ամուսնանալ
Վետները – ոտքերը

Ըխչկա – աղջկա

Ըլում – լինում





ՍԱՏԿԵՑԻՐ, ՄՈՐԵԽ

Ըլում ա, չըլում մի թաքավոր: Էս թաքավորը մի լակլակ տղա ա ունենում: Օրերից մի օր ձեն-ձենի գալիս ա, թե էս տղի ձեռի միջին մի բան կա, ով գլխի ընգնի, թե էդ ինչ ա, էդ տղեն իրա ունեցած ոսկին դրա հետ կես ա անում: Ով էլ գլխի չընգնի, դրա գլուխը թոցնել տին: Դե ասում են՝ թաքավորի տղա ա, կամ ձեռի միջինը ոսկի կլի, կամ մի լավ բան, էլի: Ով գնում ա, գլխի չի ընգնում, դրա շինքը կտրում են:

Էդ կողմերումն էլ մի տղա ա ըլում, տուն ու տեղ չի ունենում, մի օր սրա դռանն ա քշերը լիսացնում, մի օր՝ նրա, դրա ծերա անումը դնում են Մորեխ: Էս տղեն ասում ա. «Մորեխ ջան, հլա դու էլ գնա, հեքուց սովիցը տեիր մեռնիլ, սօր թաքավորի տղեն թող սպանե»: Վիր ա կենում, սուս ու փուս գնում: Ասում ա.

– Ես կասեմ, թե ինչ կա ձեռիդ միջին:

Թաքավորի տղեն ասում ա.

– Դե՛, ասա, չուգողն էլ ես ըլիմ:

Էս Մորեխս դես ա ընգնում, դեն ա ընգնում, գլխի չի ընգնում: Ա՛յ մարթ, ի՞նչ գիդեմաս էս մարթն ի՞նչ ա պահել: Ըստի դրա սիրտը վախիցը գորդան պես ծուլ-ծուլ ա ըլում: Ինքն իրան ասում ա.

– Է՛, սատկեցի՛ր, Մորեխ, սատկեցի՛ր...

Էս թաքավորի տղեն նազիր-վեզիրնուն կանչում ա, ասում.

– Էս տղի շորերը փոխեցեք, լեղացրեք, ըժու իմ հարստության կեսը տվեք իրան:

Սաղ զարմանում են, ասում.

– Բա էդ ո՞նց էլավ:

Ասում ա.

– Բա քիչ ա գլխի ընգավ, որ ձեռինս մորեխ ա, հետն էլ գիդեցավ, որ սատկած ա:

Դու մի ասի ձեռինը մորեխ ա էլել:

Էդ ա, էլի, որ ասում են. «Զոռ ագռավի բունը Աստոծն ա շինում»:

Դրա ծերա – դրա պատճառով
Գորդան պես – գորտի պես
Կես ա անում – կիսում է

Լեղացրեք – լողացրեք
Լակլակ – թեթևալիկ
Անումը – անունը

Շինք – վիզ
Ըժու – հետո



ԲԱԽՏԸ

Էրկու քիր են ըլում, մինը համ շատ սիրուն ա ըլում, համ շնորով, խելքով, էն մինն էլ համ գեշ ա ըլում, համ անբան, համ էլ խելքը թամուզ ավլած: Էրկուսն էլ մարթի են գնում: Ըժու էն լավ քվոր մարթը սաղ օրը խմում ա, կնգանը ծեծում, կեստուն էլ մի կոնուցն ա միսն ուտում, համա էն գեշ քվորը մարթը գլխի վրա ա պահում, կեստուն էլ ըղաքին պտիտ ա գալի: Որ էս լավ ախչկա ջանին հասնում ա, մի օր գնում ա քվոր տուն, ասում.

– Ա՛յ քիրա, ընչի՞ցն ա, որ ես չիմնում էլ հարգում են, պատվում, ըժու օրս լացով ա անցկենում,

ըծու դու սաղ օրը ձեռներդ ծալած - մատած ես, ծիծաղն ըրեսիցդ պակսում չի:

Գեշ քիրն ասում ա.

- Հլա դուս արի:

Դուս եմ ըլում, ասում ա.

- Հլա ձեռն տու՝ բա՛խտ:

Էդ լավ ախչիկը ձեռն ա տալի.

- Բա՛խտ...

Բախտն ասում ա.

- Չո՛ռ...

Գեշ քիրն ասում ա.

- Հմի լսե, ես ձեռն տամ:

Ձեռն ա տալի.

- Բա՛խտ...

Բախտն ասում ա.

- Ջա՛ն...

Գեշ քիրն ասում ա.

- Տեհա՞ր, այ քիրա, չիմ բախտի բան ա, սիրունը ո՞րն ա, գեշը ո՞րն ա...



Ջանին հասնում ա - համբերությունը հատում է
Խելքը քամուզ ավլած - խելապակաս

Մի կռնուցն ա - մի կողմից է
Չմունն էլ - բոլորին էլ



ԻՇԻ ԿԵՆԱՅԸ

Մի հլիվոր մարք իշով ճամփեննի գնալիս ա ըլում: Տենում ա մի էրկու ջահել-ջուհուլ հվաքված քեփ եմ անում: Էդ ջահելնին, որ դրան տենում եմ, ասում եմ.

- Պապի՛, իշիցդ վեր արի, մեմեն քիքա-միքա արա, եղնա կգնաս:

Էս հլիվորը մինն էրկու չի անում, վեր ա գալի, կողքներուն ծլպատակ

անում: Համա էս ջահելնին փորացավ ունին, ուզում եմ էս հլիվորին ձեռ առնուն: Ասում եմ.

- Էս էլ խմենք քու իշի կենացը:

Հլիվորն էլ դես-դեն չի ընգնում, ասում ա.

- Հա՛, տղերք ջան, ես էլ եմ իմ իշի կենացը խմում, որ ձեր նման ազիզ հընգերտինք ունի, ամեն հացի նստելով ծերքնածաղիկ նրա կենացն եք խմում:

Մեմեն քիքա-միքա արա - մի կտոր
հաց կեր
Մինն էրկու չի անում - չի
երկարացնում

Ծերքնածաղիկ - ամենաառաջինը
Ճամփեննի - ճամապարհով
Ծլպատակ - ծալապատիկ
Հլիվոր - հալկոր

Վեր արի - իջիր
Եղնա - հետո

ՀԱՐԻՍԱ



Մի մարթ իրա հնգոր տուն դոնախ ա գնում: Դրանք հարիսա են էփած ըլում: Չիմ վրա են դառնում, ուտում: Էդ մարթը հասցնում չի կշտանա, համը մնում ա բերանումը:

Մանչում ա, թե էլ ուզե: Ասում ա.

– Էս ճաշի անումն ի՞նչ ա, որ սին համով ա:

– Հարիսա ա:

Խատատ-մատատ վիր ա կենում, մտքումը «հարիսա-հարիսա» ասելով գնում ա, որ կնիկն էփե, մի փոր ուտե: Գնում ա, գնում, ճամփումը ջրով լիքը փոս ա ըլում, մեջն ա ընգնում: Մինչեվը դուս ա գալի, շորերը մաքրում, ճաշի անումը մտահան ա անում: Տուն ա հասնում, ասում.

– Ա՛յ կնիկ, էփե՛:

– Ի՞նչ էփեմ:

– Չէ՛ որ չէ՛, մեռնի՛ս – կտրի՛ս էփե՛լ տիս:

Կնիկը կիսումը ճոթ ա ըլում:

– Ի՞նչ էփեմ:

– Չէ՛, էփե՛, էն, որ իմ հնգոր տանը կերա: Էփե՛լ տիս, համով էր, աչքս վրին մնաց:

– Ա՛յ տոնքանդ, ես ի՞նչ գիդեմ ի՞նչ ես կերել, որ էփեմ:

– Ես քեզ ասում չե՞մ՝ էփե՛:

Կնգանը մի լավ տալիս ա, դգում: Որ շատ, որ շատ, կնիկն ասում ա.

– Հերի՛ք ա, ամո՛թ ա, հլա շնոքով ասա, ի՞նչ ես կերել, անումն ի՞նչ էր:

– Էն ա, որ գիդենամ, կասեմ, էլի, – ասում ա մարթը:

– Բա խի՞ չհարցրիր:

– Ախ՛շի՛, հարցրի, էլի: Ասելով էկա, որ մտիցս ընգնի ոչ, էն էլ դմբովածի պես ջուրն ընգա:

Մինչեվը շորերս մաքրեցի, մի - երկու ուշունց տվի, անումը մտիցս թռավ:

– Վա՛յ, քու փայլը շատ ըլի, հլա արի գնանք էդ ջրի կուշտը, բալքի հիշես:

Էդ ա, վիր են կենում, գնում: Հմի էդ ջրի դրաղին դես ա պտիտ գալի, դեն ա պտիտ գալի, միտը չի ընգնում: Կնիկը ասում ա.

– Ա՛յ մարթ, վի կաց գնանք, մինչեվ ե՞փի տիս էդ տիլը ոտքել: Մշա կխշորեցիր՝ հարիսա շինեցիր:

– Պա՛, էդ ա որ կա, հարիսա՛, հարիսա՛, լավ գդար:

Հմի էլ կռվում ա կնգա հետ, թե որ անումը գիդեիր, խի՞ չի շուտ ասիր: Էն ա, թաթաքոնուկ արած ուրախ-ուրախ տուն են գնում:

Հմի ասված խոսք ա, որ բանի ես գնում, մտահան ես անում, եդ արի տեղդ, հիշել տիս:

Կիսումը ճոթ ա ըլում – շատ է զայրանում
Թաթաքոնուկ – ձեռք-ձեռքի բռնած
Խատատ-մատատ – շտապ-շտապ
Տիլը ոտքել – ցեխը, տիլը տրորել
Մտահան ա անում – մոռանում է

Դմբովածի պես – շշմածի պես
Մտիցս ընգնի ոչ – չմոռանամ
Մանչում ա – ամաչում է
Կխշորեցիր – տրորեցիր
Էփել տիս – պիտի եփես

Հնգոր – ընկերոջ
Չիմ – բոլորը
Սին – այսպես
Մշա – այնքան
Բալքի – գուցե





ԿԱՐՄՐԵԼ ԵՄ, ԳԱՄ

Մի ախչիկ ա ըլում, շատ գեշ, սևակրեմ: Մի օր դրանք փութը վառած հաց թխելիս են ըլում, դրանց տուն խնամախոս են գալի: Մերն ասում ա.

– Ա՛ գեղինը մտած, որ տենան էդքան սև ես, ուզել չտին: Ես գնամ տենամ ինչ մարթիկ են, դու փռան ըղաքին մչա կանգնի, որ կրակն ըրեստվդ տա, մի լավ կկարմրիս, մոր կգաս:

Ասում ա ու գնում: Ես ախչիկը փռան ըղաքին կանգնում ա, համա

սիրտը ճլվստին ա տալի, դրա ուշքն ու միտքը տունն ա, ասում ա.

– Տենաս սիրտ՞ն տղա ա, թե՞ գեշ:

Վերջը, որ տենում ա էլ կարում չի համբերե, ասում ա.

– Հլա գնամ, մչա կարմրեցի, հերիք էլ ա, շատ էլ:

Վիր ա կենում, գնում դուռը ծերպ ա անում, ասում.

– Աճի՛, կարմրել են, գա՞մ:

Էդ խնամըքերը ըտի մատներուն կծում են, տենում են, որ դրա վերի կուտը թամուզ ավլած ա, վիր են կենում, սուսուփուս գնում:

Հմի, որ մի ախչիկ փռան մոտ կարմրում ա, ասում են.

– Տանելուդ տարին ա:

Վերին կուտը թամուզ ավլած ա –
խելապակաս է
Ծերպ ա անում – կիսաբաց է անում

Ճլվստին ա տալի – թրթում է
Խնամըքերը – խնամիները
Աճի – մորը դիմելու ձև

Սևակրեմ – սեփ – սև
Ըղաքին – առջևը
Մչա – այնքան



ԽՈՒՐՋԻՆԸ

Մի մարթ ձին վիր ա ունում, խուրջինը վրին գծում, գնում ա հանդը տանձի: Որ քաղում ա, խուրջինը ըռխից հետ լքցնում, ձին հեռու ա կապած ըլում, խուրջինը շլակում ա, տանում ձիու կուշտը, որ վրին գծե: Ընդհան մի չոբան ասում ա.

– Ա՛յտա, էդ ու՞ր ես միչկահան ըլում, էն ա ձին կտանեիր խուրջինի կուշտը, էլի:

– Հա՛, է՛, ճիշտ ես ասում, – ասում ա էս մարթը, էդ խուրջինն էլի շլակում ա, տանում էլետ իրա տեղը, գնում ձին բերում, խուրջինը վրին գծում ու գնում:

Միչկահան ըլում – չարչարվում
Այտա – դիմելածն

Ըռխից – բերանից

Կուշտը – մոտ



ՄԻԾԻԴԱՐՆ ՈՒ ԾՈՎԻՆԱՐԸ

Ըլում ա, չըլում, մի թաքավոր ա ըլում, իրեք հատ տղա ա ունենում: Օրերից մի օր էս թաքավորը հիվընդանում ա, մահի դուռն ա ընգնում: Որ տենում ա էլ ճար չկա, տղերանցը կանչում ա, կշտին նստացնում, ասում.

– Շատ մեք դարդ անել, ձեզ մատաղ, Աստոծ իսանությունը ստեղծելիս ճկատին գրեց, որ մի օր ծնվել ա, մի օր էլ մեռնիլ տի: Էն

ա տենում եք՝ ես մեռնում եմ, հենց արեք, որ ձեր հոր թուրը ժանգոտի ոչ: Գնացե՛ք, կովեցե՛ք, քլանցե՛ք, համա ես որ ճամփովը, որ գնացել չեմ, դուք էլ չգնաք:

Էդ ա, էդ թաքավորը վեր ա ընգնում, մեռնում:

Օրերից մի օր վենձ տղեն դբա հյուսիս մտիկ ա անում, ասում.

– Հա՛յ, իմ հոր ինչն եմ ասել, գնաց սաղ աշխարքը քլանց, բերուց ոսկի պալատնի շինուց, ըժու Էն հարուստ երգրի վրա ոտ չդրուց:

Վիր ա կենում, վենձ գորք հվաքում, գնում: Տեղ ա հասնում, տենում, ի՛նչ տենում, աչքդ Էն բարին տենա, է՛լ ոսկի տներ, է՛լ անմահական բաղ ու բախչա, է՛լ խանութնի, է՛լ պալատնի, զրմանում ա, թե Էն ինչ տեսակ-տեսակ ուտելիք ա ըլում միջին: Ըտի էլ դիմանում չի, հորն ուշունց ա տալի, թե.

– Հա՛յ քու մարթ ասողի ինչն եմ ասել, բա էս տեսակ երգիրը բրախել ես, քոսոտ երգրնին ընգե՞լ:

Էն ա գորքը պալատն ա անում, ասում.

– Կերե՛ք, Էնքան կերեք, որ հենց մատներուդ բերաններուդ տանիք թե չէ, կերածներուդ դեն առնու:

Դրանք հվաքվում են մեղրաճանջի պես, հլա դեռ թիքա չեն պոկած ըլում, երգնքումը մի ծղրտոց ա գալի, մի ծղրտոց, որ սարերը դմբդմբում են: Տղեն ասում ա.

– Ձեն չհանեք, դա ըստի վեր տի գալ, թող վեր գա, տենանք, թե ուզենա վնաս տա, չիմովի վրա կդառնանք, թիքա-թիքա կանենք, բմբուլը քամում կտանք:

Ջորըը լղաճաք էլած դուս ա գալի, տենում, որ մի թևավոր հրեշ օդումը ճչալով, ծղրտալով պտիտ ա գալի: Էդ հրեշը դրանց տենում ա, թե չէ, դվեր ա գալի, իրա թևերով, շնչով, պոչով էդ սաղ գորքին կենդ-կենդ կտորում, մի շունչ կենդանի չի թողում: Էլի ծղրտալով, ճչալով օդն ա ծուլ ըլում, գնում:

Անց ա կենում մի տարի, թե Էրկու տարի, էս ախպերտիմքը տենում են, որ իրանց վենձ ախպերը գնաց ու գնաց: Միջնակն ասում ա.

– Նա իրա հացը գդավ, հմի քեֆ ա քաշում, մեզ էլ մտիցը գձել ա: Հլա ես էլ տիմ գնալ:

Վիր ա կենում, իրա ախպոր գորքիցն Էրկու անգամ վենձ գորք ա վիր ունում, գնում: Գնում ա վենձ ախպոր մնան կտորվում:

Ամիս ա անց կենում, տարի ա անց կենում, էս պուճուր ախպերը տենում ա, որ իրա ախպերտիմքը գնացին, ոչ իրանք եղ Էկան, ոչ էլ մի խաբար դրեցին, ասում ա.

– Չէ՛, ասե բան չի ըլիլ, հլա ես էլ տիմ գնալ, ինչ կլի՛ կլի:

Վիր ա կենում, հոր թուրը միջկին կապում, ծիտ-մենակ ըղու ըլում: Գնում ա, գնում, շատն ու քիչն էլ Աստոծ գիղե, հասնում ա էդ հարուստ երգիրը: Տենում ա է՛լ մարդու կուռը, է՛լ ոտը, է՛լ թուր, է՛լ փալաս-փուլուս հրեն իրար գլխի կիտած, ասում ա.

– Տե՛ր, քեզ մեղա, էս թե իմ ախպորտանց գորքն ա, ըստի իսանի շփթու չկա, թե նրանք չեն՝ բա որդի՞ են:

Էդ ասելուն մի գեշ ծղրտոց ա անջակովը դիպչում, տենում ա մի սև բան դքա իրան ա թռչում: Էդ հրեշը գալիս ա, տղի գլխավերևը կանգնում, ծղրտում, դես ա պտիտ գալի, դեն ա պտիտ գալի, ասում ա.

– Ա՛յ ջահել, ա՛յ սիրուն տղա, ծիտն իրա թևովը, օձն իրա պորտովը դեսը չի գալի, դու քանի՞ գլուխ ունիս, որ էկել ես: Հլա ասա, տենամ էդ ո՞վ ես, որ տհե գլխիցդ ձեռն ես վիկալել:

Տղեն ձեռը թրի վրա ա դնում, ասում.

– Ես Միծիդդարն եմ, բան ե՞ս ասում:

– Դու գիդե՞ս, որ քեզ կկտորեմ, իմ շներին կտամ:

– Թե էդքան սիրտ ունիս, մին դվեր արի, կաշիդ գլխովդ տիկ կհանեմ:

– Միծիդդար տղա, էդ հեչ, կարալ չես, ասելը հեշտ ա, համա գիդեցի, որ ես ախչիկ-հրեշ եմ, սաղ երգիրը իմ անումիցը ծառի պես դողդողում ա: Ես Ծովինարն եմ:

– Ծովինարը չիս, ով հլե ըլիս, ինձ հմար էլած-չէլած: Շատ խոսելուցդ օգուտ չկա, հլա դվեր արի, թուրդ հանե:

Հրեշը կամաց դվեր ա գալի, ասում.

– Միծիդդար, ես կարեի քեզ երգնքիցն առանց դվեր գալու սպանեմ, համա շատ զրմացա, որ դու էդքան սիրտ ես ունեցել, դեսը մենակ էկել ես: Ջահել ես, շատ էլ սիրուն ես, ափսուզ ես, արևդ քեզ եմ տալի, համա թող քեզ իմ ուզածի սիլա տամ:

Միծիդդարն էլ դես-դեն չի ընկնում, ասում ա.

– Համաձայն եմ:

Հրեշը կաշին վեր ա գծում, դառնում մի սիրուն ախչիկ: Հենց ադաք ա գալի, որ տղին սիլա տա թե չէ, էս Միծիդդարը վրա ա պրծնում, դրան գետնին չոքացնում ու բզիցը բռնում: Ախչիկը, որ տենում ա էլ դես-դեն չկա, կախարդում ա, տղեն ուշաթափվում ա, ինքն էլեդ հրեշի կաշին հաքնում ա ու ծղրտալով փախչում: Տղեն ուշքի ա գալիս, տենում, որ հրեշը գնացել ա, համա դրա գլխաշորը մնացել ա իրա ձեռին, ասում ա.

– Քանի բերանումս շունչ կա, գնալ տիմ, դրան գդնուլ, ուզում ա օխտը սարի քմակին էլ ըլի:

Գլխաշորը ծալում ա, ծոցումը դնում ու գնում: Շատ ա գնում, թե քիչ, տենում ա հրես խորը ծնակումը մի ծուխ ա ծուլ ըլում: Քիչ էլ ադաք ա գնում, տենում ա, ըհը՛, մի տուն: Դուռը ծերպ ա անում, ծիկրակում, տենում, որ մի պառավ կնիկ պղնձնու միջին միս ա էփում: Ասում ա.

– Բարի օր, ա՛յ մերա:

Էդ կնիկը շշմըմ ա, ասում.

– Բարին արևիդ, ա՛յ որդի: Դու ո՞վ ես, որ սիրտ ես արել էս օրանա-վերանա ծնակն ես էկել:

– Դամփորդ եմ, ա՛յ մերա, էս քշեր դոնախ ընդունե:

– Դոնախն Աստունն ա, որդի ջան, համա որ ըստի կենաս, ռավոդվա արևի էրեսը տենալ չես:

– Էդ ի՞նչ մխելի ճաշ ես էփում, ա՛յ մերա, խու հրսանքագործ չունի՞ք:

– Չէ՛, որդի, իմ տղերանց հմար եմ էփում, էս ա ֆորսիցը սոված-ծարավ գալ տին:

– Էդքանը ո՞նց տին ուտել:


– Ի՛հ, ըրևում ա բեխաբար ես: Բա էս տանը օխտը դե եմ կենում՝ իմ տղերքն են: Էսքանը ըսկի նրանց մի ատամին չի հերիք: Դե շուտ արա փասա-փուսեդ հվաքե, ըստիան անգումի արի, թե չէ որ էկել եմ, թիքա-թիքա տին անել քեզ:

– Հա՛, բան չկա, ես ըստի խտոր ընգնիմ, քիչ դիմջանամ, որ գան, ինձ կասես, վի կենամ:

Պատի որքումը ոսկեմի ա ըլում կիտած, գնում ա մեզնվում ու քնում: Հենց մութը ընգնում ա, էս օխտը դենը իրար եդնա ծլաշարուկ տուն են մտնում: Մինն ասում ա.

– Ա՛յ մերա, խու դեսնի դրադական օքմի չկա՞, ֆոտ եմ առնում:

Պառավի լիզում կապ ա ընգնում, դես-դեն խլշկոտում ա, կմկմալով ասում ա.



– Չէ՛, եփած մսի ֆոտոն ա:
 Էն մի՞նն էլ ասում ա.

– Ա՛խ, թե Միծիդդարը ձեռս ընգնի, ոսկեմին ատամիս տակին կփշրեն:
 Միծիդդարը գլուխը բցրացնում ա, ասում ա.

– Ա՛յ մերա, բա ես քեզ ասի ո՞չ, որ տղերքդ գան, ինձ վի կկացնես:
 Դևերը ըրմանում են, ասում են.

– Հմի քեզ հում-հում կերած կլեինք, համա որ դու էդքան ոսկով ես, որ էկել ես մեր տուն, ձեռ չենք տալիս, ջահել, սիրուն տղա ես, ափսուզ ես:
 Որ մատում են հացի, տղեն ասում ա.

– Էս ա՞՞ ձեր ֆորսը:
 – Է՛, ախպերացու, ինչի՞ց ես խաբար, էն թավուր ֆորս ունեինք որ, համա հմի ծառի տակեռով ենք յուր գնում, կարում չենք մեր տանը մի հալալ թիքա պոկենք:
 – Խի, ի՞նչն ա խընգառում:
 – Ա՛յտա, բա ասում չե՞ս, էս մխելի վախտ ա էս սարերումը մի հրեշ դես ա թռչում, դեն ա թռչում, ասում ա. «Միծիդա՛ր, արի՛, Միծիդա՛ր, արի՛»: Էս ձորերումն էլ շնչավոր չի մնացել, էդ ձենն իմացողը հա՛ ա անում, որ գլուխը պրծացնի: Համա թե որ էդ Միծիդդարը ճանգներուս կընգնի՛...
 – Ի՞նչ կանեք:
 – Կուտենք, էլի, խու ճակատը պաչելու չտի՞՞նք, մրա ծերա ձեռներուս կուշտ փորի չենք դնում:
 – Բա ես Միծիդդարն եմ:
 Ըտի դևերը վրա են թափում, որ Միծիդդարին ըղաղորեն, մի՞նն ասում ա.

– Միծիդդա՛ր, քու փայն էլ ըստի տեր հատնուլ, համա որ քու սրտումը վախի թիքեն աղաթ չի, սորվանուց դու մեր հալալ ախպերն ես: Մենք իմաստուն դևեր ենք, արխեին գնա, մեղ օրիդ էլ ենք կանգնած, լեն օրիդ էլ:

Էդ տղեն ճամփա ա ընգնում, գնում ա, գնում, ծովի դևերին ա ռաստ գալի: Ըժու փահլևան դևերին ա ռաստ գալի: Սրանք սլարում են, ասում են.

– Դու առյուծի սիրտ ե՞ս կերել, որ էս քաղաքի վրա էկել ես: Մենք հլա հեշ, համա էս ժողովուրդը քու վրա շատ ա կտաղած: Աստո՞ծ ոչ անե, որ քեզ ըստի ճմանչող ըլի:

– Խի՞, ես ու՞մ իշին եմ չոշ ասել:
 Ասում են.

– Բա մեր երգրի թաքավորը մի հրեշ ախչիկ ունի, անումը Ծովինար: Էդ Ծովինարը երգրիս ըրեսին էլ գորք չի թողել, չիմ կտորել ա: Ասում են՝ մի Միծիդդար անումով տղա ա լիս ընգել, որ էդ Ծովինարի հախիցն էկել ա: Էդ ախչիկը հմի էրկու ոտը մի փափչումն ա դրել, առել ա ընգել, թե էդ ոչ բարով Միծիդդարին գդեք, որ ինձ ուզե: Թաքավորի մանը չմեռնի, էլ ժամ ու պատարագ չեն ասում, ռավոդից ըիգու ամեն օր էս երգրի ջահել-ջուխուլումն թոփ ա անում, կանգնացնում, ինչ ա թե Ծովինարը գոմուլ տի Միծիդդարին: Ծերքին չիմն էլ ուրխանեին, ասեին՝ բալքի շշկլվի, իրանց ասե: Համա հմի զահլեներուն գնացել ա, բան ու գործիցն ընգել են: Հմի դու անումդ ասես ոչ, թե չե՛ հում-հում կուտեն:

Դրանց էլ ա հնգերանում: Վերջը վիր ա կենում, դուզ գնում թաքավորի պալատը, ասում ա.

– Թաքավորն ապրած կենա, քու ման էկած Միծիդդարը ես եմ: Ըհը՛, էս էլ քու ախչկա գլխաշորը:
 Սաղ պալատը վրա ա թափում, որ Միծիդդարին տենա: Էն ա Ծովինարին ու Միծիդդարին օխտն օր, օխտը քշեր հրսանիք են անում: Թաքավորը թախտիցը վեր ա գալի, Միծիդդարին մատացնում:
 Մի օր թաքավորը Միծիդդարին պատմում ա.

– Է՛, այ որդի, բա ես սհե-սհե պալատնի ունիմ, համա էդ չիմ հեշ, մի քաղաք ունիմ, որ մեչը մտնուս, հայիլ-մայիլ կմնաս: Էդ քաղաքն իմ Ծովինարն ա պահում: Է՛, քանի՛ թաքավոր ա էդ

քաղաքի հմար իրա գլուխը կորցրել...

Միծիդարը գլխի ա ընգնում, թե էդ ինչ քաղաք ա, համա բերանը բաց չի անում:

Օրերից մի օր Միծիդարն ասում ա.

– Այ Ծովինար ջան, դու գիդես, թե քեզ ինչքան եմ սիրում: Սաղ օրը պատկերիդ մտիկ եմ անում, էլեդ կշտանում չեմ: Բու նկարը տուր ծոցումս դնեմ, որ էնինչ մտիկ անեմ, բալքի կշտանամ:

Ծովինարն ասում ա.

– Էն ա, ես կշտիդ եմ, էլի, նկարն ի՞նչ ես անում:

– Չէ՛, – ասում ա, – ուզում եմ նկարդ ծոցիս դնեմ:

Էն ա, նկարը վիր ա ունում, ծոցին դնում:

Դրանք մարթ ու կնիկ ամեն ռավող վիր են կենում, պալատի աղաքին գետ ա ըլում, գնում են էդ գետումը լվացվում: Մի օր էլ Միծիդարը կռանում ա, որ ջուր խմե, թե չէ, նկարը ծոցիցը գետն ա ընգնում, ջուրը տանում ա: Միծիդարը շատ ա տանջվում: Ծովինարն ասում ա.

– Բան չկա, էլածը մի նկար չի՞, միմն էլ կտամ:

Էդ նկարը ջուրը տանում ա, տանում, մի երգրի թաքավորի սահմանումը ոտն անում: Թաքավորի տղեն իրա ծառաներով ձիանը բերած ա ըլում ջուր տալու: Տենում ա, որ ձիանը ջրիցը խրտնում են, եդ կանգնում, ասում ա.

– Այ մարթ, էս ի՞նչ հրոզմունք բան ա, իմ ձիանը սկի օձիցն էլ չեն սհե վախում: Հլա գնացեք տեհեք ընդի ի՞նչ կա:

Գնում են, ի՞նչ տենում, որ լավ ըլի, հրեն մի սիրուն ախչկա նկար: Վեր են ունում, տանում տղին տալիս: Տղեն շատ մտիկ ա անում, մտիկ, ձիու գլուխը շուտ ա տալի, դուզ տուն ա գնում, հորն ասում.

– Այ հերա, էդ դու, էս էլ ե՛ս, թե ինձ սիրում ես, էս ախչկանը գոյի, ինձ հմար ուզե:

Հերն ասում ա.

– Այ որդի, իմ երգիրը լիքը սիրուն ախչիկ ա, մնին կարում չե՞ս ուզես, ես դրան որդիա՞ն գդնում: Տղեն ոտը դեմ ա տալի, թե՛

– Չէ՛ որ չէ՛, կամ գնդուլ տիս, կամ ես քունը չեմ:

Թաքավորի տեղը նեղանում ա, ժողովրդին հվաքում ա ու ասում ա.

– Այ ժողովուրդ, սհե-սհե բան ա, ո՞վ կարա էդ ախչկանը գդնու, բերե:

Միմն էլա ձեն չեն հանում. ո՞վ գիդե ո՞ւմ ախչիկն ա: Մի պառավ կնիկ, կուզը վրա գծած, ասում ա.

– Թաքավորն ապրած կենա, ես կարամ:

Ժողովուրդը սլարում ա: Թաքավորն ասում ա.

– Ո՞նց կարաս:

Ասում ա.

– Էդ քու գործը չի, մենակ ինձ մի նավ տուր, մի հինգ հատ ուժով տղամարթ, մին էլ քու երգրումն ինչքան սիրուն ծաղիկ կա՝ ամեն ջոռիցը մի հատ:

Պառավի ուզածը տալիս են, ճամփու դնում: Հմի պառավը նավը քշողնուն խտատացնում ա.

– Հա՛յ ձեզ մատաղ, յիգին արեք, տեղ հասանք, հա՛, դեսը գնացեք, դենը խտորվեցեք...

Օխտն օր, օխտը քշեր ճամփա են գնում անդինջանալ, անհացուտել: Վերջը, որ տեղ են հասնում, պառավն ասում ա.

– Նավը պհեցեք, դուք էլ էդ բրնուտնումը դայիմ տապ արեք, ժաժ չգաք, ես ինչ կանեմ՝ կանեմ:

Էս պառավը բռնում ա հագի շորերը չիմ պտռատորում, ձվիկ-ձվիկ անում, մազերը քծծում, գնում թաքավորի դռանը շլինքը ծռում, նստում, ձեռները դռին դնում: Խաբարը Միծիդարին ա հասնում, որ սհե-սհե պառավ կա, ինչքան ասում են՝ գնա, էրեսը հաստացնում ա, գնում չի: Միծիդարն ասում ա.



– Դա մեզ շառի կտա, ճվիցը բռնեցեք, զոռով դուս գծեցեք, ռադ ըլի, կորչի:
Ծովինարն ասում ա.

– Միծիդդար ջան, խի՞ ես անխիղճ բան անում, պառավ կնիկ ա, դա մչա տութար ունի, ոչ մեզ քոլլող տա: Թող գա մեզ քոծություն անե, հաց ուտելիս մի թիքա էլ իրան կտանք, մենք էլ տինք պռավիլ, էլի:

– Մեղք ա՛ հաց էլ կտանք, փող էլ կտանք, համա դա մեզ շառի կտա, մեզ քոծ չի պետկը, էլածիցն ենք կրակն ընգել: Բի փեշիդ քարը վեր ածա:

Վերջը, որ Ծովինարը շատ դանչաք ա անում, ասում ա.

– Հա՛, դե լավ, ուզում չեմ սիրտդ կոտրեմ, ո՞վ գիդե, բալքի լավն էդ ա, համա սօրից եղը, եթե մեր գլուխը ցավեց, ուրեմը էդ պառավի մատը խառն ա:

Վերջը էս պառավին դրանց հմար քոծ են բերում: Տներն ավում ա, լվանում, մաքրում, աղաքներում պտիտ ա գալի: Էս Ծովինարն ամեն ռավող վիր ա կենում, տենում սեղանին մի ռանգի ծաղիկ:

Մի ամիս ա անց կենում, թե էրկու, մի օր Ծովինարն ասում ա.

– Նանի՛, իմ սեղանին էսքան ծաղիկ դրիր, էրկու հատ իրար մմանը կար ոչ, էդ ի՞նչ բան ա: Ես մեր երգրի ծաղիկնին մատներուս վրա հմբարած չիմ անում-անում գիդեմ, համա քու դրածնին մինն էլա ինձ ռաստ չեն էկել, էդ որդիա՞ն ես քաղում:

Պառավին էլ քիչն էր հերիք, ձեռաց ասում ա.

– Ծովինար ջան, էդ ծաղիկնին ես որդիան որ քաղում եմ, դու դենը կոխած չես: Թե մտքումդ կա, մի օր կտանիմ շանց կտամ, շատ չի հեռու:

Ծովինարն ուրխանում ա, ըշխարքովը մին ա ըլում, ասում ա.

– Հեքուց էվետ Միծիդդարին վիր կունիք, կերթանք:

– Չէ՛, բալիկ ջան, – ասում ա, – ես Միծիդդարիցը մանչում եմ, դու մենակ կգաս:

Էն ա Ծովինարի տամարն ա մտնում, միամիտ ախչիկն էլ հվատում ա:

Պառավը գնում ա Միծիդդարի թուրը թաքում հանում ա, թե չէ, Միծիդդարը նղավում ա ու քնում: Նրա ուժը թրումն ա ըլում: Հենց հասնում են ծովին, պառավը թուրը ծովն ա գծում: Հենց Ծովինարը գլխի ա ընգնում, որ իրան խափել են, նավի միջի են հինգ հոգին վրա են դառնում, Ծովինարի ոտն ու ձեռը կապում ու ըղու ըլում: Ծովինարը ծվում ա, ճչում, ուշքը գնում ա, հլե տհենց էլ նղաված տանում են:

Էդ ա նրան տարան: Հմի տենանք Միծիդդարն ի՞նչ էլավ: Սաղ երգիրը դմդմբում ա, որ Ծովինարին տարան:

– Միծիդդա՛ր, վի՛ կաց, Միծիդդա՛ր, վի՛ կաց...

Միծիդդարը հանգել ա, հատել, հա՛ սաղ, հա՛ մեռած: Էդ նեղ աջալին են օխտը իմաստուն դները գլխի են ընգնում, որ Միծիդդարը լավ չի, ձեռաց վրա են հասնում, ասում, որ նրա թուրը էդ ծովի էսինչ տեղն ա: Իմաց են անում, ծովի դներն էլ են գալիս, խատատ թուրը ջրիցը հանում, Միծիդդարի միչկին կապում: Միծիդդարը տեղումը վրա ա նստում, ասում ա.

– Էս ի՞նչ խաբար ա, ի՞նչ ա էլել:

Ասում են.

– Բա Ծովինարին տարան, զորքը քեզ ա ճամփա պիտ, որ գնանք կովինք, եղ բերենք:

Միծիդդարը ձեռաց գլխի ա ընգնում, որ էն պառավի մատը միջին ա, ասում ա.

– Փահլան դներին իմաց ե՞ք արել:

Մին էլ տենում ա նրանք էլ էկան: Էն ա վիր են կենում, ըղու ըլում: Քշերը ցերեկ արած ակին-կրակին են անում, հասնում էդ երգրի թաքավորի քաղաքը: Մի ախպիր ա ըլում, զորքը վրա ա դառնում, որ ջուր խմե, մի պուճուր ախչիկ ջրամանը ձեռին վազում ա, ասում ա.

– Մին խմել մեք, կացեք ջուր վիր ունիմ, մեր հարսը ուշքից գնում ա:
 Միծիդդարն ասում ա.
 – Ախչիկ ջան, ձեր հարսն ո՞վ ա:
 – Բա գիդես ո՞չ, Ծովինարն ա, էլի՜, մի պառավ բաբո իմ ախպոր հմար փախցրուց, բերուց, սաղ
 օրը ուշքիցը գնում ա, էնքան ջուր կրեցի, բեզարեցի:
 Միծիդդարն ասում ա.
 – Դե ամանդ տուր ջուր խմեմ:
 Ամանը վիր ա ունում, ըրեխին շշկլացնում, իրա նշանի մատնուքը մեջը գծում: Ասում ա.
 – Դե ջուրը տար Ծովինար հարսիդ տուր:
 Ըրեխեն ջուրը վիր ա ունում, էլ միջին մտիկ չի անում, հլե տհե տանում ա, ասում ա.
 – Հրե՛ս, հարսը ջան: Համա նեղանաս ոչ, ընդի մի մարթ կար, վրիցը քիչ ջուր խմեց:
 Ծովինարը ամանը վիր ա ունում, Միծիդդարի մատնուքը տենում ա, ճմանչում: Ասում ա.
 – Սիրտս նղավում ա, հլա կացեք գնամ պատուհանի կուշտը, քամին ըրեստվս դիպչի:
 Պատուհանը բաց ա անում, տենում Միծիդդարի գորքը սաղ պալատը չորսիկուտ ա արել: Ջորքը
 քաքուխում տենում ա, թևերը փռում, Ծովինարը թռչում ա:
 Ման են գալի, պառավին գղնում, դուս քաշում, ըժու սաղ պալատը կրակի ռեխը տալի:
 Պառավին էլ վերու ձիու պոչիցը կապում են ու բաց թողում: Ձին սարեսար-քարեքար ա ընգնում, մչա
 քաշ ա տալի պառավին, որ վենձ թիքեն անջակն ա մնում:
 Երկնքիցը իրեք խնձոր վեր ընգավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ աշխարքին:

Ակին-կրակին են անում – շատ արագ
 շարժվում են
 Դրադական օքմի – կողմնակի մարդ
 Դուռը ծերպ ա անում – դուռը
 կիսաբաց է անում
 Անդինջանալ – առանց
 հանգստանալու
 Խտոր ընգնիմ – կողքի ընկնեն,
 պառկեն
 Զվիկ-ձվիկ անում – ծվեն-ծվեն անում
 Օրանա-վերանա – կորած-մոլորած
 Զորսիկուտ ա արել – շրջապատել է
 Դամարն ա մտնում – համոզում է
 Պղնձնու միջին – կաթսաների մեջ
 Դենը կոխած չես – այնտեղ չես եղել
 Անգումի արի – կորիք, չքվիր, փախիր
 Խտատացնում ա – շտապեցնում է
 Որդիան գղնում – որտեղից գտնեն
 Պտտատորում – պատառտտում
 Սլարում – զարմանքից քարանում,
 ուշաթափվում
 Ռաստ չեն էկել – չեն հանդիպել
 Վեր տի գալ – պիտի իջնի
 Մտիցը գծել ա – մոռացել է
 Մանչում են – ամաչում են
 Ծիտ-մենակ – մեն-մենակ
 Աստունն ա – Աստծունն է
 Հրոզմունք – արտաստվոր
 Տուքար – ուժ, կարողություն, հմար
 Հայիլ-մայիլ կմնա – կեիմնա
 Դոշին դնում – կրծքին դնում

Մեք դարդ անել – մի վշտացեք
 Դվիցը բոնեցեք – թևից բոնեք
 Ըդու ըլում – ճանապարհվում
 Հեքուց էվետ – վաղն Լեթ
 Դամփա պահում – սպասում
 Իսանություն – մարդկություն
 Պատի որքումը – պատի տակ
 Իրար եղնա – իրար ետևից
 Դինջանամ – հանգստանամ
 Հենց արեք – այնպես արեք
 Դվեր ա գալի – իջնում է
 Ըանց կտամ – ցույց կտամ
 Ըլինքը ծռում – վիզը ծռում
 Ոտն անում – կանգնեցնում
 Վիրկունինք – կվերցնենք
 Վերու ձիու – վայրի ձիու
 Մատնուքը – մատանին
 Վի կենամ – վեր կենամ
 Ափսուգ ես – ափսոս ես
 Ժաժ չգաք – չշարժվեք
 Դեսնի – այս կողմերում
 Բեխաբար – անտեղյակ
 Նղավում ա – նվաղում է
 Խտորվեցեք – թեքվեք
 Ծլլաշարուկ – իծաշարուկ
 Ըշկլացնում – շփոթեցնում
 Մտիկ ա անում – մայում է
 Մի ռանգի – մի գույնի
 Դանչանք – աղաչանք
 Էնինչ – անընդհատ
 Զուլլոդ տա – վնաս տա

Մչա – ինչքան, այնքան
 Աջալ – ժամանակ
 Ծփթու – ձայն, շուկ
 Վիրունիմ – վերցնեն
 Հմբարած – հաշված
 Ստիան – այստեղից
 Տագ արեք – քաքնվեք
 Միչկին – մեջքին
 Անջակ – ականջ
 Փափուչ – կոշիկ
 Պեցեք – պահեք
 Աղաք – առաջ
 Բրախել – թողնել
 Տեն – այդպես
 Ռավոդ – առավոտ
 Խատատ – շտապ
 Էլեդ – կրկին
 Էլածը – եղածը
 Մխելի – երկար
 Զիմովի – բոլորով
 Անումիցը – անունից
 Վենձ – մեծ
 Զոծ – աղախին
 Զեռաց – իսկույն
 Բրմուտ – թավուտ
 Կուտ – թև
 Ֆորս – որս
 Ըժու – հետո, այնուհետև
 Դայիմ – ամուր
 Զոդից – տեսակից
 Յիզին արեք – շուտ արեք



ՀԱՆՅԱՆՔ ԱՆՊԱՏԻԺ ՉԻ ՄՆԱ

Աստված մե օր Գափրեյլ հրեշտակին կկանչա ուր մոտ, կսա.

– Գափրեյլ, գնա էրգիր, տես ի՞նչ կա, ի՞նչ չկա, ընձի խաբար բեր:

Գափրեյլ կիջնի էրգիր, հինք հմենին կտեսնի, համա ուրան ոչ-ոք չի տեսնի՝ հինք անտես ա: Գափրեյլ մե դաշտով կքայլի, մեզ լե կտեսնի մի սալիտակ ձիավոր՝ հարուստ շորերու մեջ, գիքա կկայնի սառ ախայրի մոտ, ձիուց կիջնի, ձին կկապա ծառից, մեջքից կարցկա օսկե քյամարը, կդնա քարին, կլվացվի, կխմի, քյամարը կմոռնա, կնստի ձին ու գրնգնի ճամպարի: Կես ժամ չնցած՝ մե հովիվ գնցնի էդ ախայրի մոտով: Էս հովիվ լե կմոտենա ախայրին, իրան էրեսներ կլվա, ջուր կխմա, գուգա էրթա՝ աչք գրնգնի օսկե քյամարին: Կտեսնի օր քյամարին տեր, տիրական չկա, կկապա իրան մեջք գրնգնի ճամպի: Էլի գնցնի մե քանի վախտ, մե քոռ մարթ ուր ձեռի փետ թփթփցնելով գիքա կգդնի ախայր, ջուր կգարգա ուրան էրեսներ, կխմի, կկշտանա, կնստի էն քարին, օր ձիավոր ուրան քյամար մոռցեր էր: Ձիավորը շատ օր կէրթա, կհիշա, օր ուրան քյամար մոռցավ ախայրի քարի վրեն: Ձին կդարձու հետ ու կհասնի ախայրին: Կտեսնի մե մարթ կա նստուկ քարին, կխարցու.

– Այ մարթ, էդ քարին իմ օսկե քյամարն էր դրուգ, ու՞ր ա:

Մարթ կսա.

– Ես խաբար չեմ:

Ձիավոր շատ հարց ու փորց կենա, կտեսնի օր էս մարթ քյամար չի ուգա տա, կհանա ուրան խանչալ էս խեղճ քոռին կմեռցու, գրնգնի ճամպի: Գափրեյլ էս օր կտեսնի, կէրթա Աստծու մոտ, կսա.

– Հայր Աստված, էրգրի վրեն լմենն ինչ լավ էր, համա մե վատ բան տեսա,– ու կպատմա:

Աստված կսա.

– Հա՛, էդ մասին գիդեմ, իմ մոտ գրուկ ա:

Գափրեյլ կգարմանա, կսա.

– Բա էդ քոռ մարթ հնչի՞ սպանվավ:


Աստված կսա.

– Էդ քյամարի տիրոջ պապ օսկի էր պարտք հովվի պապին, համա էդ պարտք չէր տվե, իսկ քոռի պապի պապ անմեղ տեղ սպաներ էր քյամարի տիրոջ պապի պապին,– հետո Աստված ավելցուց,– Գափրեյլ, անգջիդ օդ արա՝ հանցանք անպատիժ չի մնա:

Էրգիր – երկիր
Հինք – ինքը
Քյամար – գոտի

Ուրան – իրեն
Դրուգ – դրած
Անգջիդ – ականջիդ

Էրեսներ – երեսներ
Գրուկ ա – գրված է
Սպանել էր – սպանել էր





ՉԻՄԱՅԱԾԴ ՄԻ՝ ԱՍԱ, ՉԿԱՐԵՅԱԾԴ ՄԻ՝ ԱՐԱ

Ըլում ա, չի ըլում մի աղքատ գեղացի: Էս մարթը չի կարում իրա ընտանիքը պահի: Որոշում ա գնա Աստծու կուշտը՝ ապրուստ ուզելու: Կնգանը ասում ա.

– Հաց թխի, գնալ տեն Աստծու կուշտը:

Դե աղքատ ընտանիք, տանը մի բուռը գարի են ունենում: Էս կնիկը գարու հաց ա թխում ու մարթին ճամփու դնում: Էս մարթը գնում ա, գնում, շատ ա գնում, թե քիչ, էտ էլ Աստված գիդի: Մենակ էն կասեն, որ դուզ-դուրան ճամփա ա ըլում: Ոչ քար ա ըլում, ոչ ծառ: Որ շատ գնում ա, տենում ա մի չինարքի ծառ, ծառի տակին ախպիր: Դե բեզարած մարթ ա ըլում, էս ծառի տակին նստում ա, հաց ա ուտում, էս սառը ախպրիցն էլ ջուր ա խմում, տենում ա մի պառավ մարթ էկավ գլխի վերի կռանը կանգնեց ու ասավ.

– Ա՛յ մարթ, դու գնում ես Աստծու կուշտը ապրուստի, բայց ես քեզ էրկու խրատ կտամ, թե կատարես՝ կհարստանաս, թե չէ՝ գնալով կլի, գալով՝ չէ, – ու սկսում ա խրատնին տալը:

– Էն բանը, որ դու գիդես ոչ ինչ ա՝ անումը մի տա: Էն բանը, որ քու ուժից վեր ա՝ անիլ մի:

Աղքատը զարթնում ա, տենում էրազ ա: Վեր ա կենում, գնում: Գնում ա, գնում, տենում ա մի քաղաք: Մոտիկանում ա, ուզում ա մեջը մտնի, պահակնին բռնում են ու տանում թաքավորի կուշտը: Թաքավորը հարցնում ա.

– Ի՞նչ մարթ ես, ու՞ր ես գնում:

Էս աղքատը ասում ա, որ գնում ա Աստծու կուշտը: Թաքավորը սրան տանում ա իրա պալատի մի սենյակը: Էս աղքատը տենում ա էս սենյակի կենտրոնումը մի ոսկի թաս, թասի միջին ջուր, իսկ ջրի միջին գորտի նման մի կենդանի: Թաքավորը սրան ասում ա.

– Թե ասես էս թասի միջինը ի՞նչ ա, ինչ ուզես կտամ, որ չասիր՝ գլուխդ կթոցեն:

Էս մարթը մին ուզում ա ասի՝ գորտ ա, հիշում ա ծերուկի խրատը ու մտածում: Մի քիչ վախտիցը եղը աղքատը ասում ա.

– Թաքավորն ապրած կենա, երևի էս բանը սրտիդ շատ մոդիկ բան ա, որ ըսենց տեղ ես պահում:

Էս ասելու հետ մի դղրդոց ա ընգնում: Էս գորտի կաշին պատռվում ա ու միջիցը մի սիրուն, ջահել տղա ա դուս գալի: Թաքավորը ուրախանում ա, աշխարհով մին ըլում ու էս մարթին պատմում, որ կախարդը իրա տղին գորտ ա շինել ու ասել, որ ով ասի գորտ ա՝ քու տղեն գորտ էլ կմնա: Դե ով էկել տեսել ա, ասել ա՝ գորտ ա, տղեն գորտ էլ մնացել ա: Թաքավորը սրան մի քարվան ա տալի, մի քանի պահակ էլ հետը, հարուստի շորեր ա հաքցնում ու ճամփու դնում: Էս մարթը գնում ա, գնում, հասնում էն չինարքուն, որի տակին քնել էր: Չինարքու մի կողքին հանգստանալիս ա ըլնում մի ուրիշ քարվան: Սա գալիս ա, էս քարվանին մոտկանում ա ու նստում նույն ծառի տակ: Էտ վախտը մի սիրուն դուշ ա էտ չինարքու վրա վեր գալի: Էս քարվանատերը էս մարթին ասում ա.

– Բի մի պայման դնենք, եթե կարենաս էն դուշը բռնես՝ իմ քարվանը քեզ, թե որ չէ՝ քու քարվանը ինձ:

Էս մարթը համաձայնում ա, ուզում ա գնա, հիշում ա ծերուկի խրատը ու ասում.

– Սկզբից դու գնա:

Անծանոթ քարվանատերը համաձայնում ա ու բարձրանում ծառը: Հենց որ հասնում ա դուշին իրան-իրան ուրախանում ա, որ հմի քարվանը իրանը կլի, բայց հենց ուզում ա բռնի, դուշը փախչում ա: Սա ծառից վեր ա գալի: Դե պայմանը պայման ա, իրա քարվանը տալիս ա էս մարթին ու ինքը փոր ու փռշման գնում: Էս աղքատն էլ իրա ճամփեն ա շարունակում: Գնում ա, գնում, էնքան ա գնում, որ հասնում ա իրանց գեղին: Տուն ա մտնում, տենում ա ամեն ինչ իրա տեղը, մաքուր, կնիկն էլ ուրիշի հմար լվացք ա անում ու իրա ըրեխանցը պահում: Էս աղքատը, որը հիմի էլ աղքատ չէր, իրա հմար տուն-տեղ ա շինում ու ապրում ուրախ ու երջանիկ:

Դուզ-դուրան – ուղիղ և հարթ
Չինարքի ծառ – չինարի ծառ
Վերի կռանը – վերին կողմում
Ըրեխանցը – երեխաներին
Քարվան – քարավան

Գնալ տեմ – գնալու եմ
Մի քիչ վախտից եղը – որոշ
Ժամանակ անց
Ըսենց – այսպիսի
Բեզարած – հոգնած

Ախպիր – աղբյուր
Գիդես ոչ – չգիտես
Վեր գալ – իջնել
Անում – անում
Դուշ – թշուն



ՆՈՅ ՆԱՎԱԳԵՏՆ ՈՒ ՕՉԸ

Մե սաղ տարիմ թոն կենե: Նոյ մավապետը սաղ կենդանիներուն լցնե կը պարախտող ու կայնի կը: Սաղ երկիրը ջրով էր ծածկվե: Նոյ մավապետը պարախտող պտտի կը, տեսնի կը որ ջուրը ամեն տեղ մեհավսար է: Մուկը պարախտող ծակե կը: Նոյ մավապետը շատ տխրի կը, հմարմ չի գտնի, որ ծակը փակե: Օձը քուբա, կսե.

- Ինձի ինսնի արնով կշտացու, ես էտ ծակը փակեմ կը:

Նոյ մավապետը կսե.

- Էլնենք չորը ես քեզի կշտացնեմ կը, հիմի դու ծակը փակե:

Օձը ծալլըվավ մստավ, պոչը կոխեց ծակը, փակեց: Սաղ աշխարը պտտան, ջուրը մեհավսար առել էր, հիմի ու՞ր տի էրթան, որ չոր գտնին: Գնացին էլան Միս:

- Մի՛ս, կառնե՞ս զիս:

- Ո՛չ, - ըսավ Միս, - Մասիսը բարձր է ինձանից:

(Միսու ճիտը ծուռ է, էտտեղ գլխի է իջուցե): Էլան Մասիսու գլխը, քիչըմ էլի չոր էր: Վեց ամիս էտտեղ կեցան, տորի ջրերը քաշվան, աշխարի շատ տեղը ջուր մնաց, քիչ տեղը՝ չոր: Ժողովրդին էտտեղ բաց թողեց.

- Քնացե՛ք, հրճվեցե՛ք, աշխար կազմեցե՛ք, - ըսավ Նոյ մավապետը:

Օձը էկավ, ըսավ.

- Ինձի ինսնի արնով կշտացու:

Նոյ մավապետը վետռամ նըվթ փերեց, լցեց վրան, վառեց ու ըսավ.

- Քամի՛, ուժեղ փչե, օսկոռը լու ըլի, միսը՝ օչիլ, տարածվի կենդանիներուն վրան, ես իսոր իշկա՞ն արուն տամ, որ կշտանա:

Օձը տառցավ լու ու օչիլ, տարածվավ կենդանիներուն վրա ու սկսեց ծծել էնոնց արունը:

Ինսնի – մարդու
Գիտը – վիզը
Վետռամ – մեկ դույլ
Թոն – անձրև

Նըվթ – մավթ
Տորի – միմչև
Օսկոռը – ոսկորը
Օչիլ – ոչիլ

Իսոր – սրան
Մեհավսար – միահավասար
Պարախտ – շոգենավ
Իշկան – ինչքան



ՔՈՌԻԹԱՔԱՎՈՐԸ

Ըլում ա, չի ըլում մի քոռ թաքավոր, ունենում ա իրեք տղա: Համա էս թաքավորը միշտ տխուր ա ըլում: Երբ պուճուր տղեն մենձանում ա, խելքի գալի ու տենում, որ իրա հերը միշտ տխուր ա, մենձ ախպորանցը ասում ա.

– Ա՛յ ախպերտիմք, մեր հերը միշտ սհենց տխուր ա, բերեք իմանանք, թե պատճառը ի՞նչն ա:

Մի օր մենձ տղեն գնում ա հոր կուշտը ու հարցնում.

– Ա՛ հեր, խի՞ էս տխուր:
Թաքավորն ասում ա.

– Արի ըստի, կասեն:

Տղեն մողիկանում ա թե չէ, հերը սիլա ա տալի:

– Գնա՛, էլ դու իմ հերը չես, – ասում ա տղեն ու դուս գալի: Էքսն էլ միջնեկն ա գնում: Էլի նույնն ա ըլում: Մի քանի օր եղն էլ պուճուր տղեն ա գնում, բարև տալի ու հարցնում.

– Հայրիկ, խի՞ էս տխուր:

Թաքավորն ասում ա.

– Արի ըստի, կասեն:

Պուճուր տղեն մողիկանում ա թե չէ, հերը սիլա ա տալի: Տղեն էն մի էրեսն էլ ա դեն անում: Հերն էլի ա սիլա տալի ու ասում.

– Օ՛ֆ, կոտրիս կուռ, խի՞տվի:

Թաքավորը տղին նստացնում ա կողքին ու ասում, որ ինքը քոռ ա, դրա համար էլ տխուր ա, եթե նուռ ըլի ուտի, աչքերը բաց կլեն ու ինքն էլ չի տխրի: Տղեն ասում ա.

– Թե ուզածդ նուռն ա, կբերեն:

Ըծու գնում ա մի նուռը բերում, որ հորը տա, բայց հերը ասում ա, որ իրա ուզածը գոմշի գլխի չափ նուռն ա: Պուճուր տղեն որոշում ա գնա աշխարհ-աշխարհ ման գա, որդիան ըլի, ճարի բերի: Հորը համաձայնացնում ա, մի լավ ձի վերունում, մի խորջին ոսկի ու գնում:

Գնում ա, գնում, շատ ա գնում, թե քիչ, էտ էլ Աստված գիդի: Գնում ա հասնում մի տեղ, որդի էրկու ճամփա իրարից բաժանվում են: Դրանց կենտրոնումը մի քար ա ըլում, քարի վրա էլ գրած ա ըլում. «Վերի ճամփի գնացողը՝ գնա ու ետ գա, ներքի ճամփի գնացողը՝ գնա ետ չգա»: Տղեն որոշում ա ներքի ճամփեննի գնա: Ներքի ճամփեննի, որ մխելի գնում ա, հասնում ա սպիտակ ու երգար մորուքով մի պառավ մարթի: Բարի օր ա տալի ու անցկենում: Անցկենալու հետ մտածում ա, որ սա մի բան կգիտենար, խի՞ չի հարցրի: Մտածում ա ու ետ դառնում: Պառավին պատմում ա իրա գալու մասին: Համա էն էլ ասեն, որ էս ճամփու կոխկերքը սաղ դար ու փոս ա ըլում, գնալը շատ դժվար: Պառավը ասում ա.

– Տղա ջան, գնալ մի, չես կարա: Շատ-շատերն են գնացել, բայց ետ չեն էկել:

Բայց տղեն ասում ա, որ անպայման պտի գնա: Էս պառավ մարթը թաքավորի տղին ոսկին վերածիլ ա տալի ու ասում.

– Էս ֆողիցը լցրու, գնալիս շաղ կտաս, չորսիկոանտ փոսերը կլցվեն, դուռն էլ հեշտ կհասնես: Էն էլ ասեն, որ երբ նուռը պոկես, շուտ ձի կնստես ու կգաս: Քու եղնա քարերը, քուերը ձեն կառնեն ու կբռնան: Ետ չի մտիկ անես, թե չէ քար կդառնաս:

Պառավի ասածը մտին տղեն ճամփա ա ընգնում: Գնում ա, գնում, շատ ա գնում, թե քիչ, վերջը հասնում ա մի սիրուն, մի մենձ դարպասի: Էս տղեն դարպասը բաց ա անում ու մեջը մտնում, տենում ա մի սիրուն պարտեզ ա, որի միջին էլ գոմշի գլխի չափ նուռն ա: Տղեն մողկանում ա, որ նուռը պոկի, էտ վախտը մի կնիկ ա դուս գալի ու ասում.

– Ա՛յ տղա, ի՞նչ ես շինում ըստի:

Տղեն ոչ մի բան չի ասում, նուրը պոկում ա ու նստում ձին քշում: Քար, քոլ ձեն են առնում ու գոռում:

– Տարա՛վ, տարա՛վ, տարա՛վ...

Տղեն ետ չի մտիկ անում: Ձին նստում ա ու գալի: Գալիս ա հասնում էն տեղը, որդի պառավն էր նստած: Բայց էլ պառավը ըստի չի ըլում: Նրա տեղը մի փունջ հասկն ա ըրօրվում: Տղեն մտածում ա, որ սա իմաստուն ա էլել: Փռշմանում ա, թե խի չի շատ բան հարցրել: Փռշմանում ա, բայց էլ ինչ տեր անի, բրախում ա գալի տուն: Տուն ա հասնում, նուրը տալի հորը: Հերը նուրը վեր ա ունում ու տղին հարցնում, թե նա ընդի ի՞նչ տեհավ: Տղեն պատմում ա: Էն էլ ա ասում, որ մի կնգա էլ տեհավ, տեհավ շատ քարեր: Հերը ասում ա, որ էտ իրա կնիկն ա՝ տղեքի մերը, ու սկսում ա պատմիլը, որ տղեքը փոքր են էլել, չար դեր իրանց մորը տարել ա:

– Դրա հմար էլ շատ լացից քռացել են, – ասում ա թաքավորը, – մինչև մերդ գա ոչ, իրա ձեռի թաշկինակով աչկերս սրբի, իմ աչկերը բաց չեն ըլի: Իսկ էն շատ քարերը, որ տեհել ես, էտ իմ զինվորնին են: Լռիվին դրգել են, բայց գնացել են քար դառել: Ոչ իրանք են էկել, ոչ էլ մորդ են բերել:

Տղեն ասում ա, որ ինքն է՛լ ա գնալու: Ըժու մի քանի օր եղը գնում ա: Հերը նրան ա տալի իրա մտրակը, մին էլ մատանին, ըժու ասում:

– Եթե սրանք մորդ շանց տաս, նա կհասկանա, որ իրա տղեն ես:

Էտ ա, տղեն իրաժեշտ ա տալի հորը ու գնում: Տեղ ա հասնում, մտնում պարտեզը: Էս կնիկը ետ դուս ա գալի ու ասում:

– Հե՛յ, ջահե՛լ տղա, դու քանի՞ զլխանի ես, որ մտնում ես դևի պարտեզը:

Էտ վախտը տղեն մտրակը վեր ա քաշում, մերը ճնանչում ա: Առաջ ա գալի ու հարցնում:

– Ո՞վ ես դու, ու՞ր ես էկել:

Տղեն էլ պատասխանում ա, որ:

– Ես քու պուճուր տղեն եմ: Էկել եմ քեզ ըստիան տանեն, էս էլ իմ հոր մատանին:

Նոր ըստի փթաթվում են ու մերը ասում ա:

– Արի քեզ պահեն, թե չէ դեր կգա ու քեզ քար կշինի:

Ասում ա ու տանում պահում: Քիչ վախտիցը եղը դեր գալիս ա ու ասում:

– Մարդահոտ ա գալի:

Էս կնիկն էլ ջղայնացած ասում ա:

– Օրական մի քանի մարդ ես ուտում, քու վրիցը տի գա, էլի:

Էլ դեր բան չի ասում, գնում ա քնում: Ռավոդը, որ դեր գնում ա, էս կնիկը տղին պահած տեղիցը հանում ա: Հաց են ուտում, ըժու որոշում են, թե ոնց դևի ձեռից պրծնեն: Մերը ասում ա, որ սրա հոգու տեղը գիղենալ տենք, որ կարենանք ազատվենք: Էտ հրիգունը դեր որ տուն ա գալի, տենում ա կնիկը տխուր նստած ա: Հարց ա տալի, թե խի՞ ա տխուր: Կնիկը թե:

– Ա՛յ մարդ, ամեն ռավոդ գնում ես որսի, ինձ ըստի մենակ թողում: Գոնե հոգուտ տեղը ասա, որ հետը խոսամ:

Դեր ծիծաղում ա ու ասում:

– Իմ հոգին էս ավելի միջին ա:

Ասում ա ու քնում: Էքսի հրիգունը որ տուն ա գալի, տենում ա կնիկը ավելը զարդարել ա, սիրունացրել ու կշտին տխուր նստել: Կնիկը, որ դևին տենում ա, լաց ըլելով ասում ա, թե դեր խի՞ իրան խափեց: Դեր էլետ ծիծաղում ա ու ասում:

– Հմի քեզարած եմ, ռավոդը կասեն իմ հոգու տեղը:

Էքսը ծեգինհանա կնիկը դևի տեղը նեղում ա, որ ասի: Դեր ճարահատված ասում ա:

– Լավվար սարի եղեր մի դամշկուտ կա, միջին մի վարազ, վարազի փորումը մի ձու, ձվի միջին իրեք հատ ճուտ, հենց դրանք էլ իմ հոգին են:

Կնիկը ասում ա:

– Բա չե՞ս վախում, որ սպանեն:



Դևը, թե.

– Էտ վարազը իրա գլխին մի պեծիկ ունի, եթե պեծիկին դիքավ, կապանի, եթե չէ, ուրեմն չի սպանի:

Ասում ա ու գնում: Մերը ամեն ինչ պատմում ա տղին: Տղեն ձին նստում ա ու գնում սարի եղև ու տենում, որ վարազը լեղացել ա, դամշկուտից դուս էկել ու քնել: Էս տղեն նշան ա բռնում ու կրակում: ՈՒդիդ պեծիկին ա դիպչում: Վազ ա տալի փորը ճղում, ձուն հանում, ձվի միջիցը ճտերը հանում ու մի ճուտը խեղդում: Էտ վախտը դևի գլխի ցավը բռնում ա: Որ գլխի ցավը բռնում ա, գալիս ա տուն: Էս վախտը տղեն երկրորդ ճուտն ա խեղդում: Դևը թըլքփաց վեր ա ընգնում, էլ չի կարում վեր կենա: Տղեն երրորդ ճուտը ձեռին գալիս ա դևի կուշտը ու դռան եղեվիցը ասում.

– Էս քար շինած մարդկերանցը կենդանացրու: Թե կենդանացնես, էս մի ճուտը քեզ կտամ:

Դևը քանդում ա թալիսմանը, լռիվը կենդանացնում են, իսկ տղեն ճուտի վիզը պոկելով ասում ա.

– Ա՜ռ-առ, էս ճուտն էլ քեզ նվեր:

Դևը շունչը փչում ա: Տղեն գնում ա դևի վզից կախ արած բլանդքնին հանում ա ու մեր ու տղա սկսում են սենյակներում ման գալը: Երբ հասնում են մի դռան, մերը ասում ա, որ ինչ էս ըստի են, էս սենյակը հեշ չեն մտել: Տղեն դուռը բաց ա անում, տենում մի սիրուն աղջիկ թոզով կապած, իսկ աղջկանիցը քիչ հեռու մի մենձ սեղան, որի վրա ամեն ուտելիք էլ կա: Տղեն թոկերը եղ ա անում: Աղջիկը պատմում ա, որ դևը իրան բերել էր իրա հմար կնիկ, բայց ինքը չի համաձայնվել: Դրա հմար էլ թիենց կապել ա ու լավ ուտելիքը դաքին դրել, որ աչկը վրեն մնա ու համաձայնի: Ամեն հրիգու մի կտոր հաց ա տալիս էլել, մի քիչ էլ ջուր, որ ապրի: Տղեն իրա մորը, մին էլ աղջկանը վեր ա ունում ու գնում դրա իրանց երգիքը: Սրանք ապահով տեղ են հասնում: Կնիկը թաքավորի աչկերը իրա թաշկինակով սրբում ա, թաքավորի աչկերը բաց են ըլում:

Յոթը օր, յոթը քշեր տղեն ու էն աղջիկը հրսանիք են անում:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Թըլքփաց – թուլացած
Շանց տաս – ցույց տաս
Մրդախոտ – մարդու հոտ
Բլանդքնին – բանալիները
Չորսիկոսանտ – չորս կողմդ
Որդիան ըլի – որտեղից լինի

Վերածիլ ա տալի – թափել է տալիս
Կոտրիս կոտ – կոտրվես ձեռք
Ծեզինհանա – առավոտ ծեզին
Դամշկուտ – եղեգնուտ
Ռավոդ – առավոտ
Եղնա – ետևից

Քուլ – թուփ
Ֆողիցը – հողից
Ղաքին – առաջը
Հրիգուն – երեկո
Էլետ – նորից
Դբա – դեպի



ՅԱՓՆՋԻՆ

Մի չորան ոչխարը տանում ա արոտի: Արևը դուս ա գալի, օրը տաքանում ա, էս չորանը իրա յափնջին հանում ա, զցում ա էշի վրա: Ոչխարը արածացնում ա, իրիկունը քշում գյուղ: Հասնում ա գյուղ, տենում յափնջին չկա: Մահակը քաշում ա ու սկսում էշին ծեծելը: Գյուղացիները հավաքվում են հարցնում, թե ի՞նչ ա էլել, ընչի՞ ա էդ անմեղ հայվանին էդքան ծեծում: Չորանը ասում ա.

– Բա չծեծեն, ի՞նչ անեն, տասը տարի յափնջիս հաքա՝ չկորցրի, մի օր հաքցրի էս էշին՝ կորցրեց:

Յափնջի – այծենակած

Հայվան – անասուն, կենդանի



ՀԻՄԱՐ ՎԵՋԻՐՆ ՈՒ ԽԵԼԱՅԻ ԳՅՈՒՂԱՅԻՆ

Մի օր թաքավորն ու վեզիրը վեր են կենում, գնում իրանց երկրում ման գալի: Հանդիպում են մի ծեր գյուղացու: Թաքավորը հարցնում ա.

- Էրկուսն ե՞ս, թե՞ իրեքը:
- Գյուղացին ասում ա.
- Էրկուսն իրեք են արել:

Թաքավորն էլի ա հարցնում.

- Խի՞ ժամանակին չաշխատեցիր:
- Գյուղացին, թե.
- Աշխատեցի՝ ուրիշները ուրախացան:
- Թաքավորը նորից ա ասում.
- Խի՞ մեկը էրկու չարեցիր:
- Գյուղացին, թե.
- Երեսներկուսը չթողեցին:
- Թաքավորը ծիծաղում ա, ասում.
- Մի դազ տամ կարա՞ս փետես:
- Գյուղացին, թե.
- Հենց դրա վարպետն եմ:

Վեզիրը լսում ա, լսում, ոչինչ չի հասկանում, թաքավորին ա հարցնում, թաքավորն ասում ա.

- Գնա, գյուղացին կասի:

Էս վեզիրը գյուղացուն ա հարցնում, էս էլ տասը ոսկի ա ուզում ու ասում.

- Էն որ թաքավորը հարցրեց՝ էրկուսն ե՞ս, թե՞ իրեքը, ես ասեցի՝ էրկուսն իրեք են արել,դե ծերացել եմ, ոտի վրա չեմ կարում կանգնեմ, փետ եմ վերցրել, էրկուսը իրեք են արել: Թաքավորը տեսավ աղքատ մարդ եմ, հարցրեց, թե խի՞ ժամանակին չաշխատեցիր, ասեցի, որ աշխատեցի՝ ուրիշները ուրախացան, այսինքն՝ շատ եմ աշխատել, բայց ախչիկներ ունեի, մարդու գնացին, եղած-չեղածը նրանց տվեցի: Էն որ թաքավորը հարցրեց, թե խի՞ մեկը էրկու չարեցիր, այսինքն ինչու՞ չես ամուսնանում, ես էլ ասեցի, որ երեսուներկուսը չթողեցին, ախր բերանումս ատամ չկա, ի՞նչ ամուսնանալու ժամանակն ա:

- Բա վերջին հարցը չասեցիր, բա վերջին հարցը, – ասում ա վեզիրը:

Գյուղացին տասը ոսկի էլ ա ուզում ու ասում.

- Դե վերջին հարցն էլ ես էր, թաքավորը ասեց, որ մի դազ տամ, կարա՞ս փետես, դե եղ դազն էլ դու էիր, էլի, փետեցի:





ՀԱՅՐ ԱՔՐԱՄԸ

Հին-հին վախտով մե մարդն ու կնիկն կլլին: Մարդուն անունը՝ Աբրամ, կնկան անունը՝ Սառա: Էդ ժամանակ մարդիկ չիտեին, թե ի՞նչ է աստղը, ի՞նչ է երկինքը: Մե անգամըն Աբրամը գիշերը տուս կելլեն, վեր կաշեն, պլպլան բաներ կտեսնի, զարմանա կը, կաշե երկինքը կապուտ կտորի պես փռած, բայց վար չի ընկնի: Շատ կմտածե, կերթա մե էխտյար մարթում քով, պատմե կը տեսածը, կսե.

– Պապի՛, ես պլպլան բան տեսա, էտոնք ի՞նչ են:

– Բալա ջան, էտոնք աստղ են, կան յոթ աստղ, էտոնք յոթ ախբերնին են, կերթան գործ ժուռ քալու, կան քառսունատ, էտիկ թագավորին քըրվընն է, կան կշեռքի ձևի, էտիկ Աստու կշեռքն է, էտ կշեռքով Ասված կշեռ կը մարդոցը մեխկերը, ջոկե կը արդարն ու մեղավորը, երկնքեն օր աստղը կընկնի, մարդ կմեռնի:

Էստեղ Աբրամը կմտածե, օր Ասված կա, ու ինքը հավտա կը Աստուն: Էտտեղաց մարդիկ Աստուն չեն հավտա: Էտ մասին օր կիմանան կերթան թագավորին կսեն, թագավորը Աբրամին տանի մե վերանա տեղըն կթողնե: Աբրամն ու կնիկը, մե չորանըն ա կունենան, մե քանիմ տարի կապրին: Հողն քուր կար, նը խոտ, նը ծառ: Չորանը ամեն օր օշխարը արծելու կտանիր: Մե օրմա տանի կը արծելու, տունը հաց քիչ կլլի: Սառան իրեք հաց կուտա, կսե.

– Էսքանով յուլա քնե, տորի հաց էփեմ, Աբրամը փերե:

Չորանը հացը կառնե, կերթա: Արեգակն օր մե քիչըն վեր կելլե, Բագրատը (չորանը) մե օշխարըն կըկթե, մե հացն կըրթե, թնե կը վար, օր էտև ուտե, մեմա մե պզտի տղամ քուքա, կսե.

– Չորան ախբեր, օշխարն կթե՛ խմեմ, անոթի մեռա:

Բագրատը բրթած կաթը կուտա, էս տղան կուտե, կերթա: Մեմա կըկթե մե օշխարն, մեկալ հացը կըրթե, ուտելու կնստի, մեմա մե էրիկմարդն քուքա, կսե.

– Չորան ախբեր, անոթի եմ, կաթն կթե՛ խմեմ:

Չորանը էտ բրթածնա էտոր կուտա: Էսիկ կուտե, կերթա: Վերջին հացը կըրթե, օր ուտե տի, մեմա մե էխտյար մարդն կելլե, կսե.

– Չորան տղա, մե օշխարն կթե՛ խմեմ:

Բագրատը մտածե կը, օր ուր է, ուր չէ, Աբրամը հաց կփերե, էդ բրթածնա էտ էխտյարին կուտա: Էխտյարը կուտե ու կսե.

– Որդի՛ս, ես օր կամ, Քրիստոսն եմ, ինի էրկու մարդնա ես էի,- էստեղ Քրիստոսը կօրհնե,- թող խոտը ծնկներեդ վեր ըլլի, թող ամեն տեղ կաթնաղբրներ բխբխան, հավքեր ճխճխան, թող օշխրընուտ մեջ իշկան օր հիվանդ ու վատ կան, թող լավման ու թիվը մեկին էրկուս աճե:

Էդ ասելն էր ու ըշքեն կորի կը: Չորանը մնա կը շշմած, ամեն տեղ կաթնաղբրներ կբխբխան, հավքեր կճխճխան, խոտը կծածկե ծնկները, օշխարները կշատընան: Չորանը հլը չէր հավտա իրեն ըշքերուն, մեմա Աբրամը քուքա, Բագրատը պատմե կը ինչ օր գլխուն անցել էր: Աբրամը կուրախանա, կերթա կնկանը կսե.

– Սառա՛, մեր չորանը տեսել էր Քրիստոսին, արի մենքա ծում բռնենք 40 օր, մենքա տեսնինք:

Էտոնք ծում կըռնեն: Եռեսունինը օր էտոնք առավոտը կելլեն մալ, օշխար դուս կենեն, խոնչան կբանան, իրենք նստին կը քովը ու թզբեյ կքաշեն: Վրա քառասունին առավոտը Աբրամը կելլե տուս, մեմա տեսնի կը, օր մե էխտյար մարդն դըգինըկը ձեռքը, մորուքը ծնկներեն հետ, հավար-հավար քուքա: Էսիկ նես կմտնի, կնկանը կսե.

– Քրիստոսը Էկավ:

Քրիստոսը քուքա, բարև կուտա, բարև կառնե, նստի կը: Աբրամը կերթա օր հորթը մորթե, Քրիստոսը էնթուն կսե:

– Աբրամ, հորթը մի մորթե, կովը կաթ չի տա:

Աբրամը անկաճ չի էնե, մորթե կը: Սառան կերթա կովը կթելու, չի թողնե: Նորից Քրիստոսը կառնե հորթը խաչակնքե կը, հորթը կէլլե վագե կը մորը քով: Աբրամը կերթա մե գամ կմորթե, փերե պատիվ կէնե: Եփ օր հացը կուտեն, պրծնին կը, Քրիստոսը կսե:

– Բեզի մե տղամ կլլի:

Սառան էնթուն խնդա կը:

– Իսի մարթը ի՞նչ կսե, ես հիծծուն տարեկան եմ, մարդս՝ վաճծուն, մեզի ի՞նչ տղա տի ըլլի:

– Ինչի՞ կխնդաս, որդի՛, – կսե Քրիստոսը, – ձեզի տղամ կլլի, չկնքեք, ես քուքամ կնքեմ կը:

Ինքը կերթա: Թմմի կը ինը ամիս, ինը օր, Սառան պառկի, մե մանչւ կըփերե: Էս մանչը կլլի մե տարեկանըմ, Քրիստոսը քուքա կնքե կը: Քրիստոսը կսե:

– Ձեր տղան եփ օր կլլի օխտը տարեկան, տանիք կը Մարութա սարը, մատղեք կը:

Եփ օր թմմավ տղի օխտը տարին, Սառան ու Աբրամը առան մեծ պաշար, քնացին Մարութա սարը: Փատ ժողվեցին, կրակ վառեցին, ջուրը թրին կրակին օր մատաղ տի էնեն: Ջուրը էփավ, Աբրամը Սառային դրկեց հեռու տեղե փատ ժողվելու, ինքը պառկեցուց տղին օր մատղե:

– Հայր Աբրամ, մատաղ ունթունելի է, – հրեշտակը կըռնե ձեռքեն, – վեր աշե մատաղը էկավ:

Աբրամը վեր կաշե, գամը օսկե ժնջիւներով վար քուքա: Հրեշտակը խաչակնքե կը տղին, տղան կէլլե կերթա: Գամը կմատղեն, կուտեն, կխմեն, կերթան տուն:

Վերանա – ավերակ, ամմարդաբնակ
Քառսունատ – քառասուն հատ
Քըրվընն է – քարավանն է
Մալ – ընտանի կենդանի
Դրզիւնըկը – դագանակը
Էտև ուտե – հետո ուտի
Էնթուն – այնտեղից
Էխտյար – ծերունի
Ըշքեն – աչքից
Խոնչա – սեղան
Հոդ – այդտեղ

Հավար-հավար – շտապ-շտապ
Ծուն բոնենք – ծոն պահենք
Ունթունելի է – ընդունելի է
Ժոտ քալու – փնտրելու
Մատղել – մատաղ անել
Էրիկմարդ – տղամարդ
Մե օրմա – մի օր էլ
Թմմավ – լրացավ
Ասված – Աստված
Ասու – Աստծո
Նը – ոչ





Կլնի-չլնի մէ մարթ կլնի: Էս մարթը հարիսա կէփի ու կծախի: Մե պառաւ կնիկ էլ կլնի, անտեր, անտիրական: Էս պառաւը շատ աղքատ կլնի, կունենա-չունենա մե հատ ոսկի թաս: Որ կլսի հարիսաջու մասին, կասի. «Ես պառաւ կնիկ եմ, էլ չեմ կանա ճաշ-մաշ էփի: Կէթամ կառնեմ, կուտեմ, յոլա կէթամ»: Առտուն կէլնի, ոսկի թաս կառնի, կէթա հարիսա առնելու: Հարիսաջին, որ ոսկի թաս կտենա, կասի. «Ահա՛, լավ ի՛, պառաւ կնիկ ի, չհասկնա, խաբեմ՝ էս

թաս առնեմ»: Դառնա պառավին կասի, թե.

– Մարե՛, հարիսեն պրծաւ, քո թաս տու, առտուն շուտ արի տար:

Պառաւ կէթա: Հարիսաջին շատ անպետք մարթ կլնի: Խեղճ պառավի թաս կփոխի: Առտուն պառաւ կգա, իրա հարիսեն կտանի: Ճամփին մեկ էլ կտենա, որ էդ իրա թաս չի: Խեղճ կնիկ կնստի ինոր դռան առաջ, լաց կլնի: Էդ վախտ մե մարթ կանցնի: Էդ մարթուն Շատրսիմոն կասեն: Շատրսիմոն կասի.

– Ա՛յ մարե, ինչի՞ լաց կլնես:

– Բա ի՞նչ անեմ, ա՛յ բալա ջան: Ունեի-չունեի, մե ոսկի թաս ունեի, էն էլ հարիսաջին փոխս քցեց: Էս Շատրսիմոնն էլ կէլնի կէրթա դուզ հարիսաջու տուն: Հարիսաջին տուն չի ըլնի: Շատրսիմոն հարիսաջու կնգան կասի, թե.

– Աղեն ասեց, կնգաս ասա՛ փլավ էփի, իրիզվան կգամ:

Կնիկը կգարմնա.

– Աղեն գում մկա փլավ չկերերի, էդ ի՞նչ ա փչե գլխին:

– Չիղեմ, ընձի ասեց՝ թող փլավ էփի:

Կնիկ կէլնի կսկսի փլավի պատրաստություն տենալ: Է՛, ծուխ կէլնի, փլավի անուշ հոտ աշխարհք կվերցի: Շատրսիմոն կամաց կմտնի խոտի տակ, կպախկվի: Մե ժամ, էրկու ժամ հետո հարիսաջի աղեն կուգա, կտենա փլավի հոտ տուն առեր ի: Կնգան կհարցնի, թե էս ի՞նչ խաբար ի: Կնիկ կասի, թե Շատրսիմոն էկավ ասեց՝ աղեն փլավ կուզի: Ըստե հարիսաջին գլխի կընգնի, որ մի բան կա, կասի.

– Չէ՛, կնիկ, Շատրսիմոն մեր գլխին մե օյին կխանի: Արի էս գիշեր թասին պահակ կայնենք:

Իսոնք կէթան քնելու: Հարիսաջու կնիկ կնստի, մարթ կքնի: Շատրսիմոն կամաց կլնի տուս, կտենա, որ էտ կնիկ արդեն կլոխ կթալի, կվազնի, թաս կառնի խոր ծեռից, կասի.

– Կնիկ, կնիկ, թաս տու՛ ձի, տու քնի:

Կնիկ կիմանա, թե մարթն ի, կէթա կքնի: Շատրսիմոն թաս կառնի ու կփախնի: Գիշրվա կեսին հարիսաջին կգարթնի, թե.

– Կնիկ, կնիկ, թաս տու:

Կնիկ կգարմնա.

– Քա՛, նոր չտվի՞ քե:

– Իլի՛ վեր, իլի՛ վեր, քու տուն չքանդվի, Շատրսիմոն ոսկի թաս տարաւ:

Մի քիչ կճվա, կբոռա, կտենա՝ չէ՛, ճար չկա, կլնի պառավի շորեր կհագնի, պառավի դռից մի քանի դուռ էս յան կնստի, կսկսի լացել: Շատրսիմոն կբերի թաս կուտա իտոր, զինք կէթա: Մե քիչ կէթա, կտենա պառաւ նստած բուռ-բուռ կլացի, կասի.

– Վա՛յ, հարիսաջի, քո տուն ավրվի, իմ կլխին էս ի՞նչ օյին խանիր...

Էլ ի՞նչ: Հարիսաջին թաս տարիր էր: Էստեղ եմ ասել. «Աղքատի ձեռ ոսկի չի մնա»:



ԱՂՎԵՍԸ

Ըլնում ա, չի ըլնում մե աղվես: Էդ աղվեսը բուրթ ա գտնում, բերում ա տալում մե մանի, ասում ա.

– Նանի՛:

Նանն ասում ա.

– Ջանի՛:

Ասում ա.

– Բուրթս պահի, էթամ չարուխ-մարուխ կրծմրծեմ, գամ:

Ասում ա.

– Նանը դարդտ առնի, դի ըտի, գնա՛:

Աղվեսն էթում ա: Թունդիրը հանգում ա, պապը մրսում ա, մանը բուրթը առնում ա, գուլպա գործում: Աղվեսը գալում ա, ասում.

– Նանի՛, մանի՛, բուրթս տուր:

Նանն ասում ա.

– Վա՛յ, մանը դարդտ առնի, պապը մրսում էր, գուլպա գործեցի:

Ասում ա.

– Յա՛ բուրթս, յա՛ թունդիրը:

Թունդիրը հանում են, տալիս են իրան: Տանում ա մե ուրիշ մանի տուն, ասում.

– Նանի՛, մանի՛, թունդիրս պահի, էթամ չարուխ-մարուխ կրծմրծեմ, գամ:

Էս մանն էլ ասում ա.

– Նանը դարդտ առնի, դի ըտի, գնա՛:

Աղվեսը թունդիրը դնում ա ըտի, էթում: Կովը գալում ա, տալում ա ջարդում: Աղվեսը գալում ա, ասում.

– Նանի՛ ջան, մանի՛, թունդիրս տուր:

Ասում ա.

– Վա՛յ, մանը դարդտ առնի, թունդիրը կովը ջարդել ա:

Ասում ա.

– Յա՛ թունդիրը, յա՛ կովիկը:

Նանը ասում ա.

– Գոմն ա, գնա կովը տար:

Էթում ա մե ուրիշ մանի տուն, ասում.

– Նանի՛, մանի՛, կովս պահի, էթամ չարուխ-մարուխ կրծմրծեմ, գամ:

Ասում ա.

– Նանը դարդտ առնի, արա գոմը, գնա՛:

Աղվեսը էթում ա: Նանը յոթ հարս ա ունենում, կովը մորթում են, խորոված են անում, ուտում, արնոտ դանակը դնում են պստի հարսի ջեբը: Աղվեսը գալում ա, ասում.

– Նանի՛, մանի՛, կովս տուր:

Ասում ա.

– Գնա գոմն ա, տա՛ր:


Էթում ա ման գալի, գալում ա, ասում.

– Նանի՛, կովս չկա:

Ասում ա.

– Գնա՛, յոթ հարս ունեմ, ջեբերը ման արի, որի ջեբը արնոտ դանակ կա՛ վեկալ գնա:





Պատի հարսի ջերմ ա ըլնում: Հարսին քցում ա տոպրակը, քցում ա ուսը ու էթում, տանում ա ուրիշ մանի տուն: Ասում ա.

– Նանի՛, մանի՛, էս տոպրակը պահի, չարուխ-մարուխ կրծմրծեմ, գամ:

Ասում ա.

– Նանը դարդոտ տանի, դի ըստի, գնա:

Դնում ա ըտի ու էթում: Նանը հլնում ա, տոպրակի բերանը բացում ա, տենում իրա աղջիկն ա, ասում ա.

– Վա՛յ, աղջիկ ջան, ընչի՞ ես մտե ըստի:

Ասում ա.

– Տվել են աղվեսին:

Նանը շանը դնում ա տոպրակի մեջ, աղջկան պահում: Աղվեսը գալում ա, ասում.

– Նանի՛, մանի՛, տոպրակս տու՛ր:

Նանը ասում ա.

– Նանը դարդոտ ամնի, հետ ա, վեկալ, գնա:

Աղվեսը էթում ա սարը, տոպրակը դնում ա ցած, ասում.

– Էս կողմ շուռ գամ,

Էն կողմ շուռ գամ,

Հարսս հանեմ՝ պաչիկ անեմ,

Տամ տըտըզիս՝ տրտին անեմ:

Տոպրակի բերանը բացում ա, տենում ա ի՞նչ, մի մեծ շուն, պոչն ամնում ա ու փախչու՛մ:



Տրտին անեմ – ուրախությունից
ցատկոտեմ

Հլնում ա – ելնում է
Բուրթ – բուրդ

Ջեբը – գրպանը
Վեկալ – վերցրու



ԳԱՅԼՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Մե օր մե գեղում խարսնիք ա հլնում: Ձիով էթում են խարս բերելու: Ճամփին աղվեսը թոնում ա մատում խարսի մոտ, ասում.

– Ոսկիքս տուր ընծի, թե չէ կբռամ՝ խարսը թոփալ ա:

Խարսը ոսկիքը սուս ու փուս խանում, տալում ա աղվեսին: Աղվեսը ոսկիքն ամնում ա, փախնում: Էթում ա, էթում, հանդիպում ա գելին: Գելն ասում ա.

– Էս ոսկիքը որդո՞ւց ես բերե, աղվես ախպեր: Ընձ էլ տեղն ասա:

Ասում ա.

– Փլան տեղը մե լիճ կա: Գնա, պոչտ դի մեչը՝ մստի: Էնքան ոսկի կշարվի, որ հազիվ քաշես խանես:

Էտ վախտը ծմեռ ա հլնում: Գելը էթում ա պոչը դնում ջրի մեչը, մստում ա, մինչև պոչը սառում ա, կպնում սառուցին: Գելի շները թափում են վրեն: Գելը թափ ա տալում, պոչը պոկվում ա, հինքը փախնում ա: Գալում ա աղվեսի մոտը, ասում.

– Ընձի խափիր, աղվես ախպեր, շները ընձի գզին:

– Շուտ չես խանե, – ասում ա աղվեսը, – էնքան ոսկի ա բարցվե, էլ չես կարցե քաշի, խանի:

Ըսենց աղվեսը խափեց գելին:

Բարցվե – բարձվել, հավաքվել
Խարսնիք – հարսանիք

Որդուց – որտեղից
Խարս – հարս

Փլան – այսինչ
Հինքը – ինքը



ԾՈՒՌ ԿՆԻԿԸ

Կլնի, չի ըլնի, մի ծուռ կնիկ կլնի: Մի օր ըտրան մարթը կտփի, կխանի տուրս: Էտ կնիկը կէրթա կնստի գետի ափը, ավազի հետ կխաղա: Կտենա ավազի միջից ոսկի դուս էկավ: Խինգ ոսկի կպերի, մարթին կսի.

– Մա՛րթ, խնձորի չիր եմ պերե:

Մարթը ոսկիներ կտենա, կսի.

– Ա՛յ կնիկ, էս խնձորի չիրից էլի կա՞:

Կնիկ կսի.

– Շա՛տ:

Կէլնեն, կէրթան մի կճուճ ոսկի կլցնեն, կպերեն: Մարթն կսի.

– Կնի՛կ, պախի, որ շոր ծախող գա, կտանք շոր կառնենք:

Առտուն մարթն կէրթա անտառ՝ փետի: Շոր ծախող կկա: Ծուռ կնիկ կսի.

– Իմ մարթ կսեր խնձորի չիր շորով փոխենք:

Կսի, ոսկին կտա, շորեր կառնի: Կպերի էտ շորեր ցախավելին կխակցնի: Մարթը փետը շալակին կկա, կսի.

– Կնի՛կ, տուռը պաց:

Կնիկ տուռը չի պանա, ցախավելին կսի.

– Ախ՛չի՛, հե՛լ, քո խոր խմար տուռը պաց:

Մարթն կզանի տռան, կսի.

– Կնի՛կ, տուռը պաց, կամ:

Կնիկ էլի ցախավելին կսի.

– Ախ՛չի՛, հե՛լ տուռը պաց:

Մարթը կսի.

– Ես անտառ կնացի ախչիկ չկար, հուստու՞ց էլավ:

Էտ մարթ կիրստի, կզանի տուռ կճարթի, կմտնի տուն, կսի.

– Ա՛յ կնիկ, ի՞նչ իս արիր:

Կնիկ կսի.

– Հե՛չ պան, խնձորի չիր տփի շոր ծախողին՝ շոր առա:

Մարթն կնկան կտփի, կթալի տուս: Կնիկն էլ կէրթա ճամփեն կսկսի գոգոռալ.

– Հասե՛ք, պոնե՛ք, հասե՛ք, պոնե՛ք...

Էդտեղ մի վաճառական կլսի, կմտածի գողեր են, կվախենա, ուխտն կթողի, կփախնի: Առտուն լուս կպացվի: Կնիկն մէ կատու կտենա, կսի.

– Կատու՛, տու էկեր էս իմ հետեհի՞ց, չե՛մ կա, իմ մարթ ինձ տփե, ճամփե:

Կնիկ շուն կտենա, կսի.

– Շու՛ն, չե՛մ կա, իմ մարթ ինձ տփե, ճամփե:

Կտենա ուխտը արածելով, պեռով-պարցով կկա, կսի.

– Ուխտ քեռի, տու էկեր էս իմ հետեհի՞ց, քո խաթրին կկամ:

Կէլնի, ուխտ կպոնի, կտանի տուն, կսի.

– Ա՛յ մարթ, տուռ պա՛ց, կատուն էկավ՝ չէկա՛, շուն էկավ՝ չէկա՛, համա ուխտի խաթեր՝ էկա:

Մարթն կսի.

– Էլի էս ծուռ կնիկ մէ պան պերիր է:

Կէլնի, տուռ կպանա, ուխտին կքշի կտանի տուն: Կսի. «Էս կնիկ մտուցեմ թունիր, թէ չէ կէլնի, խաբար կտա, էս ուխտը մորթեմ, ուտենք»: Կնիկ կմտուցի թունիր: Կնիկ կսի.






- Ա՛յ մարթ, ինչի՞ ձիկ մտուցիր թունիր:
- Մարթն կսի.
- Ա՛յ կնիկ, էսօր քարն կարկուտ կկա, մտի թունիր՝ քե չսպանի:
- Տախտակ կտնի թունրի պերնին: Մե ճանգ կորեկ կթալի, խավեր կթողի վրեն: Խավերը կորեկը կուտեն, թխկթխկոց կկա: Կնիկ կսի.
- Վա՛յ, էս ի՞նչ քարն կարկուտ էկավ:
- Մարթն ուխտն կմորթի, կպրծնի, կնկան կխանի, կսի.
- Կնիկ, քարն կարկուտ պրծավ:
- Էս վաճառական իրա ուխտը ման կկա, կկա էս ծուռ կնկա գլուղը: Էս ծուռ կնիկը վաճառականին կտենա, կսի.
- Ախպե՛ր, ձեր ուխտ մեր տունն ա, մարթս պախել ա:
- Էս վաճառական կերթա թաքավորի մոտ, կպատմի: Թաքավոր էս ծուռ կնկա մարթուն կկանչի: Մարթը կնկան կսի.
- Կնիկ, տուռը լավ պախի՛ գող չմտնի, էս շուտ կիկամ:
- Կսի, կերթա թաքավորի մոտ, թաքավորին կսի.
- Ես ուխտից խաբար չեմ, իմ կնիկն ա ասե, իմ կնկանից խարցրեք:
- Կսի, կտենա կնիկ տուռ խանել, պերեր ա թաքավորի պալատի մոտ, վրեն նստե: Մարթ կսի.
- Քե չասի՞ տուռը լավ պախի:
- Կնիկ կսի.
- Հեսա տուռ տրեր եմ տակս, խո չփախա՞վ: Էս տռնից գող կանա՞ մտնի:
- Մարթ կսի.
- Կնա՛, թաքավոր քե կկանչի:
- Թաքավոր կնկան կխարցնի.
- Ա՛յ կնիկ, հի՞փ եք ուխտ պախե:
- Ծուռ կնիկ կսի.
- Թաքավոր ապրած կենա, էն տարին, ինչ քարն կարկուտ էկավ:
- Թաքավոր կսի.
- Իմ կյանք ընցեր ի, էս քարն կարկուտ չեմ տիսիր:
- Թաքավոր կսի վաճառականին.
- Հեկ կնա, էս կնիկ ծուռ ա, սրանից պան չենք խասկնա:

Առտուն – առավոտյան
Խոր խմար – հոր համար
Պախեր ա – պախել է
Հուստուց – որտեղից

Մտուցիր – մտցրիր
Խավեր – հավեր
Խինգ – հինգ
Պախի – պախի

Ճանգ – բուռ
Չիկ – ինձ
Քե – քեզ
Հիփ – երբ





ԵՐԵՔ ԽՐԱՏ

Ըլըմ ա, չըլըմ, մին թաքավոր ա ըլըմ: Ըդան էռեսուն տարվա մին հավադարին մոքյար ա ըլըմ: Մին օր էս թաքավորը մոքյարին վեննըմ ա, քնըմ ա իրա երգըմը ման կա: Շադ են ման կալի, թե քյիչ՝ Աստոճ գյիդա, մին տեղ պադահըմ են պադի տագյին մստաճ մին հալիվոր մառթի՝ առաչին էլ իրեք պուրուզ ֆող: Ասըմ են.

– Այ հալիվոր, էս ի՞նչ պուրուզնի են ըստե տրաճ:

Ասըմ ա.

– Ով որ ինձ ամեն պուրուզի հըմար տասը ոսկյի տա, կասեն:

Թաքավորը շադ ա ուզըմ գյիդանա, թե ինչ բդի ասի էս հալիվորը, որ տասը ոսկո առժանի ըլի: Հանըմ ա էռեսուն ոսկյին հըմբարըմ, տալի հալիվորին, հալիվորն էլ թե.

– Էն մին պուրուզ ֆողը ըլի էն մառթի կլխին, որ մին մառթի շադ կժառայի: Էն մինն էլ էն մառթի կլխին, որ իրա հարազադին բրախ կդա, ուրըշին կփռնի: Էս վեռչինն էլ էն մառթի կլխին ըլի, որ կնգանը սըռ կդա:

Հալիվորի ասաճներին շադ պանի տեղ չեն տըմ, կալիս են: Նոքյարը ճամփըմը միտկն ա անըմ, ասըմ. «Ես էս թաքավորին էռեսուն տարի ծառայել եմ, իմ ախպորս հեղ էլ քանի տարի ա խառվ եմ, ուրըշի հեղ եմ ախպերըթուն անըմ, կնգանս էլ ըսկյի փոռցել չեմ մին թաքուն պան ասեն: Լավ կլի, որ էն հալիվորի ասաճնին փոռցեն»:

Թաքավորի տղին մին մախշուն դոչ ա ըլըմ: Մին օր էդ դոչին մոքյարը կողանըմ ա, տանըմ իրանց կոմի պուջախըմը պահըմ: Եղավ քընըմ ա չոբաններիցը մին ըղենց դոչ ա առնըմ, պերըմ ա կնգանը շանց ա տալի, ասըմ.

– Էս թաքավորի տղի դոչն ա, մոռթըմ եմ ուղենք, համա օչումի ասես ոչ:

Ասըմ ա, դոչը մոռթըմ, իրա ախպերացվին էլ կանչըմ ա, ուղըմ են, խմըմ, քյեֆ անըմ:

Էքսը օրը մըհաննա ա փռնըմ, կնգանը թագըմ: Կնիզը լաչառըթունը տնըմ ա, քընըմ հըրևաններին խաբար տալի, որ իրա մառթը կող ա՝ թաքավորի տղի դոչը պերել ա, մոռթել, կյերել: Խաբարը հասնըմ ա թաքավորին, որ դոչի կողը իրա մոքյարն ա: Թաքավորը հետտողըմ ա, կանչըմ ա դադավորներին, թե.

– Դադեք էս մառթին, որ իմ մինուճար տղիս դոչը կողացել ա, կյերել:

Դադի վախտը էն որ մոքյարի հարազադ ախպերն ա, ասըմ ա.

– Մի սխալ ա, արել ա, էլի, ներեք ախպորս:

Էն, ինչ ախպերացուն ա, ասըմ ա.

– Կախ արեք էդ անաղըհացին, որ իրա հարազադ թաքավորի պալադիցը կողըթուն ա արել:

Դադավորնին էլ որոշըմ են կախ անեն: Կախ անիլիցը առաչ մոքյարին ասըմ են.

– Դե՛, վեռչի խոսկո ասա, կախ ենք անըմ:

Նոքյարը եղ ա դառնըմ, թաքավորին ասըմ.

– Թաքավորն արբաճ կյենա, մղիդ ա՞ էն որ քնացինք էն հալիվորին տեսանք:

Ասըմ ա.

– Մղիս ա:

Ասըմ ա.

– Ա՛յ, էն իրեք պուրուզնին հըմի իմ կլխիս ա ըլել: Էն հալիվորը որ կար՝ իմաստուն մառթ էր: Ես էռեսուն տարի քյեզ ծառայել եմ, տու ինձ մին դոչի հմար ուզըմ ես սբանես: Իմ ախպորս ես բրախ տվիմ, ուրըշին ախպեր փռնիմ, որ ըսօրվան օրն էլ ինձ թուգյունք չկաղնի: Իմ կնգանս էլ ես մին հեղ սըռ տվիմ, ինձ խայտառագ արեց:

Եղավ ասըմ ա.



– Թաքավորն արբած կենա, դոչը սաղ-սալամաթ մեր կոմըմը պահաճ ա, ես էն հալիվորի ասածնին իմ ուզըմ փռռցեմ:

Քնըմ են իսկյեզան դոչը կոմիցը պերըմ են, թաքավորը նոքյարին բրախ ա տալի: Ըդե թաքավորն էլ, նոքյարն էլ հասկանըմ են, որ իմաստուն խոսկը, իմաստուն խրաղը ոսկյի առժի:

Ասսանե իրեք խնձոր ընգալ՝ մինն ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ խրաղի կյինը գյիդացողին:

Անաղըհացին – լավություն
չգնահատողին
Հեռսողըմ ա – հերստում է,
գայրանում է
Կոմի պուջախըմը – գոմի անկյունում
Շանց ա տալի – ցույց է տալիս
Թուգյունք չկաղնի – չօգնի
Բրախ կղա – բաց կթողնի

Կողանըմ ա – գողանում է
Էռեսում – երեսում
Վեննըմ ա – վերցնում է
Մդիդ ա՞ – հիշում ե՞ս
Իսկյեզան – իսկական
Հըմբարըմ – հաշվում
Կախ արեք – կախեք
Պուրուզ – կույտ

Կյինը – գինը
Սըռ – գաղտնիք
Ըդան – դրան
Օչումի – ոչ մեկի
Թագըմ – ծեծում
Եղալ – հետո
Ֆող – հող
Կող – գող



ԿՈՒՇՏՆ ԻՆՉ ԳԻՏԻ ՍՈՎԱԾԻ ՀԱԼԸ

Մի թագավոր ունենում ա մի անխելք տղա: Մի օր էս թագավորը մեռնում ա ու թագավոր ա դառնում էդ անխելք տղեն: Էս տղեն չի կարում երկիրը լավ կառավարի, ժողովրդի մեջ սով ա ընկնում: Ժողովուրդը գալիս ա թագավորի պալատի մոտ, խնդրում ա, որ թագավորը իրա ամբարներից հաց տա: Թագավորը իրա մարդկանց

ասում ա, թե գնացեք տեսեք ի՞նչ ա էլել: Գալիս ասում են, թե ժողովուրդը սոված ա, հաց ա ուզում: Թագավորը զարմանում ա ու ասում.

– Է՛, հաց չունեն, թող փախլավա ուտեն:

Էստեղ են ասել. «Կուշտն ի՞նչ գիտի սովածի հալը»:



ՄԱՐԴ ԻՆՉ ՔԱՇԱ, ՈՒՐ ԽԵԼՔԻՑ ԿՔԱՇԱ

Կեղի, չեղի, մի անխելք մարթ կեղի: Էս մարթ շատ աղքատ կեղի, ուտելու հաց չունենա: Գելի մե օր մեշոգ կթալա ուս ու զընգնի գեղու մեջ: Հմեն տնեն մե բուտ ցորեն գուգա: Չուրի գուքա գեղի ծեր, մեշոգ գլցվի: Էս մարթ կուրխնա ու կէթա գեղու ափ: Մեշոգ կղնա գեղին, կնստի, կիղա, կառի ու կմղածա. «Ցորեն կցանեն, կինձեն, ալուր կծախեն, կամուսնանամ, ճժեր կունենամ, թոռներ կունենամ, համա

որ կնիզս ընձի չլսեց, ըսենց քացով կգարգեն»: Կասա ու քացով կգարգա մեշոգին, մեշոգ կշոջի, կթափի գեղ:

Բա՛, մարթ ինչ քաշա, ուր խելքից կքաշա:

Կեղի, չեղի – լինում է, չի լինում
Գեղու ափ – գետի ափ

Ճժեր – երեխաներ
Գուգա – ուզում է

Գելի – ելնում է
Չուրի – մինչև

ԷՐԳՈՒ ԸՆԳԵՐ



Մալատ կեղն մաշտ մը կուկա Ջենիգ, հնու ատտեղ ընգեր մը կղնու գու: Ըմն Ջենիգ էգուշին ադու դունը գինար գու: Իրած հեղ շաղ լավեյնը: Ավուրը մեզը Ջենիգին մաշտը գեշտա Մալատ: Կուկա ընգերենը դունը: Պարև գուդա, ամա ադ գասա տա ուրինը ջոնչիլ չի: Ջենիգին գեշտա սարին, ծառեն մը դագ բարգի գու: Էդի ակվնծու կելլա կուկա դունը:

Օմսումը ետկը Մալատու ընգերը հեճնու գու էշը, կուկա Ջենիգ: Կործերը ըղաճն ետկը գեշտա ընգերենը դունը: Ջենիգին ադու լավ մը գուդենա-խմենա գու: Քեֆը շինածն ետկը գասա:

– Դո՛, այչն ալ ըմն իրիգուն կուկա լազդս գուդա: Ըմն իրիգուն բեղ գնին, ամա դահա չայծի գայնիլ:

Մալատու ընգերը գասա տա:

– Հայդի իրիգունս իրար հեղ բեղ ընինկ: Ես լավ ավջի իմ, իրիգունս ադ այչը գայնիմ գու:

Ջենիգին ընգերը խալվուտ ուր գնեչը գասա տա:

– Մենկ, օր էշտոնկ այչ բեղ ընուշնա, իսու էշը քշա լազդն ինտուս:

Գեշտոն բեղ ընուշ: Մեմալ գաշին ինչի մը նահրա գու լազդը ուդուշ:

– Դո՛, – գասա լազդին դերը, –աս գլլի, օր այչը գլլի:

Մալատին քաշա թվոնգը, լուսնյակ-լուսին, ինճ օր դեսնու գու, ընու յալ գրագա գու: Մողիգ գեշտոն, գաշին, օր գայնածը ուր էշն ա:

– Դո՛, – գասա ջենիկցին, – Մալատ կուկոմ՝ ընգերենդ ջոնչիլ չիս, Ջենիգ կուկաս՝ էշդ ջոնչիլ չիս:

Ջենիգ – Տրապիգոնի նահանգի
Սամսոն քաղաքը և գավառը
Մալատ – գյուղ Տրապիգոնի
նահանգի Չարշամպա գավառակում
Կործերը ըղաճն ետկը – գործերն
ամելուց հետո
Լազդն ինտուս – եգիպտացորենի
արտի կողմը, արտի մեջ
Քեֆը շինածն ետկը – հյուրասիրելուց,
պատվելուց հետո
Ջայնածը – զարկածը, կրակածը
Չայծի գայնիլ – չկարողացա զարկել
Ակվնծու – առավոտյան
Ընգերենը դունը – ընկերոջ տունը
Չառեն մը դագ – մի ծառի տակ

Գինար գու – կենում էր, մնում էր
Բեղ գնին – սպասում եմ
Լազդ – եգիպտացորեն
Լավեյնը – լավ էին
Օմսու մը – մի ամիս
Ավուրը մեզը – մի օր
Իրած հեղ – իրար հետ
Ինչի մը – ինչ որ բան
Խալվուտ – քաքուն
Աստեղ – այստեղ
Էգուշին – գալուց
Էշտոնկ – գնանք
Գնեջը – կնոջը
Մեմալ – մեկ էլ
Այչ – արջ

Ջոնչիլ չի – չի ճանաչում
Նահրա գու – սկսում է
Թվոնգ – թվանք, հրացան
Գրագա գու – կրակում է
Ռիբինը – իրեն
Էդի – հաջորդ
Կեղ – գյուղ
Մաշտ – մարդ
Հայդի – արի
Ավջի – որսորդ
Ըմն – ամեն
Դունը – տունը
Ուդուշ – ուտել
Ուր – իր





ՀՈՒՆ ՉՈՆՆՈՂ ԿԵՂԸ

Մաշտուն մեզը գեշտա անձանոթ կեղ մը, ինքը ուրիմը տիրեջ դեղ տնա գու, պոնին աղու խասս մը ձեծին ու ջոմպու տնին գու, հմու ալ գասին.

– Կարար գներ տա շուն չոննող կեղ ընգաձ ա, ըտոնձ պիր մոն կուկար:

Կարար գներ - կարծում էր
Ինքը ուրիմը - ինքն իրեն
Մաշտ - մարդ

Գեշտա - գնում է
Կեղ - գյուղ
Չոննող - չունեցող

Ջոմպա - ճամպա
Հմու ալ - համ էլ
Պիր - բիր, փայտ



ԹՐԵՎ ԵԿՈՂ ՀԱՎԸ

Կիրակի օր մը Օսկեզը հավ մը տրած գեջաղը ակվընա գեշտա բազարը, իրիկվընա դունտառծին դեսմուն գու ալի հավը գեջաղին ետ պերա գու:

– Օսկե՛գ, թաք հավը դարիր բազար, ըն ալ առնող չըղա՞վ տա,- հայծնին գու դրգիցնին:

– Զա՛, ջանըմ, տունք ալ, ծախուշ դարած չունեյր: Աս միր օնդեր հավը սովորուտի մը ունի, գեշտա աստին - ընտին չորտերուն գաձա: Ես ալ աղու հոմար տրի գեջաղին նես, հեղս դարի - պերի, հնոր հավգիտը գոյսըվի հեջ:

Գեջաղ - զամբյուղ
Ակվընա - առավոտյան
Իրիկվընա - երեկոյան

Դունտառծին - տունդարձին
Դեսմուն գու - տեսնում են
Չորտերուն - թփուտներուն

Հայծնին գու - հարցնում են
Գոյսըվի հեջ - չկորսվի
Հնոր - որպեսզի



ՏԱՆ ՏԵՐԸ

Մաշտ ու գնիգ մը գլլին, ադեր իրար հեղ վիրա գովեյնը գու: Մաշտը գնեչմն շաղ վախեր գու: Օր մը գնիգը փաղը գառնու մաշտուն հեղը կըյնի: Աս մաշտը մղնու գու սեղնին դագ: Ադ սրըն դունը մաշտ կուկա: Գաշին մաշտը սեղնին դագ մղաձ ա.

– Հող ի՞նչ գնիս, – գասին:

Ըն ալ գասա տա.

– Դոնը դեյն իմ, վեյ ձագը ուզիմ, հուն մղնում գու:

Դոնը դեյն իմ – տան տերն եմ
Ադ սրըն – այդ ժամանակ
Վիրա – միշտ, անընդհատ

Հեղը կըյնի – ետևից է ընկնում
Գովեյնը գու – կովում էին
Գնեչմն – կնոջից

Փաղը – փայտը
Մաշտ – մարդ
Ադեր – դրանք



Հլնում ա, չի հլնում, մե մարթ ա հլնում: Էտ մարթին ունենում ա մե կնիկ ու մե տղա: Ըտանք շատ աղքատ են հլնում: Էս մարթը տենում ա չեն կարում արբեն, կնկան ասում ա.

– Այ կնիկ, կայնի էթամ մե ուրիշ երգիր, հլնեն խուտաղ, փող ժողվեն, գամ ապրենք:

Հլնում էթում ա: Էթում ա, էթում, շատ ու քիչը հինքը գիղի, հանդիպում ա մե հարուստ մարթի ու աշխատում ա ըստրա մոտը: Խուտաղություն

ա անում: Մե վախտ հնցնում ա, ըստրա կնիկը շատ ա նեղվում, վեռչը խանում, տղին հղրկում ա խոր մոտ: Տղեն էթում ա, էթում մե հախաղի մոտ նստում, վլացվում, ջրիցը խմում, մեկ էլ տենում ա խերն են յանից էկավ: Խերն ասում ա.

– Հնչի՞ ես էկե, տղա ջան:

Տղեն ասում ա.

– Սովից կոտորվում ենք, էկեր են, որ փող տաս տանեն:

Հերն ասում ա.

– Արի էթանք հարստի մոտ, որ էթանք, կասես. «Էկեր են խորս վարձը տանեն»: Որ փող տա՝ չուզես, կասես սուփրեն ու ճպոտը տու:

Խերն ու տղան հլնում, էթում են հարստի մոտ: Ինչ խերն ասեր էր՝ տղեն ասում ա: Հարուստը շատ ա չեմ ու չում անում, բայց վեռչը տալում ա: Խերն ու տղեն ճպոտն ու սուփրեն վեռցում, գալում են տուն: Կնիկն ասում ա.

– Ինչ՞ ես բերե:

Հենց որ տենում ա սուփրեն ու ճպոտը, հոստտում ա: Բայց հենց մարթը ճպոտը տալում ա սուփրին, ուտելու խմար ամեն ինչ վրեն հլնում ա: Կնիկը ուրխնում ա: Ուտում պոծնում են, մարթը հլնում ա, որ էթա գեղի մեչ, էթալու վախտը կնկանն ասում ա.

– Կնիկ, սուփրեն ըստեղ դրած ա, հանգարծ չասես. «Դմիկ, դուս արի», թե չէ օձ ու կարիճը կթափեն դուս, քեզ կխեղտեն:

Մարթը, որ էթում ա, էս կնիկը ասում ա.

– Էս մարթը հնչի՞ ինձ ասեց՝ ըտենց չասես, հլը կայնի ասեն, տենամ ի՞նչ ա հլնում:

Ասում ա.

– Դմիկ, դու՛ս:

Հենց ասում պոծնում ա, օձ ու կարիճը թափում են ըտրա վրեն ու մե լավ դնքսվում են, մինչև մարթը գալում ա: Մարթը, որ տենում ա կնիկը ինչ հալի ա, ասում ա.

– Այ կնիկ, էս ի՞նչ գուլում ես բերե մեր գլխին, դմիկ, մե՛րս, դմիկ, մե՛րս:


Հենց ըտենց ա ասում, կնկա վրից օձ ու կարիճը էթում են սուփրի տակը: Էդ սուփրե՛ կախարդական ա, որ զարկում են, ուզածը հրոպեական հլնում ա: Ու ըտենց ըտոնք հարստանո՛ւ են:

Մե օր ըտանց քավորը գալում ա կոնախ: Որ տենում ա էտ հարստությունը, զարմանում ս Նստում ա լեզուն կապ հնգած: Մեկ էլ տենում ա էս տան տերը ճպոտով տվեց սուփրին ու սուփր վրեն ամեն ինչ պատրաստ հելավ: Ուտում են, խմում, քավորը հլնում ա էթալու: Էթալու վախտ ասում ա.

– Ի՞նչ գլնի, սուփրեն տու տանեն, տղիս խարսնիսն ա:

Դե, ըտոնք էլ պտի տան, հիրանց քավորն ա: Սուփրեն քավորին տալու վախտը տ սնտե՛ ասում ա.

– Որ էսի տանես, չասես. «Դմիկ, դու՛ս», թե չէ օձն ու կարիճը կթափեն դուս քեզ կխեղտեն:



Քավորը սուփրեն տանում, դնում ա պատի տակը ու կնգան իրա տեսածը մեկ-մեկ պատմում ա:
Պատմելուց հետո ասում ա.

– Կնիկ, արի ասենք՝ դոմիկ, դու՛ս:

Հենց ըտենց ասում են թե չէ, օձն ու կարիճը վրա են թափում ըտոնցը լավ ծվատում: Ըտոնք չեն հիմանում օձից ու կարիճից ազատվելու ձևը ու մե լավ դնքսվում են: Ըտոնք թող դնքսվեն, տենանք էն մարթն ու կնիկը ի՞նչ են անում:

– Ա՛յ մարթ, – ասում ա կնիկը, – հնչի՞ սուփրեն տվիր տարավ:

– Բան չկա, այ կնիկ, – ասում ա մարթը, – ընդոնցը դոմիկից ազատվելու ձևը չեմ ասե, թո մի լավ ծեծկվեն, քերեն:

Էսի հենց ըտենց ա ասում թե չէ, քավորը գլոր-մլոր, սուփրի ու ճպոտի ծերից բռնած գալում ա, ասում.

– Առե՛ք, ախպե՛ր, ձեր սուփրեն ձեզ հլնի, օձն ու կարիճը մեզի կերան:

Էս մարթն ու կնիկը էն միմուճար տղին էլ պսակում են ու առոք փառոք կյանք են վայելում:

Հոստոտում ա – հերստոտում է
Հղրկում ա – ուղարկում է
Դնքսվում ա – ծեծվում է
Հրոպեական – թոպեական
Վացվում – լվացվում
Էն յանից – այն կողմից
Հնցնում ա – անցնում է

Հախալի – աղբյուրի
Սուփրեն – սփռոցը
Ծպոտը – ճիպոտը
Ժողվիմ – հավաքեմ
Խարսնիս – հարսանիք
Խուտաղ – հոտաղ
Վախտը – ժամանակը

Խանում – հանում
Կոնախ – հյուր
Ընդոնցը – նրանց
Խմար – համար
Խոր – հոր
Հինքը – ինքը



ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԴԱՐԴ ...

Մե օր մե ախչիկ քուչեն կայնած ա հլնում: Մե մարթ դավեն կորցրած ա հլնում, էտ յաներն ա ման գալում: Որ էտ ախչկան տենում, ասում ա.

– Քուր ջան, դավես էս յանով չընցա՞վ:

Էս ախչիկը ձեն չի տալում: Էս մարթը է՛լ ա ասում.

– Քու՛ր ջան, ասում եմ՝ դավես կարող ա՞ էս յանով հընցավ:

– Է՛, ախպեր ջան, – ասում ա ախչիկը, – համ աջ կողմի հարևանիս տղեն ա ընձի ուզում, համ էլ ձախ կողմի հարևանիս տղեն ա ընձի ուզում, չեմ գիդի որի՞ն առնեն:

Էս մարթը ջղայնանում ա.

– Դավա՛ եմ հարցնում, դավա՛, դավես չե՞ս տեսե:

– Է՛, ախպեր ջան, – ասում ա ախչիկը, – ամեն մարդու դարդ իրան դավա յա:

Դավա – ուղտ

Քուչա – փողոց

Յանով – կողմով



ՀՌՆԵ, ՎՌՆԵ

Հլնում են, չեն հլնում, մե մարթ ու կնիկ են հլնում: Մարթի անունը Հռնե ա հլնում, կնգա անունը՝ Վռնե: Ըստոնցը մարթի տված մե ախչիկ են ունենում: Էտ ախչիկը իրա մարթի խետ ուրիշ տեղ են արբում: Մե օր կնիկը մարթին ասում ա.

– Հռնե:

– Ի՞նչ ա, Վռնե:

– Ա՛յ մարթ, էս քանի տարի ա ախչիկ ենք տվե, մի օր չես ասում, էթանք մեր ախչկան տենանք:

– Լա՛վ, լա՛վ, կէթանք: Դու գնա մե ջուխտ կոշիկ, մե խինգ մետր էլ չիք առ, էթանք:

Վռնեն էթում մե ջուխտ կոշիկ ա առնում, մե խինգ մետր էլ չիք: Մեկել օրը մարթ ու կնիկ հնգնում են ճամփա: Շատ են էթում, թե քիչ, մե արագիլ են տենում: Վռնեն ասում ա.

– Հռնե:

– Ի՞նչ ա, Վռնե:

– Հլը տես, – ասում ա, – էս արագիլը ոնց ա մոտում, ոտեր վեցում, դնում: Արի էս կոշիկները տանք թո խաքնի:

– Լավ, – ասում ա Հռնեն, – տանք թո խաքնի:

Կոշիկները հենց դնում են գետնին, արագիլը փախնում ա:

– Տենում ե՞ս, Հռնե, կամչնա, չի խաքնի:

– Բան չկա, – ասում ա Հռնեն, – կէթանք, կգա կխաքնի:

Էթում են, էթում, ուժեղ քամի ա բռնում: Մե ծառ էտ քամու տակը ժխշվում ա: Հռնեն ասում ա.

– Վռնե, հլը տես էս ծառը ոնց ա դողցնում: Արի էս կտորը տանք, թո փաթթվի, տաքնա: Մեր ախչիկը շատ ունի, չի մեղանա:

– Լավ, Հռնե ջան, թո ասածդ ըլնի:

Հռնեն կտորը վեցում ա ծառի գլխից միչև ծառի քոքը փաթթում: Հենց էտ վախտը քամին կղրվում ա: Հռնեն ասում ա.

– Վռնե՛, տեսա՞ր ոնց տաքցավ, էլ չի դողցնում:

Գալում են, խասնում են ախչկա տուն: Մեկ-մեկ ախչկան պատմում են: Ախչիկն էլ ասում ա.

– Ոչ մեկին է՛լ չպատմեք:

Մութը որ հնգնում ա, էս ախչիկը տեղաշոր ա քցում, որ խերն ու մերը շուտ քնեն, հանկարծ իրան չխայտառակեն: Էստոնք էթում պառկում են, որ քնեն: Էս Վռնեն, որ տենում ա կովերն օրո՞ն են անում, մարթին ասում ա.

– Հռնե ջան, Հռնե, ի՞նչ գլնի մեկին ասա, թո ծամոն տա՛ ծամեն:

Հռնեն էլ որ կովին ասում ա, ծամոն չեն տալում: Էսի կադդում ա՝ ո՞նց, դուք իմ կնգան ծամոն չտա՞ք: Դանակն առնում, սաղին քաշում մոռթում:

Քնում են: Առավոտը շուտ, լուսադեմին զարթնում են: Վռնեն ասում ա.

– Հռնե՛, հլը տես էս խավերն ինչ մեղկ են, մեր ախչիկը վախտ չի ունեցե, որ ըստոնցը լոխկցնի: Ի՞նչ գլնի, ջուր տաքցրա:

Օջախը վառում են, ջուր են եռցնում: Խավերը մեկ-մեկ բռնում կախում են ջուրը, հետո խանում շարում են թափին:

– Հռնե՛, – ասում ա Վռնեն, – տեսա՞ր ոնց խանգստացան, ախչիկս լավ կուրխնա:

Դու մի ասա, սաղ խավերը խատեր են: Առավոտը, որ ախչիկն հլնում ա էս տենում, մորն ու խորը խրկում ա: Ըստոնք մե խատ էտ խատած խավերից վեցում, գալում են տուն: Էտ խավը փետռում են, լցում են կճուճը, թունդիրը վառում, կախում են թունդիրը: Վռնեն ասում ա.

– Ա՛յ Հռնե, էսի միս ա, որ կերանք, մտավ ատմներիս արանքը, ինչո՞վ կխոռթենք:



Ասում ա.

– Ճիշտ ես ասում, Վռնե ջան, արի դուռը փակենք, էթանք ատամխոտքիկ բերենք:

Ըտենց էլ անում են: Ճամփին մե մարթ են տենում: Ասում են.

– Ախպեր ջան, դուռը փակեր ենք, բալնիքը դրեր ենք քարի տակը, հանկարծ չէթաս դուռը բացես, տնից խացը վեռցես, էթաս թունդրից էլ կճուճով խավը խանես, ուտես:

Էս ասում ա.

– Չէ՛, բա ամոթ չի՞:

Բայց դե, սոված մարթ: Համ էլ որ տենում ա ըստոնք պակաս են, էթում դուռը բացում, խացն ու միսը գթնում, մատում մե կուշտ ուտում, հլնում էթում: Մինչև Հռնեն ու Վռնեն ատամխոտքիկները լցում են ջվալները ու ճուլմներով կապում, գալում են տուն, տենում են ի՞նչ, դուռը բաց, տունը խաց չկա, թունդիրն էլ կճուճով խավի տեղ ծակ տրեխներ ա կախած:

Խանգստացան – հանգստացան
Օրոճ են անում – որոճում են
Ճուլմներով – ճուլմներով
Ատամխոտքիկ – ատամփորիչ
Ատմներիս – ատամներիս

Խրկում ա – ուղարկում է
Ժխշվում ա – շարժվում է
Խատեր են – սատկել են
Կխոտքենք – կփոքենք
Հլնում են – լինում են

Լոխկցնի – լողացնի
Խաքնի – հագնի
Խավեր – հավեր
Խինգ – հինգ



ՄԱՐԴ ԶԴԱՌԱԾ ՏՂԵՆ

Մե մարթ ա հլնում: Էտ մարթը մե տղա ա ունենում: Էտ տղեն մարթու չի խղճում, բանի չի ափստում, չի աշխատում: Խերը հա ասում ա.

– Է՛, քեզնից մարթ դուս չի գա:

Արթեն տղեն մեծցած ա հլնում, բայց խերը էլը էտ բառերը կրկնում ա: Մե օր էլ, որ խերն ասում ա, թե քեզնից մարթ դուս չի գա, էս տղեն խռովում ա, ասըմ.

– Ես է՛լ էս տունը մնացող չեմ:

Հլնում ուտելիք, բան վեռցում, տնից էթում ա: Շատ տարիներ ա հնցնում: Մե օր ծերըցած, չորցած խոր մոտը մե մարթ ա գալում, ասում.

– Թաքավորը քեզի կանչում ա:

Էս խեղճ մարթը հլնում, ոտով ճամփա ա ընգնում, վեռչը հասնում ա թաքավորի մոտը: Մտնում ա պալատ, տենում ա ի՞նչ, իրա տղեն մատե թաքավորի աթոռին: Տղեն ասում ա.

– Ա՛յ խեր, ասում իր մարթ չես դառնա, մկա տենում ե՞ս, որ թաքավոր եմ դառցե:

Հերն ասում ա.


– Չեմ գիդի, թե ոնց ես թաքավոր դառցե, բայց մարթ չես դառցե: Որ դու մարթ դառցած հլնիր, քո կիսամեռ խորը ոտով էսքան ճամփա կբերի՞ր:

Ասում իր – ասում էիր

Մկա – հիմա

Հլնիր – լինելիր

Խերը – հայրը



ՍԱՆԴԻ ՀԻՆՈՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Մե հարուստ մարթ ա հլնում: Էսի շատ ոսկի ա ունենում: Մե քշեր էրազին սիվտակ մագ-մորութով մարթ ա տենում: Էս մարթն ասում ա. – Քո ոսկին դու չես վայելի, քո հարստությունը սանդր շինողը կվայելի:

Սաղ քշեր էս մարթը չի կարում քնի: Առավոտ հենց զարթնում ա, էթում ա մե կոտոշ ա քթնում, բերում ոսկին լցում մեջը, էթում դաշտ, կոտոշը պախում մե քարի տակ: Մե վախտ հնցնում ա: Մե օր էլ խո անձրև չի գալում, խո՜ չի գալում: Էս մարթը ասում ա. «Կայնի էթամ, տենամ ոսկիս ի՞նչ հելավ»: Էթում, տենում ի՞նչ. ջուրը ինչ կա-չկա քշե, լցե գետը: Կոտոշն էլ ա գնացե, չկա: Էրազն հնգնում ա միտը, թե՝ «Քո ոսկին սանդր շինողը կվայելի»: Ասում ա. «Կէթամ սանդր շինողին կքթենմ»:

Էտ կողմերը մե աղքատ սանդր շինող ա հլնում: Որ անձրև ա գալում, էսի ուրխնում ա, ասում.

– Ջուրը կոտոշ կբերի, սանդր կշինեմ, կծախեմ:

Հենց անձրևը կորվում ա, էթում ա, մե կոտոշ քթնում, բերում տուն: Ի՞նչ տենա՝ մեջը լիքը ոսկի: Ուրխնում, աշխրբով մեկ ա հլնում: Մեկել օրը կնիկը խաց ա թխում: Էտ հարուստը խարցնելով գալում ա ըտոնց տունը: Նստում խաց ա ուտում, հետո սանդր շինողին ասում.

– Ախպեր ջան, ըսենց-ըսենց էրազ եմ տեսե, մկա էլ ոսկիս չկա, թե քթեր ես, կամ դու ես վեռցե, տու:

Սանդր շինողը ասում ա՝ չէ՛, բայց փոշմնում ա: Էլ չի իմանում ոսկին ոնց հետ տա: Էս հարուստին նստցնում, ինքը էթում ոսկին տալում ա կնգան, կնիկը խմոր ա անում, քցում թունդիորը: Փուռնիկ ա թխում, ոսկին դնում մեջը, բերում էտ հարուստին, թե՝

– Ախպեր ջան, ճամփա ես էթում, վե՞ռց, ճամփին կուտես:

Էլ ոսկու մասին բան չի ասում: Հարուստը խացը վեռցում ա, հնգնում ճամփա: Էթում ա, էթում, արդեն իրանց գեղին ա խասնում, էրկու մարթ են հլնում դեմը: Մեկն ասում ա.

– Ախպեր ջան, խաց չի՞ հլնի մոտդ, սոված ճամփորդ եմք:

Ասում ա. «Ես հեսա խասամ մեր գեղին, ի՞նչ եմ անում էս խացը, կայնի տամ, մեխկ եմ»: Խացը տալում ա ըտոնցը, ինքը ճամփեն շարունակում: Էս մարթիկ էլ ասում եմ.

– Ցամաք ի՞նչ ուտենք, կէթանք մոտի գեղը մե քիչ թանի կամ մածնի խետ կուտենք:

Էթում են ուղիղ սանդր շինողի տունը: Էս էլ շատ սրտաբաց մարթ ա հլնում: Ըստոնցը կանչում ա տուն, սեղան ա նստցնում: Խաց էլ են դնում, մածուն էլ, թան էլ, ինչ որ ունենում են: Ըստոնք էլ իրանց խացն են խանում դնում սեղանին: Ուտում են կշտանում, իրանց խացը թողնում, էթում են:

Ոսկին էլ մնում ա սանդր շինողին:

Սիվտակ – սպիտակ
Փուռնիկ – բոբոն
Պախում – պախում

Սաղ – ամբողջ
Սանդր – սանր
Քշեր – գիշեր

Խաց – հաց
Խասամ – հասա







Հլնում, չի հլնում մե թաքավոր: Թաքավորը հիվանդանում, աչկերը կուրանում են: Իշքան բժիշկներ, իշքան պոռֆեսորներ են կանչում, չեն կարում ըտրա աչկերը առողջացնեն: Մի պառավ կին խորուրթ տվեց, որ մե ծովի մեչ ոսկե ձուկ կա, պտի բռնեն, արունը քսեն թաքավորի աչկերին, որ լավնա: Թաքավորը հրաման տվեց, որ իշքան թռչի կա, էքան թռք քցեն, էտ ձուկը գտնեն: Մի թռչի շատ օրեր հետո ոսկե ձուկը բռնեց: Թաքավորի տղին ասին, որ ոսկե ձուկը բռներ են: Բերին թաքավորի տղի մոտը: Ոսկե ձուկը լեզու առավ, ասեց.

– Թաքավորի տղա, ես էլ խեր ու մեր ունեմ, ես էլ միմուճար եմ, ինձ բաց թող գնամ իմ խորն ու մորը խասնեմ, հիմա ինձ են ման գալում...

Թաքավորի տղի խիղճը տալում ա, ձուկը քցում ա ծովը: Թաքավորին ասին, որ ոսկե ձուկը բռներ ին, քո տղեն քցեց ծովը՝ գնաց: Թաքավորը հերստեց, որոշեց տղին աքսորի ուրիշ երկիր: Տղեն ընգավ ճանապարհ, գնաց: Նստավ մե ախպրի վրա, հանգստանում էր, մեկ էլ տեսավ մե սև մարք ա գալում էն յանից: Բարև ա տալիս.

– Բա՛րև, թաքավորի տղա:

Թաքավորի տղեն ասում ա.

– Դու ի՞նչ իմացար, որ ես թաքավորի տղեն եմ:

– Քո հագուստից իմացամ:

Իրար խետ նստան, խաց կերան ու իրանց ճանապարհը շարունակին: Խասան մե քաղաք, մե տուն առան, որ ըտեղ իրար խետ աբրեն, աշխատեն: (Մոռացամ ասեմ, որ սև մարթի անունը Արաք ա հլնում): Արաքը թաքավորի տղին ասեց.

– Դու գնա աշխատանքի, ես մնամ տունը, ճաշ էփեմ, շոր լվամ:

Թաքավորի տղեն գնաց աշխատանքի: Արաքը դուռս էկավ քաղաքի մեչ պտտելու: Հառցուփողոց արեց ժողովոթին, իմացավ, որ թաքավորը մե ախչիկ ունի, էտ էլ հիվանդացե, չի խոսում, թաքավորը պայման ա գրե, որ ով ախչկան խոսցնի, ախչիկը իրան կլնի, ով էլ էկավ ու չխոսցրեց, պտի մե մեծ գումար մուծի պետությամբ: Արաքն ասում ա. «Ես կխոսցնեմ, թե չխոսցնեմ, էտ գումարը կմուծեմ»: Երկրորթ օրը Արաքը գնաց, մտավ ախչկա սենյակը, սկսեց խոսցնել: Բայց մեր հայկական սովորության համաձայն օտար մարդը չի կանա ախչկա խետ խոսա: Արաքը մե երկաթի կտոր վեռեց ձեռը, ըսկսեց ըտրա խետ խոսալ.

– Իրեք մարթ՝ մեկը պլոտնիկ, մեկը դեռցիկ, մեկը տերտեր, ճամփա են էթում: Մութը տվեց վրա: Իրեքն էլ հարուստ մարթիկ ին: Որոշին, որ հեռով պտի երկուսը քնեն, մեկը հեռապա կայնի, որ գող-մող պատահեն՝ զառթնցնի մեկեկներին: Առաջինը հեռապա կայնավ պլոտնիկը: Որ ժամանակը շուտ հնցնի, մե ծառ կդրեց, ըտրանից տաշեց, տաշտաշեց, մե մարթատիպի բան շինեց: Դեռցիկին առթնացրեց. «Իմ ժամանակը լուացավ,- ասեց,- հեռքը քոնն ա, հելի կայնի պոստի»: Դեռցիկը հելավ, պլոտնիկը քնավ: Մեկ էլ տեսավ, որ իրանցից հեռու մարթ կա կայնած: Դեռցիկը հրացանը քաշեց, որ էտ մարթին խփեր: Մոտեցավ, տեսավ, որ էտ մարթը փետից ա շինած: Ասեց՝ էսի պլոտնիկի արած գոռն ա, կայնի ես էլ շոր կարեմ, խաքցնեմ: Վեռչը էս էլ մե շոր կարեց, խաքցրեց: Հեռքը խասավ տերտերին: Տերտերը տեսավ, որ մարթ ա կայնած: Էս էլ դեռցիկի պես հրացանը քաշեց, որ խփի: Մոտեցավ, տեսավ, որ փետից ա, գլխի հընգավ, որ պլոտնիկն ու դեռցիկն են արե: Որոշեց՝ ես էլ պտի հոգի դնեմ ըստրա մեչը, ես էլ իմ արեստը ցույց տամ: Նստավ աղոթեց, աղոթեց, էս մարթը հոգի առավ: Դեռցիկն ու պլոտնիկն էլ զառթնան, ըսկսին կռվել, մեկն ասում էր՝ էս մարթն իմն ա, մեկն ասում էր՝ իմն ա,- Արաքը հառց տվեց երկաթին.

– Էս մարթը մկա ո՞ր մեկին ա խասնում:

Ըտե նստածներից մեկը ասեց՝ պլտոնիկին, մեկը ասեց՝ դեռցիկին: Իսկ ախչիկը չդիմացավ, ասեց.

– Չէ՛, տերտերին ա խասնում:

Էս մե անքամը ախչիկը խոսաց: Մեկել օրը նորից Արաբը գնաց ախչկան խոսցնելու: Ախչկա սենյակում մե մատիտ գթավ, սկսեց խետը խոսալ.

– Մե տղա ամուսնացավ իրանց գեղից դուս: Էտ ախչկան տարան դառց: Տղեն իր ախպոր խետ գնաց կնոջը բերելու: Ախչկան վեռցին ընգան ճամփա: Ամուսնացածը ախպորից ու կնգանից հետո էր էթում: Ըտեղ էլ ջուր կար: Տեքըը խարսին ասեց. «Դու մնա ըստե, ես մե քիչ լողանամ»: Ամուսնացած ախպերը ջղայնացավ էն ախպոր վրա. «Ինչու՞ իմ կնոջ մոտը պտի լողանիր»: Էրկու ախպեր կռվան իրար խետ ու էրկուսն էլ թրերով իրար գլոխ թռցրին, իրար սպանին: Ախչիկը մարթի գլոխը շշկոժավ դրեց տեքոր ջանդկի վրեն, տեքոր գլոխը՝ մարթի ջանդկի վրեն: Ախչիկը Աստծուն շատ խնթրեց, շատ աղոթք արեց, վեռչը էրկուսն էլ սաղցան,– Արաբը մատտին հառցրեց.

– Մկա էս ախչիկը ո՞րին ա խասնում:

Ըտեղի մարթիկ ասին, մեկը՝ գլխի տիրոջը, մեկը՝ ջանդկի տիրոջը, ըտեղ ախչիկը չդիմացավ, ասեց.

– Ախչիկը գլխի տիրոջն ա:

Դե, թաքավորն իրա խոսքի տերն ա հլնում, ախչկան տալիս ա Արաբին: Արաբը թաքավորի ախչկան ու բաժինքը վեռցում, թաքավորի տղի խետ ճամփա ա հընգնում: Գալիս խասնում են էն տեղը, որտեղ իրար հանդիպեր ին: Արաբն ասում ա.

– Թաքավորի՛ տղա, արի մեր աշխատածը կիսենք:

Սաղ կիսում են, հեռքը խասնում ա ախչկան: Արաբն ասում ա.

– Մկա էլ ախչկան պտի կիսենք:

Թաքավորի տղեն ասում ա.

– Ախչիկը քոնն ա, ո՞նց կիսենք:

Արաբը թուրը քաշում, որ ախչկան խփի: Էտ մոմենտին ախչկա բերանից մե օց ա գալում հընգնում: Արաբն ասում ա.

– Էս օցն էր, որ թաքավորի ախչկան չէր թողում խոսեր: Իսկ ես էն ձուկն են, որ ընծի դու չսպանիր, լավություն արիր, ըտրա խմար եմ ես քե էս լավությունը անում:

Հետո մե շուշի կտոր ա գքնում, մատը կղրում, իրեք կաթիլ արում ա կաթըցնում վրեն ու ասում.

– Էս արումը կքսես խորտ աչկերին, աչկերը կլավնան:

Ասելն ու անհայտանալը մեկ ա հլնում:


Հետո թաքավորի տղեն ախչկան ու հարստությունը վեռցում, գալում ա խոր երկրի մոտը: Ըտե էթում թաքավորին աչկալուսանք են անում, թաքավորն էլ յոթ օր ու գշեր հարսանիք ա անում: Թաքավորի աչկերն էլ լավնում են ու եռջանիկ ապրում են:



Թոռչի - ձկնորս

Թոռ - ուռկան

Դեռցիկ - դերձակ







ՈՍԿԵ ՍԵՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Հլնում ա, չի հլնում, մե մարթ ա հլնում: Ըտրա կնիկը որ մեռնում ա, էտի թագա կնիկ ա առնում: Մե էրկու ամիս ապրելուց հեղը էտ կնիկը մարթին ասում ա.

– Պտի քո տղին տանես վերացնես, գլխիցս ռադ անես:

Ըտոնցը մե կախարդական եզ ա հլնում: Էտ եզը ըտոնց խոսացածը հմեն լսում ա ու էթում ա տղին ասում, թե քեզի ուզում են վերացնեն, ճար ունես՝ տես: Տղեն իրա ունեցած-չունեցածը ժողվում ա, լցում մե խուրջնի մեջ, դնում ա եզան մեջքին ու էթում են: Շատ են էթում, թե քիչ, Աստված գիղի, խասնում են մե ուրիշ քաղաք: Տղեն շատ ա դես-դեն ման գալում, վեռչը մե պառվի տուն ա մտնում: Էտ պառավն էլ ժառանգ չի ունենում: Տեղ ա խնդրում, պառավը տեղ ա տալում ու իրար խետ ապրում են: Մե վախտ իրար խետ ապրելուց հեղը էս տղեն տենում ա թաքավորի ախչկան ու սիրահարվում ա: Էթում ա տուն պառվին ասում.

– Էսօր ես թաքավորի ախչկան տեսամ, շատ խավմամ: Գնա թաքավորի մոտը ու ախչկան ուզի ընձի:

Պառավն ասում ա.

– Ա՛յ բալա ջան, էնի թաքավոր մարթ ա, ձեռ քաշի, էնի մեզի ախչիկ տվող չի:

– Բան չկա, այ մեր, – ասում ա, – դու գնա, թո չտան:

Խեղճ պառավը տենում ա ճար չկա, հլնում ա, էթում ա մատում թաքավորի խնամաքարին: Թաքավորի ծառաները էթում են, տենում են մե պառավ մատեր ա խնամաքարին: Պառավին ըտոնք տանում են թաքավորի մոտը: Պառավը գլխը իջցնում ա ու ասում.

– Թաքավորն ապրած կենա, քու ախչիկը պտի տաս իմ տղին:

Թաքավորն ասում ա.

– Աչքիս վրեն, եթե տղետ պահանջներս կատարեց՝ ախչիկս կտամ, թե չէ՝ չէ: Գնա տղիտ ասա, թո էթա ոսկե սելը իրա եզներովը բերի:

Պառավը գալում ա տուն, տղին ասում.

– Բա՛, որ ասում են թաքավորի ախչիկը մեր բանը չի, ասում իր՝ չէ: Դե մկա գնա ըսենց ըսենց արա:

Խեղճ տղեն տխուր էթում ա եզի մոտը: Եզը, որ տենում ա տղին ըսենց տխուր, ասում ա.

– Տղա, գլխուտ, արևուտ մատաղ, ի՞նչ ա հելե:

Տղեն մատում, պատմում ա գլխին էկածը: Եզն ասում ա.

– Լավ, մի տխրի, էտի քու խմար ա դժվար, իմ խմար դժվար չի: Իմ քուրերը, ախարտինքը են ծովի մեջն են, որտեղից պտի ոսկե սելը բերենք: Դու գնա թաքավորից պահանջի օխտը գոմշի կաշի, ճամփի պաշար ու քառսուն օր ժամանակ:

Եզի ասածները տղեն կատարում ա, ու ճամփա են հնգնում: Շատ են էթում, թե քիչ, իրանք գիտեն, խասնում են մե ծովի: Եզը տղին ասում ա.

– Տղա, ըստեղ են մերոնք, ես էթում են ոսկե սելին: Դու կկայնես ծովի ափը ու ընձի եռսունինը օր կսպասես: Եթե ջուրը պղտորվավ, էտի նշանակում ա՝ գալում են, սելն էլ բերում են, թե ոնց կար էնենց մնաց՝ ուրենն ոչ գալում են, ոչ էլ կգամ:

Ըտենց ասելուց հեղը եզը գոմշի կաշիները խաքնում ա ու մտնում ջուրը: Տղեն եռսունինը օր սպասում ա ու մեկ էլ ճաշի վախտը տենում ա, որ ջուրը պղտորվավ, ասում ա՝ ըիը, էկան: Էտ վախտը ջրից դուս են գալում էրկու եզ՝ մեկը իրանց եզը, մեկն էլ մե ուրիշը՝ իրանցու քուրը, ու բերում

են ոսկե սելը: Տղեն եզների ճակատը պաշտում ա, մատում են հանգստանալու: Հանգստանում, պոծնում են, եզը պատվիրում ա:

– Էթալու վախտը ինչքան էլ գոռում-գոչում լսաս, հետ չիշկաս, թե չէ սելը շուտ կգա ու կհնգնի ջուրը:

Տղեն մատում ա սելը ու հնգնում ա ճամփա: Հենց շարժվում են թե չէ, լսվում են տարբեր ձեներ, խաստ ու բարակ:

– Խողածին էկա՛վ՝ խրեղեն տարա՛վ:

Որ շատ են բոռում, տղեն ասում ա. «Հը կայնի աչկիս տակով հիշկամ, տենամ ո՞վ են բոռում»: Հենց որ հետ ա հիշկում, սելը դղրդում ու շուտ ա գալում ջուրը: Եզները չոքերը տալում են գետնին ու մե կերպ սելը դգում են: Տղի եզը հենց տենում ա սելը դգվավ, գլխը լծից խանում ա ու կոտոշներով տղին էնքան ա տալում, որ տղի հուշքը էթա ու էլ հետ չիշկա:

Հենց խասնում են իրանց երկրին, եզը տղին էնքան ա լգում, մինչև հուշքի ա բերում: Ժողովուրդը էթում աչկալուսանք ա տալում թաքավորին, թե աչկտ լուս, տղեն ոսկե սելը բերեց, ջուխտ եզներն էլ խետը: Տղեն տուն ա խասնում, թե չէ, պառվին ասում ա.

– Գնա թաքավորին ասա՝ տղես սելը բերեր ա, դե ախչկատ տու:

Պառավը էթում, նորից մատում ա խնամաքարին: Ըստրան էլը ներս են տանում: Պառավը տղի ասածը ասում ա, բայց թաքավորը ասում ա.

– Ես մե պահանջ էլ ունեմ, թե տղետ կատարեց՝ ախչիկս կտամ, չէ՛ չէ՛: Արևմուտքից արևելք, – ասում ա, – թող տղետ մե օրում վարի, ցանի, թե արեց՝ լավ, թե չէ՛ չէ՛:

Պառավը գալում, տղին ա ասում, տղեն էլ էթում եզներին ա պատմում: Եզներն ասում են.

– Լա՛վ, դու հանգիստ կաց, մենք ամեն բան կանենք:

Գութանը շինում են ու էն գլխեն սկսում են իրանց գործը: Եզները տենում են, որ մութը գետինն ա առնում, բայց չեն պոծնում, չոքում են ու օրը ճաշ ա դառնում: Էս անգամ մինչև մութը տալը ըստրանք վարում ու ցանում են:

Պառավը նորից ա էթում թաքավորի մոտը ու ասում.

– Էս էլ արեց տղես, դե ախչկատ տուր:

Թաքավորը ասում ա.

– Նանի՛, եթե քու տղեն իմ վեռչին պահանջն էլ կատարի՝ ախչիկս կտամ, թե չէ՛ չէ՛: Արտերը խասնելուց հեղը, – ասում ա, – ժողովուրդը կհնձի, ու ըտրանից հեղը պտի քու տղեն մե օրում էտ սաղ կրի, ծեծի ու տեղավորի ամբարների մեջ: Թե արեց՝ շատ լավ, թե չէ՛ չէ՛:

Եզները էս վեռչի պահանջը կատարելու խմար էլ օգնում են տղին: Հնձածը բերում են, ծեծում, տեղավորում ամբարների մեջը: Թաքավորը, որ լսում ա տղեն իրա պահանջը կատարեց, մտքի մեջը ասում ա. «Էս տղեն, որ իմ սաղ պահանջները կատարեց, ուրեմն աշխատավոր, լավ մարթ ա, մկա ես ո՞նց իմ ախչկան ըստրան չտամ»: Ըսենց միտք անելուց հեղը թաքավորը ախչկանը տալում ա էս տղին:

Խա՛, մոռացամ ասիմ, որ տղեն թաքավորի պալատի պես մե պալատ ա սարքած հլնում: Սկսում են պաղրաստություն տենալ, որ խարսնիքը էտ պալատի մեջը անեն: Տղեն ուզում ա, որ իրա խարսնիքին խերն էլ գա: Մարթ են դրկում, խորը բերում են ու էտ պալատի մեջն օխտը օր, օխտը քշեր խարսնիք են անում:

Իրանք խասնում են իրանց մուրազին, դուք էլ խասներ ձեր մուրազին:

— — — — —
Ռադ անես – կորցնես
Խավմամ – հավանեցի
Իչցնում ա – իջեցնում է
Խաքնում ա – հագնում է
Խարսանիք – հարսանիք

Խողածին – հողածին
Խրեղեն – հրեղեն
Դե մկա – դե հիմա
Խմար – համար
Դրկում – ուղարկում

Հուշքը – ուշքը
Հիշկամ – մայեմ
Թագա – նոր
Հեղը – հետո
Խերը – հայրը



ԲԻԹ-ԼԻՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Հլնում ա, չի հլնում մե քաքավոր: Էս քաքավորին իրեք խատ տղա ա ունենում: Պատի տղի անունը Բիթլիս ա հլնում: Բիթլիսը շատ չար տղա ա հլնում: Մե օր էս տղեն էթում ա հոլ քցելու: Հոլը քցում ա, զարկում մե պառավի կուժ կողորում: Էս պառավը տղին անիծում ա.

– Բիթլիս, լաչառ քուրերին ռաստ գաս:

Բիթլիսը գալում ա տուն ու սկսում մտածել: Թաքավորն ասում ա.

– Տղա ջան, էտ ի՞նչ ա հելե քեզի, ի՞նչ ես մտածում:

Ասում ա.

– Է՛, հայրիկ, մե պառավ ընծի ընենց անեծք ա տվե, որ քշեր-ցերեկ քունս չի տանում:

Պատմում ա անեծքը, հետո ասում.

– Հայրիկ, ոնց հլնի պտի ես ման գամ էտ լաչառ քուրերին գթնեմ:

Ասում ա.

– Բալա ջան, ես խորհուրդ չեմ տա որ էթաս: Արի, ընծի լսի, մի՛ գնա: Որ էթում ես, ախպերներին խեռ միասին գնացեք:

Առավոտ իրեք ախպերները միասին ուտում, խմում, ծանդրը թափում են, թեթևը վեռցում են, խորը մնաս բարով ասում, ձիերը գոմից քաշում ու ճամփա են հնգնում: Խեղը մենակ ասում ա.

– Որտեղ որ արևը կմտնի, ինչ ուզում ա հլնի, ընդեղ էլ կքնեք:

Ճամփա են հնգնում: Շատ են էթում, թե քիչ, էն էլ Աստված գիդի, խասնում են մե կանաչ տեղ: Արևն էլ սկսում ա մտնել: Մեծ ախպերն ասում ա.

– Ըստրանից լավ տեղ չկա, մեր խոր ասածը մենք չենք մոռանա:

Պատի ախպորն էլ ասում ա.

– Դու մեր պստիկն ես, կարող ա վախենաս, արի մեր մեչտեղը քնի:

Վրանը զարկում են, պառկում են մեչը, քնում: Էրկու ախպերով քնում են ու սկսում են խոմփցնել: Բայց Բիթլիսի քունը չի տանում: Բիթլիսը արանքներից կամաց դուս ա գալում, շորերը խաքնում, գուռը վեռցում, պահակ կանգնում: Մեկ էլ տենում՝ հեռվից մի մեծ գետի պես ածղահա բան ա էրևում: Բիթլիսը առաջանում ա դրան: Էտ ածղահան էլ առաջանում ա Բիթլիսին: Բիթլիսը տենում ա, որ դևն ա: Բիթլիսը ըտուն բարև ա տալում, բարևն առնում: Դևն ասում ա.

– Խողածի՛ն, օձն իր պոռտով, հավքն իր թևով ըստեղրանք չի էրևում, էս ո՞նց ա հելե, հը՞նչ ես էկե: Բիթլիսն ասում ա.

– Զո սերն ա քերե:

Դևն ասում ա.

– Որ իմ սերն ա քերե, կոիվներս կոիվ ա:

Բիթլիսն ասում ա.

– Կովե՛նք:

Դևն ասում ա.

– Մկա զարկը ի՞մն ա, թե՞ քոնն ա:

Բիթլիսն ասում ա.

– Դև ախպեր, զարկը քոնն ա:

Դևն էթում ա շատ հեռվից գալում: Գուռը զարկում ա, թոզ ու դումանը ընենց ա բարձրնում, որ դևն ասում ա.



– Ա՛խ-վա՛խ, էս իմա՞լ զարկիմ, որ մե փոքիկ միս չմնաց դնիմ ատմիս տակը, շուտուց խողածնի միս չիմ կերե:

Բիթլիսը էտ թոզ ու դումանի մեչից ասում ա.

– Դև ախպեր, հըլը կեր՝ նոր մարսի:

Հերթը խասնում ա Բիթլիսին: Բիթլիսն էթում ա, հեռվից գալում, էնենց ա զարկում, որ դևը տեղն ու տեղը մնում ա: Բիթլիսը էթում ա վրանը, կամաց մտնում ա ախպերների արանքը, քնում:

Ախպերները շատ են քնում, թե քիչ, մեծ ախպերը քնից հլնում, սկսում ա վրանի մոտ ման գալ: Տենում ա հեռվում մե մեծ, սև բան կա: Վախվիսելով էթում ա, մոտենում ըտրան: Տենում մե դևի ջանդակ ա, թուրը քաշում ա սկսում փոթոտել: Իրա շորերն էլ սաղ արում ա անում: Գալում ա վրանի մոտը, սկսում ախպերների վրեն բոռքռալ.

– Հելե՛ք, տեսեք ի՞նչ ա հելե, սաղ քշեր չեմ քնե, դև եմ ըսպանե, դուք էլ ձեր խմար քներ եք:

Ախպերները հլնում են, տենում են էս արնի մեչ թաթխված ա: Ջուր են բերում, ախպորը լվացնում: Հանգստանում են, խաց են ուտում, նորից ճամփեն շարունակում: Դու մի ասա, ըստոնցն հանդիպածը իրեք գլխանի դևն ա հելե:

Շատ են էթում, թե քիչ, խասնում են մե տեղ: Մեծ ախպերն ասում ա.

– Ախպերներ, արևը մտավ, էս էլ լավ տեղ ա, արեք ըստե հանգստանանք, մեր խոր ասածը չմոռանանք:

Վրանը զարկում են, խաց են ուտում, պառկում են քնելու: Նորից մեծ ախպերն ասում ա.

– Ախպեր, դու պստիկ ես, կվախենաս, արի մեչտեղներս քնի:

Բիթլիսը մտնում ա արանքները, պառկում են ու խռմիցնում: Բայց Բիթլիսի քունը էլը չի տանում: Արանքներից կամաց հլնում ա, գուռը վեռցում, ըսկսում վրանի առաջը ման գալ: Տենում ա հեռվից մե մեծ, գետի պես օլոր-մոլոր բան ա էրևում: Բիթլիսը կամաց-կամաց էթում ա առաջ: Էտ սև բանն էլ գալում ա իրան: Դու մի ասա, էս էլ յոթ գլխանի դևն ա: Բիթլիսը բարև ա տալում, ասում ա.

– Բա՛րև, դև ախպեր:

Դևն ասում ա.

– Հագա՛ր բարին, խողածին: Դամփեն գալուց գետ-մետ չանդիպա՞վ քեզի:

Ասում ա.

– Չէ՛, դև ախպեր, մե բարակ հառու էր, ոտս թալիմ, հնցամ:

Դևը մտածում ա, ասում.

– Խողածին, կռիվներս կռիվ ա: Մկա հերթն ի՞նչն ա, թե՞ քոնն ա:

Բիթլիսն ասում ա.

– Դև ախպեր, քո խողի մեչն ենք՝ քոնն ա:

Դևն էթում ա, շատ հեռվից գալում, գուռը բերում, ընենց ա զարկում, որ երկինք, գետին դրդում են: Դևն ասում ա.

– Ա՛խ-վա՛խ, էս ի՞նչալ զարկիմ, գոնե մե կտոր միս չմնաց դնիմ ատմիս տակը: Շուտուց մարթու միս չիմ կերե:

Բիթլիսն ասում ա.

– Դև ախպեր, կեր՝ նոր մարսի:

Հերթը խասնում ա Բիթլիսին: Էթում, հեռվից գալում, գուռը ընենց ա զարկում, որ դևը տեղն ու տեղը մնում ա: Նորից կամաց մտնում ա ախպերների արանքը, քնում: Շատ են քնում, թե քիչ, մեծ ախպերը նորից հլնում ա: Թուրը վեռցում, վրանի կրաղները ման ա գալում: Տենում ա հեռվում մի սև բան կա: Վախվիսելով մոտենում ա ըտրան: Տենում ա մի մեծ դևի ջանդակ: Թուրը քաշում ա, մանդր-մանդր կդրում, իրա շորերն էլ արունվա ա անում: Գալում ա ախպերների վրա բոռքռում.

– Սաղ քշեր չեմ քնե, դև եմ ըսպանե, դուք ձեր քեֆին քներ եք:



Ախպերներն հլնում են, ջուր են բերում, ախպորը լվացնում են: Նորից խաց են ուտում ու ճամփեն շարունակում: Շատ են էթում, քե քիչ, խասնում են ամարաթների: Դու մի ասա, էսի քառսուն գլխանի դևի ամարաթն ա: Բիթլիսն ասում ա, քե.

– Ախպերներ ջան, էթանք էս քշեր էտ ամարաթը մնանք:

Էթում են ամարաթ, որ հանգստանան, մեկ էլ դողդուն, դմփդմփուն հնգնում ա: Քառսուն դուռը շխշխկալեն բացվում են: Ներս ա մտնում քառսուն գլխանի դևը, բարև ա տալում: Ախպերներն ասում են.

– Հազար բարև, դև ախպեր:

Ասում ա.

– Խողածի՛ննե՛ր, էտքան տեղ էկաք, բա գետ-մետ չանդիպա՞վ ձեզի:

Բիթլիսն ասում ա.

– Դև ախպեր, էրկու խատ բարակ հառու ին, շենքինք, հնցանք:

Դևն ասում ա.

– Խողածի՛ն, կռիվներս կռիվ ա:

Բիթլիսն ասում ա.

– Դև ախպեր, քո գործն ա, ուզում ես՝ կռվենք:

Բիթլիսը, որ դևին ըսենց պատասխանում ա, դևն ասում ա.

– Խողածի՛ն ջան, անունտ ի՞նչ ա:

Ասում ա.

– Բիթլիս:

Ասում ա.

– Բիթլիս ջան, արի մե խատ պայման կապենք:

Բիթլիսն ասում ա.

– Խնդրեմ, ասա:

Դևն ասում ա.

– Բիթլիս ջան, պտի էթաս Խալիֆա թաքավորի ախչկան բերես ընձի: Բերիր՝ բերիր, չէ՛ իրեքիտ գլոխն էլ կթոցենեմ:

Բիթլիսն ասում ա.

– Դև ախպեր, մենք թաքավորի որդի ենք, նպատակ ունենք, էթում ենք մեր նպատակին: Մեր նպատակը կատարենք՝ նոր: Քո պայմանին տեր եմ:

Դևն ասում ա.

– Ասա՛, ի՞նչ ա քո նպատակը, կարող ա կարենամ օգնեմ:

Բիթլիսն ասում ա.

– Չէ՛, դև ախպեր, մենք օգնություն չենք ուզում: Մենք էթում ենք լաչառ քուրերին բերենք:

Դևն ասում ա.

– Բիթլիս ջան, հաջողություն ձեզի:

Քշերը մնում են, հանգստանում, առավոտ շուտ, բարլուսը բացվի ձեր վրեն, բարլուսը բացվում ա Բիթլիսի վրեն: Հլնում են, ճամփեն շարունակում: Շատ են էթում, քե քիչ, էտ էլ Աստված գիդի, խասնում են լաչառ քուրերի քաղաք: Անծանոթ մարթ են, հու՞ր էթան, հու՞ր չէթան, վեռչը էթում են մե դուռ թխկցնում: Դուռը բացում ա մե խատ պառապ կնիկ: Ասում են.

– Բարև, մանի ջան, կոնախ կուզե՞ս:

Ասում ա.

– Բալա՛ ջան, կոնախն Աստունն ա: Բայց ոչ ոտելու խաց ունենմ, ոչ քնելու շոր ունենմ:

Բիթլիսն ասում ա.



– Նանի՛ ջան, մի՛ վախեցի, մենք թաքավորի որդի ենք:

Ձեռը տանում, ջեքից մե ճանգ ոսկի ա տալում պառվին: Պառավը ուրխըթունից կրնգները զարգում ա իրար: Էթում ուտելիք, խմելիք, քնելու շոր ա առնում, բերում թափում տունը: Ուտում, խմում, քնում են: Առավոտ շուտ հլնում են: Բիթլիսը հարցնում ա լաչառ քուրերի տեղը: Պառավն ասում ա.

– Տղերք ջան, արեք հլնենք կտուրը, ես ձեզի ամեն ինչ կասեմ:

Հլնում են: Պառավն ասում ա.

– Բիթլիս ջան, էն մեծ ամարաթը տենու՞մ ես, էտի թաքավորինն ա: Պալատի դեմի էտ էրկու քարերն էլ թաքավորի ախչիկների խնամախոսի քարերն են: Ով որ ախչկան ուզում ա, էթում ա նստում ընդրա քարի վրեն: Մեծը՝ մեծինն ա, պստիկն էլ՝ պստկանն ա: Էտ ախչիկները շատ լաչառ են, ըտրանց դարդից թաքավորը պալատից գնացե, ուրիշ տեղ ա նստում: Մկա, տղերք ջան, որ ուզում եք էտ ախչիկներն, ուզեք:

Բիթլիսն ասում ա.

– Թող առաջ մեր մեծ ախպերն էթա:

Մեծ ախպերը խաքնում ա, էթում ա նստում ջոչ ախչկա քարին: Մեծ քուրը հլնում, տենում ա իրա քարի վրեն մարթ ա նստե: Լաչառըթունը դնում ա, կծկծալով իջնում ա ցած, բամփում ա տղի քիկունքին, քարից քցում ցած: Էնքան ա զարկում, տղեն հուշից էթում ա: Էտ քարի դեմն էլ մե ավուզ ա ըլնում: Ախչիկը ձեռը քցում ա, որ տղի ոտից բռնի, քցի ջուրը: Էնդեղից Բիթլիսը ձեն ա տալում.

– Թաքավորի՛ ախչիկ, մենք էլ ենք թաքավորի որդի, թող մեր ախպերը մնա՝ մենք գանք տանենք:

Թաքավորի ախչիկը հլնում ա պալատը: Բիթլիսը գալում ա, ախպերը տանում: Լվում են, հուշը բերում տեղը, հանգստանում են:

Առավոտ միչնեկ ախպոր հերթն ա: Միչնեկ ախպերը հլնում ա խաքնում, էթում դողը սիրտը նստում պստի ախչկա քարին: Պստի ախչիկը պալատից հլնում ա, տենում իրա քարին մարթ ա նստե: Լաչառըթունը դնում ա, կծկծալով իջնում ա ցած, բամփում ա տղի քիկունքին, քարից քցում ցած: Էնքան ա զարկում՝ տղեն բեռւժ հնգնում ա: Էլը ոտից բռնում ա, որ տղին ջուրը քցի: Բիթլիսը ձեն ա տալում.

– Թաքավորի՛ ախչիկ, մենք էլ ենք թաքավորի որդի, թող մեր ախպերը մնա, մենք գանք տանենք:

Բիթլիսը գալում, ախպերը վեռցում ա, բերում տուն: Լվում, ուշքի ա բերում: Մյուս օրը Բիթլիսը հլնում, խաքնում ա, մե լավ մտրակ ա առնում, գալում նստում մեծ ախչկա քարին: Ախչիկը պալատից դուս ա գալում, տենում իրա քարին մարթ ա նստած: Դվճվալով խասնում մե բամփ ա զարկում Բիթլիսի քիկունքին: Բիթլիսը հլնում ա, մտրակը խանում, ախչկա մագերիցը բռնում, էնքան ա տալում, որ ախչիկը բեռւժ հնգնում ա, մտրակն էլ պոկվում: Բիթլիսը ձեռը քցում ա, որ էդ լաչառ հուրի փերու ոտից բռնի, քցի ավուզը: Ընդեղից թաքավորի պստի ախչիկը ձեն ա տալում.

– Թաքավորի որդի, մենք էլ թաքավորի ախչիկ ենք, մեր քրոջը թող գանք տանենք:

Քվորը տանում են տուն, ուշքի բերում, լվում են, աչքալուսենք են տալում թաքավորին, թե.

– Աչքտ լուս հլնի, մեծ լաչառտ ախտվե:

Բիթլիսը մեկել օրն էթում ա, թագա մտրակ առնում: Գալում, նստում ա պստի քվոր քարին: Էս էլ կչկալով իջնում ա, բամփով տալում: Բիթլիսը էս մտրակն էլ էս քվոր գլխին ա մաշցնում: Ավուզը քցելու վախտը մեծ քուրը բռռում ա.

– Թաքավորի՛ տղա, մենք էլ թաքավորի ախչիկ ենք, իմ քրոջը թող գանք տանենք:

Բիթլիսն էթում ա տուն: Գալում, պստի քվորը տանում են: Էլի թաքավորին աչքալուսենք են տանում, թե.

– Թաքավոր, պստի ախչիկտ էլ ա ախտվե:

Էս թաքավորը ուրախ-ուրախ գալում ա, նստում գահին: Տղերքին կանչում ա մոտը: Բարև են տալում, նստում են: Թաքավորն ասում ա.

– Բիթլիս ջան, հոգուցս բացի, ինչ ուզում ես՝ ասա: Ախչիկներս՝ քեզի, հարստությունս՝ քեզի, գահս՝ քեզի:

Բիթլիսն ասում ա.

– Թաքավոր, մենք էլ ենք թաքավորի որդի, մեզի ոչ մե բան պետք չի, ախչիկներտ տու, մենք էթանք մեր երկիրը:

Ծանոթը թափում են, թեթևը վեռցում են, նստում են ձիանքը, գալում պառվին էլ շնորհակալություն են հայտնում, ոսկի են տալում, գալում են: Գալում են, խասնում քառսուն գլխանի դևի պալատին: Մտնում են պալատը: Տենում են դևը ծառը դրե թևին գալում ա: Գալում ա, Բիթլիսին տենում, ասում ա.

– Բիթլիս ջան, նպատակիտ խասա՞ր:

Ասում ա.

– Խա՛, ես խասամ, մնում ա քեզ էլ խասցնեմ քու մուրազին:

Լուսը բացվելուն պես Բիթլիսը պատրաստվում ա էթալու: Դեն ասում ա.

– Բիթլիս, քեզ քառսուն օր ժամանակ եմ տալում, թե էկար՝ շատ լավ, թե չէ՝ ախպերներիտ ու կնքներին կկոտորեմ:

Բիթլիսը հնգնում ա ճամփա: Իսկ ախպերներն ու կնքները դևի հախտ մտնում են ամեն մեկը մե քունջ: Բիթլիսը շատ ա էթում, թե քիչ, խասնում ա մե մարթու: Տենում ա էս մարթը հանգաճը թաղե գետին, աշխարի սաղ անցուղարձը լսում, իմանում ա: Բիթլիսը ձեռը քցում ա ու էտ մարթին կայնցնում ա, ասում.

– Էս ի՞նչ հունար ա, որ ամբողջ աշխարի վերքն ու դիրքը իմանում ես:

Ասում ա.

– Ախպեր ջան, էս ի՞նչ հունար ա, հունարը Բիթլիսի հունարն էր, որ լաչառ քուրերին ախտեց, բերեց:

Բիթլիսն ասում ա.

– Ախպեր ջան, Բիթլիսը ես եմ:

Ասում ա.

– Բա հո՞ւր ես էթում:

Ասում ա.

– Էթում եմ Խալիֆա թաքավորի ախչկան բերեմ:

Ասում ա.

– Ես էլ քեզի հնգեր:

Էրկուսով հնգնում են ճամփա: Ըստ են էթում, թե քիչ, խասնում են մե մարթի: Տենում են էս մարթը չալիկը քցե ճկուտը, սար ու ձոր քշում ա, տանում: Բիթլիսը ձեռը քցում ա էս մարթին բռնում: Ասում ա.

– Ախպեր ջան, էս ի՞նչ հունար ա, որ մե ճկուտով սար ու ձոր քշում, տանում ես:

Ասում ա.

– Է՛, ախպեր ջան, հունարը Բիթլիսի հունարն էր, որ լաչառ քուրերին ախտեց, բերեց:

Ասում ա.

– Ախպեր ջան, Բիթլիսը ես եմ:

Ասում ա.

– Բա հո՞ւր ես էթում:

– Էթում եմ Խալիֆա թաքավորի ախչկան բերեմ:





– Որ ըտեմց ա, – ասում ա, – ես էլ ձեզի հնգեր:

Իրեքով ճամփեն շարունակում են: Շատ են էթում, թե քիչ, խասնում են մե մարթու: Էտ մարթը մե ոտը զարկում գետի էս կրաղը, մեկն էլ՝ էն կրաղը, ամբողջ ջուրը խմում ա ու ասում.

– Անխղճնե՛ր, մե կաթ ջուր թողեք խմեմ, էրվա՛մ, վառվա՛մ:

Բիթլիսը ձեռը քցում ա, էս մարթին քաշում կրաղ, ասում ա.

– Ախպեր ջան, էս ի՞նչ հունար ա, որ սաղ գետը խմըմ ես, բայց էլը ասում ես՝ էրվա՛մ, վառվա՛մ: Ասում ա.

– Հունարը Բիթլիսի հունարն էր, որ լաչառ քուրերին ախտեց, բերեց:

Ասում ա.

– Բիթլիսը ես եմ, էթում եմ Խալիֆա թաքավորի ախչկան բերեմ:

Ասում ա.

– Էս էլ ձեզի հնգեր:

Չորսով ճամփեն շարունակում են: Շատ են էթում, թե քիչ, էտ էլ Աստված գիդի, խասնում են մե մարթու: Քառսուն պղինձ չլիկ են եռցնում: Էս մարթը էտ քառսուն եռման պղինձն էլ խմում, հետո ասում ա.

– Անխղճնե՛ր, գոնե մե քիչ տաքցնիք, պոկներս տաքներ:

Բիթլիսը ձեռը քցում, ըստուն քաշում ա կրաղ, ասում ա.

– Էս ի՞նչ հունար ա, որ քառսուն պղինձ եռմեն չլիկը խմար, հըլը ասում ես՝ պոկներս էլ չտաքցրեց:

– Է՛, – ասում ա, – հունարը Բիթլիսի հունարն ա, որ լաչառ քուրերին ախտեց, բերեց:

Ասում ա.

– Ես Բիթլիսն եմ, էթում եմ Խալիֆա թաքավորի ախչկան բերեմ:

Ասում ա.

– Ես էլ ձեզի հնգեր:

Խինգով ճամփեն շարունակում են: Տենում են մե մարթ ամեն ոտին մե ջախչի քար կապե քամու պես վազում ա: Ասում ա.

– Հավա՛ր, խասե՛ք, ընձի բռնե՛ք, քամին տարա՛վ:

Բիթլիսը ձեռը քցում ա, ասում ա.

– Ախպեր ջան, էտ ի՞նչ հունար ա, որ ջախչի քարերը ոտերիտ կապած վազում ես:

Ասում ա.

– Է՛, հունարը Բիթլիսի հունարն ա, որ լաչառ քուրերին ախտեց, բերեց:

Ասում ա.

– Բիթլիսը ես եմ, էթում եմ Խալիֆա թաքավորի ախչկան բերեմ:

Ասում ա.

– Ես էլ ձեզի հնգեր:

Վեցով ճամփեն շարունակում են: Շատ են էթում, թե քիչ, տենում են նվազ են ածում, էտ նվազից սեղանի վրեն քասա, գթալ պարում են: Բիթլիսը էտ նվազ ածողի թկից բռնում, ասում ա.

– Ախպեր ջան, էս ի՞նչ հունար ա, որ նվազիցտ քասա, գթալ պարում են:

– Է՛, – ասում ա, – հունարը Բիթլիսի հունարն էր, որ լաչառ քուրերին ախտեց, բերեց:

Ասում ա.

– Բիթլիսը ես եմ, էթում եմ Խալիֆա թաքավորի ախչկան բերեմ:

Ասում ա.

– Ես էլ ձեզի հնգեր:

Յոթով ճամփեն շարունակում են: Շատ են էթում, թե քիչ, խասնում են Խալիֆա թաքավորի քաղաքի կրաղը: Վրանը զարկում են, ըտե նստում: Էրկու խոքի հղրկում են խնամախոսության: Էն

մարքը հանգաճը թաղում ա գետինը, որ լսի ինչ են խոսում: Էտ էրկուսը էթում են, թաքավորին բարև են տալում, ասում են:

– Թաքավորն ապրած կենա, էկեր ենք քո ախչկան ուզենք:

Թաքավորը պատասխանում ա.

– Էքուց ես ձեր պատասխանը կտամ:

Ըստոնք էթում են, թաքավորը կանչում ա ջադու պառավներին, ասում ա.

– Ի՞նչ եք ասում, էկեր են ախչկաս ուզեն, ընդամենը յոթ խոքի են, ի՞նչ եք ասում:

Պառավներն ասում են.

– Թաքավորն ապրած կենա, հը՞նչ ես վախենում, մե գորք հղրկի, տեղն ու տեղը կոտորեն, պրծնեն:

Հանգաճ խորոդ մարքը ասում ա.

– Տղերք, թաքավորը գորք ա հղրկում, որ մեզի կոտորեն:

Չալիկի տերն ասում ա.

– Տղերք ջան, մի վախեցեք, էտ իմ հունարն ա:

Առավոտ շուտ հլնում, տենում են վրանի չորս կրաղը գորքը պատե: Չալիկի տերը չալիկը քցում ա ճկուրը, սաղ գորքը կոտորում: Մե խոքի էլ բռնում, ասում ա.

– Կէթաս թաքավորին կասես՝ ի՞նչ անխիղճ թաքավոր ա, մե քիչ շատ չհղրկեց, գոնե չալիկը փոխիմ էն մե մատերս էլ:

Էս մարքն էթում ա իրա տեսածն ու լսածը սաղ պատմում: Թաքավորը պառավներին մորից ա կանչում, ասում.

– Էս ի՞նչ օյին խանիք իմ գլխը, ամբողջ գորքս կոտորվեց:

Պառավները ասում են.

– Ասա՛ գետ խմող մարք թե ունեք, ախչիկս կտամ:

Նորից էրկու խոքի խնամախոս են գալում: Գալում են, թաքավորին բարև են տալում, ասում:

– Թաքավորն ապրած կենա, էսօր ի՞նչ կասես:

Թաքավորն ասում ա.

– Ընձի գետ խմող ունեմ, թե դուք էլ ունեք, ախչիկս կտամ:

Ասում են.

– Կբերենք:

Հանգաճ խորոդը հլնում ա, լսածը պատմում հնգերներին: Գետ խմողին վեցում են, էթում: Թաքավորի ջուր խմողը ու Բիթլիսի ջուր խմողը կայնում են ըստե: Թաքավորի ջուր խմողը մե բարակ գետ ա խմում, իսկ Բիթլիսի ջուր խմողը մե մեծ գետ խմում, հլը ասում ա.

– Տղերք, անխիղճներ՝ ր, էրվա՛մ, վառվա՛մ, մե կաթ ջուր տվեք խմեմ:

Թաքավորը էլը ախտվավ: Հետո էլը կանչում ա ջադու պառավներին ու ասում.

– Արեք ախչիկը սուսըփուս տանք, թե չէ խայտառակ կլնենք:

Պառավներն ասում են.

– Չէ՛, ասա, թե եռման չիկ խմող ունես, ախչիկս կտամ, թե չէ՛ չէ՛:


Հանգաճ խորոդը հլնում, լսածը պատմում ա: Չիկ խմողը ասում ա.

– Տղերք, էտ էլ իմ պարտքն ա:

Էթում ա պալատ: Բերում են քառսուն պղինձ չիկ են եռցնում: Թաքավորի չիկ խմողը մե պղինձ էլ չի խմում, բայց էսի սաղ խմում, հետո ասում ա.

– Տնաշեններ, գոնե մե քիչ եռցնիք, պոկներս էլ տաքնին:

Թաքավորը տենում ա էլը ախտվավ, ջադու պառավներին էլը կանչում ա: Էս անգամ էլ պառավներն ասում են.



– Չէ՞ որ քո խորքուրդը Բաղդատ ա, ըտոնցից մե արագավազ մարթ ուզի, քո մեր արագավազի խետ էթան Բաղդատ մշանի մատնիք բերելու, մերը շուտ էկավ՝ չես տա, ընդոնցից շուտ էկավ՝ կտաս:

Հանգա՞ն խորոտը լսածը պատմում ա հնգերներին: Արագ էթացողը էթում ա պալատ ու թաքավորի արագ էթացողի խետ հնգնում ա ճամփա: Բայց էս Բիթլիսի արագ էթացողը թաքավորինուց ուշ ա էթում: Էթում, խասնում ա Բաղդատ, մատնիքն առնում, գալում: Ճամփեն մտնում ա թաքավորի էթացողին, ասում ա.

– Արի՛ ետ, ես արդեն մատնիքը բերեք եմ:

Բերում, մատնիքը տալում ա թաքավորին: Թաքավորը էլը ջադու պառավներին կանչում, ասում ա.

– Էս ի՞նչ օյին խանիք իմ գլոխը, բերեք ախչկան սուսըփուս տանք:

Պառավներն ասում են.

– Բեր մշանը դիր, էտ օրը ըտոնց ամանները կթույնենք, սաղ կմեռնեն, ախչիկն էլ կմնա մեզի:

Հանգա՞ն խորոտը լսում, հլնում սաղ պատմում ա: Նվազ ածողը ասում ա.

– Տղերք ջան, էտ էլ իմ պարտքն ա:

Խնամախոսներն էթում են: Թաքավորն ասում ա.

– Տղերք ջան, արեք քեֆ անենք, վեռցեք տարեք ախչկաս:

Յոթով էլ հլնում, գալում նստում են: Յոթի ամաններն էլ թույնած են հլնում: Բիթլիսն ասում ա.

– Թաքավոր ջան, մեր հայկական սովորույթին հավատարիմ, առանց նվազի խաց չենք ուտի:

Նվազը տալում են: Բաժակ, քասա, գքալ, սաղ օղի մեչը ֆռռում են: Թույնածներն էթում են ընդոնց դեմը, մաքուրները՝ ըստոնց: Ընդոնք սաղ մեռնում են, ըստոնցը բան էլ չի հլնում: Թաքավորը ջադու պառավներին կանչում, կապել ա տալում ձիերի պոչից, բրախել ա տալում: Ըտոնք սաղ օրը ֆռռում են, հիրգունը մազները պոչներին գալում են տում: Թաքավորը ծանդըրը թափում, թեթևը վեռցում, ախչկան տալում ա Բիթլիսին: Բիթլիսը հնգերների, ախչկա խետ հնգնում ա ճամփա: Բիթլիսը նվազ ածողին թողում ա իրա տեղը, արագավազին՝ իրա տեղը, չլիկ խմողին՝ իրա տեղը, գետ խմողին՝ իրա տեղը, չալիկավորին՝ իրա տեղը, հանգա՞ն խորոտին՝ իրա տեղը: Շատ ա էթում, թե քիչ, խասնում ա դևի պալատը: Տենում ա ախպերները իրա էթալու օր որ քունջը մտեր են, ընդեղ էլ մտած են: Բիթլիսին տենում են, սաղ հլնում են: Դևը գալում ա տում, ասում ա.

– Բիթլիս ջան, բերի՞ր:

Ասում ա.

– Խա՛, բերին:

Դևը տենում ա մե հուրի-փերի ախչիկ, որ ոչ ուտես, ոչ խմես, սաղ օրը մայես: Դևն ասում ա.

– Բիթլիս ջան, որ ըտենց շնորք ունես, ա՛ռ քեզի, սրտանց տալում եմ, բարով վայելես:

Մեկը մեկու շնորհակալություն են հայտնում, հնգնում են ճամփա: Շատ են գալում, թե քիչ, խասնում են խոր քաղաքի կրաղը: Չոբները աչքալուսենք են տալում թաքավորին, թե.

– Աչքտ լուս հլնի, տղերքտ կնթների խետ էկան:

Թաքավորը դիտլ-գուռնով գալում ա տղերքի առաջը, տանում ա տում: Յոթ օր ու քշեր խաբսնիք են անում: Իրանք խասան իրանց մուրազին, դուք էլ խասսնեք ձեր մուրազին:

Գուռզ – գլուխը մետաղյա
ելուստներով գավազան
Ավուզ – ջրավազան
Աստուն ա – Աստունն է
Կնթներին – կանանց
Չալիկ – ձեռնափայտ
Պեկներս – շրթունքներս
Հուչից էթում ա – ուշքից գնում է
Խողածին – հողածին

Շենքինք – վրայով անցանք
Մե ճանգ – մի բուռ
Վեռցում – վերցնում
Ամարաթ – պալատ
Հանգա՞ն – ականջ
Ախտվե – հաղթվել
Չլիկ – ջրալի ճաշ
Հլնում – լինում
Խմար – համար

Խագնում – հագնում
Ատմիս – ատամիս
Չիանքը – ձիերը
Բեուժ – անուժ
Քասա – ափսե
Քունջ – անկյուն
Խաց – հաց
Իմալ – ինչպես
Խոքի – հոգի



ՏՈՒՆ ՊԱՀՈՂԸ

Մե թաքավոր ու հուր կնիկ գվիճեն: Կնիկ կսա.

– Տուն պախտոյ կնիկն ա:

Մարթը կսա.

– Օր ես դսուց չբերեմ, դու ինչո՞վ ա տուն կպախես:

Էն ենից թաքավորի ախչիկ գիքա, կսա.

– Խեր ջան, ես քու պաղասխան կիտամ:

Ախչիկ կէթա մե ջաղաց կսարքա, խոր կկանչա կբերա: Խեր կիշկա՝

օղուն կա, ալրտուն չկա: Կսա.

– Էս իմա՞լ ջաղաց ա, ալրտուն չունի:

Ախչիկ կսա .

– Կնիկն օր կա, ալրտունն ա, մարթն էլ ջուրն ա, մարթ դսուց կբերա, կնիկն էլ տուն կպախա:

Թաքավոր էս օր կլսա, կկատողի, կսա.

– Էստոր տարե՞ք, տվեք ամենաախքատ տղին, տենամ իմա՞լ ա տուն կպախա:

Նազիր-վեզիր ախչկան կառին, կէթան: Կէթան կտենան մե դուռ, կմտին ներս, կտենան մե ախքատ, ամտեր տղա: Թաքավորի ախչկան կիտան էտոր, գիքան:

Ախչիկ տղին մե օսկի կիտա, կսա.

– Գնա՛, տղամարթու պես արի:

Տղեն խաց կառի, գիքա: Ախչիկ մեկել օր էրկու օսկի կիտա, կսա.

– Քե կսեմ տղամարթու՛ պես արի:

Կէթա էս անքամ էլ ձմերուկ կառի, խաղող կառի, վերջ, միրգ կառի, գիքա: Էս անքամ թաքավորի ախչիկ իրեք օսկի կիտա, կսա.

– Հեսօր էլ տղամարթու պես չես էկե, քու վիզ կկորեմ:

Տղեն կէթա, կառի շոր, կխաքի, թուր ու թվանք կառի, ձի կառի, գիքա: Թաքավորի ախչիկ կսա.

– Ա՛յ էղմալ, հեսօր տղամարթու նման ես:

Ախչիկ տղին իրեք բեռ օսկի կիտա, կճամփա ուրիշ երգիր: Տղեն կէթա գանդիբի իրեք ճամփի, գորոշի մե ճամփով էթա: Կէթա, կխասանի Վայ-Վայի քաղաք: Տղեն կսա հուր ձիուն.

– Իմ բախտ կթալեմ քեզի, վի դուռ կայնար, էնդեղ էլ գիչիմ:

Չին կէթա կկայնի մե խայու դուռ: Խայ տղին կպախա հուր մոտ, կսա.

– Հորի՞ ես էկե էս քաղաք:

Տղեն կսա.

– Էկեր եմ, օր իմ իրեք բեռ օսկին էնեմ վեց, էթամ:

Խայ կսա.

– Էս քաղաք յոթ ախպորն ա, հմեն հառավոտ էստոնք կէթան առուտուր կէնեն: Լուսուն կէթաս քու օսկիք քղնես, կկայնիս, օր գիքան առին, մե բեռըն գլխով կիտաս, մեկն՝ ուլնգով, մեկն էլ՝ կաշվով:

Տղեն կէթա, էղմալ կենա, բայց պայման կկապա, օր ոն փոշմնի՝ մե բեռի տեղ էրկու բեռ օսկի տա:

Հիրկուն ախպրտիք կէթան հուրանց ջոշ ախպոր մոտ խորրորդի: Ախպոր կսեն.

– Հեսօր իրեք բեռ օսկի ենք առե:

– Հնչո՞վ:

Էն մեկ կսա.

– Գլխով:

Էն մեկել.

– Ուլնգով:





Էն մեկել.

– Կաշվով:

Ջոչ ախպեր կսա.

– Իշվա՛նք, էդ մարթն մեկիդ գլոխն ա ուզե, մեկիդ՝ աչքեր, մեկելիդ էլ՝ կաշին: Քենի շուտ ա, տարեք էնդոր օսկիք տվեք,արեք:

Ախպրտիք կտանին վեց բեռ օսկի կիտան տղին: Տղեն կեղի էթալու: Խայն կսա.

– Դոր օր մութ տվեց, էնդեղ էլ մաց:

Կէթա, մութ կիտա մե սարի գլոխ: Տղեն բեռներ գիչու, կնստի: Էն ենից մե մարթ գիքա, կսա.

– Ա՛յ մարթ, իմ տուն մոտ ա, արի էթանք մացի իմ տուն: Քշեր ա, գել կա, հարամի կա...

Կառի տղին, կէթա, կմնա: Էս մարթ տղին կսա.

– Արի պայման կապենք: Ես մոմ վառեմ տամ կատվու ձեռ, օր չուրի լուս կատուն քալեց, իմ ունեցվածք քեզի, օր չթալեց՝ քե կսպանեմ, քո օսկիքն էլ կառիմ:

Պայման կկապեն, մոմ կիտան կատվու ձեռ, կնստին: Արթեն լուս բացվելով ա, կատուն աչքն չքարթա: Տղեն ծառայի խետ խաբար կհամիա կնգան: Կնիկ կառի մե կարաս մուկ, գիքա: Կատուն մուկ կտենա, մոմ կթալա, գվազի: Տղեն էդ մարթու զանձեր կառի, կնգա խետ գիքան: Գիքան, մե պալատ ա կսարքեն, օր աշխրի տակ ու հերես չկա: Մարթ ու կնիկ կէթան քաքավորին կբերեն տուն: Թաքավոր կիշկա, կսա.

– Ճիշտ ա, օր տուն պախող կնիկն ա:

Էստոնց յոթ օր, յոթ քշեր խարսնիք ա կէնեն, կուտեն, կխմեն:

Օղում – ջրաղացի աղորիքի խոշոր
ձագար՝ ցորենը ջրաղացքարերի միջև
քիչ-քիչ և շարունակաբար թափելու
համար

Ալրտուն – ալրատուն, արկղածև
տախտակե գուռ, որի մեջ թափվում է
աղացած ալյուրը

Էնեն – անեն, դարձնեն

Կնիկ կսա – կինն ասում է

Իմալ – ինչպես, ինչպիսի

Էն ենից – այն կողմից

Քե կսեն – քեզ ասում են

Հարամի – ավազակ

Այ էդմալ – այ այդպես

Չուրի լուս – մինչև լույս

Կառի – առնում է

ՈՒՆԳՈՎ – ուլունքով

Գիչու – իջեցնում է

Կբերա – բերում է

Կվազի – վազում է

Կիշկա – նայում է

Պախող – պառնող

Հուրանց – իրենց

Իշվանք – էշեր

Դսուց – դրսից

Էստուր – սրան

Մե խայու – մի հայի,

մի տարիքով մարդու

Կառիմ – կվերցնեմ

Թալեց – գցեց

Հուզե – ուզել

Դոր – որտեղ

Մացի – մնա

Քենի – քանի

Խեր – հեր

Հուր – իր

Վի – ում

Օր – որ





ԱՇԽԻՔԻ ՎԱՏԸ

Մե վեզիր հուր թաքավորին կսա.

– Թաքավոր, աշխրքի ի՞նչն ա վատ:

Թաքավոր կմտածա, կմտածա, չի կանա ասի:

– Օր հեյիս քաղաք պտտտես, գիմանաս, թե աշխրքի ինչն ա վատ, – կսա վեզիր:

Թաքավոր շորեր կփոխա, գելի կէթա քաղաք, կտենա իրեք տղա ճան ա կխաղան: Էն երկուս ճանով ա կխաղան, էն մեկ՝ անգին քարով:

Թաքավոր կմտածա. «Էսի երեխա ա, չխասկնա, կայնի խափիմ, քարն առիմ»: Թաքավոր կսա.

– Տղա ջան, ի՞նչ տամ քե, օր էդ քար տաս ընծի:

Տղեն կսա.

– Մե խատ կատվու պես նվա, տամ:

Թաքավոր կկայնի, կմտածա. «Սկա ո՞ն ա ընծի կճանչնա, կայնի նվամ, քարն առիմ»:

Թաքավոր կատվու նման կնվա, կսա.

– Դը տու:

– Մե խատ էլ շան խետ լակ կե, տամ, – կսա տղեն:

Թաքավոր կմտածա. «Կայնի ուտեմ, լավ քար ա»: Կուտա, կսա.

– Դը իմ քար տու:

Տղեն կսա.

– Խո դու գի՞ծ չես, էսի անգին քար ա, իմա՞լ տամ:

Թաքավոր կէղի մե խատ փալմուկ էշ, կդառնա գիքա: Վեզիր գելի հառեչ, կսա.

– Հը՞, աշխրքի ի՞նչն ա վատ:

– Աշխրքի վատ թըմախն ա, վեզիր, – կսա թաքավոր:

Պտտտես – պտտես, շրջես
Թմախն ա – ազահուրյունն է
Փալմուկ էշ – փալանված էշ
Առիմ – վերցնեմ

Ճան – կճակավոր կենդանիների
Ծնկան հողի ոսկորը, որով
երեխաներն ու պատանիները
խաղում էին մի շարք խաղեր

Իմալ – ինչպես
Նվա – մլավի
Լակ – լափ
Ոն – ուկ



ԱՂՎԵՄՆ ՈՒ ԳԵԼԸ

Մե աղվես գիքա, գընգի փոս: Կիշկա կտենա գելն ա գիքա, կբոռա.

– Գել ախպեր, էստեղ լիք օխչրի ջանդակ ա, միմեկ չկոնամ ուտեմ, արի երկսով ուտենք, չմնա փչանա, ափսոս ա:

Գել օր գլսա, կթոփ փոսի մեջ: Աղվես ոտ կդնա գիլու մեջքին, կթոփ դուս:

Գել կկատողի, աջ կթոփ, ձախ կթոփ, չկոնա հելի: Աղվես կիշկա, կիշկա, կսա.

– Գել ախպեր, իզուր մի թոփ, դենվա էլ եմ թոփ, դենվա էլ եմ թոփ...

Օխչրի – ոչխարի
Գընգի – ընկնում է
Չկոնամ – չեմ կարող

Կիշկա – նայում է
Դենվա – այն կողմ
Միմեկ – մեմակ

Գիքա – գալիս է
Դենվա – այս կողմ
Հելի – ելնի



ՎԻՇԱՊ ՕՁԻ ԵՎ ՆԱԶԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Էրկու հնգերներ կեղին. էստոնք կայսմանավորվին ու կեթան հեռու տեղ աշխատանքի: Մե տարի աշխատելուց հետո կորոշին կարգվին: Մե օր էլ ըռաստ կուգան Էրկու աղջկա, կխոսան աղջիկներու խետ, կհամաձայնվին, ու տղեքներուց մեկը կառի մեկ աղջկան, մեկել տղեն էլ կառի մեկել աղջկան: Աղջիկներուց մեկը խելոք, համեստ կնիկ դուրս կուքա, իսկ մեկելը՝ լաչառ, չար ու կռվարար կնիկ: Չար կնգա անուն Նազան կեղի: Մե օր էլ խելոք կնիկ ունեցող հնգերը կեթա ուր հնգերոչ տուն, կհարցու Էնդոր հալից: Հնգերը կսա.

– Շատ վատ եմ, իմ չար ու լաչառ կնգանից չկռնամ ազատվիմ:

Էրկսով կմտածին, թե իմալ ազատվին Էնդունց: Կմտածին ու Նազանին խափելով կտանին, կթալին ջրխորի մեջ: Բայց էտ ջրխորի մեջ ջուր չէղի: Դու մի ըսա, էտեղ մե խատ վիշապ օձ կեղի: Նազանից օձը շատ կվախնա: Չորս-հինգ օր Նազանը Էնքան կխոսա ու կրոքոքա, լաչառություն կենա, օր օձին լրիվ կգժվըցու: Օձը կուգա ջրխորից դուրս գա, փախի, բայց չկռնա: Մե օր էլ Նազանի մարդը գուքա ջրխորի մոտ, օր տենա, թե ի՞նչ ա էղե ուր կնիկը: Եփ վերկից ձեն կիտա, օձը շատ կխնթրա, օր ուրին փրկա Նազանի ձեռից: Օձը կսա.

– Ինչ լավություն գուգես, ես քեզի կեննեմ:

Տղեն օձին ջրխորից կխանա, օձը Էնդոր կսա.

– Դու ընձի լավություն երիր, ես էլ քեզի լավություն կեննեմ: Ես կեթամ կփաթթվիմ թագավորի աղջկա մեջքին. ինչքան մարթ գուքա, աղջկան ընձնից չկռնա ազատա: Դու էն ժամանակ գուքաս թագավորի մոտ, կսես. «Թագավոր ապրած կենա, ես կազատիմ»: Դու գուքաս կմտնիս էն օթախը, դոր աղջիկն ա պառկուկ: Ես քեզի կտենամ, աղջկա մեջքից կհանցկվիմ ու կեթամ: Թագավոր իրա աղջկան քեզի կիտա, քու խամար լավ կապրիս: Բայց ուրիշ անգամ չիգաս ու ընձի չհանդիպիս, թե չէ քեզի կզարկիմ ու կսպանիմ:

Իմալ օր օձն էր ըսե, տղեն կեթա ու թագավորի աղջկան կազատա: Թագավոր շատ կուրիսնա ու աղջկան կիտա տղին: Բայց մե անգամ էլ օձը կեթա կփաթթվի մե ուրիշ թագավորի տղի վզին: Թագավորի տղեն օրեցօր կվատընա, ոչ մեկ չկռնա էտ տղին ազատա: Թագավոր կսա.

– Ով իմ տղին ազատա, Էնդոր շատ օսկի կիտամ:

Էտ բանի մասին կլսա մա Նազանի մարդը: Էնի կսա. «Ինչ էղե-էղե, էթամ էստորն էլ ազատիմ», բայց օձուց շատ կվախնա: Օձն ըսեր էր՝ մեկել ուրին ըռաստ չիգա: Բայց տղեն կմտածա ու հմար կգթի: Թագավորի մարդիկ տղին նշանց կիտան էն օթախը, դոր թագավորի տղեն էր: Տղեն օր դուռը կբացա, օձը գլուխը կբանցրցու, կիշկա ու կճանչնա տղին: Գուգա հարցկվի ու տղին զարկա, տղեն կրոքա.


– Նազան էկա՛վ, փախի՛...

Օձն շուտ թագավորի տղի վզից կհանցկվի, ուրին դուրս կթալա ու կփախի, թագավորի տղեն կազատվի: Թագավորը շատ հարստություն կիտա տղին, իսկ օձը չուր հեսօր կփախի, օր Նազանից ազատվի:

Տղեքներուց մեկը – տղաներից մեկը
Ըռաստ կուգան – հանդիպում են
Կհանցկվիմ – կարճակվեմ
Կարգվին – ամուսնանան
Չուր հեսօր – մինչև այսօր
Չկռնամ – չեմ կարողանում

Հնգերներ – ընկերներ
Կորոշին – որոշում են
Էստոնք – սրանք
Էնդունց – մրանից
Պառկուկ – պառկած
Էստորն էլ – սրան էլ

Կառի – ամուսն է
Խատ – հատ
Էնդոր – մրան
Չիգաս – չգաս
Ուրին – իրեն



Գուգա – ուզում է
Օրախ – սենյակ

Կիշկա – նայում է
Դոր – որտեղ

Իմալ – ինչպես
Ջրխոր – ջրհոր



ՀԵՌԱՏԵՍ ՄԱՐԴԸ

Մի ախքատ մարդըմ կլլի: Էս մարդը մե օրըմ ճամփեցեն ձիու նալըմ կգտնի, փերե կը տուն, կսե.

– Կնիկ, ձիու նալըմ գտա, իրեք նալըմ նա գտնիմ, ձիըմ առնեն: Կնիկը կսե.

– Մա՛րդ, ձիմ օր առնես, քուտիկ մա օր ունենանք, քուտիկը կուտա՞ս էրթամ հերանցս տուն:

Մարդուն հերսը կելնե, կառնե չըպուխը, կընկնի կնկանը էտտին, լավըմ թակե կը, կըսե.

– Հլը իսոր աշե, տանի խեղճ քուտիկին մեշկը տի ջարդե:

Ճամփեցեն – ճանապարհից
Հերսը կելնե – զայրանում է

Չըպուխ – ճիպոտ
Էտտին – ետևից

Իսոր – սրան
Աշե – մայիք



ԿՆԴԸԼՈՋ

Կեղին, չեղին մե քեսիք մարթ, մե հարուստ մարթ: Էս հարուստ մարթ ժառանգ չունենա: Մե օր էտ քեսիքն էդ հարստին գեղից հեռու կհանդիքա, կսա.

– Քու ունեցվածք վի՞ խամար ա, տուր տանիմ ուտեմ:
Հարուստ կսա.

– Չիտամ:

Քեսիք կսա.

– Ոչ հավատարիմ ունիս, ոչ բան, օր քե սպանեմ, ո՞ն գիմանա:
Հարուստ կսա.

– Քամու խետ կնդրլոզ կեթա, խաբար կիտա:

Էս քեսիքն ըդրան կսպանա, հարստություն կտանա: Յոթ տարի գող չգրնվի: Կմնա, մե օր էս մարթու կնիկ հուրիշ կնգըթոց խետ կեթա ջրու: Քամին էն յանից կառի տաղրկու կնդրլոզ ֆոֆոալեն գիքա, գնցի: Էս մարթու կնիկ քծիծղա: Հնգերտիք կսեն.

– Հնչա՞ կծիծղաս:

Կնիկ չի ուզա պատմա, օր շաղ գստիպեն, կպատմա ու կսա.

– Էն հարուստն իմ մարթին կսեր՝ քամու կնդրլոզ խաբար կիտա: Քամու խետ էկավ, հնցավ, բա հընչի՞ ծեն չխանեց:

Էս օր գլսեն, գիքան մարթուն կքռենն, կտանին:

Տաղրկու կնդրլոզ – տատրակ բույսի
փութուլավոր սերմնագլխիկը, որի
սերմերը հայտնի են նաև «նամակ»
անունով:

Քեսիք – աղքատ
Կնգըթոց – կանանց
Քծիծղա – ծիծաղում է
Հնգերտիք – ընկերները

Ո՞ն – ո՞վ
Հնչա՞ – ինչու՞
Վի՞ – ու՞մ



ՂՈՒՇԲԱԼԱՍՈՒ ԵՎ ԱՂԲԱԼԱՍՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Ժուկով, Ժամանակով Սպահան քաղաքում մի հարուստ մարք ա կեղնի, որն իրա հարստությունը դիզած ա կեղնի իրա ու իրա ջուխտ տղերանց՝ Ղուշբալասու և Աղբալասու քրտինքով: Ըստոնց մասին օր երգրի թաքավորը զիմանա, էնքան հարգեր ա կղնա ըղոնց վրեն, օր ըղոնք չկռնան տգից դուս գան: Գէլնին ջուխտ ախալորով կէթան օղար

երգիր փող ճարելու: Կէթան, կէթան, շատ կէթան, թե քիչ, գանդիքին մի հատ չալիրի, որից հազար աղբյուր ա դուս գէլնի: Մենձ ախալեր կսա.

– Աղբալասի, դու պառօզի քնի, ես քեզի կհսկիմ:

Աղբալասին կքնի ու էրագում կտենա Թեհրան քաղաքի վաճառականների մեծի աղջկան: Ըստոնք իրար հետ մաղնիք կփոխին ու կսկսին անուշ-անուշ կսա էնել: Էդ միջոցին Ղուշբալասին գուգա ախալորն զարտնցու: Ինչ կէնա, չէնա, Աղբալասին չգարտնի: Կնստի ճամփին ու կսկսի միտք էնել: Հանգարծ կտենա, օր մի խումբ մարթիկ կշարժվին առաջ: Կէթա կխնդրա, կաղաչա մարթկանց, օր ըղոնք գան ախալորն զարտնցուն: Ամա էդ մարթիկ կսին.

– Կորի՛ գնա, Թեհրան քաղաքում թաքավոր ա կընդրին, դու քո ախալոր մասին ա կմտածիս, – կսին ու գնցնին կէթան:

Ղուշբալասին կտենա, օր էլ ճար չկա, մութն էլ շուտով գընգնի, կխառնվի էդ մարթկանց ու կէթա Թեհրան քաղաք: Կէթա, օր ի՛նչ տենա. մե երգիր ժողովուրդ ա հավաքվե: Գիմնա, օր եպ լրիվ ժողովուրդ գավկվի, դուշ բաց կթողին: Ղուշն վի գլխին նստավ, էն էլ թաքավոր պղի դառնա: Լուս կբացվի, ժողովուրդ գավկվի ու դուշ բաց կթողին: Ղուշ կթոնի կնստի Ղուշբալասու գլխին: Ժողովուրդն կսա.

– Հայ - հա՛յ, էլ մարթ չկա՞, էդ հաց հավաքո՞ղն պղի դառնա թաքավոր , – ու Ղուշբալասուն կքցին մարագ:

Նորից դուշ կթոցուն, դուշն կէթա, կմղնի մարագ, կնստի Ղուշբալասու գլխին: Ժողովուրդն կտենա, օր էլ ճար չկա, կբերին Ղուշբալասուն կղարծում երգրի թաքավոր, կնստցուն գահին:

Ղուշբալասուն թողինք իրա գահին հեղ, դառնանք տենանք ի՞նչ էղավ Աղբալասին:

Աղբալասին կգարտնի, կտենա կող ու կուշտ մարթ չկա, ախալորն կկանչա ու պաղասխան չստանալով՝ կսկսա ման գալ ու խաղ ըսել.

Չայի՛ր, ի՛նչ լավ կանաչ ունես,
Անմահազան ջրեր ունես,
Օղար երգիր դարիք ունես,
ՈՒ՞ր է Ղուշբալասիս, չայի՛ր:
Ծաղիկների գլխավորն ես,
Չայիրների թաքավորն ես,
Ծաղիկներդ փունջ-փունջ կազմած,
ՈՒ՞ր է, Ղուշբալասիս, ու՞ր է:



Հեղո միղն գընգնի, օր սիրահարվել ա Թեհրան քաղաքի ամենահարուստ մարդու՝ վաճառականների մեծի աղջկան: Գիշա ընդրա սիրունությունն ու կսկսա երգել.

Գրել չիղեն, կարդալ չիղեն,
Ի՞նչ եմ անում թանաք, թուղք,
Սրդիս միջին մուրագ ունես,
Կէթան Սինա վանքն ուխտ:

Նա աղջիկ չէր՝ ջավահիր էր,
 Լալ ու մարջան և զմրուխտ,
 Սրդիս մեջը մուրազ ունեմ,
 Կէթամ Սինա վանքն ուխտ:

Կսա, Աստված կկանչա ու զընգնի ճամփա: Շատ կէթա, թե քիչ, կհասնի մի հատ քաղաք:
 Կտենա, որ ճամփի բերնին մի ծեր ջաղչական, կմողենա զարցու:

– Հայրիկ, էս ի՞նչ քաղաք ա:

Ջաղչական կսա.

– Էսի կկոչվի Թեհրան քաղաք, – հեղո զարցու:

– Որդեղե՞ն գալո, որդի:

– Սպահան քաղաքեն, – կպատասխանա Աղբալասին:

– Ի՞նչ ունիս, որդի:

Էս հարցին Աղբալասին խաղով կպատասխանա.

Ոչ հեր ունիմ, ոչ մեր,

Ոչ քուր ու ախպեր,

Օղար մարթ եմ, ման գութամ

Անտուն ու անտեր...

Էս օր կլսի ջախչականը, կսա.

– Որդի, էս էլ զավագ չունիմ, արի էդի ընծի որդի:

Ու Աղբալասուն ջախչական կենա իրան տղա, քաղքի մեջ խանութ կշինա ու տղին կդարցու
 վաճառական: Սաղ քաղքով մեկ կտարածվի Աղբալասու համբավը: Մարթիկ գիկան տղից ապրանք
 առնելու մենագ ընդրա համար օր տենան տղի սիրունությունը:

Կանցնին տարիներ, ու մի օր էլ էդ քաղքի առուտուրը կկայնի: Սաղ ժողովուրդը մենակ տղից
 ապրանք կառնի: Էդ մասին գիմանան քաղքի խանութպաններ ու կէթան թաքավորի մոդ բողոք: Էս
 թաքավորն էլ կկանչա տղին, օր գլխադա: Ամա, օր կտենա տղի սիրունությունը, հրամանը եդ
 զվերցու: Արուն կքաշա, մամություն կիղա իրա ախպորն, բայց հինքն գիմա, օր էդի ջաղչականի
 տղեն ա, ձեն չհանա: Մենակ ազատ կարձակա տղին ու կսա.

– Գնա՛, քու հալալ քրդինքով արբի:

Ըստրան թողինք ըստեղ, խաբար տանք վաճառականների մեծի աղջկանից: Մի օր էլ էս աղջկա
 ծառան կէթա տղից արբանք առնելու ու կտենա, օր աղջկա կորած մաղնիքը տղի մաղն ա: Էն
 ժամանակ, օր աղջիկն ու Աղբալասին էրագի մեջ հիրար են հընգե, մաղնիքներն են փոխե խղդ
 հիրար, աղջիկն հառավոդ հեւե ու ըսեր էր, օր իրա մաղնիք գողցած ա: Մաղնիքն օր կտենա, էս
 ծառան լեզուն կկծա ու կսա, օր էս մարթն ա ուրեմն մաղնիքը գողցե: Կէթա ու աղջկան կսա, էս
 աղջիկն գլխի կընգնի, կէթա տղի խանութ: Տղին կտենա կճանչնա: Տղեն էլ իրան կճանչնա:

Ըստոնց թողինք, մենք խաբար տանք տղի հորն ու մորից:

Թաքավորին հարգեր տալու համար հերն ու մերն կծախին հիրանց ունեցած-չունեցած ու
 զընգնին ճամփա: Գիկան, գասնին Թեհրան քաղաք, թաքավորի մարթիք ըստրանց կտանեն
 պալադ: Դու մի ըսա, էս թաքավորը հրաման ա տվե՛ ինչքան օղարագան մղնի քաղաք, պղի գիշերա
 պալադում: Էս միջոցով թաքավորը գուգա գղնի իրա ծնողներին ու ախպորը: Էս ծերերին օր կտենա,
 մեխկը շատ գիկան, ամա չճանչնա, օր իրա ծնողներն են: Ըստրանց լողցնել կիղա ու կքնցու
 առանձին սենյակ: Բայց թաքավորի քուն չտանա, գիշերվա կեսին կէթա, կնստի էդ ծերերի մոդ ու
 գիլա: Մերն կզարտնի ու թաքավորին տենալով կվախնա: Կմղածա, օր թաքավոր գուգա իրանց
 ըսպանա ու կորոշա, օր հառավոդ գիշերհանա հեռենան պալադից:

Ըստրանց թողինք ըստեղ, խաբար տանք մորից աղջկանից: Վաճառականների մեծի աղջիկն ու
 Աղբալասին էնքան ժամանակ գանդիբին իրար, մինչև օր հերը կնգադա ու կէթա թաքավորին
 կբողոքա, կսա.



– Եթե դու էդ տղի գլոխ չկողիս, դու թաքավորի աթոռն պղի ազաղիս: Էդ ա կպահանջա իմ պաղիվն:

Թաքավորը կկանչա տղին, օր գլոխ կդրել տա: Ինքն չուզա դուս գա պալաղից, ամա ժողովուրդն իրան ա կսպասա: Դուս գիկա պալաղից, կտենա տղին ու սիրողը կմխկդա: Էդ ժամանակ առաջ գիկա տղեն ու կսա.

– Թաքավորն ապրած կենա, մահիցս առաջ թող մի երգ ասեմ, – ու կսկսա.

Սպահան քաղաք կորցրի ծնողներս,
Մեյրիքաս չայիր կորցրի ախպորս,
Թեհրան քաղաքն է արունքիս տերը,
Թաքավորից եմ բռնվել, ի՞նչ անեմ:

Էս օր կլսի, թաքավոր կշշմի: Ու դեռ ուշքի չէկած, առաջ գիկա վաճառականների մեծի աղջիկն ու կսա.

Թաքավոր, ինձնից միք նեղանալ,
Ախր չեմ կարող դիմանալ,
Խնդրում եմ ինձ սպանեք,
Մենակ թե Աղբալասուն ազատեք:

Թաքավորի լեզուն կապ գրնգնի, իսկ ծնողներն, օր արդեն ճանչցած կեղնին իրանց որդիներին, առաջ գիկան ու կսին.

Սպահան քաղաքից դուրս էլան բալեքս,
Մեփական ձեռքերով կտրեցին ճյուղերս,
Թեհրան քաղաքն է վերջին հանգրվանս,
Թաքավորից եմք բռնվել, ի՞նչ անենք:

Ըստեղ թաքավոր գասնի կփաթթվի իրա ծնողներին, ախպերն էլ մե յանից գիկա վաճառականների մեծի աղջկա ձեռից բռնած, ու ընտանիքի անդամներն նորից գավկվին իրար վրա:

Աղբալասուն կնշանին աղջկա հեղ, յոթ օր, յոթ գիշեր հարսնիք կենին ու կաբրին ուրախ, երջանիկ իրանց ծնողների հեղ:

Դուշբալասին էլ մինչև իրա կյանքի վերջ երգիրն կկառավարա խաղաղ:

Մարջան – վառ կարմիր կամ
վարդագույն քար
Հառավող գիշերհանա – առավոտ
շուտ
Լալ – կարմիր, թանկագին քար
Հիրար են հնգեն – հանդիպել են

Կող ու կուշտ – շուրջը
Չայիր – մարգագետին
Ջարտնցու – արթնացնի
Կսա էնել – գրուցել
Ջավահիր – գոհար
Խաղ ըսել – երգել

Հարգեր – հարկեր
Ըդոնց – դրանց
Օդար – օտար
Ըստոնց – սրանց
Տգից – տակից
Եպ – երբ





ԽՈՍՔԻ ՏԵՐ ԿՆԻԿԸ

Կեղնի-չեղնի, մարթ ու կնիկ կեղնի: Էս կնիկը շատ խոսքին տեր կեղնի: Մարթը ինչ կսես, էս, թե՛ չե՛, ի՛նչ խոսք պտի էղնի: Մեկ օր էլ էս մարթն ու կնիկը կվիճեն, թե արտոն ինչո՞վ կհնձեն, մարթը կսե՛ գերանդով, կնիկը, թե՛ չե՛, մկրատո՞վ: Էս մարթը կերթա տերտերին կսես, թե էսենց-էսենց: Տերտեր կսես.

– Գնա կնկանդ բեր:

Մարթ կերթա կնկանը կառնի, կբերի: Էս տերտերը կհավաքե

մարթկանց ու կսես.

– Արտոն ինչո՞վ կհնձեն:

– Գերանդով, – կսես մարթիկ:

Հետո տերտերը կնկան հարց կուտա.

– Ինչո՞վ կհնձեն արտը, մզովյա՛ն, ըսե՛ տեսնի՛մ:

– Մկրատո՞վ, – կսես կնիկը:

Տերտերը իրեք անգամ մույնը ըսելուց ետքը, մարթկանց կսես.

– Տարե՛ք էդ կնիկ ձգեք ծովը:

Իդոնք կնկանը կգցին ծովը: Տերտերը մորեն հարց կուտա.

– Արտոն ինչո՞վ կհնձեն:

Խեղդվող կնիկ ծովի միջից կգոռա.

– Մը՛կ... մը՛կ... մկրատո՞վ...

Էս կնիկը կիջնի ջրի տակը, բայց էլի ձեռը դուրս կհանե ու էրկու մատով մկրատ ցույց կուտա: Էդ պատճառով էլ միշտ կսեսն. «Խոսքին տերը ծովի տակ էլ կաշաղակ ա»:



Իդոնք – նրանք

Ձգեք – գցեք



ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ ՁՄԵՐՈՒԿԸ

Մի գյուղացի գիթա քաղաք այնոյին ծախելու: Օր ապրանք կծախս, կվերջացու, մե ջոջ ձմերուկ կառնա, կդնա խուրջինի մեջ, կթալա շալակ, գընզնի ճամփա: Էս մարթ շատ օր կերթա, համ կտվածնա, համ կծարվնա:

Կնստի մե ծառի տակ, ձմերուկ կխանա, դիլիմ-դիլիմ կկղրա.

– Կայնի հմալ ուտեմ, – կասա մարթ, – օր ըստեղից հնցնող ասա՛ ձմերուկ ուտող աղա մարթ ա էղես:

Ձմերուկի մեջ օր կուղա, կլեպներ կթալա հեռու, կպարգա, օր հանգստանա: Մե քանի րոպե գնցնի, գյուղացին կտեսնա, օր էլի ծարավն ու սով վրա տվին: Գելնի ձմերուկի կլեպներ կխավքա ուրան մոտ, կսա.

– Կլեպներ օր կրծիմ, ի՞նչ կեղնի, հնցնող թող կարծա, օր աղի հետ ծառա լե էղեր ա:
Կսկսի կլեպներ կրծել: Մարթ օր կլեպներ կկրծա, կպրծնի, գուգա ընգնի ճամփա, կկայնի, կսա.
– Ճամփեն էրգան ա, կայնի կլեպներ լե ուղիմ, ըստեղից հնցնող թող կարծա, օր աղի հետ
ծառայից բացի էշ լե էղեր ա:
Մարթ կլեպներ լե կուդա ու կշարունակա իրան ճամփեն:

Դիլիմ-դիլիմ – շերտ-շերտ
Այնոյին – բան-ման

Ջոջ – մեծ
Օր – որ

Հմալ – այսպես
Հնցնող – անցնող



ԼԵԶՎԱՆՈՒՆ ՃԱՐ ԶԿԱ

Սողոմոն իմաստունին թաքավոր կսա.

– Մե լեզվանի մարթ կա, կողորգեմ քո մոտ, էմալ էրա, օր ըդրա լեզուն
կարճընա:

Սողոմոն իմաստուն կսա.

– Թաքավոր ապրած կենա, հմեն ինչի ճար կա, համա լեզվանուն
ճար չկա:

Թաքավոր հրաման կիդա, օր Սողոմոնին բանտարկեն՝ իրա հրաման

չկատարելու խամար:

Սողոմոն իմաստուն կսա.

– Թաքավոր ապրած կենա, օր ըդման ա, ընծի յոթ տարի ժամանակ տուր, ես էտ մարթու լեզուն
կկարճըցում:

Թաքավոր կհամաձայնվի: Սողոմոն իմաստուն թաքավորի մոտ մե շուն բերել կիդա ու շան պոչ
կղնա ուղիղ դալիբի մեջ: Յոթ տարին գնցնի, թաքավոր կսա.

– Սողոմոն, յոթ տարին հնցավ, քո խոստում կատարելու ժամանակն ա:

Սողոմոն շուն կբերա թաքավորի մոտ, պոչ դալիբեն կխանա: Շան պոչ էլի հառեչվա թավոր
կկլորվի: Սողոմոն կսա.


– Թաքավոր ապրած կենա, էն օր բնությունն ա ստեղծել ոչ մեկ չկրնա փոխի, էն օր ձեռքբերովի
ա՝ փեշակ ա, էնի կփոխվի: Իմալ օր պոչ յոթ տարվա մեջ չդգվավ, էման էլ լեզվանու լեզուն
չկարճընա, ընծի բանտարկա:

Թաքավոր կտենա, օր Սողոմոն ճիշտ ա, նվեր կիդա, կողորգի իրան տուն:

Օր ըդման ա – որ այդպես է
Կկարճըցում – կկարճացնեն

Էմալ էրա – այնպես արա
Փեշակ ա – արհեստ է

Դալիբ – կաղապար
Չկրնա – չի կարող



ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ



Էրկու ախպեր կեղնին՝ մեկը խելոք, մեկը՝ խենթ: Էս ախպերներու ունեցած-չունեցածը մե կով կեղնի ու մե էծ: Մե օր խենթ ախպեր խելոքին կսա.

– Արի մեր կով ծախենք, փող կիսենք:

– Ախր մեր ունեցած-չունեցած՝ մե կով, մե էծ ա, – կխեղջնա խելոք ախպեր, – օր կով ծախենք, իմա՞լ բղի ապրենք:

Խենթ ախպեր չսա, ախպորից գողտուկ կով կտանա ծախելու: Օր շատ կերթա, կխասնի մե բանձր լեռան, կկայնի ու կբռռա.

– Լեռ ախպե՛ր, կով կծախիմ, կառնի՞ս:

– Կառնի՛ս, կառնի՛ս, – կարճագանքա լեռ:

– Իմ կովին ի՞նչ կիղաս:

– Տա՛ս, տա՛ս..., – կարճագանքա լեռ:

Խենթ կով կկապա մե մեծ քարից, հինք կերթա տուն: Խելոք ախպեր օր կտենա խենթին, կխարցու.

– Ա՛յ ախպեր, մեր կով հու՞ր ա:

– Ծախեցի՛, – կսա խենթ:

– Ու՞մ ծախեցիր:

– Ժայռի՛ն, տաս օսկով, – կսա խենթ:

– Բա՛ օսկիներ հո՞ւր են:

– Լուս օր բացվի, կերթամ օսկիներ բերելու:

Խելոք օր կտեսնի ախպեր լրիվ ծուռ ա, ձեն կկողրի, կքաշվի մե յան: Առավոտ խենթ ախպեր կերթա, կտենա գիւր կով կերել են, կկայնի լեռան դեմ ու կսա.

– Լե՛ռ, ես էկա, իմ օսկիներ տու՛ր:

Լեռ ձեն չխանա:

– Յա՛, – կսա խենթ, – էրեկ քու ձեն չէր կողրի, էսօր հնչի՞ ես պապանձվե: Կով կերե, թորգեր ես պարան ու օսկիներ, մկա օսկիներ տալու վախտն ա, քու ձեն կողրե՞:

Լեռ էլի ձեն չխանա: Խենթ կվերու մե մեծ քար կզարգա լեռան ճակտին: Լեռ կպաղորի ու մե ծակից օսկիներ կթափա խենթի օղներու տակ:

– Լա՛վ, լա՛վ, բո՛լ ա, – կբռռա խենթ, – քանի կար քու պարտք չէիր իղա, մկա օր ճակատող կողորավ, մարդըցա՞ր, – կսա խենթ, կվերու տաս օսկի, կերթա տուն:

Խելոք ախպեր օր կտեսնի օսկիներ, կլսի ախպոր պատմածներ, կվերու էրկու խուրջին, մութ օր կընգնի, կառնի ախպոր, կերթան սաղ օսկիներ կրերեն տուն: Խենթ կկայնի, կսա.

– Էրթամ ռեսից օսկու կոտ բերեմ, օր օսկիներ կիսենք:

Խելոք կսա.

– Ախպե՛ր, կոտ պետք չի, ռես օր իմացավ, գիքա հմեն մեր ձեռեն կառնի: Վերու՝ կես քզի, կես լե ղնձի:

Խենթ կսա.

– Չէ՛, ես բղի կոտ բերեմ, օր հավասար բաժնինք, – ու կերթա ռեսի տուն:

– Ռե՛ս, – կսա խենթ, – ձեր կոտ չը՞ս իղա մեր օսկին բաժնինք:

Ռես աչքեր կչռա, կխարցու.

– Ի՞նչ օսկի:

Խենթ ռեսին կպատմա ինչ-ինչոց ա, կոտ կվերու, կերթա տուն: Խենթ օր կհասնի իրանց տուն, մե ձեն կընգնի անգաջ, կդառնա կտեսնի, օր ռեսն ա:



– Ուրեմն իմ ախպեր ճիշտ ա կսեր, օր ռես գիքա մեր օսկիներ մեր ձեռից կառնի, – կսա խենթ ու ռեսին կխեխտա, կթալա իրանց ջրհոր:

Խելոք ախպեր, օր շփրտոց կառնի, գելնի դուս ու կգարգա ծնկներուն: Խենթի ձեռից կառնի կոտ, օսկին կկիսա, կոտ կդնի դրադ, կսա:

– Ախպեր, բեզրած ենք, արի քենք, կոտ առավոտ կտանիս կիդաս:

Խենթ օր կպարզի, խելոք անձեն գելնի, ռեսին ջրհորից կխանա, կթաղա, իրանց էծ կխեխտա, կթալա ջրհոր, կերթա հինք լե կպառզի: Լուս չբացված՝ հարայ-հուրույով գիքան էս էրկու ախպոր դուռ կգարգեն: Ռեսի կնիզ կսա, օր խենթ էգեր էր օսկու կոտ գուզեր, ռես կոտ տվեց, հինք լե ընգավ խենթի քամկեն գնաց ու չդառավ: Խենթ կսա:

– Հա՛, ճիշտ ա, էս ռեսին խեխտի, օր մեր օսկիներ չտաներ: Ռես ջրհորն ա, թե չըք հավաղա, պարան կախեք մտնիմ հանիմ:

Խելոք ախպեր պարան կբերա, կսա:

– Ա՛յ ժողովուրդ, իմ ախպեր խենթ ա, ըդրա խոսքերուն անգա՞ն մի արեք:

Խենթ կմտնի ջրհոր, դե ջրհոր մութ ա, ման գիքա, օր էծի ջանդակ կգդնի, ձեն կիդա:

– Ձեր ռես փրչո՞տ էր:

Ռեսի կնիկ կգարմանա, կիրիշկա իրան տղեզներու էրես:

– Հա՛, – կսա ռեսի կնիզ, – հա՛, փրչոտ էր:

Խենթ էլի ձեն կիդա:

– Ձեր ռես պոչ ու կոդոշ լե ունե՞ր:

– Հա՛, ուներ, – կսա ռեսի կնիզ, – պարան կապա, քաշենք:

Խենթ մեկ լե ձեն կիդա:

– Ձեր ռես չորս օղնանի՞ էր:

Վերջ օր պարան կքաշեն, կտեսնեն, օր պարանին կապուզ էծ ա: Խելոք ախպեր ձեռներ կգարգա իրան ծնկներուն, կսա:

– Վա՛յ, իմ տուն քանդվավ, էս խելառ էրեզ կով տարավ թալեց գիլերու բերան, էսօր լե էծն ա խեխտե:

Ռեսի կնիկ, ազգականներ, օր կտեսնին խելոք ախպոր ըսածներ ճիշտ ա, կվերուն իրանց կոտ, կերթան: Խելոք ախպեր կվերու օսկիներ, կառնի իրան խելառ ախպոր, կերթա ուրիշ երգի:



Կոտ – հացահատիկ չափելու
փայտե աման
Անգա՞ն մի արեք – ուշադրություն
մի դարձրեք
Թորգեր ես – թողել ես
Կվերու – վերցնում է
Քամկեն – հետևից

Մարդըցար – մարդկայնացար,
բարիացար
Եփրտոց կառնի – շմփալու
ձայն է լսում
Կղմա դրադ – դնում է մի կողմ
Ծուռ ա – խելքից թեթև է
Օղներու տակ – ոտքերի տակ

Կիրիշկա – նայում է
Ռես – գյուղապետ
Իմալ – ինչպես
Հմեն – ամբողջ
Մենձ – մեծ
Հուր ա – ուր է
Բանձր – բարձր





ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Մի մարտ կեղնի: Շաղ ախքատ կեղնի, չկոնա արբի: Մի օր կսա.

– Էրտամ իմ բախտի հեղևից, իմանամ՝ ընչի՞ ախքատ կաքրեն:

Իր տոբրակ կվերծա՝ կընգնի ճամպա: Շաղ-քիչ, կերտա, կանծնի մի քարի մողով, հանգարծ կլսա ծեն կիկա:

Կմողենա, կտենա՝ մի հաղ մեծ վիշաբ օծ: Օծն կսա.

– Ա՛յ մարտ, ու՞ր ա կերտաս:

Էս մարտն կսա.

– Կերտամ Աստծու մող՝ տենամ ընչի՞ եմ ախքատ, կաշխատեն, թե չէ, հալի չեմ հասնի: Վիշաբ կսա.

– Քու Աստված կսիրես, իմ մասին էլ հարծրա: Ըսա մի ծեր վիշաբ մի քարի մող ընգած էր՝ սոված ու ծարավ, չկոներ շարժվեր: Տե՛ս, քու Աստված ի՞նչ կսա, կամ թող իմ հոկին առնա, կամ էլ թող իմ հաջողություն խրգա:

Էս մարտ կսա՝ հա՛ ու կանծնի, կերտա: Կերտա երգար-պարագ, կհասնի մի տեղ: Կտենա մի մարտ իր արտն ա կծրա: Արտի տերն կսա.

– ՈՒ՞ր ա կերտաս:

– Կերտամ իմ Աստծու մող, տենամ ընչի՞ ախքատ կաքրեն:

Էս արտի տերն կխնդրա, կսա.

– Օր կերտաս քու Աստծու մող, իմ մասին էլ կհարծնես: Էս արտն կտենա՞ս, ամեն տարի ըսենց կծրեն, կհասնի, հասկ կիղա ու կխամձվի, կփչանա, կերտա: Քու Աստծուց հարծրա, ի՞նչն ա պատճառ:

– Շաղ լավ, – կսա էս մարտ ու կանծնի կերտա: Կերտա-կերտա, կհասնի մի մեծ քաղաք: Կմտնի քաղաք ման կիկա, խանութներ լիք, ամեն ինչ լցրած օսկով, արծաթով, մրգերով, բայց շունչ չկա քաղաքում: Էս մարտ կելնի կերտա պալատ, կտենա թաքավոր մենակ աթոռին նստած: Պարս կիղա թաքավորին: Թաքավոր կսա.

– Հազար պարի էգար, ու՞ր ա կերտաս:

– Կերտամ իմ բախտի հեղևից, իմ Աստծու մող, հարծնեն, ինչի՞ց ա, օր չկոնամ արբեն: Թաքավոր կսա.

– Տու քու Աստված կսիրես, իմ քաղաքի մասին էլ կպատմես, տեսա՞ր իմ քաղաքի դրություն: Ամեն տարի յոտ խումբ ժողովուրդ կպերեն, կլցնեն քաղաք, կշենցնեն, ամեն մարտու իր արհեստին կղեն, տարի չլրացած՝ ամեն մարտ իր համար ինչ-օր պետք ա կվերցնա ու կթողնի կերտա, մարտ չմնա: Իմ մասին էլ կհարծնես Աստծուց:

Էս մարտ կսա.

– Շաղ լավ, – ու կշարունագա իր ճամպեն:

Շաղ-քիչ էրտալուց հեղո, Աստված կտենա, օր էս մարտ էրգրից դուրս էգավ, էրգու հրեշտակ կխրգա էդ մարտու առաջ, կսա.

– Կնածե՛ք, տեսե՛ք էտ մարտու պահանջ ի՞նչ ա, կատարե՛ք, թող հեղ տառնա իր տուն:

Էս էրգու հրեշտակ կիջնին էս մարտու առաջ, կհարցուն.

– Ու՞ր կերտաս:

– Կերտամ իմ Աստծու մող:

– Ընչի՞:

– Ախքատ կաքրեն, դրա համար:

Հրեշտակներ կսեն.

– Դարձի կնա քու տուն, Աստված էրտիգից էնքան օսկի ա լցրե քու տուն, օր տեղ ու ճար չկա:

Էս մարտ կսա.

– Տղեք ջան, անցա մի քաղաքով, մեճ մի շունչ չկար, կնացի պալատ, թաքավոր խնդրեց, օր իր մասին էլ պաղմեն Աստծուն:

Հրեշտակներ կսեն.

– Հորոխայեր, էդ քաղաքի թաքավորն ախճիկ ա, զորություն չունի, դրա համար էլ ոչ մի մարտ իրա մոդ չմնա: Ըսա թաքավորին, թող մի հաղ մարտ առնա, էդ մարտ դառնա թաքավոր, ամեն պան լավ կեղնի:

Արտի տիրոջ մասին էլ կհարցու, հրեշտակներ կսեն.

– Էդ արտի տիրոջ կսես, օր իրա արտի տագ օսկու հանք կա, արևուց օսկին կտաքնա ու դրա համար էլ արտն կխանձվի ու հասկն չլցվի:

Օծի մասին էլ կհարցու, հրեշտակներ կսեն.

– Օծին կսես թող մի հաղ անխելք մարտու ուղի, մորից մեզ կտառնա, կջահելնա: Դե՛, հիմի կնա, Աստված քու խոսք լսեց:

Էս մարտ կդառնա մույն ճամպով կիկա: Կիկա կհասնի էն մեռած քաղաք: Կերտա թաքավորի մոդ, կմղնի թաքավորի սենյագ, թաքավոր կհարցու.

– Դե պաղմա տենամ Աստված ի՞նչ ըսեց, իմ քաղաք ընչի՞ ա ըսենց:

Էս մարտ կպատասխանա.

– Աստված ըսեց, օր հմեն քու մեղավորություն ա, ըսեց տու կին ես, պտի կարգվես, քու քաղքին էլ տղամարտ թաքավոր էղնի, էն ժամանագ քու քաղաքից ոչ մեզ չթողա, չերտա:

Էս թաքավոր օր կլսա էս պան, կմղածա. «Արի էս մարտու հեղ կարգվեմ, իրան շինեմ թաքավոր, պրճնեմ, ազադվեմ»: Կդառնա կսա էս ախքատ մարտուն.

– Օր իմացար իմ կնիկ էղնելն, քեզնից լավ մարտ չեմ ճարի, արի կարգվենք՝ տու էղի թաքավոր, ես՝ թաքուհի:

– Չէ՛, – կսա էս մարտ, – Աստված իմ տուն էրտիզից լիք օսկի ա լծե, ես կերտամ:

Կթողա էս կնգան շիվար ու կշարունագա իր ճամպեն: Շաղ կիկա, թե քիչ, կհասնի արտի տիրոջ: Արտատեր կհարցու.

– Ախպեր, Աստված ի՞նչ ըսեց, ընչի՞ իմ արտ կփջանա:

Էս մարտ կսա.

– Աստված ըսեց, օր քու արտի տագ օսկու հանք կա, էդ օսկուց էլ արտ կխանձվի, կփջանա:

Էս արտատեր կսա.

– Դե օր ըղենց ա, արի օսկին հանենք՝ կես ընձի, կես՝ քեզի:

– Չէ՛, – կսա էս մարտ, – Աստված իմ տուն էրտիզից լիք օսկի ա լծե, ես կերտամ:

Կթողա էս արտի տիրոջ ու կշարունագա իր ճամպան: Կիկա, կհասնի վիշաթ օծին: Օծ օր կտենա էս մարտուն, հեռվից կհարցու.

– Աստված ի՞նչ ըսեց իմ մասին:

Էս մարտ կպաղմա իր գլխին էգած ամեն պան ու կսա օծին.

– Աստված ըսեց, օր մի հատ խելառ մարտ կղնես, ողի ճանից բռնես, ուտես, կեղնիս մորից մեզ: Օծ կսա.

– Լավ չլսեծի, մո՛ղ արի, մեծցեր եմ, իմ անգջներ ծանդրցեր են:

Էս մարտ, անխելք մարտ, մողիկ կերտա: Օծ կպնա սրա ողի ճանից, կսա.

– Է՛, քեզնից խելառ մարտ ես որդեղի՞ց կղնեմ: Թաքավոր չտառար, արտի տիրոջ օսկին քու աչք կհաննե՞ր, օր էգար ընգար իմ ճանգ: Ըսրանից էն յան քեզնից խելառ մարտ չկա:

Կսա ու էս մարտուն կուղա:

Ծեն կիկա – ձայն է գալիս
Վիշաթ օծ – վիշապ օծ
Կարգվես – ամուսնանաս

Ճամպա – ճամապարհ
Չկոներ – չեր կարողանում
Տորրակ – տուպրակ

Խրգա – ուղարկի
Էրտիզ – երդիկ
Էրտամ – գնամ

Հոկին – հոգին
Մարտ – մարդ





ԽԵԼԱՅԻ ԵՎ ՀԻՄԱՐ ԵՂՔԱՅՐՆԵՐԸ

Կեղնի-չեղնի երգու ախպեր կեղնի, մեզը՝ խելոկ, մեզն էլ՝ գիծ: Խելոկի անուն կեղնի Ջղե, խելառին՝ Բղե: Էս խելոկ ախպեր չոբան կեղնի, խելառն էլ տուն կնայա: Օրերից մի օր խելոկ ախպեր կսա խելառ ախպոր.

– Ախպեր Բղե, էսօր արի կնա իմ տեղ չոբան, ես տանեմ մեր եզն

ծախեմ:

Գիծն կսա.

– Չէ օր չէ՛, ես պետք ա տանեմ ծախեմ, ես քու՞ նման կոնամ ծախեմ:

Մեծ ախպեր կսա.

– Թե օր չես համաձայնվի՝ տու տար, բայց ում օր ծախես, հարուր օսկուց պակաս չիդաս, հեղո պոչն էլ կկողես, պերես տաս ընծի:

Առավոտ խելառ ախպեր տեղից կեղնի, շորեր կհակնի, եզն կտանա ծախելու: Շաղ, քիչ կերտա, կհասնի քաղաք, որդե օր պետք ա եզն ծախա: Էդ քաղքի մեծ կաբրեն յոտ վաջառագան քոսա ախպերներ: Ընդրանց տները հենց քաղաք մղնելուց, առածի ջերգի վրեն ա, որդեղով պետք ա անցնի Բղեն: Յոտ քոսեկի տան մոդով անցնելուց մեծ քոսեն ծեն կիդա.

– Ախպեր ջան, ի՞նչ արծի էդ հավուրիզն:

Խելառն ծեն կիդա.

– Ի՞նչ հավուրիզ, քոռ ե՞ս, ե՛զ ա, ե՛զ:

Քոսեն կսա.

– Էդ ի՞նչ եզ ա, հավուրի՛զ ա, հավուրի՛զ:

Խելառն ըղից կանծնի, կհասնա եզրորտ քոսին: Եզրորտ քոսեն կսա.

– Էդ ի՞նչ հավուրիզ ա:

Խելառ կսա.

– Աստված ծեր տուն քանդա, ի՞նչ հավուրիզ, ե՛զ ա, իր կին հարուր օսկի ա:

Խելառն յոտ քոսի տների մոդով կանծնի, յոտն էլ նույն պան կսեն: Վերճապես կհասնի շուգա: Էս յոտ քոսա ախպերներ կհակնվեն ու խելառի հեղկից կհասնեն շուգա: Էս յոտ ախպերներ քաղաքի հարուստ վաջառագաններն են: Ըղրանք օր մի պան որոշին, էլ ոչ ոք չըկոնա մոդ էրտա արբանկին: Առավոտ էր՝ եղավ իրզուն: Էս յոտ ախպերներ մեզ մյուսի հեղկից կերտան խելառին համոզեն, օր էդ եզ չի, հավուրիզ ա: Էս խելառ կսա.

– Ա՛յ ախպերներ, մեր եզն ա:

Խելառի ճարն կկողրի, կտենա արտեն ուշ ա, կսա.

– Դե, օր հավուրիզ ա, ի՞նչ էնեմ, առեք քսան օսկով, բայց մի պայմանով՝ պոչն կտանեմ:

Քոսեկ կսեն.

– Ախպեր, պոչն քեզի:

Խելառն եզի պոչն կկողրա ու իր քսան օսկին կվերա, կտառնա տուն: Իրիզուն մեծ ախպեր սարից կիկա, կտենա՝ ախպեր էզեր ա: Կսա.

– Ա՛յ ախպեր, ի՞նչ էրեցիր, եզն ծախեցի՞ր:

Խելառ կսա.

– Ա՛յ քու տունը քանդվի, տու հավուրիզ իդաս իմ ծեռ, ըսես՝ ե՞զ ա:

Խելոկն կսա.

– Ա՛յ ախպեր, ի՞նչ հավուրիզ, մեր եզն ա, խո տու քոռ չե՞ս:



Խելառ կսա.

– Հենց քաղաք մղնելուց հանդիքա յոտ քոսա ախպերներին, առավոդ մինչև իրգուն կայնան հերտ, էլ ուրիշ մարտ մող չեգավ, հա ըսին՝ հավուրիգ ա, հավուրիգ ա, ես էլ հավուրիգի կնով տվեծի իրանց ու պոչն էլ պերեր եմ:

Խելոկն կսա.

– Լավ ես էրե, օր պոչն պերեր ես, տու էլ կործ չունես: Առավոդ կերտաս իմ տեղ չոբան, ես իմ հաշիվ արտեն կիդեմ:

Առավոդ խելոկ ախպեր կելնի, կվերա քսան օսկին, կնստի էշին, կէթա քաղաք: Քաղաք հասնելու պես օսկիներ կկապա էշի փորի տագ: Կհասնի մեծ քոսի տուտ: Քոսեն լուսամուտից կնայա: Էս Ջղեն մն ողով կգարգա էշի փորին, մն օսկի կընգնի: Քոսեն կբռա.

– Ա՛յ տղա, էշդ ի՞նչ արծի:

– Ի՞նչ էշ, էս էշ ա՞, կոնե ըսա ավանագ:

– Ա՛յ ախպեր, ի՞նչ կնեղանաս, ավանագ ա, ավանագ կսեմ, մինագ կինն ըսա:

– Ըսենց աբրանկին կին կա՞:

Քոսեն կսա.

– Ըսա՛ ի՞նչ արծի:

Ջղեն կսա.

– Հազար օսկի, ախպեր ջան:

Ջղեն ընդից կանծնի եզրորտ քոսի տուտ: Նորից ողով կգարգա էշի փորին: Օսկիները կթապվեն կեղին, Ջղեն օսկիներ կհավքա, քոսեն ծեն կիդա.

– Էդ ի՞նչ էշ ա, ծախու ա՞:

Ջղեն կսա.

– Էշ տու ես, էս էշ չի, ավանագ ա:

Քոսեն կսա.

– Ախպեր ջան, ի՞նչ արծի:

– Հազար օսկի:

Ջղեն հերտով մնածածների տռնով կանծնի, վերճապես կհասնի շուգա: Էս յոտ քոսեկ կհակնվեն ու Ջղեի հեղևից կվազեն շուգա: Առավոդ մինչև իրգուն կկայնեն: Վերճապես էշն կառնեն հազար օսկով, հեղո քոսեկ կհարցնեն Ջղեից.

– Էշն ո՞նց պահենք:

Ջղեն կսա քոսեկին.

– Մի սենյագ կիդակ էշի համար, կարի լցեք, յոտ պղինձ ջուր տրեք իր դեմ, լուսամուտներն էլ չորով լավ փազեք, օր լույս չընգնի ներս, տուտն էլ ամուր փազեք՝ մարտ չպացա: Մի ամսից հեղո կպածեք սենյագ կտենաք օսկով լիք լցվեր ա:

Ջղեն կթողա կիկա տուն: Ամիս կլռանա, քոսեկ տուտն կպածեն. ի՞նչ տենան, էշն էդ կարին սաղ կերե, ջուրն իսմե, սատկե: Էս քոսեկ երտում կուղեն, օր Ջղեին սպանեն: Կէլնեն յոտ ախպերով կընգնեն ճամպա՝ Ջղենց տուն:

Խաբար տանք Ջղեից: Ջղեն գիդա. ամիս լռացե, ուր օր ա քոսեկ կիկան, օր իրան սպանեն: Ջղեն կսա իր կնգան.

– Ա՛յ կնիգ, մենք էրգու հադ սիպտագ մաքաստագ ունենք: Մեզն իմ հեղ կտանեն հարևանի տուն, կնստեմ, հեսա քոսեկ ուր օր ա կիկան, տու իրանց հյուրասիրա, մստծրա: Օր ընձի հարծեն, ըսա կնածե քաղաք, օր կսեն շաղ կարևոր կործ ունենք իր հեղ, տու էն ժամանագ ըսա, դե օր ընենց ա ես մեր մաքաստագ հեսա կպերեմ, կխրգեմ իր հեղևից, հինգ բոբեից ըստեն ա, ու սիպտագ մաքաստագն, օր տունն ա, պեր, մի հադ մամագ կրա, կաբա վզից, հանա տուտն ու պաց թող, էն ժամանագ ես կէլնեմ կիկամ տուն:

Ջղեն կէլնի կերտա հարևանի տուն: Քիչ հեղո քոսեկ կիկան Ջղեի տուն, կհարծեն իր կնգանից.

– Մեր ախպեր Ջղեն ու՞ր ա:



Կնիզն կպաղասխանա.

– Ջղենն կնածն քաղաք:

Կսենն.

– Մեզի շաղ պետք էր, կարևոր կործ ունենք իր հեղ, հիմի ի՞նչ էնենք:

Կնիզն կսա.

– Թե կարևոր կործ կա, մաքաստագ կխրզեն, Ջղենն կիկա:

Ու կպերա իր տան սիպտագ մաքաստագն, մի մամագ կկրա, կկաբա մաքաստագի վզից, մաքաստագին կհանա տուրս, կսա.

– Շուղ էրտաս Ջղենն պերես, իկաս, ըսա քու ախպերներ էգեր են, կկանչեն քեզի:

Էս պան տենալուց քոսեկ ապշած կմնան: Մեզ մյուսին կսեն.

– Էս ի՞նչ լավ մաքաստագ ա, էս ըսկագան մեր պանն ա: Մենք առևտրի կերտանք, ամիսներով կուշանանք: Մեզըմ չկա խաբար պերա մեր տուն:

Ըսրանք ըսենց կխոսան, բոքե չանցած ներս կմղնի Ջղենն՝ սիպտագ մաքաստագ կիրզ:

– Վա՛յ, ախպերներ, պարո՛վ, հազա՛ր պարի եք էգե, ո՞նց հիշեծիք ընծի, էգակ: Խե՞ր ա ախպերներ, ի՞նչ ա պաղահե:

– Ջղե ախպեր, մենք քու մաքաստագի մասին լսինք ու էգանք, տու գիղես մեր տրուքյուն, մենք ամեն տարի էրգու-իրեք անկամ կերտանք առևտրի հեռու երգրներ: Ամիսներով չենք իկա, պետք ա ըսենց մի հաղ մաքաստագ մեր համար, օր խաբար տանա-պերա:

– Վա՛յ, ախպերներ, շաղ դժվար պան ըսիկ, իմ համար էլ շաղ քանգ ա: Ըսենց ազիզ օր ծեր մման հարազաղ ախպերներ իկան՝ ես տուն չէղնե՞մ, ո՞նց կէղնի, ըհը, տեսա՞կ, բոքե չանցած իմ կնիզ խրզեց ես էգա հասա ծեզի:

Ախպերներ կսեն.

– Նաքաստագ ծախա մեզի:

Ջղենն կսա.

– Օր էղկան կստիքեք՝ կիղամ ծեզի:

Յոտ քոսեկ կսեն.

– Կինն ըսա, առնինք:

Ջղենն կսա.

– Հինգ հարուր օսկի:

Քոսեկ մաքաստագ կառնեն ու կերտան: Կմոռնան էշի մասին ու էլ ոչ մի պան չեն խոսա: Էս յոտ քոսեկ մաքաստագ տանելուց հեղո քարավան կուղարգեն երգրներ՝ առևտրի: Քարավան կուշանա երգար ժամանագ: Քոսեկ մի մամագ կկրեն, կկաբեն մաքաստագի վզից ու կսեն.

– Կնա՛, շուղ մեզի խաբար պերես, տես ի՞նչ էղան:

Էս քոսեկ թող էրգար սպասեն, թե մաքաստագ իրանց խաբար պերա: Էրգար մնալուց հեղո, կտենան, օր ոչ մի խաբար չկա, կսեն.

– Չէ՛, Ջղենն խապեց մեզի, էրտանք սպանենք:

Ջղենն կիմանա, օր քոսեկ պտի էրտան իր վրեն կռիվ, կպերա մի հաղ կով կմոռտա, շնչափողն կհանա, մի ծերն կկաբա, մյուս ծերից արուն կլցնա, կկաբա կնգա վզից, մի հաղ սուր տանագ, մի հաղ բլուլ կծարա ու կսպասի քոսեկի կալուն:

Քիչ անց յոտ քոսեկ ներս կմտնեն: Մինչև ըստրանց իկալ, Ջղենն իր կնգան կսա.

– Ա՛յ կնիզ, քոսեկ ուր օր ա կիկան, ես կջղայմանամ քու վրեն, օր կսեն հա՛ց պեր, է՛ս պեր, է՛ն պեր, տու չպերես, կսես՝ ո՛չ տու, ո՛չ քու ախպերներ: Էն ժամանագ ես կէլնեմ տանագով էղ շնչափող կկղրեմ, տու կընգնես կեղին, յանի թե մեռար: Էս քոսեկ շիվարած կմնան: Հեղո կսեն՝ Ջղե ջան, մեր պատճառով տվիր քու կնգան սպանեցիր: Ես էլ կսեն՝ ծեր պես ախպերներ իկան, ու իմ կնիզ հաց չպերա՞: Քոսեկ օր շաղ տեմ ընգնին, ես կսեն՝ ծեր կործ չի, ես եմ էրե, ես էլ կսաղծնեմ: Էն ժամանագ ես տանագ կտնեմ քու վզին, կսեն՝ տանագ, տու՛ ես էրե, տու՛ սաղծու, ու բլուլ կփչեմ: Տու կէլնես վեր-վերի կպարես: Քոսեկ շշմած կմնան, ամեն ինչ կմոռնան:





Էսքան պան ըսելուց հեղո մերս կմղենն յոտ քոսեկ:

– Պարև, Ջղե ախպեր, մենք շաղ շուղվանից քեզի չենք տեսն:

– Վա՛յ, տուք պարով էգաք, մատե՛ք: Ա՛յ կնիկ, հա՛ց պեր, խմի՛չք պեր, իմ ախպերներ էգեր են: Կնիկ կսա.

– Ո՛չ տու, ո՛չ քու ախպերներ, գժվժրիք, թողիք:

Ջղեն կելնի, տանազ կվերա, կսա.

– Կնի՛գ, տու էլմես ու իմ ըսած չենե՞ս, հեսա քեզի կմոռտեմ:

Տանազ կքցա, շնչափողն կկղրա: Կնիգ կընգնի կեղին: Էս քոսեկ կսեն.

– Ջղե՛ ախպեր, էս ի՞նչ էրիր, մեր պատճառով քու կնգան մոռտիր:

Ջղեն կսա.

– Հե՛չ մի վախեցեք, ես եմ էրե, ես էլ կսաղծնեմ:

Տանազ կվերծա, կտնա կնգա վզին, կսա.

– Տանա՛գ, տու՛ ես էրե, տու՛ սաղծրա:

Բլուլ կփչա՝ կնիգ կելնի վեր-վերի կպարա:

– Ա՛յ կնիգ, շուղ էրա, պեր հաց ուղենք իմ ախպերների հեղ:

Քոսեկ կսեն.

– Ջղե՛, տու քու Աստված, էս ի՞նչ կործիկ էր, էս ըսկազան մեր պանն ա: Մենք կերտանք ամիսներով առևտրի, կուշանանք, կիկանք մեր կնանիք շաղ կխոսան, չեն լսի մեզի, պանի տեղ չեն տնի, արի, էս կործիկ տուր մեզի, քու ամենամեծ լավություն էդ կեղնի: Կինն ըսա՝ մենք առնենք:

– Վա՛յ, ախպերներ, ո՞նց կեղնի, տեսա՞ք իմ վիճակ, էդ օր չեղներ, ես ո՞նց կեմի: Չեղնի օր ծախենմ:

– Ինչ կուզես՝ կիտանք, մենակ տուր էդ կործիկ, թեկուզ մի շաբթով:

– Դե օր կսեք՝ առեք տարեք, – կսա Ջղեն, – կինն էլ հազար օսկի:

Քոսեկ օսկին կիտան, տանազ ու բլուլ կառնեն, կերտան: Թե ընչի էին էգե՝ լռիվ կմոռնան: Ծամպեն յոտ ախպերով կսկսեն վիճել: Ամեն ախպեր իր հերտին կսա՝ առաճի օր ես տանեմ, մյուս կսա՝ չէ՛, ես տանեմ: Վերժ կսեն՝ մեծ ախպորից սկսենք: Մեծ ախպեր տանազ ու բլուլ կվերծա, կերտա տուն, կսա.

– Ա՛յ կնիգ, հա՛ց պեր, է՛ս պեր, է՛ն պեր:

Կնիգ կսա.

– Ա՛յ մարտ, գժվեր ե՞ս, ի՞նչ ա:

Մեծ քոսեն կսա.

– Բե՛ր, թե չէ էլա՝ կմոռտեմ:

Կելնի տեղից, ծեռ կքցա կնգա մազերից ու տանազ կքցա վիզ կկղրա: Կնիգ մեռած կընգնի: Կնստի մի տաս րոբե կհանգստանա, հերսեր կիջնի, կվերա տանազ ու բլուլ, տանազ կտնա կնգա վզին, կսա.

– Տանա՛գ, տու՛ ես էրե, տու՛ էլ սաղծրա:

Բլուլ կփչա, թե չէ, կնիգ չսաղնա: Էս խեղճ քոսեն շիվար կնստի ու վա՛յ-վա՛յ կկանչա:

– Վա՛յ Ջղե, վա՛յ Ջղե, տու մենազ մեր հախից էգար:

Եզրորտ առավող կտանա տանազ ու բլուլ կիղա մյուս ախպոր, ոչ մի բան չսա ախպոր: Մի խոսկով, վեց ախպերն էլ իրանց կնիգներ կմոռտեն: Փոքր ախպոր հերտն կհասնի, էն էլ կմոռտա իր կնգան: Առավոտ լուս կպացվի, կերտան ախպերների տներ:

– Վա՛յ, ախպեր, Աստված ծեր տուն քանդա, ոնց օր Ջղեն քանդեց,բա տուք չսե՞ք, մեզ մոռտեց իր կնիգ, բա յոտն էլ մոռտեն ու չսե՞ն:

Էս յոտ ախպերներ շիվար կնստեն, թե ոնց էնեն, օր Ջղեից պրծնեն: Մեծ ախպեր կսա.

– Մեր տուն ու տեղ ծախենք, առնենք մեր օսկին ու ըստեղից փախնենք, օր Ջղեից պրծնենք:





ՓԱՓԱԳՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ

Կեղնի, չեղնի մի թաքավոր ու մի որսորդ: Թաքավորն ու որսորդը
երեխա չեն ունենա: Օրերից մի օր թաքավորն կսա որսորդին.

– Էրտանք մի քիչ ման իկանք:

Գետի ապով էրտալուց թաքավոր կսա.

– Այ որսորդ, մենք էրգուսս էլ մնացինք առանց ժառանգ, մեր հալ ի՞նչ
պետք ա էղնի:

Որսորդը կսա.

– Այ թաքավոր, երանի Աստված մի երեխա իդար, ինչ կեղներ, թող էղներ:

Էդ միջոցին իրանց տեմ մի ծերունի դուրս էգավ, ըսեց.

– Այ թաքավոր, ես մի խնձոր կիդամ քեզ, տարեք տվեք ծեր կնիգներ թող ուղեն, Աստված
ամեզին մի տղա կիդա:

Թաքավորն ու որսորդը կտառնան կիկան տուն: Խնձորն թաքավորն կքեղվա: Միջուկն կիդա իր
կնգան, կլեպներն ու կղեր կիդա իր որսորդի կնգան: Կլրանա ինն ամիս ինն օր: Թաքավորին ու
որսորդին մեզ-մեզ տղա կծնվին: Թաքավոր իր տղի անուն կտնա Փափագ, իսկ որսորդը իր տղի
անուն կտնա Մանուկ: Թաքավոր իր տղին ուսումի կիդա: Ուսում վերջացնելուց հեղո թաքավոր
կսա.

– Փափագ, բալա՛, արի էսօր մեր քաղաք ման իկանք, տենամ ի՞նչ արեստ կսիրես:

Թաքավորի հեղ Փափագ պղղելուց հեղո ոչ մի պանի չհավնի: Իրիգուն, տուն դառնալուց, մի
խումբ որսորդների կհանդիքեն: Կսա.

– Այ հեր, էս ի՞նչ ա:

Կսա.

– Էս որսորդներ են, հավք ու դշի են կնածե:

Կսա.

– Այ հեր, էս արեստն սիրեցի:

Թաքավոր կկանչա Մանուկին, կսա.

– Մանուկ, իմ տղին մի լավ որսորդություն սովորու:

Մանուկը կսա.

– Իմ աչկին:


Փափագին կվերծա, ամեզն մի-մի լավ ծի կհեծնեն, իրանց հեղ մեզ-մեզ նետ ու աղեղ կվերծեն ու
կերտան որսի: Մի օր, էրգու օր, մի ամիս, էրգու ամիս, շաղ ու քիչ չգիդեմ, ընենց օր լավ
որսորդություն կսովրեն: Մի օր որսից տուն իկալուծ աղբրի մոտ մի պառավի կհանդիքեն: Կուժն
ուսին էգե, օր ճուր տանա աղբրից: Փափագ կսա Մանուկին.

– Ես իմ նետ ու աղեղ փործեմ, կուժի պերնից զարգեմ՝ հեղկից դուրս իկա, օր պառավ խաբար
չեղնի, – ու Փափագ նետով կզարգա, պերնից կմտնի հեղկից տուրս կքցա:

Պառավ կտառնա ու Փափագին կսա.

– Թաքավորի տղա Փափագ, ես քեզի չեմ անիծի, մենակ քեզի մի պան կսեմ՝ քառասուն
հարամիների քուր Խաթունի սերով վառվես:

Փափագն ու Մանուկը ախարից տուն տառնալուց կիկան թե չէ, Փափագ կհիվնդնա: Ինչ պժիշկ
կպերեն, օգուտ չկա, Փափագ չլավնա: Թաքավորի ճարն կկղրի, կկանճա Մանուկին.



– Մանուկ, բալա՛, էս ի՞նչ էղավ Փափագին, – կհարցու:
Մանուկ կսա.

– Թաքավորի տղա Փափագ, էն օր ախպրի մոտ պառավն էսնց մի խոսք ըսեց Փափագին. «Թաքավորի տղա Փափագ, քառասուն հարամիների քուր խաթունի սերով վառվես»: Էն օրվանից իմ ախպեր Փափագ հիվանդ ա: Ես պետք ա էրտամ իմ ախպոր համար խաթունին պերեմ, – ու կնստի իր ծին իր ճամպեն կերտա:

Փափագն կիմնա, օր Մանուկը կնած, կելնի իր տեղից, շորեր կհակնի ու կսա իր հոր.

– Ա՛յ հեր, իմ ախպեր Մանուկ կնած, ես էլ պետք ա էրտամ:

Կնստի իր ծին, իր զենքն կվերծա ու հեղկից կէրտա: Կէրտա ճամպեն կհասնի Մանուկին, կսա.

– Ա՛յ ախպեր, տու առանց ընծի ո՞ր կէրտաս, հիմի էրգտվ իրար հեղ էրտանք:

Էրգտվ կէրտան, կէրտան, շաղ-քիչ, կհասնեն մի հաղ ախպրի, կիճնեն հաց կուղեն, ճուր կխմեն ու կպարզեն իրանց համար հանգստանան: Չես ըսի էս տեղն ու էս ախպուր քառասուն հարամիներինն ա: Հարամիներ հեռվից կնայեն, ի՞նչ տենան. էրգու ծիավոր էգեր են իրանց սահման, մստեր են: Քառասուն հարամիների մեծ ախպեր կսա միջնեզին.

– Մի հաղ մայա ի՞նչ մարտիկ են, հավքն իր թևով մեր սահման չի անցնի, ի՞նչ մարտիկ են դրանք: Մի հաղ իրանց ուժ փորձենք:

Թալիսման կպահա Փափագի վրա: Մեզ էլ կտենա Փափագ կելնի օտի մեծ կիջնի: Մանուկը կսա.

– Ա՛յ ախպեր Փափագ, ի՞նչ էղավ քեզի, – պինդ կպռնա Փափագի թևից, կնստծու իր կողք, կսա.

– Հըռ տենամ ի՞նչ էղավ քեզի:

Քառասուն հարամիներ կսեն մեզ մյուսին.

– Թաքավորի տղա Փափագն ա, բայց Մանուկ շատ ուժեղ ա: Մենք իր վրեն չենք կռնա, էրտանք Փափագին ու Մանուկին պերենք ու մեր քուր խաթունին իղանք Փափագին:

Քառասուն հարամիներ կիջնեն, կէրտան Փափագին ու Մանուկին կպերեն տուն ու իրանց քուր խաթունին կիղան Փափագին: Յոտ օր լրանալուց հեղո հարամիներ կսեն.

– Փափա՛գ, ա՛յ ախպեր, մենք քառասուն սենյազ ունենք ու քառասուն բալնիք, կիղանք քեզ, մեր քուր խաթունի հեղ եռեսունինը սենյազ կպածեք, կուղեք, կխմեք, ման կիկաք մինչև մենք ու Մանուկ որսից իկանք, բայց քառասուններորդ տունն չպածեք:

Էս քառասուն հարամիներն ու Մանուկ կէրտան որսի քառասուն օրով:

Խաբար իղանք Փափագից ու խաթունից: Սրանք հերտով տոներ կպածեն կհասնեն քառասուններորդ տուն: Փափագ կսա.

– Էս վերճի տունն էլ պետք ա պածենք:

Խաթուն կխնդրա.

– Ա՛յ Փափագ, չէ՞ օր իմ ախպերներ ըսին՝ վերճի տուն չպածես:

Փափագ կսա.

– Չէ՛, ես կպածեմ, տենամ էնդեղ ի՞նճ կա:

Կպածա տոտ, կտենա, օր մի թզուգ մարտ կուտնի ժնջիլով կաբած պառզած ա, մի տաշտ հած, մի պղինձ էլ ճուր ա տրած, օր էն թզուգ հալումաշ էղնի: Փափագն տոտ պանալու պես թզուգ կսա.

– Թաքավորի տղա Փափագ, Աստված քո փափագ կաղարա, սոված մեռա, էն տաշտի հածն մոդգորա ընծի:

Տաշտի հածն միանգամից կուղա, կսա.

– Փափա՛գ, էն պղնձի ճուրն էլ մոդգորա ընծի, ծարավ մեռա:



Թզուգ էն ճուրն էլ կխմա, կձգվի՝կձգվի՝, կապեր կկդրա, կէլնի մի հադ կգարգա Փափագին, Փափագ ուշկից կանծնի, թզուգ կվերծա Խաթունին, կքցա շալագն ու կտանա:

Քառասուն հարամիներն ու Մանուկ որսից կտառնան տուն, ի՞նչ տենան՝ Փափագ ընգեր ա կեղին, իրանց քուր Խաթունն էլ չկա: Փափագին ուշկի կպերեն ու կսեն:

– Քեզի ո՞վ ըսեծ հա՞ծ ու ճուր իդաս թզուգին, օր մեր քրոջ առնի էրտա: Մենք ըղրան բանդարգել էինք, մեր քրոջ համար էր էգե, օր տաներ, էսօր հաջողուծ ու տարավ:

Հարամիներ կսեն Մանուկին:

– Մենք քու հետ կործ ունենք, մեր քուր որդիցա որ ա կդնես, պերես, թէ չէ քու ախպոր կլուխ կկդրենք:

Մանուկ կսա:

– Ընծի քառասուն օր ժամանագ տվեք, իմ ախպեր ծեր մող պահեք, ես կերտամ, քառասուն օրից ծեր քուր պերի, պերի, չպերի՝ տուք գիդեք, ինչ կուզեք էն էլ էրեք:

Մանուկ կմստի իր ծին ու կերտա:

Խաբար տանք քառասուն հարամիներից: Փափագին կպերեն կոմի մեջ կկաբեն, օր մի բաժակ ճուր, մի կտոր հա՞ծ կխտան:

Տառնանք Մանուկին: Մանուկ կերտա-կերտա, կհասնի մի աժդահա մարտի, յոտ գութան հող կվարեն, էս աժդահան բերան տվե հողի տեմ, կուղա ու կսա:

– Սովա՞ծ մեռա՞, սովա՞ծ մեռա՞:

Մանուկ կսա:

– Աստվա՞ծ քու տուն քանդա, էսքան հող կուղես, կսես՝ սովա՞ծ եմ, էս ի՞նչ աժդահա մարտ ես:

Հող ուղող կսա:

– Ես ի՞նչ աժդահա, աժդահան Մանուկն էր, օր հաղթեց քառասուն հարամիներին, իրանց քուր Խաթունին առավ տվեց իր ախպեր Փափագին:

Մանուկը ըսեց հող ուղողին:

– Ես Մանուկն եմ, կէղնե՞ս ընծի ախպեր:

Հող ուղող ըսեց:

– Ես էլ քեզի ախպեր, – ու շարունագեցին ճամպեն:

Կնածին, կնածին, հասան մի ուրիշ աժդահա մարտի: յոտ ճաղած ալուր կաղա, մի տեղով կթափվի: Էս աժդահան պերան տվե տեմ, կուղա ու կսա:

– Սովա՞ծ մեռա՞, սովա՞ծ մեռա՞:

Մանուկ կսա:

– Աստվա՞ծ քու տուն քանդա, էսքան ալուր ուղելուց հեղո կսես՝ սովա՞ծ եմ, էս ի՞նչ ուժեղ մարտ ես:

Կսա:

– Ես ի՞նչ ուժեղ եմ, ուժեղ Մանուկն ա, օր հաղթեց քառասուն հարամիներին, իրանց քուր Խաթունին առավ տվեց իր ախպեր Փափագին:

Մանուկ կսա:

– Ես եմ Մանուկն, կէղնե՞ս ընծի ախպեր:

Կսա:

– Բը չե՞մ էղնի քու նման ուժեղ մարտուն ախպեր, – ու կշարունագեն իրանց ճամպեն էրկու աժդահան ու Մանուկն:

Կերտան կհասնեն մի մեծ գետի: Մի աժդահա մարտ պերան տվե գետի տեմ ու կսա:

– Ծարավ մեռա՛, ծարավ մեռա՛:

Մանուկ կսա.

– Ա՛յ տմաքանդ, էսքան ճուր խմելուց հեղո կսես՝ ծարավ մեռա՞: Էս ի՞նչ ուժեղ մարտ ես:

– Է՛, – կսա, – ես ի՞նչ ուժեղ եմ, ուժեղ Մանուկն ա, օր հաղթեց քառասուն հարամիներին, իրանց քուր Խաթունին առավ տվեց իր ախպեր Փափագին: Ու էս առավոտ շուղ թզուգ Խաթունը թևին անցավ կնաց:

Մանուկ կսա.

– Ա՛յ ախպերներ, ես թզուգին ա ման գիկամ, քելեկ էրտանք իրանց հեղևից:

Էս իրեք աժդահան ու Մանուկ կշարունագեն իրանց ճամպեն ու կէրտան կհասնեն մի հաղ մեծ շենքի: Մանուկ կսա.

– Ախպերներ, էս կիշեր էստեղ քնենք:

Կիշեր կքնեն, առավոտ կէլնեն: Մանուկ կսա հող ուղողին.

– Էսօր քու հերտն ա, կմնաս տուն ճաշ կէպես մեզի, մենք կէրտանք որսի:

Էս իրեքով կէրտան որսի: Հող ուղող ճաշ կէպա, կպրծնի, կէլնի տուրս, կնայա իր ախպերների ճամպին՝ որսից էգա՞ն, թե չէ: Կնստի օջախի կողքին: Մեզ էլ հանգարծ տուտ կպացվի, թզուգ ներս կմտնի, կգարգա հող ուղողին, պղնձի ճաշ լռիվ կուղա ու կէրտա: Հող ուղող վախուց կպոնա աղամ.

– Վա՛խ, աղամս, վա՛խ, աղամս, մեռա՛:

Էն ժամանագ ներս կմղնեն ախպերներ, Մանուկ կսա.

– Ի՞նչ էղավ քեզի, հող ուղող ախպեր:

Կսա.

– Աղամս ա կցավա:

Մանուկ ինք ճաշ կէպա, կուղեն, կքնեն: Առավոտ կէլնեն: Մանուկ կսա.

– Ալուր ուղող, տու մնա ճաշ էպա, մենք էրտանք որսի:

Էս ալուր ուղողն ճաշն կէպա, նորից թզուգ կիկա կգարգա ալուր ուղողին, ճաշն կուղա ու կէրտա: Նորից ախպերներ կիկան որսից, ճաշ չկա էպա՞, ալուր ուղողն էլ պոնե փորն.

– Վա՛յ, փորս, մեռա՛, վա՛յ, փորս, վա՛յ, մեռա՛:

Մանուկ կսա.

– Աստված ծեր տուն քանդա, ի՞նչ էղավ ծեզի: Առավոտ հերտն ճուր խմողինն ա, ինքն պետք ա մնա ճաշ էպա, մենք էրտանք որսի:

Հող ուղողի ու ալուր ուղողի պես ճուր խմողն էլ ծեծ կերավ: Մանուկը էգավ էլի ճաշ չկա: Ըսեց.

– Ախպերներ, ըստեղ մի պան կա: Դուք ընձնից կպահեք: Առավոտ իմ հերտն ա: Տուք կնածեք, ես կմնամ ճաշ կէպեն:

Առավոտ իրեք աժդահեք կէրտան որսի: Ծամպեն էս իրեք իրար հեղ կխոսան, կսեն.

– Թե էսօր ճաշ պղնձի մեջ մնաց, ուրեմն Մանուկ մեզնից ուժեղ ա, թե ճաշ չմնաց, ուրեմն էն էլ մեր ուժին ա:

Մանուկ ճաշ կէպա, կնստի օջախի մոդ: Մեզ էլ կտենա տուտ կպացվի, ներս կմղնի թզուգն: Մանուկ կսա.

– Տու պարով էգա՛ր, ես քեզի ման կիկի, տու քո ոտո՞վ էգար, – խաչերգատն պղնձի տգից կքաշա ու կգարգա թզուգին: Խաչերգատ մի թիզ պաղի մեջ կէրտա, թզուգն վիրավորված կփախնի:

Էս միջոցին ախպերներ որսից կիկան, կտենան պղնձն լիք ճաշ, Մանուկ օջախի մոդ նստած: Մանուկ կսա.





– Աստված ծեր տուն քանդա, ախպերներ, ես թզուզին ա ման կիկամ, ձեզի կտփա, ճաշ կուղա կերտա, դուք ընծի չսի՞ք: Դե քշեք էրտանք հեղկից:

Արնի հետքի հեղ կերտան, կհասնեն մի հաղ փոսի, մի թոնդրա պերնի չափ գետնափոր ա: Արնի հետք մինձն էղտեղ կերտա ու կընգնի էղ հորի մեճ: Մանուկ առաջուժ կկաբա հող ուղողին կիչըծա հորի մեճ: Մի հինգ մետր չիչած վախուց կսա.

– Ընծի հանե՞ք, մեռա՞:

Հող ուղողին կհանեն, ալուր ուղողին կկախեն: Էն էլ էրգու մետր կիճնի, կսա.

– Մեռա՞, հանե՞ք:

Ըղրան էլ կհանեն, կկախեն ճուր խմողին, կիչցնեն հորի մեճ, էն էլ մույնն կսա: Հերտ կհասնի Մանուկին, Մանուկ կսա.

– Ինչքան կսեմ՝ մեռա՞, տուք իչցրեք:

Մանուկին կկաբեն, կիչցնեն հորի տակ: Մանուկ կտենա Խաթունին նստած: Խաթուն կտենա Մանուկին, կէլնի կփաթթվի: Մանուկ կսա.

– Էն հրեշն ո՞ւր ա:

Խաթուն կսա.

– Հեն ա՛ ախպրի մեճ պառզե, օր վերքն լավնա, վիրավոր ա:

Մանուկ կսա.

– Ես եմ զարգե, – ու կվազա դեպի թզուզ: Խաթուն կէլնի, կսա.

– Կայնի՛, ախպեր, ըղրան օր իր սրով չսպանես, ուրիշ պանով չի սպանվի: Թզուզի թուրն հեն ա, կարասի մեճ, քելա հանենք, օր ըղրանով զարգես:

Կերտան, կքաշեն, կհանեն: Մանուկ կերտա, կսա.

– Հե՛յ, հրեշ, էլի՛, էգեր եմ, քեզի մահ եմ պերե:

Հրեշն օր կտենա Մանուկին, տեղից կէլնի ու կվազա թրին: Մանուկ մի հարվածով կլուխ կկղրա: Թզուզ կսա.

– Մանու՛կ, մե՛զ էլ զարգ:

Կսա.

– Չէ՛, ես մի անգամ եմ ծնվե մորից, մի զարգ ունեմ:

Թզուզ կսա.

– Վա՛յ, քո սովորողի աչքեր քոռնա:

Թզուզն ըղեղ կմեռնի, կպրծնի: Խաթուն կսա.

– Մանու՛կ, արի առաջ քեզի կաբեմ, քաշեն հորից:

Մանուկ կսա.

– Չէ՛, քեզի կաբեմ, հանեն:

Կսա.

– Ա՛յ ախպեր, օր ընծի հանեն, քեզի կթողեն հորի մեճ: Էղ իրեքն էլ իմ համար են էգե ու ծերածե, մնածե ճամպեն, չեն կրծե իմ ախպերների վախից, օր իկային ընծի տանեին, արի քեզի կաբենք, թող քաշեն:

Մանուկ կսա.

– Չէ՛ օր չէ, քեզի առաճին կաբեմ՝ քաշեն: Ամոք չի՞ ես էլնեմ, տու մնաս:

Ու Խաթունին պարանով կկաբա, հորից կքաշեն, կհանեն: Մինչև հորից էլնելը Խաթունը կսա.

– Մի պան ըսեմ քեզի. հանգարծ օր քեզի հորից չհանեն, ամեն հինգշաբթի էս մեր եզրորստ սենյազի տուտ կպացես, մի հաղ ախպուր կա մեճ, էն ախպրի վրեն իրեք հաղ դոչ կիկամ ջուր խմելու,



դու զգուշ կաց, օր քեզի քցես կարմիր դոշին, կարմիր դոշը կիդա սև դոշին, սևն կքցա սիպտագին, սիպտագը քեզի կքցա լուս աշխար:

Խաթունին տուրս կքաշեն հորից: Պարան կքցեն, Մանուկ իրա մեջքից կկարա, կքաշեն մինչև հորի կես ու պարան կկտրեն: Մանուկ գնալով կընգնի հորի մեծ, ուշկից կանցնի: Երբ օր կգարտնի, կտենա օր ինք հորի մեծն ա, ո՛չ Խաթուն կա, ո՛չ՝ ախպերներ:

Էս իրեք աժդահեկ կառնեն Խաթունին ու կերտան իրանց մնալու տեղ: Ընդեղ իրեկով կկռվեն, հող ուղող կսա.

– Խաթուն ընձի՛, հարստություն՝ ծեր էրգսին:

Ճուր խմող կսա.

– Չէ՛, Խաթուն ընձի՛, հարստություն՝ ծեզի՛:

Ալուր ուղողն էլ մույնը կսա, ու իրեկով կկռվեն:

Խաբար տանք Մանուկից: Մանուկ կգարտնի ու կհիշա Խաթունի խոսքն: Էդ օր հինգշաբթի կէղնի, կերտա սենյագի տուռն կպածա, կտենա օր իսկազան իրեք հադ դոշ էզան, վռագնալուց ինք իրան կքցա սիպտագին, սիպտագն կքցա կարմիրին, կարմիր կքցա սևին, սևն էլ կքցա մութ աշխար: Մանուկ օր աճկն կպածա, կտենա մի քաղաք կէրևա: Կերտա-կերտա կմտնի քաղաք, կսա. «Հենց առաջի տուն պետք ա մղենմ»: Տունն կծեճա, ներս կմղնի, կտենա մի պառավ մստած, կսա.

– Նանն՛, դոնախ կընտունե՞ս:

Պառավ կսա.

– Դոնախ օր կա, Աստծու դոնախն ա, իմ աշկի՛ն, իմ կլխի՛ն տեղ ունի:

Մանուկ կմստի, կսա.

– Նանն՛, ծարավ եմ, մի քիչ ճուր տուր:

Նանն կսա.

– Նանն քեզ մատաղ, մենք ճուր չունենք: Մեր քաղքի ճուր վիշաբն ա փագե: Ամեն ամիս մի հադ ախճիկ կտանենք, կիդանք վիշաբին՝ ուղա, օր մեր քաղքին ճուր թողա: Բալա ջան, էսօր թաքավորի ախճկա հերտն ա: Թաքավոր յոտ տաշտ ճմուռ ա սարկե, օր իր ախճկա հեղ տանա վիշաբն ուղա, շատ ճուր իկա:

Մանուկ կսա.

– Նանն՛, մի քիչ քնեմ, օր թաքավորի ախճիկ տանեն վիշաբին տան, ընձի կգարտնծես:

Հինգ ըորե չանցած՝ պառավ կգարտնծա Մանուկին, կսա.

– Նանն քեզ մատաղ, թաքավորի ախճիկ տարան վիշաբին:

Մանուկ կէլնի ժողովրտի հեղկից կերտա: Թաքավորի ախճիկ կտանեն, կկաբեն ծառից, օր վիշաբին տենա չփախնի, յոտ տաշտ ճմուռ կշարեն ախքրի ազից մինչև ախճկա մող ու ժողովուրտ կփախնի տուն: Մանուկ կերտա թաքավորի ախճկա մող, ախճիկ կսա.

– Ա՛յ տղա, փախի՛, հիմի վիշաբ կէլնի ախքրից մեզ կուղա, տու կոնն փախի, փրգվի, իմ բախտ ըսենց ա, պետք ա քաղքի ժողովուրտ արբի:

Մանուկ կսա.

– Չեմ էրտա ես ըստեղից, քու մող կմնամ, բայց տու մստի, ես մի քիչ քնեմ: Հենց օր վիշաբ կէլնի, ընձի կգարտնծես:

Ու Մանուկ կքնի: Մի քիչ անցնելուց վիշաբ ախքրից կէլնի: Ծնունդներ ուղելով կիկա դեբի ախճիկ, քիչ ա մնածե, օր հասնի ախճկան: Ախճիկն քարացե, մնածե: Լաց կէղնի, արծունքներ կթափի տղի էրեսին, տղեն կգարտնի: Կտենա արդեն վիշաբ հասե ախճկան: Մանուկ թուր կքաշա ու կսկսա վիշաբի հեղ կռվել: Հերտով վիշաբի յոտ կլուխն էլ կկղրա: Թրի ծերով վիշաբի ջանդագ կքաշա



ախրբի ճրի մեծից ու ախճկա ծեռներ կհարծգա: Ախճիկն ծեռք կզարգա վիշաբի արյան մեճ ու կզարգա Մանուկի շաբկին ու գոռալով, ճվալով կփախնի պալատ: Թաքավոր կսա.

– Ա՛յ անամոտ, տու ո՞ւմ ախճկանից իր թանգ, օր թողիր փախար:

Ախճկա լեզուն կպաժվի, կսա.

– Հայրի՛կ, վիշաբին սպանին:

Թաքավոր կսա.

– Ո՞վ սպանեց վիշաբին:

Ախճիկ կսա.

– Չգիտեմ, կանչա քու ժողովուրտ, թող սաղ իկան, ես էդ տղին կճանչնամ:

Թաքավոր հրաման կիղա.

– Ինճկան տղամարտ կա քաղաք, թող հերտով իկան պալատ, ասեն՝ ո՞վ ա սպանե վիշաբին, իրանց նվեր ստանան:

Սաղ քաղքի տղամարտիկ կիկան հերտով կկանգնեն: Ախճիկ կսա.

– Սրանք չեն:

Թաքավոր կհարծնա.

– Օղար մարտ, դարիբ մարտ կա՞ քաղաք, ում տուն կա, պերեք արեք պալատ:

Կսեն, թե.

– Մի հաղ երիտասարտ կա էսինչ պառվի տուն:

Թաքավոր կսա.

– Կնածե՛ք, պերե՛ք:

Կերտան Մանուկին կսեն.

– Թաքավոր քեզի կկանչա պալատ:

Մանուկ կսա.

– Ես օղար մարտ եմ, թաքավոր իմ հեղ ի՞նչ կորճ ունի:

Կսեն.

– Չգիտենք, կանչեր ա՛ պղի իկաս պալատ:

Կվերծնեն ու կտանեն պալատ: Մանուկ կհասնի պալատ, ախճիկ կտենա, կսա.

– Ա՛յ, էս տղեն ա օր կա, չե՞ք հավաղա, իմ ծեռք զարգեր եմ վիշաբի արյան մեճ ու զարգեր եմ իր շաբկին:

Մանուկի մեճկն կպացեն, կտենան օր իսկազանից արնոտ ա: Թաքավոր կսա.

– Անունդ ի՞նչ ա:

Կսա.

– Անունս Մանուկ ա:

Թաքավոր կսա.

– Մանուկ, ուզածդ ուզա: Ախճիկս արտեն քոնն ա, իմ թաքավորություն կուզե՞ս, գանձ ու կարողություն կուզե՞ս, ի՞նչ կուզես՝ ուզա՛:

Մանուկ կսա.

– Թաքավո՛ր, քու ողջություն կուզեմ:

Թաքավոր կսա.

– Ըսա՛, մի ամճծի, ինչ կուզես՝ ուզա:

Մանուկ կսա.

– Թե էղքան կգոռես, մի խնտրանք ունեմ:



Թաքավոր կսա.

– Ըսա՛, քու խնտրանք ի՞նչ ա:

– Թաքավոր արբած կենա, քու ախճիկ իմ քուրն ա, մենակ ընծի լուս աշխարք հանես. էդ ա իմ խնտրանք:

Թաքավոր կսա.

– Շաղ գոռ խնտիր ա, բայց մի ճար կա: Մեր քաղքից դուրս մի մենձ ծառ կա, էն ծառի վրեն մի մենձ արծիվ կա, ամեն տարի ճուտ կհանա ու իր ճտեր ծառի վրից կկորեն: Էս տարի նորից ճուտ ա հանե, էրտանք քեզի ցույց տամ, եթե կոնաս պաշտպանես, օր իր ճտեր չկորնեն, կարող ա արծիվ քեզի հանա լուս աշխար. էսքան ա իմ լավություն:

Թաքավորն ու Մանուկ կերտան, թաքավոր ցույց կիղա ծառն ու կսա.

– Ըստե նստի պաշտպան ճտերին, տու քու բախտ:

Թաքավոր կտառնա կերտա, Մանուկ կմնա: Մանուկ մի օր, էրկու օր պահակ կկայնի, երրորտ օր ճաշվա շոկին Մանուկ ծառի տագ քնած ա, մեզ էլ մի ծեն կընգնի իր անգաջ: Կզարտնի կտենա, ի՞նչ տենա՝ մի վիշաք փաթըթվե ծառին ու կբարձրնա ծակերի պուն: Մանուկ տեղից կելնի, թուրն կքաշա, կսկսա վիշաքին փռտել: Վիշաքին կփռտա, կքաշա կտնա մի կողմ, թրի ծերով էրգու, իրեք կտոր կքցա ծակերին, ու ինք կպառզի ծառի տագ, կքնի: Քիչ հեղո արծիվ վժժոցով կիկա կտենա ծառի տագ մարտ ա պարգած: Կսա.

– Ես յոտ տարի ծագ կհանեմ, իմ ծագերի թշնամին է՞ս ա:

Վերկից կիճնի, օր զարգա Մանուկին, ծագեր ծվծվոցով կհասկցնեն, օր արի տուն: Արծիվն կերտա ծակերի մոտ, ծակեր կսեն, օր էս ա մեր փրզիչն: Նոր արծիվն պնից կիճնի, ողի վրեն կկայնի ու իր մի թևով հով կէնա Մանուկին: Մանուկ կզարտնի, կտենա մի մենձ արծիվ իր կլխի վերև կայնած հով կէնա իրան: Արծիվ կսա.

– Երիտասարտ, ի՞նչ կուզես, քու լեզուն ինչ կպղղի՝ քու լավություն էնեն: Էս յոտ տարի ես ծակ կհանեմ, ու իմ ծակեր էս վիշաքն ա կերե: Ըսա քու լավություն կադարեն:

Մանուկ կսա արծվին.

– Մինակ ընծի լուս աշխար հանես, էս ա իմ խնտրանքն:

Արծիվ կսա.

– Շաղ դժվար ա, բայց պետք ա կադարեն: Կնա թաքավորից քառասուն տիզ կինի ուզա, քառասուն տմագ պեր, արի, ես քեզի կհանեմ լուս աշխար:

Մանուկ կերտա թաքավորից քառասուն տիզ կինի, քառասուն տմագ կպերա, կպարծա արծվի վրեն, ինքն էլ կնստի արծվի վրեն: Արծիվ կսա Մանուկին.

– Ես ինճկան կըկղղամ՝ տու մի հաղ տմագ, մի տիզ կինի քից իմ պերան, մինչև մեր կինին ու տմագն պրճնի ես քեզի կհանեմ լուս աշխար:

Մանուկ կնստի արծվի վրեն ու արծիվ կթռնի: Ամեն կղղալուց մի հաղ տմագ, մի տիզ կինի կքցա արծվի պերան: Վերճի կղղալուն տմագն կընգնի Մանուկի ծեռից: Մանուկ իրա ողի փափուզ մսից կկղրա, կքցա արծվի պերան: Արծիվ մարտի միս չուղա, կքցա իր լեզվի տագ մինչև տեղ կհասնեն: Արծիվ կիճնի կեղին, Մանուկ սլալով կիճնի արծվի մեճկից: Արծիվ կսա.

– Երիտասարտ, դե ելի կնա:

Մանուկ կսա.

– Չէ՛, տու կնա, ես կերտամ:

Արծիվ կսա.

– Տու կնա, ես կերտամ, – հեղո կհամա Մանուկի ողի միսն իր լեզվի տոգից, կտնա Մանուկի ողի վրա ու իրա լեզվով կլիզա, Մանուկի ող կլավնա: Մանուկ կելնի շնորհակալություն կհայտնա, կերտա: Կերտա-կերտա, կհասնի ածղահաների շենքին, կտենա օր հլը իրեկով կկռվեն, կսեն:

– Ախճիկ ընձի, օսկիներ՝ ծեզի:

Մանուկ կքաշա իրեկի կլուխ կկղրա ու Խաթունին կտնա մի ծիու վրա, ինքն էլ մի ծի կնստի ու կերտան: Մանուկ կսա Խաթունին:

– Շուղ էրտանք, քառասուներորդ օրն ա, կամ կհասնենք իմ ախպեր Փափագին, կամ չենք հասնի, – ու կքշեն իրանց ծիեր:

Խաբար տանք քառասուն հարամիներին ու Փափագին: Քառասուն հարամիներ կսեն մեզ մյուսին:

– Հլը նայեք տեսեք թոզ-մոզ չկա՞, Մանուկ չերևա՞:

Փոքր ախպեր կնայա, կսա:

– Ախպերներ՛, մի պարաք թոզ կերևա, բայց շաղ հեռու ա: Էղնի-չէղնի էղի Մանուկի թոզն ա: Ախպերներ՛, արեք էրտանք Փափագին հանենք, Մանուկ օր էգավ տեսավ, մեր վիզ կկղրա:

Կերտան Փափագին կպերեն, մի լավ կլողածնեն, նոր շորեր կհակծնեն, կպերեն կնստծնեն սեղնի առաճ: Կնայեն, կտենան Մանուկ էգավ: Կմղնի ներս, պարև կիղա, կսա:

– Վա՛յ, ախպեր Փափագ, էս ի՞նչ ես էղե, ինճկա՞ն ես նիհարե, փոխվե:

Փափագ կսա:

– Քո էրտալուց մինչև հիմա անդադար մղածեր եմ ու մաշվե:

Մանուկ թուր կքաշա, կսա:

– Դուզ ըսա, թե չէ քու կլուխ կկղրեմ:

Նոր Փափագն կպատմա, կսա:

– Ախպե՛ր, ոնց օր կնածեր ես, ընձի կոխեր եմ կոմ, մի պաժակ ճուր եմ տվե, մի կղոր հած:

Մանուկ օր կլսա, թուր կքաշա քառասուն հարամիներից եռեսունիննի կլուխ կկղրա, կհասնի քառասուներորդին, Խաթուն կսա:

– Էս մեզ բախշա ընձի:

Կսա:

– Էս էլ քու խաթրին:

Մանուկ ինճկան հարստություն կա՛ կպառնա ծիերին: Խաթուն մի ծիու վրեն, Փափագն էլ մեզի վրեն ու կընգնեն իրեկով ճամպա: Կերտան, կհասնեն մի խաճմերուկի: Խաթուն կսա:

– Էս կարճ ճամպով էրտանք:

Բայց Մանուկ կսա:

– Էրգար ճամպով էրտանք:

Կերտան-կերտան, կհասնեն մի ավերագ վանկի, ընդեղ կկիշերեն: Մանուկ կսա:

– Փափա՛գ, ի՛մ ախպեր, տուք քնեկ, ես կհսկեմ:

Իրանք կքնեն, Մանուկն էլ պահակ կկայնի: Էղ միջոցին էրգու հաղ աղունիկ կիկան, կնստեն վանկի պատին: Մեր ու ախճիկ կեղնեն: Ախճիկն կսա:

– Ա՛յ մեր, մի հաղ պաղմա, տենանք Մանուկի, Փափագի վերճն ի՞նչ կէղնի:

Կսա:

– Թե Մանուկ լավ տղա էղնի, օր հասան քաղաք, վեզիր մի հաղ հրեղեն ծի ա պաղրաստե, վեզիր օր լսավ Փափագ էգավ, էն ծին կպերա, կսա: «Հարսին հրեղեն ծիով տանենք քաղաք»: Մանուկ թե լավ տղա էղնի, չթողա, օր Խաթուն նստի էղ ծին, մի հաղ գումփով կզարգա էղ ծին հեղ-հեղ կերտա



ու կպայտի: Ընդից կանցնեն: Վեզիր մի հաղ կարմունջ ա սարկել տվե, կսա. «Առաճին անգամ հարսն ու փեսան պետք ա անձնեն ըղրա վրայով»: Մանուկ լավ տղա էղնի, Փափագին կզարգա մի թևի տազ, մյուսին՝ Խաթունին, ու ճուր կանցծնա, չթողա օր կարմնջով անձնեն, կարմունջն կքանդվի: Մեզ էլ Մանուկ լավ տղա էղնի, օր կհասնեն պալատ, վեզիր մի գույզ լավ կոշիկ ա կարել տվե, կսա. «Էս կոշիկներ ես պետք ա հարսին հակծնեմ»: Էրգու հաղ օծի ճուտ ա տրե կոշիկի մեճ, օր Խաթունին կծեն, մեռնի: Մանուկ լավ տղա էղնի՝ կոշիկներ կվերա վեզիրի ծեռից, կվռնդա հեռու, կսա. «Թաքավորին փող չկա՞, թող առնա իր հարսին հակծնա»: Մեզ էլ հարս ու փեսին օր քնծնեն, Մանուկ լավ տղա էղնի, կիշեր պահակ կկայնի: Վեզիր կտառնա օծ, կիկա կկծա Խաթունին, օր մեռնի՝ Փափագ առնի իր ախճկան: Մանուկ թե զարտուն ա, էս խոսկեր, օր լսեց, թող ոչ ոքի չասա, օր պատմա՝ քար կտառնա:

Ու աղունիկներ կթոնեն, կէրտան: Լուս կպացվի, կէլնեն իրանց ճամպեն կշարունագեն: Կիկան, կհասնեն քաղքի մող: Խաբար կհասնի քաղաք, թե Մանուկ ու Փափագ էգան: Թաքավորն ու վեզիրն իրանց զորքով կիկան դիմավորելու: Վեզիր կսա.

– Էս հրեղեն ծիմ պերել եմ, օր հարսին նստածնենք, պերենք քաղաք:

Մանուկ կզարգա վեզիրի պերած ծիու ճագատին: Ծին հեղ-հեղ կէրտա ու կպայտի: Կհասնեն կարմունջին, վեզիր կսա.

– Էս կարմնջով առաճին պետք ա հարսն ու փեսեն անձնեն:

Մանուկ կսա.

– Ես իմ ախպորն ու հարսին կանցծնեմ:

Փափագին կզարգա մի թևի տազ, Խաթունին՝ մի թևի տազ ու ճուր կանցծնա: Կարմունջն իրան-իրան կքանդվի: Կհասնեն պալատ: Վեզիր կվազա մի գույզ կոշիկ կպերա, օր հարսին հակծնա: Մանուկ կվերծնա, կշարտա, կսա.

– Թաքավորն աղքատ ա՞, թող պերա հակծնա:

Թաքավոր յոտ օր, յոտ կիշեր հարսնիք կէնա: Վերճը Մանուկ կէրտա, կպարկի քնի, հանգարծ կիիշա, օր վեզիր օծ պետք ա տառնա՝ էրտա կծա Խաթունին: Կէլնի, կվազա պալատ, կէրտա կհասնի էն ժամանագ, օր օծն ներս ա մղե՝ կուզա կծա, թրով օծին կփրտա, մի կատ արուն կթոնի կրնգնի Խաթունի էրեսին: Մանուկ կմղածա. «Արուն ի՞նչ էնեմ, օր մնա, իմ հարսի էրեսին կտառնա վերք, թրով վերծնեմ, իմ ախպեր կզարտնի, կսա, օր էգե իմ կլուխ կղրա՝ Խաթունին առնա ընծնից: Ի՞նչ էնեմ»: Օր կկռանա արուն վերծնա, Փափագ կզարտնի, կսա.

– Ախպեր, էգեր ես իմ կլուխ կղրե՞ս:

Կսա.

– Չէ՛, ախպեր, ընձի մի խոսծրա, ես չեմ էգե քու կլուխ կղրեմ:

Փափագ կսա.

– Չէ՛, եղելություն պաղմա:

Կսա.

– Չէ՛, ախպեր, պաղմել մի տուր, օր պաղմեմ՝ քար կտառնամ:

Կսա.

– Չէ՛ օր չէ՛, պետք ա պաղմես:

Կսա.

– Դե օր կստիբես՝ կպաղմեմ:

Մանուկ կպաղմա.

– Ախպեր, մի՛ խոսծրա, արդեն մինչև վիզս քարցեր եմ, թող կլուխս կենդանի մնա՝ ծեր հեղ խոսամ:

Կսա.



– Չէ՛, պաղմա՛:

Մանուկն ամեն պան կպաղմա ու կքարնա: Փափագ հա ծեն կիդա.

– Մանուկ, Մանուկ, Մանու՛կ, – կտենա օր քարցեր ա: Նոր կիլան, կգարգեն իրանց չոկերին:

– Էս ի՞նչ էրեծինք, իմ ախպեր քարցավ:

Ինչ կենեն, ինչ չենեն, ոչ մի տեղ ու ճար չկա, հազար պծիշկ կկանճեն՝ ճար չկա: Շաղ, քիչ կանծնի, մի օր էլ Փափագ կսա.

– Էրտամ էն ավերագ վանկ, ինչ հասավ իմ ախպոր, ընդից հասավ:

Կելնի կերտա վանկն, կիշեր կմնա վանկ, կտենա՝ մեր ու ախճիկ աղունիկներ էգան, նստան պաղին, ըսկսին խոսալ: Ախճիկ ըսեց.

– Ա՛յ մեր, Մանուկի հալ ի՞նչ պետք ա էղնի: Էտքան լավություն էրեց Փափագին ու Խաթունին, ի՞նչ ա, Մանուկ պետք ա քա՞ր մնա:

Մերն կսա.

– Զու ծեն կղրա, ընձի մի խոսծրա:

Կսա.

– Մա՛ ջան, մա՛ ջան, Մանուկի հալ ի՞նչ պետք ա էղնի:

Կսա.

– Փափագ օր լավ տղա էղնի, իր ծեռ կկղրա, իրա արունով Մանուկին կլողացնա: Մանուկ կանոխչանա:

Էս կսեն ու աղունիկներ կթոնեն, կերտան: Փափագ կելնի, ծիռվ շուղ կիկա տուն, կելնի տոտն կփագա, տաշտ կպերա, կտնա, ծեռ կկղրա, արունն կքամա ու կքսա արձանին: Արձանն ամբողջ կշփա արունով, արձան կամաց-կամաց կկենդանանա: Մանուկ կսաղնա: Ինք ու Փափագ կփաթթվեն իրար, կուրախանան: Էն միջոցին Խաթուն տուռ կպածա, կիկա ներս.

– Վա՛յ, իմ ախպեր, տու ո՞նց կենտանաժար: Փափա՛գ, էս ի՞նչ արիւր, օր իմ ախպեր կենտանաժավ:

Փափագ կսա.

– Խաթո՛ւն, քեզնից պահեն, Ասծուձ ի՞նչ պահեն. իմ ծեռ կղրի, արուն քսի Մանուկին, սաղցավ: Խաթուն կսա.

– Վա՛յ, Փափա՛գ, ընչի՞ ընձի էլ չասիր՝ ես էլ իմ ծեռ կղրեի, օր մեր ախպեր շուղ լավներ:


Խոսքն Խաթունի պերան՝ Փափագի ծեռի վերք լավցավ, ըսկի կղրած տեղն էլ չէր էրըվնա:

Ըստեղ երգնքից իրեք խնձոր ընգավ, մեկն՝ Մանուկին, մեկն՝ Խաթունին, մեկն էլ՝ Փափագին:

Կուղնի ժնջիլով – գութանի շղթայով
Շմուռ – յուղով ու փրթած հացով
պատրաստված կերակուր
Ամեզին – ամենքին
Որդիցա – որտեղից որ է

Պղինձ – պղնձե կաթսա
Ջանդագ – մարմին
Արեստ – արհեստ
Կատ – կաթիլ
Տնագ – դմակ

Կինի – գինի
Ծակ – ձագ
Չոկ – ծունկ
Թզուգ – թզուկ
Վանկ – վանք





ՄՆՋԵՎԱՆ

Կռել Կ ինգում: Թորքերը օգում են, թյա հայերին յաղթեն՝ խռել տան, կտորեն, շեները թլանեն: Հայերը թոր ու թվանք են եր օնում, վեր կռել անեն, թողան վեչ ուրանց կտորեն, վանքերը քանդեն: Հայերը պերում են ուրանց շեներոցը դրադին ակոփ են փորում, վեր կռել անեն, թողան վեչ թորքը մի մտի շեները: Մըն էրկու օր կռել են տան, հի՛նչ կռել Կ ինում, մըն խիլի թորք են կտորում, ամա էդ գազաննին

մորեխի պես շատ են ինում: Ակոփնին անց են կենում մի մուտում շեները: Հայերին կտորում են, ամա մըն հազար ջահիլ-ջիվան տղեք հալան կռել են տան: Թորքերը կալմեջ են անում էդ կտորիճ տղոցը, ասում են.

– Ծեր հավատը պետի փոխեք:

Տղերքը ասում են.


– Չէ՛:

Ըտեղ լոխին թորքերը կտորում են: Էդ վախտանց էդ տեղին անումը մինչի մհեկ մնում Կ Մնջեվան, մին՝ հազար, ջիվան՝ երիտասարդ:

Մնջեվան – Մեծ Հայքի Սյունիք
նահանգի Կովսական գավառի
Միջնավան գյուղը, այժմ մտնում է
ԼՂՀ Քաշաթաղի շրջանի մեջ
Շեներացը դրադին – շեների մոտ
Կալմեջ են անում – շրջապատում են
էդ վախտանց – այդ ժամանակից

Մըն խիլի – մի ահագին
Յաղթեն – հաղթեն
Ակոփ – խրամատ
Մհեկ – հիմա, այժմ
Նի մտի – մերս մտնի
Եր օնում – վերցնում
Ինգում Կ – ընկնում է

Խռել տան – քշեն
Ուրանց – իրենց
Լոխին – բոլորին
Ինում – լինում
Հալան – դեռ
Թոր – թուր
Ծեր – ձեր



ՀԱՀԹ-ԱԽՏԻ

Մեր Տեղաշենի հանդերան էն դոլ մըն տեղ կա, անումը՝ Շահթախտի: Մհետիս Շահ Աբասը ուրան գորքավ կյամ Կ Հայաստան: Ստեղ Կ կրակ տան, ընդեղ Կ կտորում, կյամ Կ հսնում Կ մեր Տեղաշենին հանդը՝ բանակ Կ տինում հենց էդ թախտումը: Տղեք եր են կենում, վեր քինան Շահին վենը՝ հպատակվեն: Մըն խելունք մարթ Կ ինում Դրդիլանց ցեղից, էդ հիլիվերոցը ասում Կ.

– Շահին մհետ ես են խուսալու, տյուք ծեն չիհանեք: Քյացեք

ամազյա իրեք արշին սիպտակ կտոր ինք կալեք զիրավ տուվեք վիզներիդ:

Էս մարթիք քինում են ամազյա իրեք արշին սիպտակ կտոր են ինք օնում, զիրավ են տան վիզներավ, քինում Շահի կոշտը: Քինում են Շահին ալաչուղին մղակումը չոքում: Շահը տյուս Կ կյամ տյուռնը, տենում Կ հայերը նստոտած, վիզներավն էլ սիպտակ կտոր զիրավ տուված, ասում Կ.

– Խե՞ք եկալ, էդ կտորը խե՞ք վիզներնավդ զիրավ տուվալ:

Էդ Դրդիլանց Դրդիլը կլոխ Կ տան, ասում.



– Շահն ապրած կենա, Շահը մեր կլխի տերն ա, քյա վեր Շահը եկալ ա մեր տան վիրա կռել՝ մեզ կտորի, էս պատանի կտորը մենք ինք ենք կըլալ, վեր մեզ թաղիլիս պտատեն, էլ մեր Շահը խարջ չանի:

Շահը տենում ա, վեր էս մարթը խելունք մարթ ա, ասում ա.

– Տյուք էլ ծեր հավատքը փութեք, մեր հավատքին տյառեք, վեր ծեզ կտորեն վեչ:

Դրդիլը պատասխանում ա.

– Շահն ապրած կենա, աշխարքը մըն մեծ տոն ա, տոնն էլ մթեն ա: Էդ տանը միջին հեն են սյուներ կան, էս սյուներից մինը վեակուց ա: Աման մարթ հեն ա էդ տանը մըն սյուն խտտած, մըն հավատք խտտած, կաղնած: Լոխն էլ գյուղում են, քյա ուրանց խտտած սյունը վեակին ա, ամա կարալ չեն գիղան՝ տոնը մթեն ա: Աման մինն ուրան կողքինին ասում ա. «Քու հավատքը թող, եք՝ իմ վեակի հավատքը խտտենք»: Միեկ ես հի՞նչ գիղամ, վեր քու սյունը վեակինն ա, վեր քու խտտած հավատքը լոխան ճիշտն ա, վեր իմը թողամ, կյամ քունը խտտեն: Բա վեր իմ սյունը վեակունը ինի՞»:

Շահը էս վեր լսում ա, մտածում ա, վեր էս մարթը շատ խելունք ա խոսում: Կանչում ա ուրան ծառաներին, ասում ա.

– Էս մարթին ու ուրան հնգերներին խալաթնի տվեք:

Խալաթ ստանալն էլ էն վախտը մեծ պատիվ էր: Շահը իտի նստում ա տըղըցոցը նիետ քեփ անում, Դրդիլին էլ նստացնում ա ուրան աջ դուրին: Մինչի լյուս քեփ են անում: Ըռվետիս Շահ Աբասն ասում ա.

– Քինացեք ապրեցեք ծգետի, տյուք խելունք մարթիք եք, ծեզ ծեռք չեն տալ:

Շահը մըն էրկու օր էլ մնում ա էդ թախտումը, ետավ ուրան բանակը եր ա օնում քինում:

Էդ թախտին անումը մնում ա Շահթախտի:

Հանդերան էն դոլ – հանդերից
այն կողմ
Պատանի կտորը – պատանքի
կտորը
Տոցեք – Տեղ գյուղի բնակիչները
Եր են կենում – վեր են կենում
Խարջ չանի – ծախս չանի
Գյուղում են – կարծում են
Հիլիվերոցը – հալտրոներին
Չիրավ տուվեք – փաթաթեք
Թախտումը – մարգագետնում
Խելունք – խելոք, խելացի
Պտատեն – փաթաթեն
Ըռվետիս – առավոտյան

Ծգետի – ձեզ համար
Վեակուց ա – ոսկուց է
Կտորում – կտորում
Միետիս – մի անգամ
Խտտած – գրկած
Ինք կալեք – վերցրեք
Լոխն էլ – բոլորն էլ
Քեփ – քեֆ, խնջույք
Միեկ – հիմա, այժմ
Ամազյա – ամենքդ
Մղակումը – առջևը
Տյուտը – դուրը
Անումը – անումը

Տինում – դնում
Կոշտը – մոտը
Ալաշուղ – վրան
Կլոխ – գլուխ
Ուրան – իրեն
Կյամ ա – գալիս է
Ինում – լինում
Թյա վեր – թե որ
Քինան – գնան
Վեննը – ոտքը
Տոն ա – տուն է
Նիետ – նետ
Տյուք – դուք





ՉԱԼԻԿԸ

Մըն մարթի տոն քեփ ա ինում: Էս մարթը գյուղի մարթկանց դոնադ ա կանչում: Էրկու հիլիվեր կյամ են հսնում էդ տան դիրվիզին մղակը: Էդ մընը անց ա կենում, ետ տառում, տեսնում էն չալիկավեր հիլիվերը չալիկը փորին փռնած կարում չի մղակավը մի մտի: Նստում են դիրվիզին քարին, մտածում: Էն մընն ասում ա.

– Եք չալիկը կոտրենք:

Ակոին անցկենալիս լսում ա, ասում.

– Խե՞ եք կոտրում, ափսոս չի՞: Դիրվիզին կլխավը քիցեցեք էն դուը, քյացեք եր կլեք: Թհենց էլ անում են:

Չալիկ – ձեռնափայտ
Կլխավը – գլխովը, վրայից
Դիրվիզին – դարպասի

Նի մտի – ներս մտնի
Դուը – կողմը
Եր կլեք – վերցրեք

Դոնադ – հյուր
Հիլիվեր – հալկոր



ԾՅԱԽՊՈՒՏԸ

Ինում ա, չի ինում մըն մարթ՝ անումը Ակոի: Մըն օր մթենն ինգած Ակոին կյամ ա տոն: Դիրվազան պյանում ա, քյա վեր մի մտնե, մըն պյան տրաքում ա ծնկանը, փիս ցավում ա: Ակոին վաշ-վաշ ընիլավ օզում ա շյուտ մի մտնե տոն, մըն պյան տրաքում ա ճկատին: Ըստեղ Ակոին գյուտում ա, քյա տոնը կոդ ա մի մտալ: Վիսնելան կանչում ա.

– Դեհա՛, ա՛ կնեկ, քլնեցի՛ն տոնը, լյուսերը վառի՛:

Կնեկը լյուսերը վառում ա, տյուս կյամ տյուրընը: Տեսնում ա Ակոին

սիպտակած, քան տյառած:

– Ա՛ մարթ, էդ խե՞ տհենց վիսնած ես:

– Բա՛, ա՛ կնեկ, – ասում ա Ակոին, – ասիլ չիր, դիրվազան պյացեցի, քյա մի մտնե, մըն պյան տրաքեց ծնկիս, մըն էրկու վեմդ էլ քինացի, մըն պյան տրաքեց ճկատիս: Կյոդ ա մի մտալ տոնը:

Կնեկը փորան փռնում ա, խիլարում.

– Ա՛ մարթ, հի՞նչ կյոդ, հի՞նչ պյան: Դիրվազին մղակումը խախալն ա եր ինգած իլալ: Վեր դրադը կոխ ես տուվալ, էն մի դրադը տրաքալ ա վեմդիդ: Էս մինն էլ, վեր տրաքալ ա ճկատիդ, կռաքլին ա իլալ: Պերանը կոխ ես տուվալ, կոքը տրաքալ ա ճկատիդ:

Գյուտում ա – իմանում է, կարծում է
Վիսնելան – վախենալուց, վախից
Խիլարում – ծիծաղից թուլանում
Տրաքում – ուժեղ հարվածում
Վիսնած ես – վախեցած ես
Մղակումը – շեմին, առջևը
Ծյախսպուտը – ձախտորդ
Դիրվազան – դարպասը

Պյանում ա – քացում է
Թլնեցին – քալանցեցին
Նի մտնե – ներս մտնի
Պյացեցի – քացեցի
Օզում ա – ուզում է
Դրադ – եզր, կողք
Ինում ա – լինում է
Թյա վեր – քե ոք

Փորան – փորից
Կռաքլի – փոցիս
Տյուս – դուրս
Խախալ – մաղ
Կնեկ – կնիկ
Վեմդ – ոտք
Տոն – տուն



ՄՈՒԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԻՆ ԿՅՈՂԵՐԸ

Մոլլա Նասրեդինը մըն աղքատ, բայց խելունք մարթ ա ինում: Մըն քշեր ինքն ա կնեկը պրանած են ինում: Կնեկը քոն ա ինում, ամա Նասրեդինին քոնը տանըմ չի: Էդ վախտը ըտունց տոնը իրեք կյող են մի մուտում: Նասրեդինը տեսնում ա, ամա ծեն չի հանում: Կյողերը մի են մտում տոնը պտտում, պյան չեն քիթանում, թողում են տուս կյամ: Դիրվիզին մղակավը տուս կյալիս մընը ծանդըր տնքում ա: Նասրեդինը ասում ա.

– Այ ախպեր, խե՞ ես տնքում, շելակդ ծանդըրն ա՞:

Էս ետ ա տառում, ասում.

– Չէ, տանդ ապրուստին են տնքում, վեր տանդ պյան չկա:

Ինքն ա կնեկը – ինքն ու կինը
Նի մուտում – մերս մտնում
Ծելակդ – շալակիդ քեռը
Պտտում – փնտրում

Պրանած – պառկած
Մղակավը – շեմից
Քիթանում – գտնում
Կյողերը – գողերը

Ըտունց – դրանց
Մընը – մեկը
Ամա – բայց
Քոն – քուն



ԿՅՈՒՔԻՆ Ա ՆԻԿԱԼԸ

Կյուքին ա Նիկալը Էրկու ժուլիկ հինգերունք են ինում: Էրկուսն էլ քինում են մըն հարուստի տոն նոքյար տյառնում: Էդ հարուստը մնին դարկում ա հանդը՝ տավար պիլի, են մնին էլ տանը փետ կրիլ ա տամ: Իրիզունը քոն ինիլիս Կյուքին ա Նիկալը գուրուց են անում: Ակոին ասում ա.

– Ասոր յաման դինջ ի, տավարը պյաց թուղացի կնանչին, ես պըրընեցի, քոն իլա: Ամա հենց են մրսած ինեն, տավըր նամ էր:

Նիկալն էլ ասում ա.

– Ես էլ ի դինջ, բալամ: Խազայինին չաքմեքը վաքսեցի, տիրեցի արևին ճկատումը, քյացի քոն իլա: Ուրգունա մոտ երկացա պսպղցրե, դինջացա:

Կյուքին մտածում ա. «Դե վեր ստրա տեղը ստի դինջ ա իլալ, ստրան խափեն, կործերնին փոխենք»: Ասում ա.

– Եք էգուց տյու քինա տավարը, ես մնամ տանը, կործ անեն: Ամա մտաւտ քիցես վեչ, մեետդ մըն աթոռ եր կալ, ընդեղ վեր տինես տակիդ մստես, թէ չէ ինձ տես մրսիլու ես:

Նիկալը համաձայնվում ա: Էքսի օրը կործրնեն փոխում են: Նիկալը աթոռը շլակում ա, տավարը առաջն անում, քինում: Ամառ օր, շոգ: Տավարը կետ ա ինգում, փախճում: Էդ աթոռը շլակին ինգում ա տվարին եղման, մինչև իրուգունը վազ-վազ անում, բիզարում:

Կյուքին, վեր մնում ա տանը, խազայինը ըտրան ըռվետան մինչև իրուգունը փետ կրիլ ա տամ: Էդ քշեր ուրկուսանն էլ մարագումը նորից գուրուց են անում: Կյուքին ասում ա.

– Եք էս խազայինին մըն վատոթուն անենք, փախճենք:

Նիկալն ասում ա.

– Եք կովը մորթենք, կաշին եր օճենք, տանենք ծախենք:

Են վախտին էլ կաշին յաման քանկ էր ծախվում: Ըտրանք քշերիս եր են կենում, քինում են կյումը, վեր տռնավը մի մտեն՝ տեսնում են տյոտը մրցրած: Որոշում են հերթավը մի մտեն, կովը մորթեն, կաշին եր օճեն, փախճեն: Կյուքին ասում ա.

– Նիկա՛լ, ես քեզ քանդիրավը կախ անեմ, տյո կովը մորթի, մըն պատար մես, մըն էլ կաշին կապի քանդիրան, ես քաշեմ տիեր: Եման էլ քեզ տուս կոնեմ:

Նիկալը մի ա մտում, կովը մորթում, կաշին կապում քանդիրին, ծեն տալիս.

– Կյուքի՛, քաշի տիեր:

Կյուքին կաշին քաշում ա թե չէ, քիցում ա շալակը, փախճում: Մըն շենի կողքավ անցկենալիս շները յիրա են տամ: Կյուքին կաշին եր ա քցում, վեր փախճի, մին էլ լսում ա.

– Կյուքի՛, շները ինձ կերան, հասի՛:

Կյուքին եշում ա, տեսնում կաշվան Նիկալը տուս եկու: Մընտեղ փախճում են: Ըտեղ ուրկուսանն էլ նստում են մտածում, վեր ուրանց ըրած կործերը մարդավարի չի իլալ, վեր իսկական հինգերորդնը արդար ա ինում: Ըստեղ Կյուքին Նիկալին ասում ա.

– Ա՛ Նիկալ, եք էսօրաս տենը լավ հինգերորդն անենք, ուրուր չխափենք:

Տի էլ անըմ են:

Կետ ա ինգում – բոռերի
խայթոցներից խուսափելու համար
կենդանիները հաճախ փախչում են
պատսպարվելու ստվերոտ կամ
քամոտ վայրերում
Տյոտը մրցրած – դուռը փակած
Չաքմեքը վաքսեցի – կոշիկներին
մածուկ քսեցի
Պյաց քուղացի – բաց քողեցի
Արևի ճկատումը – արևի կողմը
Վազ-վազ անում – վազվզում
Յիրա են տամ – վրա են տալիս
Մտատ քիցես վեչ – մտիցդ չգցես,
չմոռանաս
Հինգերունք – ընկերներ

Կնանչին – խոտերի վրա
Խազայինին – տիրոջը
Երկացա – վերկացա
Ըովետան – առավոտից
Ուրկուսանն էլ – երկուսն էլ
Եր օճենք – վերցնենք
Հերթավը – երդիկով
Քանդիրավը – պարանով
Էքսի օրը – հաջորդ օրը
Էսօրաս – այսօրվանից
Եմնա – հետո, հետևից
Եշում ա – մայում է
Քինում են – գնում են
Քոն ինիլիս – քնելիս
Պըրըմեցի – պառկեցի

Դինջ ի – հանգիստ էի
Նամ էր – խոնավ էր
Ինձ տես – ինձ պես
Ժուլիկ – խաբեբա
Պիլիկ – պահելու
Ջուրուց – գրույց
Հենց իմ – ոմց որ
Տափը – գետինը
Պատար – կտոր
Նհետդ – հետդ
Կյումը – գումը
Տիեր – վերև
Ինեն – լինեն
Ա – ու, և
Մես – միս



ՕՐՀՆԱԾ ԱՂԸ

Տաթևցի մի մարթ եր ա կենըմ, մի քանի պեռը աղ եր ունըմ, տանըմ Նախիջևան ծախիլի: Վեր տեղ ա հըսնըմ, տենըմ ա աղը չի ծախվըմ: Մտածըմ ա, թա հի՞նչ անի, վեր աղը ծախվի: Եր ա կենըմ կաղըմ կտրին, կանչըմ.

– Ա՛յ ժողովու՛րդ, Տաթևու տերտերը օրինած աղ ա դարկալ, պիտի

ամանքըտ մի երկու գրվանքա առնեք:

Մինչև մի ժամը սաղը վիաքվըմ են սկըսըմ աղ առնիլը:

Վիաքվըմ – հավաքվում
Գրվանքա – 400 գրամ

Ամանքըտ – ամենքդ
Ղարկալ – ուղարկել



ԱԿՈՒՆՆԻ ՆՈՔՅԱՐ

Ակոին ջահիլ վախտը տանան փախճում ա, քինում նոքյարություն անի: Ակուն մըն մարթ նոքյար ա եր օնում: Էս մարթին մըն թոթի բաղ ա ինում: Թոթի էլ լավ վախտն ա ինում: Մըն քանի օր ուրուր եննա էս մարթն ու Ակուն արաղ են քաշում, ածում կարասնին, ռեխը կապում, պեռում են էրկու էշի: Էս մարթը Ակուն ասում ա.

– Կնի ինես առաջի էշին, գյամը պյաց կթողաս, էշերը ուրանք-

ուրանց կքինան թուշ մեր տոն: Ամա էշի քոն չինես:

Տերը մնում ա արաղի կրակի կշտին, Ակուն միի ա ինում էշին, քինում: Քինում ա, քինում, էշին յիրա քոն ա ինում: Ջյուրթնանում ա տեսնում մթեն քշեր, էշերը ճնպեն դրաղին կաղնած: Ակուն էշում ա, տեսնում հեն ա լուս ա երովում: Յավաշ-յավաշ քինում ա, տեսնում մըն քյարվան՝ օղտերը նստոտած արուր են անում, մարդիկ էլ կրակի դրաղին զուրուց են անում: Ակուն պարև ա տամ, նստում կրակի կշտին: Կրասան արաղ ա հանում, խմում են, զուրուց են անում: Քոնընին տանում ա: Քյարվանին տերը Ակուն ասում ա.

– Ա՛ ջահիլ, քինա էշերը մըն պյանան կապի, կորչեն վեշ:


Ակուն քինում ա, տեսնում, հես ա նյառ օղտը նստած արուր ա անում: Էշերը կապում ա ուրուր, պարանն էլ քիցում ա օղտի մեշկավ, մըն էշը օղտի մըն դոլն ա ինգյում, էն մընն էլ՝ մըն դոլը: Ինքն էլ քինում ա, քոն ինում:

Ըովետիս եր են կենում, հի՞նչ տեսնան՝ նյառ օղտը եր ա կցալ կաղնալ, էշերը մնացալ են էրկու դոլան կախ-կախ ըլած, խեղդվալ են, ստակալ: Ակուն վխնելան սիպտակում ա, թան տյառում: Կարասնին ըտենց թողան ա ըտեղ, փախճում, հու՛նց ա փախճում:

Ջահիլ վախտը – երիտասարդ
Ժամանակ
Մըն դոլն ա ինգյում – մի կողմն է
ընկնում
Նյառ օղտը – մեծ, առաջապահ
ուղտը
Ճնպեն դրաղին – ճանապարհի
եզրին
Կնի ինես – կենճես, կբարձրանաս
Կապում ա ուրուր – կապում է իրար
Յավաշ-յավաշ – կամաց-կամաց
Վխնելան – վախենալուց, վախից
Ուրանք-ուրանց – իրենք-իրենց

Պյաց կթողաս – բաց կթողես
Ջյուրթնանում ա – զարթնում է
Օղտի մեշկավ – ուղտի մեջքով
Արուր են անում – որոճում են
Ուրուր եննա – իրար ետևից
Կրասան – կարասից
Գյամը – զամը, սամճը
Ըովետիս – առավոտյան
Թոթի բաղ – թթի ալգի
Պեռում են – բեռնում են
Կորչեն վեշ – չկորչեն
Օղտերը – ուղտերը
Ռեխը – բերանը

Մըն պյանան – մի բանից
Քյարվան – քարավան
Եր օնում – վերցնում
Ամա էշի – բայց նայիր
Ստակալ – սատկել
Քոն չինես – չքնես
Երովում – երևում
Ջյուրուց – զրույց
Տանան – տնից
Հունց – ոնց
Լյուս – լույս





ԱԿՈՒՆ՝ ԿՅՈՒԹ-ԱՆՎՈՐ

Ակոհին մըն մարթի քշտին նոքյարություն ա անում: Մըն օր էս մարթը Ակոհուն ասում ա.

– Հավան թքացալ ա: Էքուց քինում ենք հանդը վար անենք:

Ռավեդ քշերավ եր են կենում, քինում: Եզները լծում են կյութանին վար անում: Ակոհին մնում ա, մնում ու ասում.

– Ա՛ տեր, տյու քինա տոն, ես մինակ վար կանեմ, իրուզյունը կիկյամ տոն:

Էս մարթը եր ա կենում, քինում տոն: Ակոհին վար ա անում, վար, շոքը յիրա ա տամ, փիս բիզարում ա: Մտածում ա. «Պրանեմ էս ծառին շվաքումը մըն պատար քոն ինեմ, շոքը կոտրի, եր կկենամ, վար կանեմ»: Կյութանը հանում չի, եզների վիրա ըտի թողում ա, քոն ինում:

Ակոհին գյութնանում ա, տեսնում, բա՛, քո հոր, քշեր, մթեն: Վխնելան պիցրանում ա ծառը, ըտի վխնելավ, առչելավ քշերը մնում ա ծառին յիրա: Ըովետիս եր ա կյամ, քինում ա վեր եզները ման կյա:

Եզները ծրաված են ինում, քինում են կյետը: Կյութանը վիրեքն ա ինում, կյետնին կյութանի արած արխավ Ակոհին քինում ա ճարում: Տեսնում ա հի՞նչ՝ քշերիս ջանավարնին հավաքվալ են եզները կերալ: Կյութանը թողալ չի վեր եզները ջանավարնեին խռեկ տան: «Կյութանատերը, վեր ինձ փռնի, վայս կտա» – մտածում ա Ակոհին, կյութանը ըտի կյետի դրաղին թողում ա, փախնում:

Շոքը յիրա ա տամ – շոգը վրա է տալիս

Ռավեդ քշերավ – առավոտ գիշերով

Պիցրանում ա – բարձրանում է

Զյութնանում ա – զարթնում է

Հավաքվալ են – հավաքվել են

Վխնելան – վախենալուց

Իրուզյունը – երեկոյան

Ջանավարնին – գայլերը

Բիզարում ա – հոգնում է

Թքացալ ա – տաքացել է

Մըն պատար – մի քիչ

Եր ա կյամ – իջնում է

Եշում ա – մայում է

Պրանեմ – պառկեմ

Կյետնին – գետնին

Քշտին – մոտը

Հավա – եղանակ

Խռեկ տան – քշեն

Քոն ինեմ – քնեմ

Արխավ – ակոսով

Կյութան – գութան

Քինում – զնում

Կյետը – գետը





ՊԸԼԸ - ՊՈՒՂԻՆ ՈՒ ԴԵՐՎԻՇԸ

Մըն օրի մըն դերվիշ կյամ ա քղաքին միջումը, տափին մըն շրջան խագում, քշտին նստում: Վեչ խոսում ա, վեչ պյեն անըմ: Հու վեր խոսացնում ա՝ դերվիշը խոսըմ չի: Ժողովուրթը քինում ա, կյամ, եշում ա, զարմանըմ: Պըլը-Պուտին քղաքին միջավ քինալիս տեսնում ա էդ դերվիշը շրջանը խագած, դրադեն նստած: Մըն չոփ ա եր օնում, էդ շրջանը միջան խագում, կես անում: Դերվիշը եշում ա, եշում, եր ա կենում, քինում: Ժողովուրթը դերվիշին ետան ա ինգում, հրցնում:

– Տյու հի՞նչ իր օգում ասիլ, ինքը հի՞նչ ասեց, վեր եր կացար հղե իլար:

Դերվիշը ասում ա.

– Էդ շրջանը, վեր խագալ ի՞ երգիրն ա, ասում եմ, քյա պյուլոր ա, ինքն էլ եկու միջավն խագեց, կես ջրեց, քյա կեսը ճյուր ա, կեսը՝ չոր: Ըա՛տ խելունք մարթ ա:

Ժողովուրթը քինում մեկ էլ Պըլը-Պուտուն ա փռնում, հրցնում.

– Ա՛ Պուտ, պա տյու էդ հո՞նց գիդացիր, քյա հի՞նչ ա հրցնում:


Պըլը-Պուտին պատասխանում ա.

– Ա՛ տնաշենի մարթիկ, հո՞նց չեք կյոխ ինգյալ, քյա էդ հինչ ա հրցնում: Շրջանը խագալ ա, կշտին նստալ, հրցնում ա. «Պուտի՛, վեր ստի մըն մեծ դյովնա փլավ իներ, կըկարի՞ս օտիս»: Ես էլ միջավն խագեցի, քյա. «Ա՛ տնաշեն, խե՞ եմ լոխ մեկ օտում, կեսը մեկ կօտիմ, էն մին կեսն էլ էքսի օրը՝ քշերավ»:

Ետան ա ինգում – հետևից է ընկնում
Միջան խագում – մեջտեղից գծում
Դրադին նստած – կողքին նստած
Հղե իլար – ճանապարհ ընկար
Գիդացիր – գիտեցար, իմացար
Քշերավ – առավոտ շուտ
Եշում ա – մայում է
Ինքն էլ եկու – ինքն էլ եկավ

Կյոխ ինգյալ – գլխի ընկնել
Էքսի օրը – հաջորդ օրը
Փլավ իներ – փլավ լիներ
Դյովնա – սկուտեղ
Տափին – գետնին
Պյուլոր ա – կլոր է
Խելունք – խելացի
Եր օնում – վերցնում

Մեկ էլ – հիմա էլ
Փռնում – բռնում
Օտիս – ուտես
Խագում – գծում
Լոխ – ամբողջ
Քշտին – մոտը
Հու վեր – ով որ
Օգում – ուզում





ՊԸԼԸ - ՊՈՒՂԻՆ ՈՒ ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԸ

Մըն հետի Պըլը-Պուլին շալվարին տեղ-տեղ թագա կրկատան ըրած տյուս ա կյալի, հըղըցընը Մոլլա Նասրեդինը տեսնըմ ա ու ասում.

– Պուլի, տեղ-տեղ շնհավեր ինի:

Պըլը-Պուլին տեսնըմ ա, վեր ուրան ծերք կալավ, կենըմ ա, կենըմ, թա.

– Օրումեջ ապրես:

Շնհավեր ինի – շնորհավոր լինի
Ծերք կալավ – ծեռք առավ

Հըղըցընը – ճանապարհին
Մըն հետի – մի անգամ

Կենըմ ա – մնում է
Ուրան – իրեն



ՊՈԶԱՏ ԸԼԲԱՍՏՐԱԿԸ

Իլալ ա, չիլալ մին պառավ կնեզ: Էտ պառավ կնեզանը վեչ մին պեն չի իլալ, մենակ մին լոար էծ ա իլալ: Էտ կնեզը ըպրելիս ա իլալ էտ էծին տված կաթնավը: Մհետե էլ կթալ ա, տիրալ տամը, ինքը քեցալ ա սկսալ ուրանց բոստանումը կործ անելը: Եկալ ա տեսալ՝ կաթնը չկա: Ըտի մին քանի օրե կրկնվալ ա: Միշտ տա կյալիս ա տեսնըմ էլի վեչ մին պեն չկա, ըմընեքը տերտակ: Էտ պառավը բուսը պահըմ ա, եշըմ ա տեսնըմ տա մին քյոք ըլբաստրակ ա: Թաքուն փոնըմ ա ու հաքին

կտրըմ: Էտ ըլբաստրակը կյամ ա, քինամ, էտ պըռավեն դաչանք անում.

– Պառա՛վ, պառա՛վ,
Հաքիս ինձ տո՛ք,
Կցի՛մ, կցմցի՛մ,
Հնգերունցս հսնի՛մ:

Էտ պառավը ետ ա տեռնըմ ըլբաստրակեն ասըմ.

– Կաթնը ինձ տոք, հաքիտ քեզ տամ:

Ըլբաստրակը տեսնըմ ա, վեր ճար չկա, քինամ ա մին կավու կոխկ ու ասըմ.

– Կա՛վ, ա՛յ կավ,
Կաթնը տոք,
Կաթնը տամ պըռավեն,
Պառավը հաքիս տա,
Կցի՛մ-կցմցի՛մ,
Հնգերունցս հսնի՛մ:

Էտ կավը տամ չի, ասըմ ա.

– Քինա ինձ հետե խոտ պեր՝ տամ:
Ըրաստրակը քինամ ա խոտի կոխկը, ասըմ ա.

– Խո՛տ, ա՛յ խոտ,
Ինձ խոտ տոք,
Խոտը տամ կվեն,
Կավը կաթնը տա,
Կաթնը տամ պըռավեն,
Պառավը հաքիս տա,
Կցիմ-կցմցիմ,
Հնգերունցս հսնիմ:

Խոտը ասըմ ա.

– Քինա ինձ հետե ճյուր պեր՝ տամ:

Ըրաստրակը քինամ ա ախայտուրը ու ճյուր խնթորմ: Ախայտուրը տամ ա: Ըրաստրակը ճյուրը տամ ա խոտին, խոտը խոտ ա տամ, խոտը տամ ա կվեն, կավը կաթն ա տամ, կաթնը տամ ա պըռավեն: Պառավը ածըմ ա ուրան ըմընեքը, հաքին տամ ա ուրան: Ըրաստրակը հաքին յոր ա օնում, կցում-կցմցոտում քինամ ուրան հնգերունցը հսնում:



Հնգերունցս հսնիմ – ընկերներիս
հասնեն
Ըմընեքը տերտակ – ամանները
դատարկ
Բուսը պահըմ ա – պահ մտնելով
հետևում է
Կյամ ա, քինամ – գալիս է, գնում
Ըրաստրակ – մապաստակ

Պոչատ – պոչը կտրած
Կցիմ – կցեմ, կպցնեմ
Ինձ հետը – ինձ համար
Յոր ա օնում – վերցնում է
Միտե – մի անգամ
Քեցալ ա – գնացել է
Ինձ տոք – ինձ տուր
Ղաչանք – աղաչանք

Կաթնավը – կաթով
Կթալ ա – կթել է
Քյոք – գեր, չաղ
Իլալ ա – եղել է
Կնեգ – կին
Կավ – կով
Հաքի – պոչ
Կվեն – կովին



ԷՇ ՀՈՌ ԿՅԱԼԸ

Մըն մարթ ա ինում, տա էշը կուրցունում ա: Էս մարթն ա տղեն քինամ ըն շոռ կյամ, վեր քիթանան: Հերը մի հըղըցավ ա քինամ, տղեն՝ օրիշ:
Էս մարթը շատ ա շոռ կյամ, մինել տեսնըմ ա տղեն եկավ, թա.

– Ա՛ հեր, քիթալ ըմ, եք քյանք տոն:

Հերը թա.

– Հա՛, բալա, տու քինա, ես էս ծյորն էլ եշիմ, կյամ:

Հըղըցավ – ճանապարհով
Շոռ կյալը – փնտրելը
Քիթալ ըմ – գտել եմ

Քիթանան – գտնեն
Քյանք – գնանք
Եշիմ – մայեմ

Եք – եկ, արի
Ա – ու, և



ԷՇ ՆԱՆ ԾԻՆ

Մե հետ ծին մինգել էշը տանան փախճում ըն: Օրերավ մնամ ըն ծմակներումը: Տրանց տարը սկսում ա շոռ կյալ: Տրանք էնին ինում ծմակումը նստած: Մին չըխչիքըկոց ա կյամ: Ծին պիրցրանում ա էշում, տեսնում ուրանց տարը ընդեղ շոռ ա կյամ: Էդ դարումը էշը ետ ա տեռնում, թա.

– Ծի ախպեր, ախեր զոռալս կյամ ա.

Ծին թա.

– Էշ ախպեր, զոռաս վեչ, մեր տարը կիլանա մեզ կապե տանե տոն: Իլիա սկսըլան ընք չոչարվելը:

Էշը էշում չի ծիին դաչանք ընելին, զոռամ ա: Ծին օգյում ա թա վենն անե, կարում չի: Տարը ծենի յիրա կյամ ա քթնում: Ծին պեռնում ա, էշին էլ նիետը: Կյալիս էշը նղանում ա: Էտ մարթը էշին պեռնը յոր ա օնում տիմում ծիին յիրա, էշին էլ պիցիրցնում տիմում ա ծիին յիրա: Վեր շատ-շատ քինամ ըն, հսնըմ ըն մին խոր ծյոր: Ծին ըտտեղ ետ ա տեռնում էշին թա.

– Էշ ախպեր, ախր պար կյալս կյամ ա:

Էշը սկսում ա դաչանք անելը, վեր չէ, վեր ըմ ընգլման: Համա ծին էշում չի, ծյորին կոխկավը սկսըմ ա պար կյալը: Էդ վախտը էշը վեր ա ընգնում, ընգնում ծյորը:

Էդ դարումը – այդ ժամանակ
Պիցիրցնում – բարձրացնում
Պիրցրանում ա – բարձրանում է
Վենն անե – կանգնեցնի

Շոռ ա կյամ – փնտրում է
Էնին ինում – լինում են
Ղաչանք – աղաչանք
Կիլանա – կզա

Եշում – նայում
Տարը – տեր
Իլիա – էլի
Մինգել – մեկել



ԱՇԿԸ ԾԱԿ ՄԱՐԹԸ

Ինում ա, չի ինում, մին մարթ ա ինում: Էս մարթը շատ աշկը ծակ ա ինում: Վեր քինամ ա ծմակը, էնքան փաղ ա հվաքում, վեր էրկու օրում զոռով ա կյամ հսնում տոն: Մեհետ տա տյուս ա կյամ չոլը, էշում, տեսնում մին մարթ թաքում մին մեշուկ տիրած շիլակեն տանում ա: Ասըմ ա.

– Էդ շտեղա՞ ըս կյամ, հի՞նչ ըս տանում:

Էդ մարթը ասըմ ա.

– Փաղ ա, էն դոլան ըմ պիրում:

Ըտա ասըմ ա, քինամ: Էս աշկը ծակը հետան քինամ ա տեսնըմ, վեր մեշուկի մեջինը վեսկե ա: Օգյում ա թա կյուղանա, էն մարթը տեսնըմ ա, ասըմ.


– Սա պերալ ըմ էն մեծ կաղնում տական, քինա տու վէլ պեր:

Էդ մարթը քինամ ա տեսնըմ կաղնու տակ վեսկին շաղ տված ու մի պառավ մարթ նստած: Էս պառավ մարթը ասըմ ա.

– Ինձ օգնե, սոված ըմ:

Էս աշկը ծակը ասըմ ա.

– Ինձ պեն չոնին քեզ տալի:



Էդ պառավ մարթը կախարդ ա ինու: Էս աշկը ծակ մարթը վեսկեն հվաքում ա, կյամ մեշուկը տանը պեց անում, տեսնում օխժեր: Վազ ա տամ, քինամ էն առաջվա մարթին, թա.

– Պա ասըմ ըս ընդեղ վեսկե կա, պերալ ըմ անջախ օխժեր ա լոխ:

Էն մարթը ասըմ ա.

– Քեզ մին պառավ մարթ չի՞ պտահալ, ասալ չի՞ թա սոված ըմ:

Ասըմ ա.

– Հա՛, ասալ ա:

Ասըմ ա.

– Էնա, վեր ասալ ա, տվալ ը՞ս:

Ասըմ ա.

– Չէ՛, չէ՛, ասալ ըմ՝ կա վուչ:

Ասըմ ա.

– Հա, վեր տված ինիք, մեե օխժը չեր ինիլ:

Էտ մարթը օխժերը տանըմ ա ածըմ մին ծոր: Էքսը էլ ա քինամ: Էն պառավ մարթը պտահըմ ա, էլ ա հաց օգյում, տամ չի: Էլ ա վեսկին յոր օնում կյալիս տոն: Պեց ա անում մեշուկի ըռեխը տեսնում օխժեր: Օգյում ա թա էլյա տեն ածե, էն օխժերեն մինը ետ ա տեռնում, թա.

– Դու հինչքա՞ն աշկդ ծակ մարթ ըս, վեր մին կտոր հացը չըս տամ:

Էտ մարթը ասըմ ա.

– Չէ՛, ես տամ չում: Խե՞ պիտի տամ:

Մինել էն պառավ մարթը մին պատառ հացու հետե կյամ ա էս աշկը ծակ մարթին տոն, էս ասըմ ա տոնս վեսկավ լցրե, վեր տամ: Էտ պառավ մարթը տրա տոնը վեսկավ լցնում ա: Էդ մարթը ուրխանըմ ա, պիրում ա հացն էլ վեսկե շինում, ասըմ ա.

– Լոխ, լոխ վեսկե յըմ օգյում:

Լոխ վեսկե յա տեռնում: Էդ մարթը եշում ա, ասըմ.

– Վա՛յ, հղեցնե՛ն էլ, հղեցնե՛ն էլ, երկի՛նքն էլ, ծառե՛րն էլ, բոստա՛նն էլ, լոխ վեսկե յըմ օգյում:

Կյամ ա իրիգյունը, սուվըծանում ա, մեռնում, մեռնելուց էլ էլիա ասըմ ա.

– Վա՛յ, հալյամ հինչքա՛ն պեն կա վեսկե տառնալու:



Հղեցնե՛ն էլ – ճանապարհներն էլ
Էն դուլան – այն կողմից
Ըտեղան – որտեղից
Յոր օնում – վերցնում

Լոխ – ամբողջը
Կա վուչ – չկա
Հալյա – դեռ
Օգյում – ուզում

Մեշուկ – պարկ
Եշում – նայում
Փաղ – փայտ
Օխժ – օձ





ԷՇ ԾԱԽԵԼԸ

Մեր շենույնը մին ընտանիքատար մարթ ու կնեզ կար: Տահանց մին կուճիր մաշված էշ ա իլալ: Վեչ պեռն ա պիրում, վեչ խոտ ա պիրում, սաղ օրը թավիլ ա տամ, խոտ օտում, զոռում:

Կնեզը ասում ա.

– Ա՛յ մարթ, էն էշը սաղ օրեն պարապ ընդեղ թավիլ ա տամ, խե՞՞ չըս տանում ծախիս:

– Չէ՛, մենակ մին հոգին կարիլ չի տանի, խրտնըլանա փախճի: Տու

վել պիտի կյաս:

Իտի էլ անում ըն: Յոր ըն օնում քինամ էշը ըռաչներան, ուրանք էլ քմական: Վեր տանում ըն քաղաք, ընդեղ էլ ըն ինում շատ էշեր ծխելիս: Հու վեր կյամ ա էտ էշին կոխկավը թա անց կենա, վեր ծերքը քցում չի՞ մաշկեն, էշը ճկում ա: Ըտհանք էլ մարթը ճան կնեզը ուրուր ըն եշում:

Կյամ ա իրիգունը, հալյա ուրանք էշ ըն ծախըմ: Մարթը ետ ա տեռնում, թա.

– Ա՛յ կնեզ, վեր օխտը մանեթու վել յոր օնին, տլան ըմ է՛, պա սրա դարդան սօր ըստեղ մնացենք: Ասելը, բա՛թ, մին լյավ մարթ, Աստուծ պահե տրա, հա՛, տուս եկավ թա.

– Էտ քուտակը քանի՞ մանեթու կտաս:

Մարթը թա.

– Քանի՞ մանեթու ես օգում:

– Դե՛, օխտը մանեթու ինձ տոք:

Ըտահանք տամ ըն: Արթեն ժամի օթն ա իլալ: Մթեն կյամ ըն քըղաքան տուս, մին ըրբա ա պտահում: Մարթը ասում ա թա.

– Քանի՞ մանեթու կտանիս Խրամորթ:

Տա էլ թա.

– Օխտը:

Կնեզը ուրան մաչին թնթորում ա, մին կուճի էլ ծիծաղում, թա.

– Դու հի՞՞նչ գիդացեր, թա մեր ծերքեն իլած փողը օխտը մանեթ ա:

Մարթը ծերքավ նշանց ա տամ, թա՛ տուս ըրա:

Վեր կյամ ըն շենույնը վեր կյամ տերտակ-սրլղրան, լոխ ծիծաղում ըն: Խոխեքն էլ վազ տալավ կյամ ըն ըռաչեն, մտածելավ, թա հարն ու մարը շոր-մոր պերած կընին:

Տերտակ սրլղրան – դափ դատարկ
Ընտանիքատար – ընտանիքատեր
Յոր օնին – վերցնեն, ալստեղ՝ գնեն
Սրա դարդան – սրա պատճառով
Հու վեր կյամ ա – ով որ գալիս է
Թավիլ ա տամ – թավալվում է
Խոխեքն էլ – երեխաներն էլ
Յոր ըն օնում – վերցնում են

Կոխկավը – կողքով, մոտով
Մաշված – նիհարած
Գիդացեր – իմացար
Իտի էլ – այդպես էլ
Տահանց – դրանց
Ծերքավ – ձեռքով
Ըրբա – արբա

Շենում – գյուղում
Քմական – ետևից
Տու վել – դու էլ
Հալյա – դեռ
Լոխ – բոլորը
Կնեզ – կնիկ
Կուճիր – փոքր



ՈՐ ԻՆԻ, ԼԱՎ Ա



Մին աղքատ մարթ ա ինըմ: Ուզում ա պսակվի: Դե աղքատ մարթին իրանց գյուղում ո՞վ ախչիկ կտա: Էս մարթը քինըմ ա, որ մոտիկ գյուղից ախչիկ առնի: Մտնըմ ա մի տուն, ասըմ.

- Եկել եմ ձեր ախչկանը առնեմ:

Ախչկա ծնողները հարցնում են.

- Բա ի՞նչ ունես, տու՞ն, տե՞ղ, հարստությու՞ն:

Ախքատն ասըմ ա.

- Լա՛վ ա:

Հարցնըմ են.

- Քանի՞ կով ունես:

Աղքատն ասըմ ա.

- Որ երեսուն հատ ինի, լա՞վ ա:

- Ոչխար քանի՞ հատ ունես:

Ասըմ ա.

- Որ հարիւր հատ ինի, լա՞վ ա:

- Բա ծի՛, ծի քանի՞ հատ ունես, փեսա ջան, – ուրախացած, որ իրանց ախչկան հարուստ տղա ա ուզըմ, հարցնըմ են ախչկա ծնողները.

- Իրեք հատ, որ ինի, լա՞վ ա, – ասըմ ա փեսեն:

Ախչկան տալիս են տղին:

Օրերից մի օր ախչկա ծնողները քինըմ են, որ իրանց ախչկանը տեսնան ո՞նց ա, ո՞նց չի: Քինըմ են տենըմ մի քանդված տուն, ախչիկը նստած մարթի շորերն ա կարկատըմ: Հարցնըմ են.

- Փեսա, բա ու՞ր ա քու տունը, տեղը, հարստությու՞ն:

- Ի՞նչ հարստություն, – ասըմ ա փեսեն:

- Բա դու ասեցիր ո՞չ, էսքան կով ունեմ, էսքան ոչխար, էսքան ծի:

- Ես ասել եմ, որ ինի լա՞վ ա, հու չե՞մ ասել, որ ունեմ, – ասըմ ա փեսեն:



Քինըմ են – գնում են

Ասեցիր ո՞չ – չասացիր

Որ ինի - որ լինի

Ծի – ձի





ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ ՀԱՐՍԱՆՔԱՎՈՐՆԵՐԸ

Ըլնըմ ա, չի ըլնըմ, մի հարսանիք ա ըլնըմ: Հարսանքավորները ճամփա քինալու վախտը հանդիպում են մի գյուղացու: Էս գյուղացին գութանը լծած վար անելիս ա ըլնըմ: Էս գյուղացին, որ տենըմ ա էս հարսանքավորներին, ծեն ա տալի:

– Ա՛յ հարսանքավորներ, կանգնե՛ք, ես մի հանելուկ եմ ասելու: Վեր իմանաք՝ իմ գութանը ձեզ, վեր չիմանաք՝ հարսն ինձ տաք:

Հարսանքավորները համաձայնվում են: Գյուղացին ասըմ ա.

– Էն ի՞նչն ա՝ մի թուփ դուշ ունեն, միշտ մի ուղղությամբ են քինում, ունեն չորսը կոտոշ, ութը ոտ: Էս հարսանքավորները մնըմ են զարմացած: Մին էլ հարսը ծեն ա խնթրըմ, թե.

– Ինձ խոսք հասնը՞մ ա:

Գութանավորը ասըմ ա, թե.

– Բա ոնց, հասնըմ ա:

Դու մի ասի հարսի հերը ռանչպար ա ըլնըմ: Էս հարսը գլխի ա ընկնում ու ասըմ ա.

– Հրե՛ն, էն եզնիքն են գութանին լծած:

Դե, էս գյուղացին պարտվում ա ու գութանը եզնիքով տամ ա հարսին ու փեսին:

Քինալու վախտը – գնալու ժամանակ
Ռանչպար – հողագործ

Տամ ա – տալիս է
Ղուշ – թռչուն

Ծեն – ձայն



ՂՈՐՄԻ ՔՈ ՀՈՐԸ

Մուն աշկը ծակ ճրղացպան ա նում: Հու վեր աղում ա տանում ճրղացը, պարյօրը յոր ընելի տեղ առաչ շրհատն ա օգում: Տուրա հետի ալ խալխը անեսկ լալ տամ ճրղացպանին:

– Իմ հարը վեր մեռնի, վեչ մունն ալ դորմի չի տալու, – դարդ լալ անում ճրղացպանին տղան:

Հարը վեր մեռնում ա, տղան ա ճրղացպան թեռնում: Պա հի՞նչ անի, վեր հորը դորմի տան: Մտեկ ա անում, հու վեր կյեն ա ճրղացը, վազ ա տամ առաչըն, ասում.

– Շոտ արի շրհատը տոր:

– Ղորմի քո հորը, էն հալա ճրղացին տրեանը լալ շրհատը յոր օնում, տու իսկ թողում չի՞ս հասիք ճրղացը, – ասում ըն ճրղաց եկողներն:

– Հեն ա հորս դորմի ըն տամ, – ըրխանում ա ճրղացպանին տղան:

Ղորմի քո հորը – ողորմի քո հորը
Շրհատ – աղալու վարձ
Շոտ արի – շուտ արա
Աշկը ծակ – աչքածակ, կծծի
Վազ ա տամ – վազում է

Պարյօրը – բարի օրը, բարև
Ճրղացպան – ջրաղացպան
Թեռնում – դառնում
Կյեն ա – գալիս է
Անեսկ լալ տամ – անիծում էր

Առաչըն – ընդառաջ
Եկողներն – եկողները
Ըրխանում ա – ուրախանում է
Յոր օնում – վերցնում
Մուն – մի



ՕԽԾԸ

Ժամանակով մի մարթ և ինու: Ունենում և օխտը տղա: Մեհետ տղերանցը ասըն և.

– Քեցեք հանց տոն քթեք, վեր օխտը ախչիկ ինի, էտ ախչկերանցն էլ ուզեցեք ծեզ հետի: Օխտը ախպերները քյնամ ըն, քյնամ, մի տոն ըն քթենըն, տահանց ինու և օխտը ախչիկ: Տղերքը կյամ ըն հորն ասըն:

Հարը տասչորս ծի և տամ տահանց, վեր քյնամ ըխչըկորանցը պիրին, մեհետն էլ ասըն և.

– Էն ծանկեն միջին մի թալա կա, ընդեղ հաց չօտիք:

Տղերքը քյնալիս հաց չըն օտում, բայց վեր քյնամ ըն խնամումց տոն, ըխչըկորանցը մեհետ կյալիս քըլոտումը նստում ըն հաց օտում: Լոխ ուրանց ծիերը նստում ըն քյնամ, կուճուր ախպերը օգում և թա նստե, մի օխծ կյամ և ծիին առաջը կտրըն ու ասըն.

– Քյնա թաքավերեն ախչիկը պեր, քու նշանածո ու քեզ պեց ըն թուղուլան:

Տղան քյնամ և, վեր թաքավերեն ախչիկը պիրի: Կետավը հնցնելիս տեսնըն և մրչենները կետան կոխքավը քյնամ ըն, կյամ, մի լատան և տինում տահանք անց ըն կենում ու ասըն.

– Վեր նեղ տեղ իննիս մեզ ծեն կտաս, կյանք քեզ քյոմագ անինք:

Տղան քյնամ և թաքավերեն տոն ու թաքավերեն ասըն և.

– Ախչիկը ինձ տո:

Թաքավերը ասըն և.

– Վեր տյու վեսկի թասը ճիրավ լցած եր ինիս մեր մղակեն չինարի ծառը ու ճուրը վեր չիտեմա, ին ախչիկս քեզ ըն տլան:

Տղան թասը յոր և օնում, եր ինում ծառը: Վեր հսնըն և ծառեն պտոկը, տեսնըն և օխծը հալան նշանածեն առաչը կտրած: Տղան լաց և ինում, ըրտասուքը ընգնում և թաքավերեն ձեռքեն յրա, թաքավերը գյուղում և թա ճրան և վեր ինգալ: Տղան վեր և կյամ, վեր հսնում և տակեռը թաքավերը ճուրը չափում և, տեսնում և դուզ և:

Թաքավերը մի օրիչ պյեն էլ և ասըն.

– Տասնհինգ չուվալ ցորեն, մին էլ տասնհինգ չուվալ կորեկ ուրուր խառնին, վեր կարիս ճոկիս, ախչիկս քեզ ըն տլան:

Տղան մրչեններեն ծեն և տամ, վեր նեղ տեղ և ինգալ՝ քյոմագ անին: Մրչենները կյամ ըն կորեկը անըն կորեկեն չուվալը, ցորենը՝ ցորենեն չուվալը: Թաքավերը ախչկանը տամ և տղեն: Տղան ախչկանը յոր և օնում քյնամ: Քյնամ և տեսնում օխծը նշանածեն առաչը կտրած, վեր օխծը տեսնըն չի՞ թաքավերեն ըխչըկանը, տրաքում և ու մի տղա տեմըն, ու ասըն և, վեր ուրան մի կախարդ ասել և՝ «Օխծ տառնաս՝ սուլուլ տաս»: Ինքը օխծ և տեռալ, վեր թաքավերեն ըխչըկանը տեսնըն և՝ տղա և տեռըն: Էտ տղան ու թաքավերեն ախչիկը մի ծիու յրա ըն նստըն: Էն մին տղան ու ուրան նշանածը օրիչ ծիու յրա ըն նստում, քյնամ ըն տոն, օխտ օր, օխտ քշեր հրսանեք ըն անըն ու քյնամ ըն ուրանց հետե ասըն:

Լատան – ճիպոտ, բարակ գերան
Ուրանց հետե – իրենց համար
Ըխչկորանցը – աղջիկներին
Տղա տեմըն – տղա դառնում
Հանց տոն – այնպիսի տոն
Քյոմագ անինք – օգնենք
Մրչենները – մրջյունները
Տակեռը – արմատները

Յոր և օնում – վերցնում է
Վեր չիտեմա – չթափվի
Թըլոտումը – բացատում
Ծեզ հետի – ձեզ համար
Սուլուլ տաս – սողաս
Նհետն էլ – հետն էլ
Պտոկը – գազաթը
Քրանըն – գտնում

Թալա – բացատ
Տահանց – դրանց
Կետավը – գետով
Ճիրավ – ջրով
Լոխ – բոլորը
Չուվալ – ջվալ
Օխծ – օձ



ՕԽԾՆ ՈՒ ԱԽԾԻԳՅԸ

Ըլալ ա, ըլալ չի, մի մարթ ա ըլալ: Էտ մարթին օխտը ախճիգյ ա ըլալ: Ամեն օր օխտը հետ երգինքյան օխտը հատեգյ ա ըլալ վեր ընգնես: Մեծ քուվերքը Էտ հատեգյը ուտես ըն ըլալ, համա կիճի ախճիգյը մի սանդուղում պիտիս ա ըլալ: Վեր կյարունքը եկալ ա, լոխ սկսալ ըն վար անիլը: Ախճիգյը թա.

– Ա՛ հար, տու վէլ վար ըրա:

Հարն ասալ ա.

– Հինչա՞վ վար անիմ, վեչ եզնը օնիմ, վեչ էլ ցորեն-սըրմացու:

Ախճիգյը ասալ ա.

– Ես քեզ սըրմացու կտամ:

Ախճիգյը պերալ ա լոխ տվալ ուրան: Հարը սկսալ ա վար անիլը: Վարը ըրալ ա պրծալ, եկալ տոն: Էքսի օրը ասալ ա.

– Աստու՛ծ, քյնիմ տսնամ էնա հսած:

Քիս ա տսնաս՝ էնա հսած: Էքսի օրը ասալ ա.

– Աստու՛ծ, քյնիմ տսնամ էնա արտը հարած, ցորենը մի տեղ թուփ ըրած, խոտը մի տեղ, թեն էլ մաչին տնգած:

Քեցալ ա տսալ էնա լոխ ըրած, թեն մաչին տնգած, մի օխձ էլ թիյին կոթավը տուված: Էտ մարթը ասալ ա.

– Ա՛ օխձ, վեր եկ ես էլ ցորենը յոր օնիմ քյնիմ:

Օխձը ասալ ա.

– Քյնի քու կիճի ախճիգյը պեր, հանցվեր վեր կյամ յոր օնիմ քյնիմ:

Էտ մարթը քիս ա ուրան ըխճյանը պիրիս տաս Էտ օխձեն: Օխձը յոր ա ընես, քիս: Քիս ա, քիս, հսնես ա մի հըղըցու: Էտ հըղըցեցը մի՞նը տես ա ըլալ քիս, մի՞նը՝ տեն: Օխձը ասալ ա ըխճըյանը.

– Տու էս հըղըցավը քյնի, ես էլ՝ էս, համա վեր ծուվվամ, վախիս վեչ:

Միենգյ տահանք քիս են, քիս, օխձը ծուվվացալ ա տեռալ մի սիրուն տղա: Ախճիգյը, վեր եկալ ա հըսալ տղա-օխձեն կողքը, տղա-օխձը տեսալ ա էնա պռոշը ճաքած, ասալ ա.

– Քեզ ասալ չը՞մ վախիս վեչ, Էտ խե՞ պռոշտ տի ա:

Քեցալ ըն, սկսալ ապրելը: Էտ ըխճյանը մի տղա ա ծնվալ: Մի հետ էլ Էտ ախճիգյը ասալ ա.

– Ինձ տար իմ հորանց տոն:

Տղա-օխձը քիս ա մի թագա վնաման, մի կարաս պիրիս տաս ուրան ու ըսես ա.

– Էտ վնամանները մշըցրե, Էտ կարասն էլ ըրտըստօքալ լցե, հանցվեր քեզ տանիմ:

Ախճիգյը վնամանները կյընաս ա, կրասեն դրադեն նստես ա, լաց ընիս: Լաց ա ընիս, լաց ա ընիս, համա կարասը լցնես չի: Էնա ընդդավ մի պառավ ա քիս: Էտ պառավը հրցնես ա.

– Խե՞ լաց ըս ընիս:

Ախճիգյը պատմես ա հունց վեր ըլալ ա: Էտ պառավը ըսես ա.

– Մի կոժ ճուր ածե կարասը, միտը աղ խառնե: Վնամաններն էլ տիր մղակեն տակեն: Տուռը տես քլլե, տեն պեց:

Ախճիգյը տի էլ ընես ա: Տղա-օխձը տրան զուգես ա, զարդարես ա, յոր ընես ա, տմես թուղես հարանց տան, ինքը կյաս: Հորը տանը Էքսի օրը մեծ քուրը կճի քուվերը ըսես ա .

– Եկ քյնիմք կետին յրա լվաց անիք:

Քուրը ըսես ա.

– Քյնի՛մք:

Քիս ըն: Լվացը ընես ըն պրծնես, մեծ քուրը ըսես ա.

- Քուր, շուրերդ հանե կյեմամ տսնամ ինձ սիզի՞ս ա:
- Կիճի քուրը հնես ա տաս ա ուրան: Մեծ քուրը ըսես ա.
- Սիզի՞ս ա:
- Կիճի քուրը ըսես ա.
- Հա՛:

Մեծ քուրը կիճի քուրերը կուփե ա տաս, քցիս կյետը, ինքը խոխան յոր ընես քիս տոն: Էտ ախճիգյը շտեղ վեր խորտակվալ ա, ընդեղ մի դամիշ ա փսնես: Մի չոբան էտ դամիշը կտրես ա շվե շինիս: Վեր չոբանը էտ շվեն ըծես ա, էն խոխան սուս ա ընես, վեր ըծես չի, խոխան լաց ա ընես: Մեծ քուրը կլոխ ա ընգնես, թա էտ շուվեն շտեղան ա: Քիս ա կյոլմաս, պիրիս իրիս, մոխերն էլ տնես տեն ըծես: Էն մոխերն ածած տեղը մի տանձի ա փսնես: Էտ տանձան վեր ճոճք ըն քցիս՝ խոխան մաչին օրորես, խոխան սուս ա ընես, վեր յոր ըն ընես՝ խոխան լաց ա ընես: Մեծ քուրը պիրիս ա էտ տանձին կտրել տաս: Տանձին կտրել տաս տեղը մի մեծ պատառ պուք ա կյալի վեր ընգնես: Էնա, ընդդավ մի պառավ ա քիս ու ըսես ա.

- Այանը ծեզ մատաղ, էտ պատառն ինձետե մի օշնակ շինեցեք:

Շինիս ըն տաս ուրան: Էտ պառավը տոնը թուղես ա վերածած քիս ժամ, կյաս ա տսնաս Էնա հվաքած: Միհետ էլ մղակեն կյոլ ա կնաս, տսնաս էտ օշնակը թուլով ընգնելավ եկավ թոնրի կողքը, մաչան մի ախճիգ տուս եկավ, սկսից տոնը հվաքելը: Տոնը սրփալ ա պիրալ թա տեն ածե, պառավը կուռնան փռնալ ա, ասալ.

- Տու հի՞նչ ախճիգ ըս, վեր ինձանա կյոլ ըս կնաս: Ես լիա ուզիս ըն, վեր ինձ մի տի ախճիգ ընի:

Էտ ախճիգյը սկսալ ա տեղ ապրելը: Էտ պռնավեն մի տղա ա ըլալ: Միհետ էտ տղան քիս ա աշխարքը շոռ կյա, ուրանց հրվաններան մնել էտ ըխճգյանը հրցրալ ա.

- Ծգետն հի՞նչ պիրիմ:

Մինը էս ա անալ, մինը՝ Էն, էտ ախճիգյն էլ ասալ ա.

- Մի նուռ, մի խակ խաղու:

Էտ տղան լոխ պերալ ա: Էտ ախճիգյը նուռ նան խաղուն եր ա կալալ քեցալ կտրեն նստալ: Ժողովուրդը եկալ ըն գերավ տեռալ: Էտ ախճիգյը ուրան կլխեն եկածը պատմես ա, համ էլ ըսես ա.

- Ա՛նուռ՝ տու՛ ճաքիս, ա՛ խաղու՛ տու՛ հսնիս:

Նուռը ճաքալ ա, խաղուն էլ հսալ ա: Ստեղ ժողովուրդը լոխ կլխու ընգնին: Քյնին մեծ քուրերը նեստա խոխան յոր անին, պիրին տան ուրան: Շորերն էլ կյեց տան: Էտ չխետ տղա-օխծը կյա: Էտ ըխճգյանը տան տղա-օխծեն: Տղա-օխծը յոր անե քյնի: Մեծ քուրերն էլ տանին պկան մի քար կախ տան քցին կյետը:

Ջերավ տեռալ – իրար գլխի
հավաքվել
Մղակեն տակեն – շեմին, դռան տակ
Թուփ ըրած – կուտակած, հավաքած
Պրենիս ա ըլալ – պահելիս է եղել
Կուռն փռալ ա – թկից քռնել է
Թուլով ընգնելավ – գլորվելով
Վննաման – ոտնաման, կոշիկ
Օշնակ – աման, մեծ պուլիկ
Կյոլ ա կնաս – թաքնվում է
Սանդուղում – սնդուկում
Շտեղան ա – որտեղից է
Կուփե ա տաս – հրում է

Կիճի – պուճուր, փոքր
Շոռ կյա – ման գա
Յոր օնիմ – վերցնես
Սիզիս ա – սագում է
Կյարունքը – գարունը
Ծգետն – ձեզ համար
Ծուվկան – ծվան, ճշան
Կյըմաս ա – հագնում է
Պկան – կոկորդից
Ախճիգ – աղջիկ
Կոթավը – կոթով
Հատեգ – հատիկ
Տի ա – այդպես է

Նեստա – իրենից
Խաղու – խաղող
Խոխա – երեխա
Հինչավ – ինչով
Ժամ – եկեղեցի
Ղամիշ – եղեգն
Տեռալ – դարձել
Քլլե – փակիր
Լվաց – լվացք
Լոխ – բոլորը
Թեն – թին
Շվե – շվի
Օխծ – օձ



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԴԱՐԴ ...

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

ԱԿՈՒՆ՝ ԿՅՈՒԹԱՆՎՈՐ

ԱԿՈՒՆ՝ ՆՈՔՅԱՐ

ԱՂՎԵՍԸ

ԱՂՎԵՄՆ ՈՒ ԳԵԼԸ

ԱՂՔԱՏԻ ՈՍԿԻՆ

ԱՇԽՐՔԻ ՎԱՏԸ

ԱՇԿԸ ԾԱԿ ՄԱՐԹԸ

ԲԱՆՏԸ

ԲԱՆՏՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԸ

ԲԻԹԼԻՍԻ ՀԵՔԻԱԹԸ

ԳԵԼՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ

ՀԱՐՄԱՆՔԱՎՈՐՆԵՐԸ

ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ ՉՄԵՐՈՒԿԸ

ԴԴՄԻԿԸ

ԴԵՐԸ ՀԱՍՑՆՈՂԻ ՀԵՔԻԱԹԸ

ԵՐԵՔ ԽՐԱՏ

ԷՇ ԾԱՆԵԼԸ

ԷՇ ՆԱՆ ԾԻՆ

ԷՇ ՇՈՒ ԿՅԱԼԸ

ԷՐԳՈՒ ԸՆԳԵՐ

ԷՐԿՈՒ ԱՆՊԵՐ

ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԱՋՆԵՐԸ

Ասացող՝ Լուսինե Բարսեղյան, ծնվ. 1915թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բարսյան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Արուս Մահակյան, ծնվ. 1933թ. Սիրիայում, բնակվում է Ռիջան գյուղում:
Գրառող՝ Միմոն Գևորգյան, Աշտարակի շրջ., Ռիջան գյուղի դպրոց, 8-րդ դաս.:

Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արայիկ Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արայիկ Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Գյուլսամուն Խաչատրյան, ծնվ. 1918թ. Պարսկաստանում՝ Մուլքանաբադում:
Գրառող՝ Յուսաննա Խաչատրյան, Արարատի շրջ., Նոր Կյանքի դպ., 6-րդ դաս.:

Ասացող՝ Վանուշ Հովհաննիսյան, 73տ., Վարդենիսի շրջ., գ. Կարճաղբյուր:
Գրառող՝ Մուսաննա Հարությունյան, Երևանի N 159 դպրոց, 10-րդ դասարան:

Ասացող՝ Ռուբեն Ավետիսյան, ծնվ. 1900թ. Վասպուրականի Լիմ գյուղում:
Գրառող՝ թող, Աննա Հակոբյան, Արարատի շրջ., Շիրազլուի դպրոց, 10-րդ դաս.:

Ասացող՝ Արուսյակ Հակոբյան, 77տ., Վարդենիսի շրջ., գ. Կարճաղբյուր:
Գրառող՝ Մուսաննա Հարությունյան, Երևանի N 159 դպրոց, 10-րդ դասարան:

Ասացող՝ Ռոզա Հակոբջանյան, ծնվ. 1926թ. Խրամորթ գյուղում:
Գրառող՝ Միլվա Գրիգորյան, Լ.Ղ. Ասկերանի շրջ., Խրամորթի դպրոց, 9-րդ դաս.:

Ասացող՝ Անահիտ Ահարոնյան, Նոյեմբերյանի շրջ., Այրում ավան:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս.:

Ասացող՝ Ամասյա Միրադեղյան, ծնվ. 1936թ. Լճկաձոր գյուղում:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս.:

Ասացող՝ Մարգիս Առաքելյան, ծնվ. 1932թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բարսյան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Մարուշ Բարսյան, ծնվ. 1918թ. Կոտայքի Կամարիս գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բարսյան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Արամ Մարգարյան, 80տ., Ղափանի շրջ., գ. Ծավ:
Գրառող՝ թող, Նաիրեն Թաղևոսյան, Արարատի շրջ., Գեղանիստի դպ., 8-րդ դաս.:

Ասացող՝ Արմենուհի Հարությունյան, ծնվ. 1913թ. Արևմտյան Հայաստանի
Բուլանըխ գավառում:

Գրառող՝ թող, Արմենուհի Խաչատրյան, Երևանի N 65 դպրոց, 8-րդ դասարան:

Ասացող՝ Մարուշ Բարսյան, ծնվ. 1918թ. Կամարիս գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բարսյան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Մադաթ Մելյան, ծնվ. 1892թ. Վերին Կարմիրաղբյուր գյուղում:
Գրառող՝ Լալա Միրզախանյան, Շամշադինի շրջ., Վերին Կարմիրաղբյուրի
դպրոց, 10-րդ դասարան:

Ասացող՝ Թաղևոս Խաչիքաբյան, ծնվ. 1896թ. Նախիջևանի Ազնաբերդ գյուղում:
Գրառող՝ Յողիկ Խաչիքաբյան, Նախիջևան, Ազնաբերդի դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Ռոզա Հակոբջանյան, ծնվ. 1926թ. Խրամորթ գյուղում:
Գրառող՝ Միլվա Գրիգորյան, Լ.Ղ. Ասկերանի շրջ., Խրամորթի դպրոց, 9-րդ դաս.:

Ասացող՝ Մուշեղ Գրիգորյան, Լ.Ղ. Ասկերանի շրջ., գ. Խրամորթ:
Գրառող՝ Միլվա Գրիգորյան, Լ.Ղ. Ասկերանի շրջ., Խրամորթի դպրոց, 9-րդ դաս.:

Ասացող՝ Ելինկա Մարտիրոսյան, ծնվ. 1904թ. Մադաղիս գյուղում:
Գրառող՝ թող, Նվարդ Մարտիրոսյան, Լ.Ղ. Մարտակերտի շրջ., Մադաղիսի
դպրոց, 9-րդ դասարան:

Գրառող՝ Արաքսյա Բոջոյան, Աբխազիա, Գագրայի Խ. Արովյանի անվան
հայկական դպրոց, 9-րդ դասարան:

Ասացող՝ Արմենուհի Հարությունյան, ծնվ. 1913թ. Արևմտյան Հայաստանի
Բուլանըխ գավառում:

Գրառող՝ թող, Արմենուհի Խաչատրյան, Երևանի N 65 դպրոց, 8-րդ դասարան:

Ասացող՝ Գեղեց Գրիգորյան, ծնվ. 1913թ. Շամշադինի Թովուզ գյուղում:

Գրառող՝ Վարդան Ավագյան, Շամշադինի շրջ., Վերին Կարմիրաղբյուրի
դպրոց, 9-րդ դասարան:

*Գրքում ընդգրկված նյութերը ծանոթագրված են այբբենական կարգով: Որոշ դպրոցականներ ասացողի կամ գրառողի մասին ամբողջական տեղեկություններ չեն հաղորդել, ուստի ծանոթագրություններից մի քանիսը թերի են: Ներկայացվող հեքիաթները, զրույցներն ու ավանդությունները գրառվել են 1978-1982թթ., այնպես որ ասացողների և գրառողների մասին տեղեկությունները վերաբերում են այդ տարիներին:

ԹԵՎ ԵԿՈՂ ՀԱՎԸ

ԻՇԻ ԿԵՆԱՑԸ

ԼԵԶՎԱՆՈՒՆ ՃԱՐ ԶԿԱ

ԽԵԼԱՑԻ ՀԱՐՄԱՑՈՒՆ

ԽԵԼԱՑԻ ԵՎ ՀԻՍԱՐ
ԵՂՔԱՅՐՆԵՐԸ

ԽՈՍՔԻ ՏԵՐ ԿՆԻԿԸ

ԽՈՒՐՁԻՆԸ

ԾՅԱԽՊՈՒՏԸ

ԾՈՒՌ ԿՆԻԿԸ

ԿԱՐՄԵԼ ԵՄ, ԳԱՄ

ԿՅՈՒՔԻՆ Ա ՆԻԿԱԼԸ

ԿՆԴԸԼՈՁ

ԿՈՒՇՏՆ ԻՆՉ ԳԻՏԻ...
ՀԱՐԻՍԱ

ՀԱՅՐ ԱՐԲԱՄԸ

ՀԱՆՑԱՆՔ ԱՆՊԱՏԻԺ ՉԻ ՄՆԱ

ՀԵՐՆ ՈՒ ՏՂԵՆ

ՀԵՌԱՏԵՍ ՄԱՐԴԸ

ՀԻՍԱՐ ՎԵՋԻՐՆ ՈՒ
ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂԱՑԻՆ

ՀՈՆԵ, ՎՈՆԵ

ՂՈՐՄԻ ՔՈ ՀՈՐԸ

ՂՈՒՇՔԱԼԱՍՈՒ ԵՎ
ԱՂՔԱԼԱՍՈՒ ՀԵՔԻԱԹԸ

ՄԱՐԴ ԻՆՉ ՔԱՇԱ...

ՄԱՐԴ ԶԴԱՌԱԾ ՏՂԵՆ

ՄԻ ԲՈՒՌ ԱՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻԾԻԴԱՐՆ ՈՒ ԾՈՎԻՆԱՐԸ

ՄՆՋԵՎԱՆ

ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ասացող՝ Գրիշա Դանիելյան, ծնվ. 1938թ. Աբխազիայի Սուխումի շրջանի Ազանթա գյուղում, բնակվում է Աբովյան քաղաքում:
Գրառող՝ ռոքին, Լևոն Դանիելյան, ք. Աբովյան, N 7 դպրոց, 5-րդ դասարան:
Ասացող՝ Ամասյա Միրադեղյան, ծնվ. 1936թ. Լճկաձոր գյուղում:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս:
Ասացող՝ Արմենուհի Հարությունյան, ծնվ. 1913թ. Արևմտյան Հայաստանի Բուլանքի գավառում:
Գրառող՝ թոռը, Արմենուհի Խաչատրյան, Երևանի N 65 դպրոց, 8-րդ դասարան:
Ասացող՝ Մուրեմ Միրզախանյան, ծնվ. 1936թ. Վերին Կարմիրաղբյուր գյուղում:
Գրառող՝ աղջիկը, Լենա Միրզախանյան, Շամշադինի շրջ., Վ. Կարմիրաղբյուրի դպրոց, 8-րդ դասարան:
Ասացող՝ Արուս Սահակյան, ծնվ. 1933թ. Սիրիայում, բնակվում է Ռիջան գյուղում:
Գրառող՝ Միմոն Գևորգյան, Աշտարակի շրջ., Ռիջան գյուղի դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Հայաստան Գրիգորյան, ծնվ. 1897թ. Ադին գյուղում:
Գրառող՝ թոռը, Անդրանիկ Զաքարյան, Լենինականի N 12 դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Իսկուհի Մուսայելյան, ծնվ. 1908թ. Արծիս գյուղում:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս.:
Ասացող՝ Կարեն Պողոսյան, Գորիս:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 8-րդ դասարան:
Ասացող՝ Սառա Մկրտչյան, 83տ., Արարատի շրջ., գ. Փոքր Վեդի:
Գրառող՝ Ռոզա Թադևոսյան, Արարատի շրջ., Փոքր Վեդիի դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Լիզա Անտոնյան, ծնվ. 1936թ. Արծիս գյուղում:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս.:
Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արայիկ Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Արուսյակ Հակոբյան, 77 տ., Վարդենիսի շրջ., գ. Կարճաղբյուր:
Գրառող՝ Մուսաննա Հարությունյան, Երևանի N 159 դպրոց, 10-րդ դասարան:
Գրառողներ՝ Կարեն և Արմեն Մարգարյաններ, Երևանի N 125 դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Ամասյա Միրադեղյան, ծնվ. 1936թ. Լճկաձոր գյուղում:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս.:
Ասացող՝ Շուշանիկ Մուրադյան, ծնվ. 1906թ. Ախալքալաքի Բուռնաշեք գյուղում, մանուկ հասակում լսել է հորից՝ Բարդուղիմեոսից:
Գրառող՝ թոռը, Շուշանիկ Մուրադյան, Ախալքալաքի շրջ., Բուռնաշեքի դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Արմենուհի Հարությունյան, ծնվ. 1913թ. Բուլանքի գավառում:
Գրառող՝ թոռը, Արմենուհի Խաչատրյան, Երևանի N 65 դպրոց, 8-րդ դասարան:
Ասացող՝ Գեղեց Գրիգորյան, ծնվ. 1913թ. Թովուզ գյուղում:
Գրառող՝ Վարդան Ավագյան, Շամշադինի շրջ., Վերին Կարմիրաղբյուրի դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Շուշանիկ Մուրադյան, ծնվ. 1906թ. Ախալքալաքի Բուռնաշեք գյուղում:
Գրառող՝ Շուշանիկ Մուրադյան, Ախալքալաք, Բուռնաշեք գյուղի դպ., 9-րդ դաս.:
Ասացող՝ Մամիկոն Դավթյան, ծնվ. 1925թ. Ոսկեթաս գյուղում:
Գրառող՝ տղան, Եղիշե Դավթյան, Թալինի շրջ., Ոսկեթասի դպրոց, 7-րդ դաս.:
Ասացող՝ Լուսինե Բարսեղյան, ծնվ. 1915թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բաքայան, Աբովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դաս.:
Գրառող են Դավանի շրջ. Լեռնաձորի դպրոցի «XYZ» ակումբի անդամները:
Ասացող՝ Փիրուզա Թարվոշյան: Հեքիաթը փոքր հասակում լսել է հորից:
Գրառող՝ Գրետա Մանուկյան, Նաիրիի շրջ., Բուժականի դպրոց, 10-րդ դաս.:
Գրառողներ՝ Արմեն և Կարեն Մարգարյաններ, Երևանի N 125 դպ., 8-րդ դաս.:
Ասացող՝ Լուսինե Բարսեղյան, ծնվ. 1915թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բաքայան, Աբովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դաս.:
Ասացող՝ Գեղեց Գրիգորյան, ծնվ. 1913թ. Թովուզ գյուղում:
Գրառող՝ Վարդան Ավագյան, Շամշադինի շրջ., Վերին Կարմիրաղբյուրի դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Արամայիս Միրադեղյան, ծնվ. 1906թ. Լճկաձոր գյուղում:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպ., 10-րդ դաս.:
Ասացող՝ Արուս Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Գեղեց Գրիգորյան, ծնվ. 1913թ. Թովուզ գյուղում:

ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԻՆ
ԿՅՈՂԵՐԸ
ՄՈՐԻՆ

ՅԱՓՆՋԻՆ

ՆՈՅ ՆԱՎԱՊԵՏՆ ՈՒ ՕԶԸ

ՇԱՀԹԱՆՏԻ

ՇՈՒՆ ՉՈՆՆՈՂ ԿԵՐԸ

ՈՍԿԵ ՉՈՒԿԸ

ՈՍԿԵ ՄԵԼԻ ՀԵՔԻԱԾԸ

ՈՍԿԻՆ

ՈՐ ԻՆԻ, ԼԱՎ Ա

ՉԱԼԻԿԸ

ՉԻՍԱՅԱԾԴ ՄԻ՝ ԱՍԱ,
ՉԿԱՐԵՑԱԾԴ ՄԻ՝ ԱՐԱ
ՊԸԸԸ ՊՈՒԴԻՆ ՈՒ ԴԵՐՎԻՇԸ

ՊԸԸԸ ՊՈՒԴԻՆ ՈՒ
ՄՈԼԼԱ ՆԱՍՐԵԴԻՆԸ

ՊՈՉԱՏ ԸԼՔԱՍՏՐԱԿԸ

ՄԱՆԴԻ ՇԻՆՈՂԻ ՀԵՔԻԱԾԸ

ՄԱՏԿԵՑԻՐ, ՄՈՐԵՆ

ՍՈՂՈՄՆ ԻՍԱՍՏՈՒՆԸ
ԵՎ ՀՆՉՎՈՐԸ
ՎԻՇԱՊ ՕԶԻ ԵՎ ՆԱԶԱՆԻ
ՀԵՔԻԱԾԸ
ՏԱՆ ՏԵՐԸ
ՏՈՒՆ ՊԱՀՈՂԸ

ՓԱՓԱԳՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ

ՔԱՉԱԼԸ

ՔՈՈ ԹԱՔԱՎՈՐԸ

ՕԽԾՆ ՈՒ ԱՆԾԻԳՅԸ

ՕԽԾԸ

ՕՐՀՆԱԾ ԱՂԸ

Գրառող՝ Վարդան Ավագյան, Շամշադինի շրջ., Վ.Կարմիրաղբյուր, 9-րդ դաս.:
Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արայիկ Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Վասիլ Օհանյան, Գուգարքի շրջ., գյուղ Վահագնի:
Գրառող՝ Գայանե Մքոյան, Գուգարքի շրջ., Վահագնի գյուղի դպրոց, 6-րդ դաս.:
Ասացող՝ Մամիկոն Դավթյան, ծնվ. 1925թ. Ոսկերաս գյուղում:
Գրառող՝ տղան, Եղիշե Դավթյան, Թալինի շրջ., Ոսկերասի դպրոց, 7-րդ դաս.:
Ասացող՝ Շուշանիկ Մուրադյան, ծնվ. 1906թ. Ախալքալաքի Բուռնաշեք գյուղում,
մանուկ հասակում լսել է հորից՝ Բարդուղիմեոսից:
Գրառող՝ թոռը, Շուշանիկ Մուրադյան, Ախալքալաքի շրջ., Բուռնաշեքի դպրոց,
9-րդ դասարան:
Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:
Գրառող՝ Գ. Ջաքարյան, Աբխազիա, Գագրայի Խ. Արովյանի անվ. հայկական
դպրոց, 10-րդ դասարան:
Ասացող՝ Արամայիս Բաբայան, ծնվ. 1912թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բաբայան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Հարութ Մարտիրոսյան, ծնվ. 1931թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բաբայան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Նիկոլ Մելյան, ծնվ. 1904թ. Վերին Կարմիրաղբյուր գյուղում:
Գրառող՝ Լենա Միրզախանյան, Շամշադինի շրջ., Վերին Կարմիրաղբյուրի
դպրոց, 8-րդ դասարան:
Ասացող՝ Կարո Հովհաննիսյան, Սիսիանի շրջ., Բոնակոթ գյուղ:
Գրառող՝ Լիլիթ Գյանջունց, Երևանի N 84 դպրոց, 6-րդ դասարան:
Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Գարեգին Թամազյան, ծնվ. 1925թ. Կաճաճկուտ գյուղում:
Գրառող՝ Նարինե Թամազյան, Թումանյանի շրջ., Կաճաճկուտի դպրոց, 7-րդ դաս.:
Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909թ. Գորիսի Տեղ գյուղում:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևանի N 16 դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Եղինկա Մարտիրոսյան, ծնվ. 1904թ. Մաղադիս գյուղում:
Գրառող՝ թոռը, Նվարդ Մարտիրոսյան, Լ.Ղ Մարտակերտի շրջ., Մաղադիսի
դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Շուշան Բեգլարյան, 100տ., Լ.Ղ Ասկերանի շրջ., գ. Խրամորթ:
Գրառող՝ Միլվա Մահալյան, Լ.Ղ Ասկերանի շրջ., Խրամորթի դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Լուսինե Բարսեղյան, ծնվ. 1915թ. Գեղաշեն գյուղում:
Գրառող՝ Նաիրա Բաբայան, Արովյանի շրջ., Գեղաշենի դպրոց, 9-րդ դասարան:
Ասացող՝ Մերուժան Հովհաննիսյան, Երևան:
Գրառող՝ Միլվա Միրադեղյան, Նոյեմբերյանի շրջ., Լճկաձորի դպրոց, 10-րդ դաս.:
Ասացող՝ Թեմուր Չոբանյան, ծնվ. 1901թ. Վերին Կարմիրաղբյուր գյուղում:
Գրառող՝ Վարդան Ավագյան, Շամշադինի շրջ., Վ. Կարմիրաղբյուր, 9-րդ դաս.:
Ասացող՝ Ասանեք Հարությունյան, 80տ., Վարդենիսի շրջ., գ. Կարճաղբյուր:
Գրառող՝ Վահրամ Աբրահամյան, Վարդենիսի շրջ., Կարճաղբյուրի դպ., 8-րդ դաս.:
Գրառող՝ Ջուլիետա Գոգոբյան, Աբխազիա, Մեքելդայի հայկ. դպրոց, 6-րդ դաս.:
Ասացող՝ Բալասան Մանուկյան, 90տ., Մարտունու շրջ., գ. Արծվանիստ:
Գրառող՝ Մուսաննա Հարությունյան, Երևանի N 159 դպրոց, 10-րդ դասարան:
Ասացող՝ Արուս Մահալյան, ծնվ. 1933թ. Սիրիայում, բնակվում է ՌԻՋան գյուղում:
Գրառող՝ Միմոն Գևորգյան, Աշտարակի շրջ., ՌԻՋան գյուղի դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Միրանուշ Խոջայան, ծնվ. 1910թ. Վերին Կարմիրաղբյուր գյուղում:
Գրառող՝ Լենա Միրզախանյան, Շամշադինի շրջ., Վ. Կարմիրաղբյուր, 8-րդ դաս.:
Ասացող՝ Գարեգին Թամազյան, ծնվ. 1925թ. Կաճաճկուտ գյուղում:
Գրառող՝ Նարինե Թամազյան, Թումանյանի շրջ., Կաճաճկուտի դպրոց, 7-րդ դաս.:
Ասացող՝ Մայկոն Ալեքսանյան, Լ.Ղ Հաղորթի շրջ., գ. Աղաջաքենդ:
Գրառող՝ Օթաննա Ալեքսանյան, Լ.Ղ Հաղորթի շրջ., Աղաջաքենդի դպ., 7-րդ դաս.:
Ասացող՝ Ջառի Գրիգորյան, ծնվ. 1926թ. Կոճողուր գյուղում:
Գրառող՝ Անուշ Գրիգորյան, Լ.Ղ Մարտակերտի շրջ., Կոճողուրի դպրոց, 8-րդ դաս.:
Ասացող՝ Ա. Հովհաննիսյան, 74 տարեկան:
Գրառողներ՝ Նորա Մահալյան, Լալա Մաթևոսյան, Սիսիանի շրջ., Դարբաս
գյուղի դպրոց, 8-րդ դասարան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն	3
ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԱՋՆԵՐԸ	9
ԴԵՂԸ ՀԱՍՅՆՈՂԻ ՀԵՔԻԱԹԸ	10
ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	11
ՄԻ ԲՈՒՌ ԱՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	14
ՀԵՐՆ ՈՒ ՏՂԵՆ	15
ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՒ ՀՆԶՎՈՐԸ	17
ՈՍԿԻՆ	17
ՔԱԶԱԼԸ	19
ՄՈՐԻՆ	20
ԲԱԽՏՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԸ	21
ԽԵԼԱՅԻ ՀԱՐՄՆԱՅՈՒՆ	23
ՍԱՏԿԵՅԻՐ, ՄՈՐԵԽ	24
ԲԱԽՏԸ	24
ԻՇԻ ԿԵՆԱՅԸ	25
ՀԱՐԻՍԱ	26
ԿԱՐՄՐԵԼ ԵՄ, ԳԱՄ	27
ԽՈՒՐԶԻՆԸ	27
ՄԻԾԻԴՂԱՐՆ ՈՒ ԾՈՎԻՆԱՐԸ	28
ՀԱՆՅԱՆԶ ԱՆՊԱՏԻԺ ԶԻ ՄՆԱ	36
ԶԻՄԱՅԱԾԻ ՄԻ՝ ԱՍԱ, ԶԿԱՐԵՅԱԾԻ ՄԻ՝ ԱՐԱ	37
ՆՈՅ ՆԱՎԱԴԵՏՆ ՈՒ ՕԶԸ	38
ՔՈՌ ԹԱԳԱՎՈՐԸ	39
ՅԱՓՆԶԻՆ	42
ՀԻՄԱՐ ՎԵՋԻՐՆ ՈՒ ԽԵԼԱՅԻ ԳՅՈՒՂԱՅԻՆ	43
ՀԱՅՐ ԱՔՐԱՄԸ	44
ԱՂՔԱՏԻ ՈՍԿԻՆ	46
ԱՂՎԵՍԸ	47
ԳԱՅԼՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ	49
ԾՈՒՌ ԿՆԻԿԸ	50
ԵՐԵՔ ԽՐԱՏ	53
ԿՈՒՇՏՆ ԻՆՉ ԳԻՏԻ ՍՈՎԱԾԻ ՀԱԼԸ	55
ՄԱՐԴ ԻՆՉ ՔԱՇԱ, ՈՒՐ ԽԵԼՔԻՅ ԿՔԱՇԱ	55
ԷՐԳՈՒ ԸՆԳԵՐ	56
ՇՈՒՆ ԶՈՆՆՈՂ ԿԵՂԸ	57
ԹՐԵՎ ԵԿՈՂ ՀԱՎԸ	57
ՏԱՆ ՏԵՐԸ	57
ԴԴՄԻԿԸ	58
ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԴԱՐԴ	60
ՀՈՆԵ, ՎՈՆԵ	61
ՄԱՐԴ ԶԴԱՌԱԾ ՏՂԵՆ	63
ՍԱՆԴԻ ՇԻՆՈՂԻ ՀԵՔԻԱԹԸ	64
ՈՍԿԵ ԶՈՒԿԸ	66
ՈՍԿԵ ՍԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ	69
ԲԻԹԼԻՍԻ ՀԵՔԻԱԹԸ	71
ՏՈՒՆ ՊԱՀՈՂԸ	82
ԱՇԽՐՔԻ ՎԱՏԸ	85
ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԵԼԸ	85
ՎԻՇԱՊ ՕԶԻ ԵՎ ՆԱԶԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ	86
ՀԵՌԱՏԵՍ ՄԱՐԴԸ	88
ԿՆԴԸԼՈՋ	88
ՂՈՒՇՔԱԼԱՍՈՒ ԵՎ ԱՂՔԱԼԱՍՈՒ ՀԵՔԻԱԹԸ	89
ԽՈՍՔԻ ՏԵՐ ԿՆԻԿԸ	92
ԳՅՈՒՂԱՅԻՆ ՈՒ ԶՄԵՐՈՒԿԸ	92

Լեռնալեռնի մար զգալ	93
Էրկոթ Կեռքեր	94
Կեռքեր Կեռքեր	97
Կեռքեր եւ չեռքեր Երկրորդները	100
Փայտեղ ՈՒ Մեռնիկ	106
Մեռնիկ	119
Շահահան	119
Չեռնիկ	122
Ծեռնիկ	122
Մոլոր Երկրորդներն Կեռքերը	123
Կեռքերն և Նեռնիկ	123
Օրհնած Կեր	124
Կեռնի Նեռնիկ	125
Կեռնի Կեռնիկ	126
Կեր-Կեռնի ՈՒ Կեր-Կեր	127
Կեր-Կեռնի ՈՒ Մոլոր Երկրորդները	128
Կեր-Կեր Երկրորդները	128
Է՛հ Շոռ Կեր	129
Է՛հ Նեռնի	130
Կեր Շահ Կեր	130
Է՛հ Շահեր	133
ՈՐ ԻՆԻ ԼԵ՛՛՛ և	134
Կեռնիկ ՈՒ Շահեր-Կեր-Կեր	135
Կեր-Կեր Շոռ	135
Օհ՛՛՛	136
Օհ՛՛՛ ՈՒ Կեր-Կեր	137
Շահեր-Կեր-Կեր-Կեր	140
Կեր-Կեր-Կեր-Կեր	143

Նամակարգչային աշխարանքները՝ «YMCA»-ի, «Ապագա - Զարթոնքի»,
Գոհար և Գագիկ Վարդանյանների
Մոնոգրաֆը՝ Ալվարո Նամբարդույանի

Նամակարգչային ձևավորող և էջադրող՝
Դավիթ Գևորգյան

СНЫ КОРОЛЯ
(Фольклорный сборник на армянском языке)
Составитель - Сергей Варданян
Художник - НИКО (Николай Манукян)
Ереван 2003

THE KING'S DREAMS
(Folk-tales collection in armenian)
Edited by Sergey Vardanyan
Pictures by NIKO (Nikolay Manoukyan)
Yerevan 2003



Տպագրված է «ԳԱԳԻԿ» ՍՊԸ տպագրատանը

